

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԵՎ
ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դ
ՊՐԱԿ

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԵՎ
ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

Դ
ՊՐԱԿ

«ԼԻՆԳՎԱ»
ԵՐԵՎԱՆ 2004

ՀՏԴ 809.198.1
ԳՄԴ 81.23
Հ 246

Տպագրվում է Երևանի Վ. Բոյունովի անվան պետական լեզվաբանական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ակադ. Գ.Ջահուկյան, պրոֆ. Ս.Ջոլյան, պրոֆ. Ֆ.Խլղաթյան /գլխ. խմբագիր/, պրոֆ. Ա.Բարլեգիզյան, դոց. Դ.Գյուրջինյան, դոց. Ն.Յեքեքյան /քարտուղար/, բ.գ.դ. Գ.Հակոբյան

Հ 246 Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն,
գիտական աշխատություններ: Պր. 4, Եր.: «Լինգվա», 2004.
– 176 էջ:

Գրախոսներ՝

Բանասիր. գիտ. դոկտ. Լ.Հովհաննիսյան
Բանասիր. գիտ. թեկն. Ռ.Թոխմախյան

Հ 4602000000 2004թ.
0134(01)-2004

ԳՄԴ 81.23

Ереванский государственный лингвистический
университет им. В. Я. Брюсова

НАУЧНЫЕ ТРУДЫ

**АРМЕНИСТИКА
И
СОПОСТАВИТЕЛЬНАЯ
ЛИНГВИСТИКА**

ВЫПУСК

4

**"ЛИНГВА"
ЕРЕВАН 2004**

Печатается по решению ученого совета Ереванского
государственного лингвистического университета
им. В.Я.Брюсова

**НАУЧНЫЕ ТРУДЫ. АРМЕНИСТИКА И СОПОСТАВИТЕЛЬ-
НАЯ ЛИНГВИСТИКА**

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Акад. Г.Джаукян, проф. С.Золян, проф. Ф.Хлгатын, (гл.
редактор), проф. А.Барлезиян, доц. Д.Гюрджинян, доц.
Н.Экекян(секретарь), д.ф.н. Г.Акопян

**ՏԱՌԱՆՈՒՆ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ՀԱՅԵՐԵՆ ԼԵՁՎԱԲԱՆԱԿԱՆ
ՏԵՐՄԻՆՆԵՐԸ**

Հայերենի քերականական տերմինաբանությունը ձևավորվել է 5-րդ դարի կեսերից, և այդ գործում, հայտնի է, մեծ ներդրում ունեն հունաբան դպրոցի ներկայացուցիչները: Լեզվի մասին գիտության հայերեն տերմինաբանության մշակման գործընթացը հետագայում, հատկապես նոր ժամանակներում, շարունակվել է. կազմվել և գործածության մեջ են դրվել մեծ թվով նոր տերմիններ: Հայերեն լեզվաբանական տերմինները համազամանորեն ուսումնասիրվել են,¹ կազմվել են լեզվաբանական տերմինների միալեզվյան և թարգմանական բառարաններ:²

Սակայն կան նաև առանձին քննության չենթարկված, չուսումնասիրված իրողություններ: Այսպես, հայերեն լեզվաբանական մի շարք տերմիններ առանձնանում են բառակազմական ընդհանուր հատկանիշով. դրանց կազմում տառանուն բաղադրիչ կա, մի երևույթ, որը մինչև այսօր հետազոտողների կողմից հատուկ ուշադրության չի արժանացել, այնինչ հետաքրքրական իրողություն է:

Լեզվաբանական տերմիններ կերտող միավորների դերով հանդես են գալիս, բնականաբար, հիմնականում հայկական, մասամբ էլ ռուսական և հունական տառանունները:

Ո՞ր տառանուններն են բաղադրելի, իմաստային-բառակազմական ի՞նչ ընդհանրություններ ունեն տառանուն բաղադրիչով տերմինները, ժամանակագրական ի՞նչ պատկեր են ներկայացնում, լեզվաբանության ո՞ր ոլորտների տերմիններ են, ի՞նչ չափով են արտացոլված բառարաններում, այլ լեզուների համանման իրողությունների հետ ինչպիսի՞ առնչություններ կան,- այս և հարակից հարցերի պատասխանը կփորձենք տալ ստորև:

¹ Տե՛ս *Ա.Ն.Մուրադյան*, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971, *Լ.Գ.Ղազանջյան*, Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն / Լեզվի և ոճի հարցեր, պր. 4, Եր., 1977:

² Տե՛ս *Գ.Զ.Պետրոսյան*, *Ս.Ա.Գալստյան*, *Թ.Ա.Ղարազյուլյան*, Լեզվաբանական բառարան, Եր., 1975 (այսուհետև՝ *Լեզվաբանական բառարան, ԼԲ*), *Ֆ.Գ.Խլղաթյան*, Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Եր., 1976, նաև Ոճաբանական բառարան, Եր., 2000, *Ա.Գ.Նազարյան*, Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Եր., 1993:

Տառանուն բաղադրիչ ունեցող լեզվաբանական տերմինները մեծ մասամբ խմբավորվում են ըստ բառակազմական կաղապարների: Միայն մեկ-երկուսն են դուրս մնում տերմինակազմիչ կաղապարներից: Այսպես:

Հայկական այբուբենի 25-րդ տառի անվանումը տեսնում ենք *չակերտ* բառի մեջ, որի համար Նոր հայկազյան բառարանը գրում է. «Այս բառ ի յիշատակարանս գրչաց յետին դարուց և եթ գտանի»,³ և բացատրում, որ կետադրական այս նշանը կերտվել է *չա* տառի գլխիկի ձևով:⁴

Չակերտ տերմինն իրականում նոր շրջանի գրաբարում կիրառված բառ է,⁵ որի երբեմնի ունեցած բաղադրական հիմքերն այլևս չեն գիտակցվում: Այդ պատճառով էլ այն իբրև գլխաբառ ներկայացված է Արմատական բառարանում:

Հունական *յոտա* (լատինական *յոտ*) տառանունից ունենք *յոտավորում (յոտացիա)* տերմինը. սրանով անվանում են հնչյունական այն երևույթը, երբ բառասկզբում ձայնավորներից առաջ և բառամիջում ձայնավորների միջև յ հնչյուն է ավելանում: Տառանուններով կազմված հայերեն լեզվաբանական տերմինները ներկայացնենք ըստ բառակազմական կաղապարների:

«Տառանուն+տառանուն(ներ)» կաղապարով կազմված տերմիններ

այբուբեն

Ժամանակագրական տեսակետից առաջինը *այբուբեն* բառն է, որը կազմվել է հայերենի այբուբենի առաջին երկու տառերի անուններից՝ *ու* շաղկապով: Տարբերակներն են՝ *այբբեն*, *այբկբեն/այբ և բեն*: Յմնտ. «Մեկնեաց զայբուբենսն զամենայն: Կոմիտաս արար զերգս շարականաց հայերէն այբբենիւք: Ուսաւ զայբ և բենս» (*ՆՅԲ*, հ. 1, էջ 79):

Բառի տարբերակները հայերենի արդի փուլում, կարելի է ասել, չեն գործածվում. հանդիպում են միայն անցյալ (կամ նախանցյալ) դարի գրական երկերում: Յմնտ. «*Այբբենի տեղ մեզ ալիֆ բեյ*

³ Տե՛ս *Գ.Աւետիքեան, Խ.Սիրմելեան, Ս.Աւգերեան*, Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 562 (այսուհետև՝ *ՆՅԲ*):

⁴ Հր.Աճառյանն այս մեկնությունը ճիշտ է համարում և ներկայացնում իբրև *չա+կերտ* (տե՛ս *Հայերեն արմատական բառարան*, հ. 3, Եր., 1977, էջ 622):

⁵ Ստեղծումը վերագրվում է Սեսրոպ Տեր-Հարությունյանին. «Քերականութիւն յաշխարհաբառէ ի գրաբառն», Կ.Պօլիս, 1808 (հմնտ. *Լեզվաբանական բառարան*, էջ 248, *Վ.Գ.Համբարձումյան*, Գրաբարի գործառնությունը որպէս գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Եր., 1990, էջ 131):

են սովորեցնում: Էլ չուզեց վերադառնալ դեպի **այբ-բենը**».⁶ «...քահանի հայոց **«այբ-բեն»**-ը կապրի, հայը չի՛ մեռնի...».⁷

Հայտնի փաստ է, որ **այբուբեն**-ը կազմվել է հունարեն *ἀλφάβητος* բառի նմանակությամբ (հմմտ. նույն սկզբունքով կազմված այլալեզու բառերի հետ՝ ռուս. *азбука*, վրաց. *անբանի* և այլն): Այբուբենի համար մեզանում նախապես գործածվում էր հունարեն բառի փոխառյալ ձևը (մատենագրության մեջ հանդիպում է տարբեր գրություններով՝ **այվիարետ/ք/, աղվիարետք, այվիափետ/ք/, աղվիափետք**), որը հավանաբար գալիս է Հայաստանում եղած հունական դպրոցների առօրյայից, իսկ **այբուբեն** բառը գործածության մեջ մտավ ավելի ուշ՝ հայ գրերի գյուտից հետո:⁸ Գրավոր վկայությունները համենայնդեպս ոսկեդարյան չեն:

Սակայն ենթադրություն է եղել, որ բառապատճենումը կատարվել է գրերի գյուտից էլ առաջ:⁹ Այս տեսակետին դժվար է համաձայնվել. եթե չկային հայերեն տառերը, բնականաբար, չկային նաև նրանց անվանումները (թեկուզև դրանք մեծ մասամբ ձևավորվել են օտար, մասնավորապես հունական և սեմական անմիջական ազդեցությամբ¹⁰):

Տառանուն բաղադրիչ ունեցող տերմինները սովորաբար մեցիմաստ են: **Այբուբեն** բառը, ի տարբերություն մյուսների, բազմիմաստ է. տերմինային համակարգից դուրս այն բառապաշարի համագործածական շերտի միավոր է: Իր հիմնական՝ «որևէ լեզվի բոլոր տառերի ամբողջությունը՝ ընդունված դասավորությամբ» նշանակությունից զատ ձեռք է բերել նաև «գրաճանաչություն, գրագիտություն», «որևէ գիտության, ասպարեզի տարրական գիտելիքներն ու հիմունքները» իմաստները: Իմաստային նման ճյուղավորումը միանգամայն հասկանալի է. նույն իմաստները կան եվրոպական լեզուների «այբուբեն» նշանակող բառերում:

Ի դեպ, **այբուբեն/այբբեն**-ը տառանուն պարունակող այն քիչ բառերից է, որը բաղադրությունների հիմք է դարձել, ինչպես՝ **այբբենարան, այբբենական** (սրանից էլ՝ **այբբենականություն, նախաայբբենական, հետայբբենական**), **այբբենաթուր** «այբուբենն իբրև թուր ունեցող» (բանաստեղծական բառ է, դիպվածային), **այբբենաշար** «արևելյան, առավելապես արաբական բանաստեղծության կառուցվածքային տեսակներից մեկը, դարահեջա»:

⁶ Տե՛ս **Ղ.Աղայան**, Երկեր, Եր., 1979, էջ 211, 96:

⁷ Տե՛ս **Ավ. Իսահակյան**, Երկերի ժողովածու, հ. 3, Եր., 1975, էջ 331:

⁸ **Գ.Զահուկյան**, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Եր., 1955, էջ 34:

⁹ Տե՛ս **Դ.Զ. Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 25:

¹⁰ Տե՛ս **Դր. Աճառյան**, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 560-566:

այբ(բ)ենգիմ

«Այբուբեն» հասկացությունը հայերենում անվանվում է նաև **այբ(բ)ենգիմ**¹¹ բառով, որը կազմվել է ավելի վաղ ստեղծված **այբ-բեն**-ին այբուբենի երրորդ տառաձևումը հավելելով: Գործածական է արևմտահայերենում: Ավելի շատ հանդիպում է **բ**-երից մեկի ամփոփումով: Օր.՝ «*Ծերացեր եմ, նորեն այբենգիմեն սկսելու, նոր կեանքի յարմարելու*»:¹² «*Կարօտը դենքերուն վրայ՝ այբենգիմի պես պարզ կը կարդացուի*»:¹³

Այբենգիմ/այբենգիմ-ը համեմատելի է ֆրանս. ABC, abc, անգլ. ABC, գերմ. Abc, A-B-C կազմությունների հետ: Արևմտահայերենը թերևս հետևել է ֆրանսերենի օրինակին, քանի որ մինչև 20-րդ դարի կեսերը նրա անմիջական ազդեցության ներքո էր գտնվում:

Արևելահայերենում **այբենգիմ**-ը բառային արժեք ձեռք չի բերել: Հմնտ. «*Այդ դժվար չթվաց Արությունին՝ առաջուց սովորած լինելով յուր մորից, և ոչ այբ, բեն, գիմ ասելը դժվարացավ*»:¹⁴ «*Բոլորդ միասին ինձ հետ երգեցեք «այբ-բեն-գիմ»*»:¹⁵

«Տառանուն+՝գրություն» կաղապարով կազմված տերմիններ

Եչագրություն

Բառի առաջին բաղադրիչը հայկական այբուբենի 5-րդ տառի անունն է: **Եչագրություն** բառը կազմվել է մասնակության հետևանքով և գործածվել մասնավորաբար Մ.Աբեղյանի առաջարկած ուղղագրական փոփոխությունների կապակցությամբ:

Գրություն վերջնաբաղադրիչով լեզվաբանական շատ բառեր ունենք, ինչպես՝ **բևեռագրություն, զրչագրություն, ծածկագրություն, կապագրություն, կցագրություն, հնչյունագրություն, նշանագրություն, պատկերագրություն, վանկագրություն, վիմագրություն, ուղղագրություն, փակագրություն** և այլն, նաև ստորև տրվող տառանվանական կազմությունները՝ **է-ագրություն, հյունագրություն, վեվագրություն, ուագրություն**: Կարելի է ասել, որ տերմինակազմիչ կաղապար է ձևավորվել, և սպասելի են այլ կազմություններ:

Բառարանային գրանցում չունի:

¹¹ Տե՛ս *Ստ. Սալխասեանց*, Հայերեն բացատրական բառարան, հ. Ա, Եր., 1944, էջ 73:

¹² Տե՛ս *Վ.Թեթեան*, Նամականի, Լոս Անջելես, 1983, էջ 388:

¹³ Տե՛ս *Գարեգին Բ կաթողիկոս*, Հող, մարդ և գիր, Անթիլիաս, 1991, էջ 147:

¹⁴ Տե՛ս *Ղ.Աղայան*, նշվ. տեղում, էջ 96:

¹⁵ Տե՛ս *Ավ. Իսահակյան*, նշվ. տեղում, էջ 330:

Տ-ազրություն

Այբուբենի 7-րդ տառի անունով կազմված ***Տ-ազրություն*** բառն առաջին հայացքից անսովոր ձևավորում ունի: Այն, կարելի է ասել, ստեղծվել է տառի զուտ անվանողական արժեքի հիման վրա: Օր.՝ «*Բառամիջի Տ-ազրությունը սովորելու համար պետք է բառամիջում այդ տառն ունեցող բառերի ցուցակն ունենալ ձեռքի տակ*»:¹⁶

Բովանդակային կողմով հակադրվում է ***Եչազրություն*** բառին, իսկ գրությամբ աղերսվում է ***ու-ազրություն, ւ-ազրություն*** և նման այլ կազմությունների:

Գծիկով է գրվել թերևս համանուն ***Տ*** արմատով («էակ, էութուն») կազմությունների հետ չչփոթելու նպատակով, ինչպես՝ ***էաբանություն*** կամ ***էախոսություն*** «ուսմունք էացության՝ գոյացության մասին», ***էականություն*** և այլն:¹⁷

Եզակի կիրառություն է, բառարանային գրանցում չունի:

Վեվազրություն

Այբուբենի 30-րդ տառի անունով կազմված այս տերմինը կապվում է հայ իրականության մեջ 19-րդ դարի վերջերին ծավալված և մինչև հաջորդ դարի սկզբները տևած ուղղագրական բանավեճի հետ:

Վեվազրություն¹⁸ տերմինը գործածվում է ուղղագրական այն իրողությունն անվանելու համար, երբ ***ու*** և ***ւ*** գրերը փոխարինվում են ***վ***-ով, օրինակ՝ ***նուէր – նվէր, հաւ – հավ*** և այլն: Կազմվել է ***հյունազրություն*** բառի հետ գրեթե միաժամանակ. ուղղագրական բանավեճը սրանց հակադրության վրա էր հիմնված:

Բանավեճի տարիներին ***վեվազրություն*** և ***հյունազրություն*** բառերը հաճախադեպ էին պարբերական մամուլի բանավիճային հոդվածներում: Այսօր գրեթե մոռացվել են: Այժմ դրանք նույնիսկ մասնագիտական գրականության մեջ հազվադեպ են: Հմմտ. «Փոյ-

¹⁶ Տե՛ս ***Ռ. Իշխանեան***, Դասական ուղղագրութեան կանոններ, Եր., 1991, էջ 12:

¹⁷ Մասնագիտական բանավոր խոսքից գրանցել ենք ***է-ական*** (այսինքն՝ ***է*** տառով) ***զրություն*** բառակապակցությունը: Սա էլ միայն գծիկով պիտի գրել՝ ***էական***-ի հետ չխառնելու համար:

¹⁸ Հանդիպում է նաև ***վևազրություն*** ձևով (ավանդական ուղղագրությամբ՝ ***վեւազրութիւն***), օր.՝ «*Այս վերջին օրերս էլ գրում եք ընդդեմ Ստ. Մալխասյանցի վևազրության*» (տե՛ս ***Ղ.Աղայան***, Երկերի ժողովածու, հ. 3, Եր., 1963, էջ 487), հազվադեպ՝ ***վ-ազրություն***, օր.՝ «*Վ-ազրության հեղինակին ուղղագրության մասնաժողովի մեջ մտցնելը... նման է ամբարի մեջ պանիրը կատվի հսկողությանը հանձնել*» (տե՛ս ***Ա.Վ.Գյուլբուրդյան***, Հայերենի ուղղագրության պատմություն, Եր., 1973, էջ 322):

ծեց մեր վ հնչյունի... ուղղագրությունը բժշկել իր «վեվագրությանը»¹⁹ «**վեվագրությունը** մերժելով մերժում են Մխիթարյանները»²⁰ «Ուժեղ պայքար է ծավալվում այսպես կոչված **վեվագրության** ու **հյունագրության** հարցի շուրջը»²¹

Կարծում ենք, ճիշտ չէ **վեվագրություն** և **հյունագրություն** բառերը դիպվածային համարելը²² Աներկբա է, որ դրանք կազմվել են հասարակական հետաքրքրություն ներկայացնող իրողություններն անվանելու նպատակով, ժամանակին լայնորեն գործածվել են և այսօր էլ շարունակում են ըստ անհրաժեշտության կիրառվել (արդեն միայն գիտական աշխատություններում՝ տերմինային արժեքով): Դրանք որպես դիպվածային կազմություններ կարող էին ընկալվել միայն գործածության նախնական շրջանում:

հյունագրություն / վյունագրություն

Մաշտոցյան այբուբենի 36-րդ տառի **ւ**-ի անվանումով ունենք **հյունագրություն** տերմինը, որը նշանակում է **վ** արտասանվող **ու**-ն **ւ** տառով գրելը, օրինակ՝ **Աստած, նւէր, կատուի** և այլն: Գրության այդ ձևն առաջարկել, կիրառել և ջերմեռանդորեն պաշտպանել է գրող, մանկավարժ-լեզվագետ Ղ.Աղայանը: Օր.՝ «Թեև 1909թ. «Նոր դպրոց»-ը ժամանակավորապես ընդունեց **հյունագրությունը**, բայց ուսուցիչները զանգատվում էին, որ աշակերտները շփոթում են **ւ**-ն և **վ**-ն»²³

Նկատելի է, որ **ւ** տառի համար ընդունված երկու անուններից (**հյուն** և **վյուն**) բառակազմության մեջ առավելաբար հանդես է գալիս **հյուն**-ը, օրինակ՝ **հյունական, հյունամուլ, հյունացավ** և այլն: **Վյուն**-ը քիչ է պատահում, այն էլ՝ իբրև տարբերակային ձև: Զմնտ. **Մեծ վեճերի տեղիք էր տալիս ւ-ի և վ-ի (վյունագրության և վեվագրության) օգտագործման շրջանակների հարցը**:²⁴ Բառարանները, որպես կանոն, հիշատակում են **հյուն**-ով բաղադրված բառերը²⁵

¹⁹ Տե՛ս **Մ. Աբեղյան**, Ուղղագրության ռեֆորմը / Երկեր, հ. Ը, Եր., 1985, էջ 455:

²⁰ Տե՛ս **Ս.Վ. Գյուլբուրդայան**, նշվ. աշխ., էջ 292:

²¹ Տե՛ս **Ա.Ս. Մարգարյան**, ժամանակակից հայոց լեզու, Եր., 1997, էջ 169:

²² Զմնտ. **Թ. Ղարաբոյլյան**, Դիպվածային և պոտենցիալ բառերը ժամանակակից հայերենի բառաստեղծման համակարգում / Լեզվի և ոճի հարցեր, պր. 7, Եր., 1983, էջ 209:

²³ Տե՛ս **Ս.Վ. Գյուլբուրդայան**, նշվ. աշխ., էջ 291:

²⁴ Տե՛ս **Գ.Բ. Զահուկյան, Է.Բ. Աղայան, Վ.Դ. Առաքելյան, Վ.Ա. Քոսյան**, Զայոց լեզու, Ա պրակ, Եր., 1980, էջ 35:

²⁵ **էր. Աղայանի** բառարանում (էջ 876, 1396) վկայված են թե՛ **հյունագրություն**, թե՛ **վեվագրություն** բառերը՝ առանց փոխադարձ հղումների:

Անցյալում (երբեմն նաև մեր օրերում) գործածվել է գրության **Լ-ազրություն** ձևը: Օրինակ՝ «Նոր սերունդը վարժվեցավ **Լ-ազրությանը**»: ²⁶ «Ղ.Աղայանի դասագրքի շնորհիվ 90-ական թվականներից տարածվեց **Լ-ազրությունը**»: ²⁷ Հանդիպում է նաև **Լ-յունազրություն** ձևը, որն ընդունելի չէ: Օր.՝ «...**Լ-յունազրության** և վեկազրության պաշտպանները իրապես մի նպատակ էին հետապնդում՝ կանոնավորել **վ-ի, ու-ի, Լ-ի ուղղագրությունը**»: ²⁸

ուազրություն

Ու տառը մեսրոպյան այբուբենում չկար. այն հետագայում է ավելացվել **Լ-ի** փոխարեն: Հնչյունը և տառի անունը նույնն են:

Այս տառանունով ունենք **ու-ազրություն** բաղադրությունը, որը լրացնում է համանման բառերի շարքը (հմմտ. **է-ազրություն, Լ-ազրություն**): Օր.՝ «1890-ական թվականներին մեր դպրոցներից ելնողներն ևս մեծ մասամբ թողել են դպրոցում սովորած **ու-ազրությունը**»: ²⁹ «Այժմ (1913թ.) **ու-ազրությունը** պահում են միայն հին սերնդի մարդիկ»: ³⁰

Բառը տեսնում ենք նաև առանց գծիկի, բայց, համեմայնդեպս, չակերտներով, որն այս պարագայում պայմանականության ցուցիչ է: Այսպես: «19-րդ դ. վերջին մեզանում բորբոքված վեճը վեկազրություն, թե՞ հյունազրություն, կարծում ենք, պիտի հանգեցնել... **ու-ի** («**ուազրության**») նախապատվությանը»: ³¹

Հետաքրքիր է, որ գծիկով գրվող **է-ազրություն, Լ-ազրություն, ու-ազրություն** կազմություններում տառ / տառանուն բաղադրիչը ձայնավոր (կամ ձայնորդ) հնչյունի նշանն է: Գծիկով գրելու նպատակը, ինչպես ասվել է, բառային միավորի արտաքին ձևավորման ճիշտ ընկալումն ու արտասանությունն ապահովելն է:

Բառարանային գրանցում չունի:

«Տառանուն+ական» կաղապարով կազմված տերմիններ

ցոյական

Այբուբենի 35-րդ տառի անունով է կազմվել **ցոյական** տերմինը, որը գործածվում է **ց (ցո)** նշույթ ունեցող անցյալ կատարյալի

²⁶ Տե՛ս **Մ.Արեղյան**, Մեր ուղղագրության մասին /Երկեր, հ. Ը, էջ 333:

²⁷ Տե՛ս **Ս.Վ. Գյուլբուդադյան**, նշվ. աշխ., էջ 311:

²⁸ Տե՛ս **Ա.Ս. Մարգարյան**, նշվ. աշխ., էջ 169:

²⁹ Տե՛ս **Մ.Արեղյան**, նշվ. տեղում:

³⁰ Տե՛ս **Ս.Վ. Գյուլբուդադյան**, նշվ. տեղում:

³¹ Տե՛ս **Վ. Համբարձումյան**, Հայոց լեզվի դասական ուղղագրության հիմունքները, Եր., 1993, էջ 46:

հիմքը (կամ նրա ձևերը) անվանելու համար, օրինակ՝ **գրեց-, կարդաց-, գրեց-ի, գրեց-իր:**

Հակահիշը **անցոյական** (կամ **ոչ ցոյական**) տերմինն է: Հմմտ. «**Գրական լեզվի և գրաբարի անցյալ կատարյալն ունի ցոյական հիմք (խոսքը կանոնավոր բայերի մասին է): Գրաբարում միայն «ու» խոնարհման բայերը անցյալ կատարյալը կազմում են անցոյական հիմքով**»:³²

Ասվել է, թե **ցոյական** բառը գործածվում է միայն **ցոյական հիմք** կապակցության մեջ:³³ Այնինչ բնագրային օրինակներն այլ բան են վկայում. «**Ե խոնարհման պարզ բայերի հիմքը բաղադրյալ-ցոյական է**»:³⁴ «**Չ. Գյուրջմանը նշում է, որ ցոյական անցյալ կատարյալի ց-ն չի կարելի բացատրել հնդեվրոպական s-ով: Ցոյական աորիստի առաջացման վերաբերյալ յուրովի տեսակետ է հայտնել Ա.Թոմսոնը: Հենց այս ձևերից էլ Մյուլլերը հավանական է համարում, որ առաջացել է ցոյական երկրորդ ապառնին**»:³⁵ Կա նաև **ցոյական բայաբուն** կապակցությունը:

Կազմվել է նաև **ցոյականություն** բառը:³⁶

Ցոյական հիմքով բայերը կոչվում են **ցոյակազմ բայեր:**

Ցոյական տերմինի ռուսերեն համարժեքն է цойный կիսապատճենը: Օր.՝ Цойные основы являются образованиями, возникшими на армянской почве:³⁷ Такие основы, по названию буквы -с^с- (**ց**) в армянском называют цойными.³⁸

Այդպես էլ՝ **անցոյական** - нецойный: Օր.՝ Нецойные аористы без аугмента имеют три разновидности:³⁹

Այս կիսապատճենները, խիստ նեղ մասնագիտական բառեր լինելով, ռուսերեն բառարաններում չեն հիշատակվում:

³² Տե՛ս **Ար.Ղարիբյան**, Համառոտություն հայ բարբառագիտության, Եր., 1941, էջ 149-150:

³³ Տե՛ս **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան**, հ. 4, Եր., 1980, էջ 563:

³⁴ Տե՛ս **Ա.Ա.Աբրահամյան**, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 132:

³⁵ Տե՛ս **Թ.Ղարազյուկյան**, Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը, Եր., 1961, էջք 81, 82, 125:

³⁶ Տե՛ս **Բ.Կ.Ղազարյան**, Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան, Եր., 1982, էջ 729: Հայերենի մյուս բառարաններն այն չունեն:

³⁷ Տե՛ս **Э.Г.Туманян**, Древнеармянский язык, Москва, 1971, էջ 339:

³⁸ Տե՛ս **Г.Б.Джаукян**, Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982, էջ 162:

³⁹ Տե՛ս **Г.Б.Джаукян**, նշվ. աշխ., էջ 187:

րեական

Այբուբենի 34-րդ տառով *ր*-ով, առիասարակ մի քանի բառ ունենք (դրանք էլ, որպես կանոն, ծագումով հայկական չեն):

Ր-ով կազմությունների մեջ սովորաբար չեն հիշում *րեական* լեզվաբանական տերմինը (*րեական* են կոչում ժամանակակից հայերենի պատճառական բայերի անցյալ կատարյալի հիմքը՝ *ր (րե)* նշույթի միջոցով ձևավորվելու պատճառով, ինչպես՝ *հազցնել – հազցր-/ի/, մոտեցնել – մոտեցր /-ու/*):

Տերմինը քանիցս գործածվել է հայերենագիտական աշխատություններում և բուհական դասագրքերում: Օր.՝ «*Այն բայահիմքերը, որոնք կազմվում են -աց, -եց վերջավորություններով, կոչվում են ցոյական. համապատասխանաբար –ր-ով կազմվող հիմքերն էլ կկոչենք րեական*»:⁴⁰ «*Պատճառական բայերի անցյալ կատարյալի նմանակությամբ ր-ով կան րեական հիմք ունեն մաս հարցնել, լցնել բայերը*»:⁴¹ «*Կատարյալի հիմքը րեական է*»:⁴² Ինչպես տեսանք, գործածական տերմին է, բայց իբրև գլխաբառ բառարաններում չի հանդիպում:

Ընդունված է ասել, որ ստեղծվել է *ցոյական* տերմինի նմանակությամբ:

Հարկ է նշել, որ մինչ այդ կազմված է եղել մեկ այլ նշանակությամբ *րեական* տերմին: Նշանավոր հայագետ Ն. Մառը կարծում էր, որ գոյություն ունի երկու հայերեն՝ *քեական* և *րեական* (ըստ *-ք* և *-եր* հոգնակերտների). *քեականը* գրաբարն է, իսկ *րեականը*՝ նոր գրականը՝ ժողովրդականը: Հմմտ. «*Հայաստանի այս երկու լեզուներից յուրաքանչյուրը... պատկանում է առանձին սիստեմի, մեկը՝ քեականը՝ թեքականին, մյուսը՝ րեականը՝ կցականին*»:⁴³ «*Ն.Յա. Մառը գտնում էր, որ գրաբարը և հայերենի բարբառները առաջացել են երկու միանգամայն տարբեր հիմքից, որոնցից առաջինը պայմանական կերպով անվանել է «հայկական» (կամ քեական), իսկ երկրորդը՝ «արմենական» (կամ րեական)*»:⁴⁴

⁴⁰ Տե՛ս *Էդ. Աղայան*, ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 335:

⁴¹ Տե՛ս *Ա.Գ.Արքահայան, Ն.Ա.Պառնասյան, Հ.Ա.Օհանյան*, ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Եր., 1974, էջ 277:

⁴² Տե՛ս *Ս.Ասատրյան*, ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. 9, Եր., 1977, էջ 89, ժամանակակից հայոց լեզու, Եր., 1983, էջ 218:

⁴³ Հմմտ. *Ն.Յա.Մառ*, Ընտիր երկերի ժողովածու, հ. 1, Եր., 1949, էջ 197,

Էդ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Եր., 1962, էջ 122:

⁴⁴ Տե՛ս *Ա.Վ.Գրիգորյան*, Հայ բարբառագիտության դասընթաց, Եր., 1957, էջ 55:

Տերմինային հասկացությունը նախ ռուսերեն է դրսևորվել, ապա պատճենվել հայերեն: Օր.՝ *Обе баскские разновидности... сохранились у армян, на их **рейском** армянском языке или **хай'ском**:*⁴⁵

Երկու դեպքում էլ *րեական* նշանակում է «*ր*-ով բնութագրվող՝ տարբերակվող՝ հատկանշվող»:

քեական

Ինչպես ասացինք, Ն.Սառը տարբերակում էր *քեական* և *րեական հայերեն*: *Քեական* էր համարում գրաբարը, որի ընդհանրական հոգնակերտը *-ք*-ն է (*քե* տառաձևուն+*ական* վերջածանց): Օր.՝ «*Սառի կարծիքով պետք է տարբերակել երկու հայերեն՝ քեական և րեական (ըստ -ք և -եր հոգնակերտների արտահայտությունների)*»:⁴⁶

Տերմինը պատճենվել է ռուսերենից: Յմնտ. Слово *yer-kaun*, исключительно древнелитературное, принадлежит языку *хайкскому*... или формально по образованию мн. числа *кейскому* (мн. ч. звук *q*, название буквы *qe*).⁴⁷

Քեական-ը և *րեական*-ը խիստ մասնավոր բնույթ ունեցող տերմիններ են, բառարաններում գլխաբառ չեն դարձել:

իական

Այբուբենի ժամանակակից ուսուցման մեջ ընդունված է տառերը սովորեցնել ոչ ավանդական անուններով, ըստ հնչման: Գրաբարյան *իմի*-ի փոխարեն ասվում է *ի*: Սա էլ մասնակցել է տերմինակազմությանը:

Անցյալ կատարյալի հիմքերն անվանող *ցոյական* և *րեական* տերմինների մասնակությամբ կազմվել է միանգամայն ընդունելի *իական* տերմինը՝ գրաբարի *ի* բաղադրիչ ունեցող անցյալ կատարյալի հիմքն անվանելու համար (*թաքչիմ -թաքի, մարտնչիմ - մարտի*): Օր.՝ «*Կատարեալի իական-բաղադրեալ հիմքերու խոնարհումը միայն կրաւորածն է*»:⁴⁸

Բառարանային գրանցում չունի:

⁴⁵ Տե՛ս *Н.Я.Март*, Избранные работы, т. 2, Москва-Ленинград, 1936, էջ 145:

⁴⁶ Տե՛ս *Չ.Զ. Պետրոսյան*, նշվ. բառարանը, էջ 455:

⁴⁷ Տե՛ս *Н.Я.Март*, նշվ. տեղում, էջք 159, 125:

⁴⁸ Տե՛ս *Մ.Սիմասեան*, Գրաբարի գործնական դասընթաց, Անթիլիաս, 1976, էջ 176:

«տառանուն+ասություն» կաղապարով կազմված տերմիններ

դատասություն

Հայկական այբուբենի 18-րդ տառանունով (*դատ*) ունենք *դատասություն* տերմինը՝ «*դ, ք*, ինչպես նաև *լ* հնչյունների փոխարեն *դ* արտասանելը» նշանակությամբ: Օրինակ՝ «*Հնչյունի փոխարինումը դ-ով կոչվում է դատասություն*»:⁴⁹ Եթե շատ լեզուներում (օր.՝ հայերեն, ռուսերեն) *ր* հնչյունի *դ* արտասանությունը թերություն է համարվում, ապա ուրիշ լեզուներում (օր.՝ ֆրանսերեն) հասարակայնորեն ճանաչված երևույթ է:

Ղատ տառանվան բառակազմական փնջի մեջ են մտնում նաև *դատասական (բաղաձայններ)*, *դատասաց*, *դատասել* բառերը, վերջինիս բայանուն գոյականը՝ *դատասում*, և *դատահունջ*:⁵⁰

Օրինաչափական է, որ տառանունը բաղադրվել է արտաբերության հետ կապված -*աս* և -*հունջ* արմատների հետ: Այլ տառանունների պարագայում, ինչպես կտեսնենք ստորև, հանդես է գալիս նաև -*խտս*-ը (հմմտ. *ցոյախտություն*, *օյախտություն*):

Ղատասություն-ը չի հանդիպում խոսքի թերություններից նվիրված հայերեն աշխատություններում:

ծայասություն

Այբուբենի 17-րդ տառի անունով է կազմվել *ծայասություն* տերմինը: Հմմտ. ռուս. дзеканье: Սրա միջոցով անվանում են բելո-ռուսերենի, լեհերենի, ինչպես նաև ռուսերենի որոշ բարբառների արտաբերական այն առանձնահատկությունը, երբ *д* բաղաձայնը հնչվում է որպես *ј* (*ժ*), ինչպես՝ լեհ. dzieci, ռուս. дядя և այլն: Օր.՝ «*Հնչյունական համակարգին (բելոռուսերենի - Դ.Գ.) բնորոշ են ալասությունը, ծայասությունը, ցոյասությունը...*»:⁵¹

Նախ վկայվել է *ծ-ասություն* ձևով (*ԼԲ*, էջ 201): Այլ բառարաններում չի հանդիպում:

⁴⁹ Տե՛ս *Յ.Զ. Պետրոսյան*, նշվ. բառարանը, էջ 285:

⁵⁰ Նշված բառերը կան ակադեմիական «Ռուս-հայերեն բառարանում» (հ.հ. 1-4, Երևան, 1954-1958. տե՛ս картавость, картавый, грацировать, ротацизм. սխալմամբ տրվել են նաև *դադասություն*, *դադասել* ձևերը): Տե՛ս նաև *Էդ. Աղայան*, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 930 (*դատասական*-ից բացի, մյուսներն արձանագրված են): Ի դեպ, *դատ* տառանունով որևէ բառ չկա Ստ. Մալխասյանցի, ակադեմիական բառահատոր բացատրական և Հովհ. Բարսեղյանի ուղղագրական-ուղղափոսական, տերմինաբանական բառարաններում:

⁵¹ Տե՛ս *Հայկական սովետական հանրագիտարան*, հ. 2, Եր., 1976, էջ 377:

Երևույթը գոյություն ունի արդի խոսակցական հայերենում (փոխառյալ որոշ բառերում բառասկզբի կամ բառամիջի **դ**-ն ուժեղ քմայնացումով, գրեթե **ծ** արտասանելը, օր.՝ *ծիրեկտըր, ռաձիո* և այլն), սակայն տերմինն այդ առումով չի գործածվում:

չայասություն

Համաբանությամբ է ստեղծվել *չայասություն* տերմինը (*ԼՔ*, էջ 297), որն ունի «հայկական *չա* տառանուն+/ ձայնակապ + *ասել/ + ություն*» կառուցվածքը: Հմմտ. ռուս. *чоканье*: Այս տերմինով են անվանում ռուսական սակավաթիվ խոսվածքներին բնորոշ այն իրողությունը, երբ **ց** հնչյունի փոխարեն **չ** են արտասանում, օր.՝ *челый* (փոխ. *цельй*):

Նախ վկայվել է *չրասություն* ձևով:⁵²

ցոյասություն / ցոյախոսություն

Ցո տառանունով մյուս տերմինը՝ *ցոյասություն*-ը (*ԼՔ*, էջ 297), կազմվել է ռուսական հյուսիսային և հարավային որոշ խոսվածքների բնորոշ արտասանությունն անվանելու համար, երբ **ց** և **չ** հնչյունները չեն տարբերակվում, և **չ**-ն **ց** է արտասանվում, օր.՝ *цай* (փոխ. *чай*): Հմմտ. ռուս. *чоканье*:

Արտաբերական նույն երևույթի համար ստեղծվել է *ցոյախոսություն* տարբերակային տերմինը:⁵³

Բառակազմական փնջի մեջ են մտնում նաև *ցոյասել* բայը (հմմտ. ռուս. *чокать*) և *ցոյասում* բայանուն գոյականը:⁵⁴

օյասություն / օյախոսություն

Միջին դարերում հայերենի այբուբենն ներմուծված **օ**-ի անվանումն ու հնչումը նույնական են:

Բառակազմիչ այս տարրով են կազմվել *օյախոսություն / օյասություն* տերմինները:⁵⁵ Հմմտ. ռուս. *оканье*: Սրանց միջոցով անվանում են ռուսերենի բարբառախմբերից մեկին բնորոշ արտասանական այն առանձնահատկությունը, երբ անշեշտ վանկում, ի տարբերություն գրական ռուսերենի, **օ** են արտասանում, օր.՝ *молоко, корова*: Իսկ *օյախոս* ածականի միջոցով՝ ռուսերենի վերո-

⁵² Տե՛ս *Ա. Ղարիբյան*, Ռուս-հայերեն բառարան, Եր., 1968, էջ 1366: Այսինքն՝ բառի հիմքում դրվել է ոչ ավանդական տառանունը:

⁵³ Տե՛ս *Ա. Ղարիբյան*, նշվ. բառարանը, էջ 1353:

⁵⁴ Տե՛ս *Ռուս-հայերեն բառարան*, հ. 4, Եր., 1958, էջ 659:

⁵⁵ *Ա. Ղարիբյանի* բառարանում (էջ 644) վկայված են *օյասություն* և *օյախոսություն* (հմմտ. *ծ-ասություն*):

հիշյալ բարբառախմբերից մեկը: Հմմտ. «Առկա են... երկու բարբառային գոտիներ՝ հյուսիս-վելիկոռուսական (օյախոս) և հարավ-վելիկոռուսական (այախոս)»:⁵⁶

Կազմվել են նույնահիմք բայերը՝ *օյախոսել* և *օյասել* (հմմտ. ռուս. окать, հայ. *դատասել, ցոյասել, այասել*):

Գործածական է նաև *օյահունջ բարբառ* բաղադրյալ տերմինը: Օր.՝ «Ռուսերենի բարբառները բաժանում են երկու խմբի՝ *օյահունջ* - օ հնչող (окаюцаў) և *այահունջ* - а հնչող (акаюцаў)»:⁵⁷ Հմմտ. *այահունջ, դատահունջ*:

այասություն / այախոսություն

Օ-ով կազմություններին համահունջ են և տառի ինքնանվանողական գործառույթի հիման վրա են կազմվել նաև *այախոսություն, այասություն* տերմինները (*ԼՔ*, էջ 10): Հմմտ. ռուս. акање: Սրանց միջոցով անվանում են ռուսաց գրական լեզվին և հարավային խոսվածքներին բնորոշ արտասանությունը, երբ անշեշտ վանկում օ-ի փոխարեն *ա* կամ *ա* -ին մոտ հնչյուն է արտասանվում, օր.՝ вода [вада], коро́ва [карова]:

Ակնհայտ է, որ ունենք նմանակությամբ կազմված երկանդամ հակադրություններ, այսպես՝ *այահունջ բարբառ* - *օյահունջ բարբառ*, *այախոս* - *օյախոս*, *այախոսություն* - *օյախոսություն*, *այասել* - *օյասել*, *այասություն* - *օյասություն*:

իասություն

ի բառակազմական տարրով է կազմվել *իասություն* տերմինը (*ԼՔ*, էջ 116): Հմմտ. ռուս. иканье: Առաջացել է *ի ասել* կապակցությունից՝ *-ություն* վերջածանցի հավելումով: Այս տերմինով են անվանում ռուսերենի բարբառային արտասանության առանձնահատկություններից մեկը, երբ առաջին նախաշեշտ վանկում փափուկ բաղաձայններից հետո չտարբերակված *и* է հնչվում, ինչպես՝ тину < тяну, нису < несу⁵⁸ և այլն:

յասություն

Տերմինի կազմում կա ռուսերենի *յա* տառանունը Հմմտ. ռուս. яканье: Օր.՝ «*Յասությունը հատուկ է հարավային ռուսական մի*

⁵⁶ Տե՛ս *Հայկական սովետական հանրագիտարան*, հ. 10, Եր., 1984, էջ 90:

⁵⁷ Տե՛ս *Ա.Վ. Գրիգորյան*, նշվ. աշխ., էջ 67:

⁵⁸ Տե՛ս *Д.Э.Розенталь, М.А.Теленкова*, Словарь-справочник лингвистических терминов, Москва, 1985, էջ 399:

շարք խոսվածքների, գրական բելոռուսերենին».⁵⁹ Այս տերմինով անվանում են արտասանական այն առանձնահատկությունը, երբ առաջին նախաշեշտ վանկի *и*^е հնչյունը փափուկ բաղաձայններից հետո արտասանվում է *я*, որ.՝ *тяну*:

յոսություն

Ռուսերեն *յո* տառանունը կա *յոսություն* (*LP*, էջ 222) տերմինի կազմում: Հմմտ. ռուս. *еканье*: Նշում է ռուսական հյուսիսային մի շարք խոսվածքների արտասանական այն առանձնահատկությունը, երբ *e* հնչյունի փոխարեն փափուկ բաղաձայններից հետո անշեշտ վանկում արտասանվում է *ө*, որ.՝ *будаёт* (փոխ. *будет*):

Ռուսերենի արտասանական իրողություններն անվանելու համար հայերենում փաստորեն բառակազմական կաղապար է ձևավորվել. հմմտ. *аканье, оканье, цоканье, чоканье, дзеканье, иканье, яканье, еканье* և *այսություն / այսխոսություն, օյսություն / օյսխոսություն, ցոյսություն / ցոյսխոսություն, չայսություն, ծայսություն, իասություն, յասություն, յոսություն*, ինչպես նաև *դատասություն* (սրա ռուսերեն համարժեքները՝ *картавость, граассирование*, նաև *ротацизм*, շարքից դուրս են):

Նախքան այդ կաղապարի ձևավորվելը ռուս-հայերեն բառարանները սլավոնական լեզուներին և մասնավորապես ռուսերենի բարբառներին վերաբերող իրողությունները ներկայացնելու համար հետևյալ միջոցներն են կիրառել՝ ա) նկարագրական եղանակի բացատրություններ են տվել, ինչպես՝ *«ց»-ի փոխարեն «չ» արտասանելը, օ-ով խոսել, ի ասել*, բ) համապատասխան հնչյուններն արտահայտող ռուսերեն գրային նշանների և հայերեն բայերի հարադրություններ են կազմել, ինչպես՝ *Дз ասելը, Ի արտասանելը*, գ) «տառանուն +ասել բայ» կաղապարով կազմված անորոշ դերբայի որոշյալի ձևն են նշել, ինչպես՝ *այասելը, ցոյասելը*, դ) նշված բայերի *-ում* վերջածանցով բայանուն գոյականն են գրել, ինչպես՝ *ցոյասում*, ե) «տառանուն+ասացական բայարմատ + ություն վերջածանց» կաղապարով տերմիններ են կազմել, ինչպես՝ *օյսխոսություն, օյսություն*: Այս վերջիններն էլ կայունացել ու ընդհանրացել են, և, ինչպես տեսանք, տերմինակազմիչ արդյունավետ կաղապար է ձևավորվել:

Այսպիսով, կարելի է հետևյալ եզրակացություններն անել:

Հայերեն լեզվաբանական տերմինների կազմությանը մասնակցել են հայկական ավանդական տառանունները՝ *այք, բեն, գիծ*,

⁵⁹ Տե՛ս *Լեզվաբանական բառարան*, էջ 221:

եչ, է, դատ, չա, թե, ցո, հյուն/վյուն, քե, ինչպես նաև *ա, ի, ու, օ* տառանունները, մասամբ այլ լեզուների տառանուններ:

Դրանք արտահայտում են ուղղագրության, հնչյունախոսության (ուղղախոսության) և ձևաբանության տարբեր հասկացություններ, որոնք հիմնականում առնչվում են հայերենագիտությանը (*ցոյական, թեական, վեվագրություն, հյունագրություն*), զգալի չափով՝ ռուսերենագիտությանը (*ծայասություն, օյահունչ, այախոս, ցոյախոսություն*), մասամբ էլ՝ ընդհանուր լեզվաբանական են (*յոտավորում, դատասել*):

Գործում են բառակազմական հետևյալ կաղապարներն ու մասնակաղապարները.

ա) «տառանուն+*(Ա/ու)*+տառանուն». *այբբեն, այբլբեն, այբուրեն, այբ(բ)ենգիմ*,

բ) «տառանուն+*ական*». *ցոյական, թեական, իական, քեական*,

գ) «տառանուն+*ա+գր+ություն*». *հյունագրություն, վեվագրություն, եչագրություն, ուագրություն, է-ագրություն*,

դ) «տառանուն+*ա+խոս*». *այախոս, օյախոս*,

ե) «տառանուն+*ա+խոս+ություն*». *ցոյախոսություն, այախոսություն, օյախոսություն*,

զ) «տառանուն+*ասել*». *դատասել, ցոյասել, այասել, օյասել*,

է) «տառանուն+*աս+ություն*». *դատասություն, ծայասություն, ցոյասություն, չայասություն, այասություն, օյասություն, իասություն*,

ը) «տառանուն+*ա+հունչ*». *դատահունչ, այահունչ, օյահունչ*:

Տառանուններով որոշ տերմիններ հանդես են գալիս բառակազմական տարբերակներով, ինչպես՝ *այբլբեն / այբուրեն / այբբեն, հյունագրություն / վյունագրություն / ւ-ագրություն, ցոյասություն / ցոյախոսություն*:

Հայկական տառանուններով կազմված տերմիններն ինչպես ինքնուրույն կազմություններ են (*չակերտ, հյունագրություն, դատահունչ, ցոյական, իական*), այնպես էլ պատճենումներ կամ նմանակությամբ ստեղծվածներ (*այբուրեն, չայասություն, օյախոս, յոտավորում*):

Գործածության մեծ հաճախականություն ունեն *այբուրեն* և *չակերտ*, ապա՝ *ցոյական* տերմինները, մնացածները հիմնականում հազվադեպ են, երբեմն միայն եզակի վկայություններ կան:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԲՆՈՒՅԹԻ

*

Մեր մտքերն օբյեկտիվ իրականության արտացոլումն են, նրա առարկաների ու երևույթների միջև եղած հարաբերությունների, նրանց բազմաթիվ ու բազմապիսի հատկությունների ճանաչումը: Մարդու ուղեղում մտքերը ձևավորվում են լեզվական համապատասխան ձևի միասնությամբ: Հետևաբար մարդկային խոսքն էլ ձևավորվում է լեզվամտածողական համապատասխան հիմքի վրա՝ բառային անհրաժեշտ հունքից, նախադասությունների ձևով:

Ամեն մարդ յուրովի է ընկալում օբյեկտիվ իրականությունը: Բնության մեջ եղած միևնույն առարկան կամ երևույթը տարբեր մարդկանց մեջ տարբեր հույզեր ու զգացմունքներ է առաջացնում, որոնք յուրատեսակ մի քողով պարուրում են տվյալ առարկայի կամ երևույթի՝ մարդու ուղեղում ծնած հասկացությունը: Ինչ խոսք, որ տարբեր առարկաներ ու երևույթներ ավելի տարբեր վերաբերմունք կառաջացնեն: Դա բացատրվում է նրանով, որ մարդը պասսիվ հայեցող չէ, այլ նրա կողմից իրականության արտացոլումը ակտիվ, ներգործուն բնույթ ունի: Արտացոլելով իրականությունը՝ միաժամանակ նա արտահայտում է նրա վրա ազդելու, ներգործելու իր

*

Այս աշխատությունը տպագրվել է ավելի քան 40 տարի առաջ, 1962թ. Հայկական պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի գիտաշխատությունների տեղեկագրում («Տեղեկագիր», 1962թ., հ. 1, էջ 215-239) և այդ պատճառով գրեթե անծանոթ է հասարակությանը: Նրանում ըստ բնույթի նախադասությունների դասակարգման հարցում եղած մի շարք նոր մոտեցումները վերջին ժամանակներս այլ հեղինակների աշխատություններում հայտնվում են առանց հղումների: Այդպիսի օրինակ գտնում ենք Ա.Պապոյանի և Խ.Բաղիկյանի «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն» գրքում, ուր որպես հայտնություն բերվում է ըստ բնույթի նախադասությունների նոր՝ ըղծական տեսակը: Մինչդեռ այդ մասին շատ հանգամանակից խոսվել է այս աշխատության մեջ, ապա 7-րդ դասարանի՝ 1999 թ. լույս տեսած հայոց լեզվի մեր դասագրքում: Վերոնշյալ ձեռնարկում ըղծական նախադասությունների առանձին տեսակ լինելն ապացուցվում է մոտավորապես նույն դատողություններով, ինչ մենք արել ենք 40 տարի առաջ: Հեղինակների անբարեխիղճ արարքի մասին մեր նամակը տպագրվել է ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի 2004 թ. առաջին համարում:

Ժամանակակից ընթերցողին մեր մոտեցումներին ծանոթացնելու նպատակով աշխատությունը վերատպում ենք խմբագրական որոշ շտկումներով:

ցանկությունը, որոշակի վերաբերմունք է դրսևորում տվյալ երևույթի նկատմամբ: Տարբեր վերաբերմունքները ծնունդ են տարբեր զգացմունքներ: «Մեր մտքերն ու զգացմունքներն արտահայտելու համար բնությունը մեզ լեզու է տվել», - ասում է Բայրոնը: Հենց դրանով էլ, այսինքն՝ լեզվի միջոցով մտքերի հետ միասին զգացմունքների արտահայտմամբ էլ պայմանավորված է տարբեր բնության նախադասությունների գոյությունը մարդկային խոսքի մեջ:

Ըստ բնության նախադասությունների տարբերակումը և դասդասումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն քերականագիտական, այլև փիլիսոփայական առումով: Որովհետև այն սերտորեն կապված է իմացության, օբյեկտիվ իրականության ճանաչողության և արտացոլման գործընթացի հետ:

Հայ լեզվաբանական գրականության մեջ մանրամասնորեն չի մշակված, թե հատկապես ինչը պետք է նկատի ունենալ նախադասությունների բնույթը տարբերակելիս: Այդ է պատճառը, որ տարբեր հեղինակների մոտ հանդիպում ենք հարցադրման տարբեր ձևակերպումների՝ նախադասությունների տեսակներն ըստ երանգի, ըստ բնության, ըստ նպատակի, ըստ արտաբերման եղանակի և այլն:

Վերևում ասացինք, որ խոսքի միջոցով մարդն արտահայտում է ոչ միայն իր մտքերը, այլև վերաբերմունքն իրականության նկատմամբ: Այդ վերաբերմունքն արտահայտվում է ձևաբանական միջոցներով, սպասարկու բառերով, շարահյուսությամբ և հնչերանգով: Խոսքի մեջ հնչերանգի դերի և նախադասությունների տարբերակման գործում նրա ունեցած նշանակության մասին ռուս լեզվաբանության մեջ կա մշակված որոշակի տեսություն: Ե.Ս. Գալկինա-Ֆեդորովն այսպես է բնորոշում հնչերանգը. «Հնչերանգ են կոչվում ձայնի բարձրության, տեմպի և տեմբրի զանազան փոփոխությունները»¹:

Հնչերանգից կախված՝ փոփոխվում է արտաբերման լարվածությունը և ուժգնությունը, հանդես են գալիս զանազան դադարներ, որոնց միջոցով նախադասության մեջ ընդգծվում կամ առանձնացվում են զանազան բառեր, ուժեղացվում կամ թուլացվում նախադասությանը նրանց հաղորդած երանգը: Ավելին՝ որոշ լեզուներում (օրինակ՝ չինարեն) հնչերանգը կարող է փոխել նույնիսկ բառի իմաստը: Հայերենում հնչերանգը քերականական այդքան լայն ասպարեզ չունի, բայց և ոճական-ճարտասանական մեծ դեր է կատարում: Ինչպես ռուսերենում, հայերենում էլ նա ձևակերպում է նախադասության ավարտվածությունը և նրան բաժանում

¹ *Е.М.Галкина-Федорук*, Современный русский язык, ч-2, М., 1958.

շարահյուսական միավորների, արտահայտում է խոսողի ասածի հուզական կողմը կամ ազդում լսողի զգացմունքների վրա:

Յայ լեզվաբանությունն անդրադարձել է հնչերանգի խնդրին, բայց լիարժեք կերպով չի գնահատել: Մ.Աբեղյանն, օրինակ, ճիշտ կերպով նշելով հնչերանգ և խոսքի օբյեկտի սերտ կապը՝ մերժում է առողջանության նշանակությունը խոսքի կազմության մեջ: «Մարդկային կրքերն ու զգացմունքները, սակայն, խիստ բազմազան են, ուստի խոսքերը այս կողմից կարելի է բաժանել ոչ միայն բացականչական ու զարմացական, այլև ուրիշ բազմազան տեսակների, որոնք նուրբ տարբերություններով զանազան են իրարից: Բայց այսպիսի բաժանումն ավելորդ է, **որովհետև խոսողի կիրքն արտահայտվում է առողջանությամբ և առանձին նշանակություն չունի խոսքի կազմության տեսակետից**»² (ընդգծումը մերն է - Ֆ.Խ)::

Արտասանության հնչերանգի միջոցով են միայն խոսքի մեջ դրսևորվում զանազան զգացմունքներ (վախ, ուրախություն, հիացմունք, սարսափ, զզվանք, արհամարհանք): Այս պատճառով նախադասությունները տարբերակելիս և համապատասխան ձևով դասդասելիս, նրանց արտահայտած իմաստից և նպատակաուղղվածությունից բացի պետք է հաշվի առնել նաև արտաբերման հնչերանգը:

Քանի որ խոսողի վերաբերմունքի և զգացմունքների դրսևորումները բազմաթիվ են, ուստի դրանց համապատասխանող հնչերանգներն էլ շատ կլինեն և տարբեր: Ավելին՝ մինևույն վերաբերմունքը տարբեր մարդկանց կողմից տարբեր հնչերանգներով է արտահայտվում: Ուստի պետք է տարբերել անհատական հնչերանգը ընդհանրացած, համընդհանուր ճանաչում գտած հնչերանգից: Վերջինս էլ դառնում է ըստ բնույթի նախադասությունների տարբերակման հիմքերից մեկը: Յայ լեզվաբանական գրականության մեջ առ այսօր ճանաչված են նախադասությունների պատմողական, հարցական, հրամայական և բացականչական տեսակները³: Բայց ըստ բնույթի նախադասությունները դասակարգելիս միայն հնչերանգի վրա հիմնվելը բավարար չէ: Այս հարցում կարևոր դեր են խաղում երեք գործոն, որոնք էլ պետք է նկատի ունենալ նշված

² *Մ. Աբեղյան*, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912 թ., էջ 223:

³ Աբեղյանի մոտ նախադասությունների բնույթի այսպիսի տարբերակում չկա: Նա ճանաչում է հաստատական, հարցական, հավաստիական, լրացական, ճարտասանական, բացականչական, զարմացական և հրամայական նախադասություններ:

դեպքում: Առաջինը խոսքի նպատակն է՝ ինչի՞ համար, ի՞նչ նպատակով է խոսողն արտահայտում իր մտքերը: Երկրորդը խոսքի (նախադասության) քերականական կամ բառային ձևավորումն է. ի՞նչ քերականական միջոցներով, ի՞նչ խոսքի մասերով և նրանց ի՞նչ ձևաբանական արտահայտությամբ է կազմավորվում խոսքն այդ նպատակին հասնելու համար: Երրորդը, իհարկե, հնչերանգն է:

Պատմողական նախադասություններն իրենց քանակով ամենամեծ խումբն են կազմում: Նրանց հիմքում ընկած է որևէ հաստատական կամ ժխտական դատողություն, որովհետև նրանցում առարկայի, երևույթի նկատմամբ հաստատվում կամ ժխտվում է որևէ հատկանիշ: Օրինակ՝ *Աշխատանքը եռում էր, բայց կյանքը մեռած էր: Մարդկանց հոգնած դեմքերին չէր նկատվում զվարթություն ...* (Ա.Շիրվանզադե):

Պատմողական նախադասությունները սովորաբար արտահայտվում են բայի սահմանական, պայմանական, հարկադրական եղանակներով և պարունակում են զանազան հաղորդումներ, նկարագրություններ, զանազան դատողություններ և եզրակացություններ: Օրինակ՝ *Իսկ այնտեղ, հարևան սենյակում, ուտում, խմում, զվարճանում էին հրավիրվածները: Լևոնին հանել էին «խերսոն» շոգենակի տակից* (Ա.Շիրվանզադե): *Դու հեռուն չես տեսնում* (Ա.Սեկոյան): *Խոր են քո հուր աչքերը: Դուր են քո սուր տեգերը...* (Վ.Տերյան): *Ամեն մարդ պետք է ապրի իր սեփական մտքերով* (Ա.Սեկոյան): *Թագուհի՛, դու հուզված ես, դու պետք է հանգստանաս* (Մուրացան): *Երկաթը տաք-տաք կծեծեն: Ով ալարի, ոչ դալարի* (Առած): *Կգար, կնստեր պատի տակ, սալաքարին ու չիբուխը ծխելով կնայեր անց ու դարձ արողներին*³:

Պատմողական նախադասություններն ունեն արտաբերության հանդարտ, ոչ լարված առոգանություն, խոսողի վերաբերմունքը նրանցում չեզոք է: Նրանց զգացմունքայնությունն են հաղորդում ձայնարկությունները: Օրինակ՝ *Չեր մատները, ախ, այնքան մեղմ են ու շոյող* (Վ.Տերյան):

Պատմողական նախադասությունների արտաբերման ժամանակ ձայնը փոքր-ինչ բարձրանում է մեջտեղում, և ապա իջնում: Սակայն այդ բարձրացումն այնքան աննշան է, որ գրեթե չի նկատվում: Քանի որ պատմողական նախադասությունների հիմքում ընկած է որևէ դատողություն, ըստ այդմ էլ, նրանց արտահայտած դատողութ-

³ Այս տիպի նախադասություններում պայմանական եղանակի բայերը հանդես են գալիս սահմանական եղանակի անցյալի անկատար ժամանակի իմաստով՝ **գալիս էր, նստում** պատի տակ, սալաքարին չիբուխը ծխելով **նայում** անց ու դարձ արողներին:

յուններից կախված՝ պատմողական նախադասությունները լինում են հաստատական, ժխտական և երկբայական:

Ա. Հաստատական պատմողականներ են այն նախադասությունները, որոնցում որևէ առարկայի նկատմամբ հաստատվում է որևէ հատկանիշ, որոնք արտահայտում են հաստատական դատողություն: *Օրինակ՝ Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել (Հովհ.Թումանյան): Մի գիշեր այն անանուն մարդը, որ վերջին սիրահարն էր այս փողոցի, դուրս եկավ նեղ փողոցների լաբիրինթոս, որտեղ ամեն մի տան մեջ, ամեն մի ներքնահարկում խոսում էին այդ վիթխարի հաղթանակի մասին:* (Ա.Բակունց):

Հաստատական պատմողական նախադասություններին հատուկ են *անշուշտ, հարկավ, իհարկե, անպատճառ, անտարակույս* և նման վերաբերականներ, որոնք ավելի են ուժեղացնում այդ նախադասությունների հաստատական բնույթը: Այսպես, *ես երեկոյան անպատճառ տանը կլինեմ: Նա անշուշտ գիտեր այդ մասին, բայց լռում էր:*

Բ. Ժխտական պատմողականներ են այն նախադասությունները, որոնցում որևէ առարկայի նկատմամբ ոչ թե հաստատվում, այլ ժխտվում է մի հատկանիշ: Այս նախադասություններն արտահայտվում են բայի վերը նշված եղանակների ժխտական խոնարհման ձևերով, ինչպես՝ *ինձ չես սիրում, Չես ափսոսում ...* (Հովհ.Թում.): *Չես ուզում մի ընկալեմ ինձ լսել, որովհետև համբերություն չունես:*

Գ. Երկբայական պատմողական նախադասություններում արտահայտվում է խոսողի երկբայական վերաբերմունքը, նրա կասկածանքը կատարված, կատարվող և կատարելի որևէ գործողության մասին: Եթե հաստատական նախադասություններում գործողության կատարման մասին հաղորդումը ստույգ է, ապա այստեղ այդպես չէ: Այս նախադասությունները ձևավորվում են *թերևս, գուցե, կարող է, երևի, հնարավոր է* երկբայական բառերով: Օրինակ՝ *Թերևս այդպես է պատահել, բայց ես չեմ հավատում: Գուցե այդ ժամանակ նրա դեմ էր ելել Սիմոնը՝ հրամանով զինված* (Ա.Բակունց):

Հրամայական նախադասությունների նպատակը խոսողի կամքի թելադրանքն է խոսակցին, խոսողին անհրաժեշտ որևէ գործողություն նրան կատարել տալը կամ նրա գործողության կատարման արգելումը:

Այս առումով հրամայական նախադասությունների ենթական (սուբյեկտ) փաստորեն դառնում է խոսողի գործողության (խոսքի) առարկան (օբյեկտը): Հրամայական նախադասությունները ենթադրում են խոսակցի անպայման ներկայությունը, ուստի նրանում նախադասության ենթական, որը նույն ինքը խոսակիցն է, շատ հաճախ չի արտահայտվում, կամ փոխարինվում է երկրորդ դեմքի անձնական դե-

րանուններով: Խոսողի կամքը խոսակցին հաղորդվում է հրամանի, կարգադրության կամ հորդորի ձևով: Ըստ այդմ էլ այդ կարգի նախադասությունները լինում են **բուն հրամայական, հորդորական և արգելական:**

Բուն հրամայական նախադասություններն արտահայտում են հրաման, կարգադրություն, պատվեր, որի կատարումը խոսակցի համար պարտադիր է:

Հորդորական հրամայականները բուն հրամայականների մի տեսակն են. նրանք արտահայտում են որևէ գործողության կատարման հորդոր՝ ուղղված խոսակցին, որը կարող է այն կատարել կամ ոչ:

Արգելական հրամայականներն արտահայտում են արգելք, խոսողին ոչ ցանկալի որևէ գործողության կատարման կասեցում: Սրանց կատարումը նույնպես պարտադիր է խոսակցի համար: Հրամայական նախադասությունները բնորոշ են ձևի ու իմաստի սերտ միասնությանը: Բուն հրամայական նախադասություններն արտահայտվում են բայի հրամայական եղանակի հաստատական ձևերով, արգելականները՝ ժխտական, իսկ հորդորականները՝ հաստատական, և՛ ժխտական ձևերով: *Օրինակ՝ Է՛, ծառաներ, կապեցեք այդ ապստամբի, այդ ըմբոստի, այդ հեղափոխականի բերանը, տարեք ներքնատուն և 250 ճիպոտի հարվածներ տվեք* (Ալ.Շիրվանզադե): *Անվանեցեք*, ինչպես կամենում եք, բայց *թողեք* նրան և *հեռացեք* (Մուրացան): *Հեռացի՛ր, մոռացի՛ր, մի՛ սիրիր* (Վ.Տերյան): *Վե՛ր ել, հերիկ, Վե՛ր ել, մերիկ, Մի ճար արեք Ձեր Միերիկ* (Ավ. Իսահակյան):

Բուն հրամայական նախադասություններին *մի* մեղմացուցիչ մասնիկը հաղորդում է հորդորական բնույթ: Այստեղ արդեն կամքը, հրամանը, թելադրանքը փոխվում են հորդորի: Այդ մասնիկը, սակայն, չպետք է շփոթել *մի* արգելականի հետ. *Մի գնա տես ի՞նչ են անում, չպրծա՞ն*:

Հորդորական նախադասություններն առանձնապես առատ են չափածո խոսքում: Քնարական բանաստեղծություններում գրեթե բացակայում են հրամանն ու կարգադրությունը: Այնտեղ խոսողի կամքն արտահայտված է հորդորի և խնդրանքի ձևով, մինչդեռ հռետորական բանաստեղծություններում գերակշռում է հրամանը և կարգադրությունը: *Օրինակ՝ Քնքուշ երազով պաճուճիր հոգիս, Նստիր մահճիս մոտ ու տխուր երգիր...* (Վ.Տերյան), բայց՝ *Ձա՛րկ, զա՛րկ, ընկեր, էլ կանգ չառնենք: Մե՛կ էլ, մե՛կ էլ, մի գարկ տվեք...* (Հ.Գալստյան):

Հրամայական նախադասությունները շատ հազվադեպ արտահայտվում են պայմանական եղանակի բայերով: *Օրինակ՝ Կգա՛ս, չմոռանաս...* (Ս.Խանզադյան): *Արա՛մ, կպատրաստվես զեկուցման:*

Անդեն հրամայական նախադասություն է կազմվում անորոշ դերբայով կամ առանձին բառերով: Այդ դեպքում կարգադրությունն

ուղղվում է ոչ թե կոնկրետ անձի, այլ մի խումբ մարդկանց և արտասանվում է առարկություն չվերցնող տոնով: Օրինակ՝ *Լռելի և հետևելի* ինձ: *Շարվել*: *Դադար*: *Լռություն*: *Զգաստ*: Ոչ հրամայական բառերով արտահայտված նախադասությունների բնույթը մեծազույն չափով կախված է նրանց հնչերանգից:

Հարցական նախադասություններն արտահայտում են հարցում: Նրանց նպատակն է պարզել խոսակցի կարծիքը այս կամ այն հարցի մասին, իմանալ որևէ բան: Հարցական նախադասությունների արտասանությունն ուղեկցվում է ուժեղ շեշտված արտաքին հնչերանգով: Հարցական նախադասություններն արտահայտվում են բոլոր եղանակների բայաձևերով, բացի հրամայականից: Սա նշանակում է, որ հարցական նախադասությունների բնույթը գլխավորապես կախված է հնչերանգից: Ցանկացած պատմողական նախադասությամբ տալով հարցական հնչերանգ՝ կարելի է դարձնել հարցական, միաժամանակ ցանկացած բայական հարցական նախադասությունը կարելի է պատմողական դարձնել՝ զրկելով հարցական հնչերանգից:

Հարցական նախադասություններն ըստ իրենց արտահայտության լինում են երկու տեսակ: Առաջին խումբն իր բնույթն ստանում է հարցական դերանուններից և վերաբերականներից: Երկրորդ խումբը կազմում են այն հարցականները, որոնք չեն պարունակում հարցական բառեր: Ռուսերենի շարահյուսության գիտական ձեռնարկներում այդպես էլ ստորաբաժանվում են հարցական նախադասությունները՝ դերանվանական և ոչ դերանվանական⁴:

Դերանվանական հարցական նախադասություններում ստորոգյալի արտահայտությունը կարևոր չէ, քանի որ ցանկացած ոչ հրամայական բայով կամ բառով արտահայտված նախադասությունը, հարցական դերանուն ստանալով, դառնում է հարցական: Օրինակ՝ *Սի՛րտ իմ, այդ ու՛մ ես դու իզուր կանչում* (Վ.Տերյան): *Ո՞վ է տեսել էսպես հարսնիք* (Հովհ.Թումանյան):

Որոշ նրբություններ ունեն ոչ դերանվանական այն հարցական նախադասությունները, որոնցում շեշտվում է բայը:

1. Սահմանական եղանակի առաջին դեմքի բայաձևերով հարցական նախադասություններ շատ սակավ են կազմվում, եղածներն էլ արտահայտում են խոսողի կասկածը տվյալ գործողությանն իր մասնակցության մասին: Այդ տիպի նախադասություններով խոսողը հաճախ ցանկանում է հակառակն ապացուցել: Նույն բանը տեղի ունի նաև նույն բայերի հոգնակիների և բաղադրյալ ստորոգյալի դեպքում, եթե հանգույցը առաջին դեմքի է: Իսկ երբ խոսողն

⁴ Современный русский язык. Изд-ство МГУ, 1957.

իրոք չգիտե այդ նախադասությունների արտահայտած գործողությանն իր մասնակցության մասին և հարցը տալիս է դրանում համոզվելու, հավաստիանալու նպատակով, ապա այդ դեպքում նախադասություններին կցում է (կամ մտքով է հասկացվում) *թե՛ ոչ (թե՛ չէ)* համադասականը: Օրինակ՝ *Մենք գնո՞ւմ ենք, թե՛ ոչ:*

2. Դրությունն այլ է ապառնի ժամանակի դեպքում: Այդ ժամանակի բայաձևերով հարցական նախադասություն արտահայտվում է, երբ գործողության կատարումը կախված է մեկ ուրիշի կամքից: Այս տիպի նախադասությունները ևս ենթադրում են *թե՛ ոչ* համադասականի գոյությունը: Օրինակ՝ *Մենք անտառ գնալո՞ւ ենք (թե՛ ոչ):*

3. Ըղծական ապառնիի երկրորդ դեմքի շեշտված բայերով հարցական նախադասություն սովորաբար չի արտահայտվում:

4. Պայմանական ապառնիի առաջին դեմքի շեշտված բայերով հարցական նախադասություններն արտահայտում են տվյալ նախադասության գործողության ժխտումը: Այդ դեպքում բայերին հաճախ ավելանում է *որ* բառը: Օրինակ՝ *ես կգա՞մ որ* (այսինքն՝ *չեմ գա*):

Նշված երևույթները տեղի չունեն, երբ նախադասություններում առկա են հարցական դերանուններ կամ շեշտվում են ոչ թե բայերը, այլ նախադասության կազմում եղած այլ բառեր: Օրինակ՝ *Ո՞ւմ հետ ես կգամ: Ես տո՞ւն կգամ:*

Եթե տրամաբանորեն պատճառաբանված չէ *ես ուտո՞ւմ եմ* հարցը, ապա դրությունն այլ է *ես ի՞նչ եմ ուտում* նախադասության դեպքում:

Հարցական նախադասություններն ըստ իրենց արտահայտչականության և նպատակի լինում են երեք տեսակ՝ **բուն հարցական** (կամ **հավաստիական**), **հորդորական հարցական** և **ճարտասանական հարցական**⁵:

Բուն հարցական կամ **հավաստիական հարցական** նախադասությունները նրանք են, որոնք անպայման պահանջում են պատասխան: Հարցնողի նպատակը պատասխան ստանալն է, նա կարող է այդ պատասխանը նախօրոք իմանալ կամ չիմանալ: Այդպիսի հարցական նախադասությունները հրամայականների մեծ ենթադրում են խոսակցի ներկայությունը կամ գոյությունը: Օրինակ՝ *Ա՞յս լրտեսի հարցաքննությանն էիք ուզում ներկա լինել* (Բ.Քոչար): *Դրա համա՞ր են հավաքվել եպիսկոպոսներն ու նախարարները* (Դ.Դենիրճյան):

⁵ Հայ լեզվաբանական գրականության մեջ տարակարծություն գոյություն ունի նաև հարցական նախադասությունների ստորաբաժանման հարցում: Մ.Աբեղյանը նրանց բաժանում է **հավաստիական, լրացական** և **ճարտասանական** տեսակների, իսկ Վ. Առաքելյանը սրանց հետ միաժամանակ ընդունում է նաև **հորդորական** հարցականների առանձին տեսակ:

Հորդորական հարցականները հարցական նախադասությունների մի տեսակն են և արտահայտում են տրված հարցի բովանդակությամբ համամիտ դառնալու, նրանում արտահայտված գործողությունը կատարելու խնդրանք, հորդոր և իրենց մեջ հաճախ ունենում են *այնպես չէ՞, չէ՞, հը՞* հարցական բառերը: Օրինակ՝ *Գալի՞ս ես, հը՞: Դու համաձայն ես ինձ հետ, այնպես չէ՞: Ես կսպասեմ քեզ, դու կգա՞ս, չէ՞:*

Հորդորական հարցականները խոսողի կամքի ձևավորման ամենանուրբ ձևն են, և դրանք պետք է տարբերել հորդորական հրամայականներից: Նրանց արտահայտած հորդորները տարբեր բնույթի են: Հորդորական հրամայական նախադասությունները ենթադրում են խոսողի գերազանցությունը խոսակցի նկատմամբ, երբ խոսողն իրեն իրավունք է վերապահում իր կամքը թելադրելու: Մինչդեռ հորդոր պարունակող հարցականները, ընդհակառակը, ենթադրում են խոսակցի առավելությունը խոսողի նկատմամբ, երբ խոսողն իրեն իրավունք չի վերապահում (կարելի է ասել՝ չի համարձակվում) իր կամքը թելադրելու և իր ցանկությունը արտահայտում է հարցման ձևով, որին խոսակիցը կարող է համաձայնել կամ՝ ոչ:

Մի՞թե, արդյոք և նման այլ բառեր հատուկ են միայն հարցական նախադասություններին և նրանց տալիս են երկբայական իմաստ, արտահայտում են կասկածանք այն գործողության կատարման վերաբերյալ, որի մասին տրվում է հարցը:

Ճարտասանական հարցականներն այն նախադասություններն են, որոնց հեղինակը ուրիշից պատասխան ստանալու ակնկալություն չունի: Ի հակադրություն բուն հարցականների՝ ճարտասանական հարցականները չեն ենթադրում խոսակցի գոյությունը, նրանք հաճախ չեն ուղղվում որևէ կոնկրետ անձնավորության կամ ուղղվում են հենց իրեն՝ խոսողին: Օրինակ՝ *Ինչո՞ւ են վերջերս ոչխարների հիվանդությունն ու սատկելու դեպքերը դառնում հաճախակի: Ինչո՞ւ են Լևոնից օտարացել նրա երկու բարեկամները՝ Ղուկասն ու Վասակը* (Ն.Զարյան): *Որ աչքերս սաղ լինեն, ես կթողնեի՞ մենակ ման գաս գեղումը, յա թե չէ ըստե՞ղ կնստեի՞նք* (Վրթ. Փափազյան):

Ճարտասանական հարցականները միայն ձևով են հարցական, իսկ իրականում եթե վերանանք նրանց հնչերանգից, նրանք հաստատական նախադասություններ են և արտահայտում են դատողություններ, իհարկե՝ ոչ ուղղակիորեն:

Ճարտասանական հարցական նախադասություններ գործածվում են հետևյալ դեպքերում.

ա) Երբ հեղինակը դիմում է բացակա կամ մահացած մարդու: Օրինակ՝ *Վահան Տերյան, ինչպես՞ս երգես հիշատակը քո, թող լուռ փռվի հիմա իմ դեմ անլույս երեկո* (Եղ.Չարենց):

բ) Երբ հեղինակը դիմում է բնությանը, որը, իհարկե, պատասխանել չի կարող, ինչպես՝ *Արաքս, ինչո՞ւ ձկանը հետ պար չես բռնում մանկական, Դու դեռ ծովը չհասած՝ սգավոր ես ինձ նման* (Ռ.Պատկանյան):

գ) Երբ խոսողը ցանկանում է որևէ հանգամանք շեշտել, ընդգծել. այդ դեպքում ինքն է պատասխանում հարցին: Այսպես՝ *Ո՞րն է այս նախադասության ենթակայի տեղը: Ենթակայի տեղը ստորոգյալից առաջ դիրքն է:*

դ) Երբ խոսողը (հեղինակը) հարցի ձևով հակառակն է ուզում ասել: Այսպիսի նախադասությունները հարցա-ժխտական են: Օրինակ՝ *Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին, թե չլինեն կինն ու գինին* (Յու.Թումանյան): *Ո՞վ կարող է տեսնել ծովում նավի թողած հետքը:*

Այս նախադասություններն արտահայտած մտքի տեսանկյունից նույնն են, եթե ասվեր. *Ոչինչ չի հաղթի կյանքում հերոսին, թե չլինեն կինն ու գինին: Ոչ ոք չի կարող տեսնել ծովում նավի թողած հետքը:*

ե) Ճարտասանական հարցականները գործածվում են ուժեղ զգացմունքայնության, հույզերի արտահայտման դեպքում: Օրինակ՝ *Ո՞վ քեզ ծեծեց, Մարո՛ջան, Ո՞վ անիծեց, Մարո՛ջան, Խո՞րն ես քնել, Մարո՛ջան, Տո՛ւն արի, տո՛ւն, Մարո՛ջան* (Յու.Թումանյան):

Ճարտասանական հարցական նախադասությունները, եթե հաջորդում են միմյանց, ամբողջ խոսքն արտասանվում է արագացմամբ և արտասանության տոնն ու ձայնը անընդհատ բարձրանում են: Նրանք խոսողին հաղորդում են ուժեղ հուզականություն, պատկերավորություն, թափ, ուստի շատ են հանդիպում մենախոսություններում, չափածո և դրամատիկական ստեղծագործություններում: Օրինակ՝ *Գնա՛, Պեպան, գետինը լիզե, խալխի ոտերը պաչ արա, ո՞վ իս դուն, ի՞նչ իս դուն, ի՞նչ մարդահեսաբունն իս դուն:*

Բացականչական նախադասություններ: Հարցական նախադասությունների մասին խոսելիս ասվեց, որ նրանց ձևավորման գործում մեծ կարևորություն ունի հնչերանգը: Միայն հարցական նախադասությունները չեն, որ ձևավորվում են որոշակի հնչերանգով: Կան նախադասություններ, որոնք արտահայտման որևէ քերականական միջոց չունեն և այլ նախադասություններից տարբերվում են միայն իրենց հնչերանգով: Դրանք բացականչական նախադասություններն են:

Այստեղից արտաքնապես թվում է, թե բացականչական նախադասության բնորոշումը, մյուսներից նրա տարբերակումը էական

դժվարություն չի ներկայացնում: Բայց իրականում այդպես չէ: Ղարոցական նախկին դասագրքերում նախադասությունների բնույթի, առավելապես բացականչականի մասին կան հակասող, ոչ ճիշտ բնորոշումներ:

Պրոֆ. Գ.Սևակը հայոց լեզվի շարահյուսության իր դպրոցական դասագրքում բացականչական նախադասությունների մասին գրում է. «*Բացականչական նախադասությունները սովորաբար արտահայտվում են բայի ըղծական եղանակով* (ընդգծումն մերն է-Ֆ.Խ.) *կամ լինում են անդեն ու անստորոգյալ և ցույց են տալիս ցանկություն, կոչ պահանջ և այլն*» (էջ 14)⁶:

Նախ պարզենք, թե այս սահմանումը լրիվ ամփոփո՞ւմ է իր մեջ բացականչական նախադասությունների էական հատկանիշները, թե՞ ոչ:

Բացականչական բնույթ ունեցող նախադասությունների քննությունից երևում է, որ նրանց մեջ կան բազմաթիվ նախադասություններ, որոնք բոլորովին էլ ըղծական եղանակով չեն արտահայտվում, այլ ընդհակառակը՝ սահմանական, պայմանական և նույնիսկ՝ հրամայական: Ահավասիկ՝ *Եկե՛ք, քույրեր, սեգ սարերի Չքնադագեղ ոգիներ, Եկե՛ք ջահել սիրահարի Սերը ողբանք վաղամեռ... Հառաչեց հովիվն ու սրտին ընկավ, Հալվեցա՛վ, հանգա՛վ... Գալի՛ս եմ, գալի՛ս եմ, գալի՛ս եմ, նանի՛....* (Հովհ.Թումանյան): *Սոտ մի՛ եկեք, կկրակե՛մ....*

Օրինակները ցույց են տալիս, որ բացականչական նախադասություններն առհասարակ արտահայտման որոշակի բայածև չունեն, այլ ձևավորվում են բայի բոլոր եղանակներով և նրանց բնույթը կախված է ոչ թե արտահայտված իմաստից և քերականական ձևից, այլ հնչերանգից:

Ինչպես հարցական հնչերանգը ցանկացած պատմողական նախադասությունը հարցական կարող է դարձնել, այնպես էլ բացականչական հնչերանգ ստանալով՝ ամեն մի նախադասություն կարող է դառնալ բացականչական:

«Ցանկացած նախադասություն, լինի պատմողական, հարցական, թե հրամայական, կարող է արտասանվել և՛ սովորական, նրան հատուկ տոնով, և՛ առանձին ուժով, յուրահատուկ արտահայտչականությամբ, տոնի բարձրացմամբ: Ուրեմն ամեն մի պատմողական, հարցական և հրամայական նախադասություն կարող է հանդես գալ որպես բացականչական», - իրավացիորեն գրում է Ա. Գրիգորյանը⁷:

⁶ Այս սահմանումն աննշան տարբերություններով մինչև օրս կրկնվում է հայերենի շարահյուսությանը նվիրված բոլոր աշխատություններում:

⁷ Ա. Գրիգորյան, Հայոց լեզու, 1953, էջ 198:

Նույն միտքն է արտահայտված նաև ռուս լեզվաբանական գրականության մեջ:

Բացականչական նախադասությունները «երանգավորված են զգացմունքայնությամբ կամ արտաբերվում են արագացմամբ»⁸: Բացականչական նախադասություններում հիմնականն առանձնահատուկ բացականչական հնչերանգն է⁹: Այստեղ հաստատվում է նաև մեր ասածը այն մասին, որ բացականչական նախադասություններն առհասարակ արտահայտման որոշակի բայածև չունեն: Այս առմամբ արժանի է հիշել, որ ռուսաց լեզվի շարահյուսության վերաբերյալ եղած մեծաքանակ գրականության մեջ հնարավոր չէ գտնել բացականչական նախադասության մի այնպիսի բնորոշում, ուր այդ նախադասություններին վերագրվեր որևէ կոնկրետ բայածև: «Բացականչական կոչվում են այն նախադասությունները, որոնք արտասանվում են ուժեղ զգացմունքով, բացականչությամբ», - ասվում է ռուսերենի շարահյուսության դպրոցական դասագրքում¹⁰:

Ինչ վերաբերում է բացականչական նախադասությունների կոչ, ցանկություն, պահանջ ցույց տալու պնդմանը, ապա պետք է նշել, որ եթե բացականչական նախադասությունները նույն պատմողական, հարցական, հրամայական նախադասություններն են՝ արտասանված յուրահատուկ հնչերանգով, ապա նրանք ցույց են տալիս այն նույն բաները, ինչ-որ այդ նախադասություններն են ցույց տալիս: Միայն թե այս դեպքում նախադասությունների բովանդակությունը համակվում է ուժեղ զգացմունքայնությամբ, ձայնական յուրահատուկ հնչերանգով, որն այդ նախադասությունների արտահայտած իմաստները խմբավորում է և երանգավորում որպես կոչ ու ցանկություն: Մնացած զգացմունքները (կասկած, վախ, հիացում, զարմանք և այլն) ուղեկցում են բացականչական նախադասությունների արտաբերմանը որպես խոսողի վերաբերմունքի դրսևորման ձևեր, կապված են եղանակավորող բառերի հետ և ուժեղացնում են նախադասության բնույթը:

Ըղծական եղանակով արտահայտվող և բացականչական համարվող նախադասությունների ու նրանց կողմից ցանկություն, իղծ, պահանջ արտահայտելու մասին կխոսենք հետո, իսկ այժմ նշենք բացականչական նախադասությունների մի քանի եական առանձնահատկություններ:

⁸ Современный русский язык, стр. 127.

⁹ Նույն տեղում, էջ 128:

¹⁰ *С. Г. Бархударов и С. Е. Крючков*. Учебник русского языка. Կ-2, 1959.

Բացականչական նախադասությունների բնույթի հնչերանգային լինելու մեջ առավել համոզվելու համար բերենք հետևյալ նախադասությունը.

-Սինյորինա Լուիզա, ես Ձեզ խնդրում եմ ինձ չխղճալ,- գոչեց պատանին վիրավորված (Ա.Շիրվանզադե):

Չեղինակը վկայում է, որ այդ նախադասությունը բացականչական է (*գոչեց*), բայց առանց նրա հուշման դժվար է կռահել այդ նախադասության բնույթը, որովհետև հնչերանգը գրի չի առնվում, իսկ համապատասխան արտահայտչական միջոցներն էլ բացակայում են: Բերենք մի քանի այլ նախադասություններ, որոնք միայն հնչերանգով են բացականչական դարձել: Այսպես՝ *Քնեցե՛ք հագիստ, ընկերներ՛ր իմ Կանտոնի փողոցում ընկած (Եղ.Չարենց): Ձորե՛ր, այ ծորե՛ր, սև, լայնաբերան... Դուք էլ խոսեցե՛ք, դուք էլ պատմեցե՛ք... Բռնեցե՛ք, փախավ Սաքոն խելազար... (Յովհ. Թումանյան):*

-Յորդե՛հ... Ա՛յ ժողովուրդ, հորդե՛հ... ո՞վ կա, հասեք...

-Օգնեցե՛ք, այ ժողովուրդ:

-Մերո՞նք են, մերոնք,- ուրախությունից ծչաց Սեղան (Ա.Սեկյան):

Բացականչական նախադասության զգացմունքայնությունն ու արտասանության թափը անչափ մեծանում են, երբ բացականչություն արտահայտող բառը կրկնվում է: Այդ դեպքում արտասանությունն արագանում է, բարձրանում է ձայնի տոնը և հնչեղությունը: Օրինակ՝ *Վե՛ր կացեք, վե՛ր, ամբողջ գիշեր Մարդ է գնում ու գալիս: Դա՛վ... դա՛վ... ելե՛ք... կոչնա՛կ... պահնա՛կ... Ձենք առեք շո՛ւտ... ծի հեծե՛ք, ծի՛... (Յովհ. Թումանյան): Ջահե՛ր, հե՛յ, քահե՛ր, լաստեր բերեք, շուտ: (Ս. Հարությունյան):*

Բացականչական նախադասությունները շատ հաճախ ուղեկցվում են ձայնարկություններով, որոնք կոնկրետացնում են արտաբերությանն ուղեկցող զգացմունքները և ավելի ուժեղացնում դրանք: Մի քանի ձայնարկություններ ընդունակ են իրենց միջոցով բացականչական բնույթ տալ նախադասությանը, որովհետև նրանց արտահայտած զգացմունքները դրսևորվում են բացականչական հնչերանգով: Այդպիսի ձայնարկություններից են *վա՛հ* (գարմանք), *ա՛հ* (սարսափ), *օ՛հ* (հիացմունք), *ա՛խ* (ափսոսանք): Օրինակ՝ *Ո՛հ, ինչ ազատ եմ (Ավ. Իսահակյան): Ա՛խ, ի՛նչ լավ է աշխարհն ազատ (Յովհ. Թումանյան): Վա՛յ, քոռանա՛մ... աղջի՛, բա ասո՛ւմ էիր (Ն. Չարյան): Վա՛յ, հարա՛յ, փախե՛ք, մեծեր, երեխեք (Յովհ. Թումանյան): Դե՛յ, հե՛յ, բռնեցեք, փախցրին կուլսին (Միք. Հարությունյան): Կորյուն է, կանի՛... վա՛յ, կորյուն (Դ. Դեմիրճյան):*

Ոմանք հաճախ նախադասության մեջ ձայնարկության առկայությունը սոսկ համարում են բացականչական բնույթի արտահայտություն: Ծիշտ է, կան ձայնարկություններ, որոնք ազդելով նախադա-

սության հուզական-հնչերանգային կառուցվածքի վրա, հաճախ փոխում են նրա բնույթը (վերևում հիշեցինք այդպիսիք), սակայն այդ բանը կարող են անել բացականչական ձայնարկությունները (*վա՛խ, ափսո՛ս, ավա՛ղ, ա՛խ, վա՛խ* և այլն) և *հե՛յ* կոչական ձայնարկությունը, իսկ կոչական ձայնարկությունների մեծ մասն այդ բանն անել չեն կարող: Այս նրբությունը հաշվի պետք է առնել ձայնարկություն պարունակող հրամայական նախադասությունները հրամայական բայերով արտահայտված բացականչական նախադասություններից տարբերելիս:

Հրամայական նախադասություններում բացականչական ձայնարկությունների գործածությունը կարող է փոխել նրանց բնույթը, իսկ կոչական ձայնարկություններինը՝ ոչ: Հմնտ. *Ա՛խ, տվեք ինձ քաղցր մի քուն* (բացականչական) և *Է՛յ, քաշե՛ք, քաշե՛ք արագ* (հրամայական):

Պայմանական եղանակի բայերով ձևավորված բացականչական նախադասությունները երբեմն ունենում են հեգնական բնույթ, արտահայտում են ծաղր և ենթադրում հակառակ գործողություն: Օրինակ՝ *Դու կկանչե՛ս, հավատո՞ւմ եմ... Կհասնե՛ս, հա՛, ինչպես չէ...*

Բացականչական նախադասությունները կարող են ուղեկցվել հարցական-հարաբերական դերանուններով:

Այդ դեպքում նրանք իմաստով մոտենում են հարցական նախադասություններին: Օրինակ՝ *Ինչպիսի՞ հերոս ընկերներ մեռան* (Հ. Հակոբյան): *Ինչ լա՛վ է, պապա...* (Ն. Ջարյան): *Է՛յ, իսկեցե՛ք, ի՞նչ եք քնում, Քաջ զինվորներ Թաթուլի...* (Հովհ. Թումանյան):

Բացականչական նախադասությունները լինում են նաև անդեմ՝ հաճախ արտահայտվելով անորոշ դերբայով: Այս նախադասությունները վերարտադրում են միայն շրջապատող իրականության վերաբերյալ մարդու խոհերն ու զգացմունքները, մեծ մասամբ՝ իղծ, ցանկություն:

Անդեմ բացականչական նախադասությունների զգալի մասը զանազան կոչեր են: Օրինակ՝ *Խաղաղություն՞ւմ խրճիթներին, պատերա՛զմ պալատներին: Դեպի՛ վե՛ր, սարնիվե՛ր, անվեհեր զինվոր* (Հ.Հակոբյան):

Անորոշ դերբայով արտահայտված բացականչական նախադասություններից է ամբողջովին կազմված Ռուբեն Սևակի «Երթալ» բանաստեղծությունը.

*Երթա՛լ, երթա՛լ, երթալ անձայն, անհանդես.
Երթա՛լ առվին պես՝ մարզերու տակ անտես.
Աննյութանա՛լ, անրջանա՛լ, վրսեսմ, վե՛ս.
Երթա՛լ անցայ՛գ, անա՛յգ երթալ վերջապես.
Աչքերը գոց՝ ցայգաշրջիկ խեղճին պես...*

Եվ, վերջապես, բացականչական նախադասությունների շարքին են դասվում զանազան տեսակի մաղթանքները, օրհնությունները և անեծքները, հրաժեշտի խոսքերը և այլն: Օրինակ՝ *Մնա՞ք բարով, զրոհված ընկերներ՛ր, մենք Ձեզ չենք մոռանա երբեք...* (Արագի): *Մնաք բարո՞ւյ, արև, գարուն և խնկաբույր ծաղիկներ* (Հովի. Հովիհաննիսյան):

Ըղծական նախադասություններ: Հայերենի շարահյուսության հարցերն այս կամ այն կերպ շոշափած աշխատություններում հայերենի նախադասությունների բնույթի հարցը այսքանով ավարտվում է, և նախադասությունները բաժանվում են հիշյալ չորս տեսակների: Սակայն հայերենի նախադասությունների ոչ այնքան մանրազնին քննությունից անգամ իսկույն ակնբախ է դառնում, որ այդ չորս տեսակները բոլորովին էլ չեն սպառում հայերենի նախադասությունները, որ կա նախադասությունների մի այլ ստվար խումբ, որը չի կարելի դասել հարցական, հրամայական, բացականչական և պատմողական տեսակներից ոչ մեկի շարքում: Խոսքը վերաբերում է ըղծական եղանակի բայաձևերով արտահայտված և իղծ, տենչանք, ցանկություն արտահայտող նախադասություններին:

Նախ ասենք, որ հայերենի շարահյուսության հարցերը շոշափած գրքերում այս տիպի նախադասությունները գրեթեաչքաթող են արված: Որպես օրինակ բերենք մի շարք օրինակներ:

*Թռչե՛ի մտքով տուն,
Ուր իմ մայրն է արթուն,
Սպասում է իր որդուն
Անհանգիստ ու արթուն:
Տեսնե՛ի այն առուն,
Որ անեն մի գարուն
Ջրերով վարարուն
Կարկաչում էր սարերում:* (Գ. Սարյան)

*Լինե՛ինք մենք՝ ես ու դու
Գետի կանաչ եզերքին,
Դու խառնե՛իր քո հոգու
Մրմունջները իմ երգին:
Հետո իջ՛ներ իրիկուն,
Իջ՛ներ մութը ծխի պես,
Եվ իմ խոհերը թաքուն
Գետի մրմունջն **ասեր** քեզ:* (Գ. Սարյան)

Կարելի է հիշել այդ տիպի նախադասություններից կառուցված մեկ ուրիշ ստեղծագործություն, որ պատկանում է Տերյանի գրչին:

*Լինե՛ի չոբան սարերում հեռու,
Գայի՛ր, անցնե՛իր վրանիս մոտով,*

*Իրար նայեինք անուշ կարոտով,
Քնքուշ ժպտայինք հանկարծ իրարու:
Գնայիր աղբյուր ու ետ դառնայիր
Թեթև, որպես վիթ, ելնեիր ձորից,
Մի ցուր տայիր ինձ քո լի սափորից,
Ու վրանիս մոտ հանգստանայիր:*

Արդյոք ըստ բնույթի նախադասությունների ո՞ր տեսակին վերագրել այս բանաստեղծություններում եղած նախադասությունները: Հարցականի ու հրամայականի մասին խոսք լինել չի կարող, ուրեմն կասկածները կպատվեն պատմողական ու բացականչական տեսակների շուրջը:

Ապացուցել, որ այդ նախադասությունները պատմողական չեն, դժվար չէ: Այդ բանի օգտին խոսում են նաև քերականության դպրոցական դասագրքերը: Պրոֆ. Գ. Սևակը ըղձական եղանակով արտահայտված պատմողական նախադասություն չի ճանաչում (տե՛ս նրա շարահյուսության գիրքը, էջ 17): Բայց մենք չբավարարվենք դրանով և առաջ տանենք մեր ասածը: «Հայերենի շարահյուսություն» գրքում Վ. Առաքելյանը գրում է. «Երբ մենք այս կամ այն առարկայի, երևույթի մասին որևէ բան հաղորդում ենք մեկ ուրիշի՝ նրան տեղեկացնելու, ուսուցանելու, լուր տալու նպատակով, ապա մենք մեր իմացածը պատմում ենք կամ հայտնում: Դա կատարվում է պատմողական նախադասություններով»¹¹: Իսկ *Թռչեի մտքով տուն, Լինեի չորան սարերում հեռու* և նման նախադասություններում հաղորդում չի պարունակվում, նրանք լուր չեն տալիս, չեն ուսուցանում որևէ բան: Նրանք միայն արտահայտում են տուն թռչելու, չորան լինելու խոսողի իղձը, տենչանքը, նրա անձնական զգացմունքները: Երբեմն խոսողն արտասանում է այդպիսի նախադասություններ, առանց դրանք մեկ ուրիշի հաղորդելու մտադրության:

Պատմողական նախադասությունների առիթով ասացինք, որ նրանցում խոսքի օբյեկտ հանդիսացող առարկայի նկատմամբ հաստատվում կամ ժխտվում է որևէ հատկանիշ: Իսկ ներկա դեպքում քննարկող նախադասության մեջ ոչ մի առարկայի նկատմամբ որևէ հատկանիշ չի հաստատվում կամ ժխտվում:

Մեր ասածը հաստատող մի ուրիշ փաստ էլ կա: Պատմողական նախադասությունների տարբերիչ գծերից մեկը նրանցում արտաբերության հանդարտ, պատմողական հնչերանգն է, մինչդեռ քննարկվող նախադասությունների արտասանությունն ունի յուրահատուկ հնչերանգ, որը բավական հեռու է պատմողական նախա-

¹¹ Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. 1, էջ 13:

դասությունների արտասանությունից: Այդ բանում համոզվելու համար հարկավոր է բարձրաձայն արտասանել *Արամը չորքան է և Լինելի չորքան* նախադասությունները: Առաջինի արտասանության ժամանակ նկատվում է ձայնի աստիճանական իջեցում, մինչդեռ երկրորդի արտասանությունն ուղեկցվում է ձայնի տոնի նշանակալի բարձրացմամբ, արտասանության երկարաձգմամբ: Քննարկվող նախադասություններն արտաբերվում են մի տեսակ «երգային» հնչերանգով: Թող այդ հնչերանգը շատ թույլ լինի և աննշան, թող այն տարբերակված և ճանաչված չլինի լեզվաբանական գրականության մեջ, բայց, այնուամենայնիվ, կա, զոյություն ունի այն: Պատմողական նախադասության արտասանության ժամանակ հնչերանգն ավելի չեզոք է, մինչդեռ այս տիպի նախադասություններում այն ամբողջովին թաթախված է զգացմունքայնությամբ, որևէ գործողության կատարման իղձն ու տենչանքը կազմում են նրանց բովանդակության հիմքը, նույնիսկ կարելի է մտովի պատկերացնել այդ նախադասություններն արտասանողի դեմքի երազկոտ արտահայտությունը: Այս բոլորը միաբերան ասում են, որ քննարկվող նախադասությունները պատմողական չեն:

Դժվար չէ ապացուցել նաև, որ այդ նախադասությունները բացականչական էլ չեն, չնայած բացականչական նախադասություններին տրված հանրահայտ սահմանման առկայությանը: Կարելի է բերել ըղձական եղանակով արտահայտված բազմաթիվ նախադասություններ, որոնք երբեք էլ հնարավոր չէ բացականչական համարել: Ահա, օրինակ՝

*Դու կանաչ, կանաչ մնաս,
 Հայրենի իմ ծառ,
 Արմատներդ անվնաս,
 Ծյուղերիդ՝ ծիծառ.
 Թող ամեն գարուն ծաղկես
 Ու լինես փարթամ,
 Շուքիդ տակ գամ, հանգչեմ ես
 Ու գովքդ կարդամ: (Գ.Սարյան)*

Կամ՝

*Ելնեն ողջույն տամ բոլորիդ այսօր,
 Երգելով շրջեմ փողոցից փողոց.
 Տամ ու բաժանեմ կարոտներս բոց,
 Ուն որ հանդիպեմ, ուն տեսնեմ այսօր: (Վ.Գրիգորյան)*

Այս նախադասությունների դիտումը ցույց է տալիս, որ նրանք բացականչականի հետ ոչ մի առնչություն չունեն, «բացականչական նախադասության արտաբերումը ավելի բարձր է և տևական: Բացահայտ կերպով մյուս բառերի շարքից առանձնացվում է այն բառը, որը

ենթարկվում է բացականչական հնչերանգի...», - ասում է Վ.Առաքելյանը¹²:

Մինչդեռ հիշյալ նախադասությունների արտաբերությունը հեռու է բացականչական լինելուց, եթե հաշվի չառնենք տենչանքն ու ցանկությունը, որն ընկած է նրանց բովանդակության հիմքում: Նրանցում ոչ մի բառ չի առանձնացվում, ընդհակառակը՝ նրանց արտաբերությունը սահուն է ու «երգային», ինչպես վերևում ասվեց:

Եթե ցանկացած պատմողական, հարցական և հրամայական նախադասություն կարող է դառնալ բացականչական, նշանակում է զուտ բացականչական նախադասություններ, որոնց բնույթին համապատասխաներ կայուն քերականական ձևը, չկա (մի կողմ ենք թողնում անդեմ բացականչականները, որոնք բացի բացականչականից այլ բնույթ չեն կարող ունենալ), այլ կա բացականչական հնչերանգ, որը կարող է ցանկացած նախադասությունը բացականչական դարձնել, այսինքն՝ բացականչական բնույթը կախված է նախադասության արտաբերման ձևից՝ հնչերանգից: Եթե բացականչական նախադասությունն անդեմ չէ, ապա բացականչական հնչերանգը նրանից անջատելիս այն կդառնա կամ պատմողական, կամ հարցական և կամ հրամայական:

Արդ, եթե ընդունենք, որ *Լինեի չորան սարերում հեռու, Թռչեի մտքով տուն, Ելնեն ողջույն տամ բոլորին այսօր* նախադասությունները բացականչական են, ապա պետք է ունենան բացականչական հնչերանգ, որը կարելի է վերցնել նրանցից, որովհետև նրանք որոշ դիմավոր նախադասություններ են: Եթե նրանք բացականչական են, և եթե նրանցից վերցնենք երևակայական բացականչական հնչերանգը, ապա պետք է դառնան պատմողական, հարցական կամ հրամայական: Իսկ նշված նախադասությունների՝ այդ տեսակների հետ անհամատեղելիությունն ապացուցվեց վերևում: Նշանակում է, նրանցում ոչ մի բացականչական հնչերանգ էլ չկա, ընդհակառակը՝ նրանք մոր կարող են ստանալ դա և դառնալ բացականչական, հետևապես մենք գործ ունենք ոչ բացականչական նախադասությունների հետ, որոնք ունեն յուրահատուկ բնույթ և կազմում են մի առանձին, ինքնուրույն խումբ: Մենք այդ բնույթը տվյալ նախադասությունների հիմքում ընկած՝ խոսողի վերաբերմունքի (իղծ, տենչանք) անունով կկոչենք **ըղծական**:

Այս բանը (նախադասության մոր բնույթի առկայությունը) չպետք է մեզ շփոթեցնի, որովհետև այնպիսի խորն ու բազմակողմանիորեն ուսումնասիրված շարահյուսության մեջ էլ, ինչպիսին ռու-

¹² Վ.Առաքելյան, նշվ. աշխ., էջ 26:

սերենի շարահյուսությունն է, ըստ բնույթի նախադասությունների տեսակների վերաբերյալ կարծիքների միասնություն չկա:

Ս.Բարխուդարովի դպրոցական քերականության մեջ նախադասությունները բաժանվում են երեք տեսակի՝ հարցական, բացականչական և պատմողական¹³: Նույն դասագրքի մեկ ուրիշ հրատարակության մեջ տողատակում նշվում է նաև հրամայականը: Բուհական դասագրքերում չեն ճանաչվում հրամայական նախադասությունները որպես առանձին տեսակ¹⁴: Կամ հրամայականները և բացականչականների ու հրամայականների մի մասը միավորվում են մի խմբում, որը կոչվում է *դրդողական (հարկադրիչ)* տերմինով: Ինչ վերաբերում է ըղծական եղանակով ձևավորվող և իղծ, տենչանք, ցանկություն արտահայտող նախադասություններին, ապա դրանց որպես առանձին տեսակի, գոյության մասին ուղղակիորեն կամ անուղղակի խոսվում է շատ տեղերում:

Ռուսերենի շարահյուսության գիտական դասագրքերում այդ նախադասությունները դիտվում են որպես *դրդողական (побудительный)* նախադասությունների ենթատեսակ:

«Դրդողական նախադասություններում արտահայտվում է մարդու ցանկությունը, ձգտումը փոխելու գոյություն ունեցողը, գիտակցվողը և դարձնել այն այնպես, ինչպես նպատակահարմար է թվում խոսողին»¹⁵: Այս սահմանումը լրիվ չափով կարելի է վերագրել ըղծական նախադասություններին: Դա նշանակում է, որ նախադասությունների ըղծական տիպ գոյություն ունի: Կարևորն այն չէ, թե ինքնուրույն տեսակ է համարվում այն, թե ենթատեսակ, կարևորը դրանց ճանաչումն է, որպես հուզական-արտահայտչական երանգի տեսակետից առանձին խումբ: Այս տիպի նախադասություններն առօրյայում ավելի շատ պատմողականի հետ են շփոթվում: Բայց պատմողական նախադասություններն ուղղակի կապի մեջ են տրամաբանական դատողությունների հետ, իսկ այս տիպի նախադասությունների մասին այդ ասել չենք կարող: Այս հանգամանքն առիթ է ծառայել, որ արևմտյան որոշ փիլիսոփաներ այդ տիպի նախադասությունները համարեն ճանաչողական ոչ մի նշանակություն չունեցող: Այդպես է վարվում, օրինակ, Յերբերտ Ֆայզլը, որն առանձնացնում է նախադասությունների հինգ տեսակ՝ վերջինը կոչելով հուզական¹⁶:

Չայ լեզվաբաններից ըղծական բնույթի գոյության մասին ակնարկել է Մ.Աբեդյանը: Նա իր «Աշխարհաբարի շարահյուսություն»

¹³ *Бархударов С.Г.* и...Учебник русского языка. ч-2, 1959г., стр. 3.

¹⁴ *Галкина-Федорук,* Современный русский язык. ч-2, стр.12.

¹⁵ Նույն տեղում, էջ 20:

¹⁶ Стен Мышление и язык, АН СССР, 1957г.,стр.23.

գրքում գրում է. «Բացի հրամայական եղանակից՝ ցանկության խոսքեր կազմվում են նաև ըղծական եղանակով. մինչ հրամայականն արտահայտում է բացարձակ հրաման կամ արգելք, ըղծականը ցույց է տալիս փափագ ու տենչանք, հորդոր ու դրդում, խնդիր ու մաղթանք կամ մեղմ պատվեր մի բան անելու: Օրինակ՝ հրամայական. *գիրքդ տու՛ր ինձ*, ըղծական՝ *գիրքդ տա՛ս ինձ*»¹⁷: Բայց Մ.Աբեղյանի հետագա ասածը վերաբերում է ըղծական եղանակի բայերի իմաստներին և ոչ՝ նախադասությունների:

Ըղծական բնույթի մասին անուղղակիորեն հիշատակում է Վ.Առաքելյանը: Նա իր «Հայերենի շարահյուսություն» գրքի 33-րդ պարագրաֆում գրում է. «Հրամայականի հետ հաճախ կիրառվում է *մի (մեկ)* մակբայը, որը հրամայականին տալիս է ըղծական կամային (ընդգծումը մերն է՝ Ֆ.Խ.) նշանակություն»¹⁸:

Պ.Մ.Պողոսյանը «Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում» աշխատության մեջ գրում է. «Սրանց մի մասը կազմում է այսպես կոչված *կանխման կամ մտադրության ըղծական նախադասություններ*» (ընդգծումը մերն է՝ Ֆ.Խ.)¹⁹:

Սակայն վերոնշյալ վկայությունները մնում են միայն որպես ի միջի այլոց արված դատողություններ, և ըղծականները չեն համարվում ըստ բնույթի նախադասությունների առանձին տեսակ:

Մեր կարծիքով, դրա գլխավոր պատճառը խորհրդային տարիներին հայ լեզվաբանությամբ ռուսաբան դպրոցի կողմից հայերենի քերականության, մասնավորապես շարահյուսության շատ հարցերի մեկնաբանությունը ռուսերենին նմանեցնելու միտումն է: Եվ քանի որ ռուսերենում իղծ, տենչանք հստակորեն արտահայտող նախադասություններ չկան, ապա հայերենում էլ դրանք անտեսվել են:

Նշենք ըղծական նախադասությունների էական առանձնահատկությունները:

Ա. Ըղծական նախադասությունները ձևավորվում են ըղծական եղանակի բայերով և ցույց են տալիս իղծ, տենչ, ցանկություն: Ըղծական նախադասություններին ուղեկցող ուժեղ զգացմունքայնության պատճառով նրանք ավելի շատ հանդիպում են չափածո խոսքում և հատկապես քնարաական ստեղծագործություններում:

*Ոսկի ավազ լինեի,
Չուրդ գար ինձ տաներ,*

¹⁷ Մ.Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, էջ 259:

¹⁸ Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, էջ 13:

¹⁹ Պ.Մ.Պողոսյան, Բայի եղանակային ձևի ոճական կիրառությունները արդի հայերենում, Երևան, 1593թ., էջ 164:

*Արժաթ ամպիկ լինեի,
Հովդ գար տարտողներ: (Տերյան)*

*Ես կուզեի արևավառ
Անապատը ամայի,
Ուր մեն-մենակ ու վշտահար
Թափառեի ու լայի: (Ավ. Իսահակյան)*

*Մնար ու նրան մայրություն աներ,
Հուսահատության, տրտմության պահին
Նրա ճակատի
Ամպերը վաներ,
Նախ նրա ոտի
Ու հետո սրտի
Փշերը հաներ:
Մնար, որ հետո
Իր մինուճարի
Ու մեր հանճարի
Սև ցավը տաներ...
Մնար, որ նրան մի ողջ ժողովուրդ
«Մեծ մայր» անվաներ,
«Վեհամայր» կոչեր:
Մի ողջ ժողովուրդ սուրբ ձեռքը նրա
Իր բերնին տաներ,
Փեշերը պաչեր... (Պ. Սևակ)*

*Գերեզմանս գեթ փորեիր
Վերքիս նման՝ խորն անտակ,
Քո ձեռքերով ինձ թաղեիր
Գետի ափին, ծառի տակ... (Ավ. Իսահակյան)*

Բ.Ըղձական եղանակի ժխտական ապառնիի ձևերով արտահայտված ըղձական նախադասություններն իմաստով զրեթե նույնանուն են արգելական հրամայականին և արտահայտում հորդոր, պատվեր:

Իմ գերեզմանին դուք չմոտենաք: (Տերյան)

Գ.Ըղձական նախադասությունները հաճախ ուղեկցվում են **թող** բառով, որն ավելանում է ըղձական եղանակի ապառնիի երրորդ դեմքին և արտահայտում կամք, պատվեր: Այս նախադասությունները իմաստով մոտ են հրամայականներին:

Թող նորից երկինքը շունչ քաշի ազատ:

Թող նորա կրծքին ջերմ կյանքը եռա: (Ալ. Ծատուրյան)

*Նրա լույսի հոգին թող որ համբառնա,
Արժանի դառնա
Իր հավատացած երկնային գահին: (Պ. Սևակ.)*

*Թող անապատի բոց հողմն իմ դեմ գա,
Ավազի վրայից հետքերս ջնջե,
Որ մարդը երբեք տեղս չգտնի
Իմ շնչած օդը մարդը չշնչե: (Ավ. Իսահակյան)*

Դ. Թող բառը հաճախ արտահայտում է նաև խոսողի մի այնպիսի վերաբերմունք, որ բնորոշվում է *փուլթ չէ, հոգ չէ* բառերով:

Թող տեսնեն հացավանցիները և տրաքվեն (Ն. Զարյան):

*Թող ամենքը ինձ մոռանան առհավետ,
Թող ոչ մի մարդ ինձ կարոտով չսգա,
Գերեզմանս թող չունենա արահետ,
Ու թող ոչ ոք գերեզմանիս մոտ չգա...
Միայն թե դու շիրմիս ճամփան հիշեիր,
Միայն թե դու իմ կարոտը քաշեիր: (Տերյան)*

Ե. Երանի՛, երնե՛կ, ա՛խ ձայնարկությունները, միանալով ըղձական նախադասություններին, ավելի են ուժեղացնում նրանց զգացմունքայնությունը և նրանց գործած ազդեցությունը լսողի վրա:

Ա՛խ, եթե մեկը իմ հոգին այդ մեղմ լույսերին խառներ.

Եվ փայփայեր իմ հոգնատանջ սրտի թախիծը մաշող... (Ավ. Իսահակյան)

Զ. Գուցե, թերևս և նման այլ վերաբերականներ, իրենց երկբայական իմաստը հաղորդելով ըղձական նախադասություններին, թուլացնում են նրանց ըղձական իմաստը և մոտեցնում պատմողականին, երկբայական դատողություն արտահայտող նախադասություններին: Այդպիսի նախադասությունները կարելի է անվանել **կանխման կամ մտադրության ըղձական**:

Գուցե մենք էլ կարողանանք մի բան ասել հիվանդանոցի մասին (Սեկոյան):

*Եվ իմ մոլոր ուղիներում, ո՛վ գիտե,
Գուցե մի օր դու երևաս, լուսերես,
Գուցե ժպտաս քո խոսքերով արծաթե
Եվ իմ սրտիս նոր խնդության լույս բերես (Տերյան):*

Այսպիսով՝ հայերենում նախադասություններն ըստ բնույթի լինում են հինգ տեսակ՝ պատմողական, հրամայական, հարցական, բացականչական և ըղձական:

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԽՆԴՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՆՈՎԱՌԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լեզուն քարացած իրողություն չէ. հանրությանը ծառայելով իբրև հաղորդակցման միջոց՝ նա միևնույն ժամանակ փոփոխվում է նույն հանրության կողմից, և այդ զարգացումը շարունակական գործընթաց է: Այդ պատճառով էլ մշտապես լեզվաբանների ուշադրության կենտրոնում են լեզվի կանոնարկման, խոսքի մշակույթի կարևորագույն խնդիրները:

Առավել ուսումնասիրված են բառապաշարի տեղաշարժերը, քանի որ բառապաշարն ամենից արագ և ավելի է ենթարկվում փոփոխությունների: Իսկ քերականական մակարդակը, հայտնի է, համեմատաբար պահպանողական է, և նրանում տեղաշարժերն ավելի դանդաղ են ընթանում: Տարբեր են նաև այդ տեղաշարժերի պատճառներն ու բնույթը:

Եթե գրական հայերենի բառապաշարի տեղաշարժերը դրսևորվում են հիմնականում գրավոր խոսքում¹, ապա ձևաբանական մակարդակի փոփոխությունները կատարվում են առավելապես բանավոր խոսքում, այնուհետև աստիճանաբար թափանցում գրավոր լեզու, իսկ շարահյուսական կառույցների փոփոխությունները կապվում են լեզվի թե՛ բանավոր և թե՛ գրավոր դրսևորումների հետ:

Եթե բառապաշարի տեղաշարժերը կատարվում են մի շերտից մյուսը բառերի անցումով, իմաստափոխությամբ և այլն, որոնք սովորաբար օրինաչափ երևույթ են, ապա քերականական մակարդակում տեղի ունեցող յուրաքանչյուր նոր փոփոխություն նախ և առաջ հանդես է գալիս և ընկալվում իբրև շեղում լեզվական կանոնից: Երկրորդ աստիճանը առաջացած տարբերակների գոյակցության տևական փուլն է, որին հաջորդում է տարբերակային նոր ձևի ամրագրումը կամ մերժումը: Լեզվական նորմերի խախտումների, դրանց հետևանքով առաջացած տարբերակային ձևերի համակողմանի քննությունը հնարավորություն է տալիս բացահայտելու լեզվի զարգացման միտումները, նպաստելու նրա կանոնարկմանը:

¹ Խոսքն այս դեպքում չի վերաբերում բառերի սխալ գործածությանը (օր՝ *ընտանեական, տարեկետում* և այլն) և բառային օտարաբանություններին (օր՝ *մերսի, պրիվետ, օբեյ* և այլն), որոնք ի վերջո կայունանալու միտումն ունեն:

Այս հոդվածում կքննենք շարահյուսական մակարդակում լեզվական նորմերի խախտման մի քանի դեպքեր, կփորձենք վերլուծել մերժելի, ինչպես և կայունանալու միտում ունեցողները:

Խնդրառական և հոլովառական շեղումների դեպքերը կարելի է ներկայացնել հետևյալ խմբերով:

1. Կապային կառույցներ

Քերականական գործող կանոնի համաձայն *մոտ, հետ, պես, մնան, վրա, համար, չափ* կապերի հետ 1-ին և 2-րդ դեմքի անձնական (դիմային) դերանունները պետք է գործածվեն տրական հոլովով: Սակայն խոսակցականից գրական լեզու է թափանցել և բավական տարածվել հիշյալ կապերի հետ դերանունների սեռական հոլովաձևի գործածությունը: Այս իրողության նկատմամբ երկու տեսակի մոտեցում գոյություն ունի: Որոշ լեզվաբաններ վերոհիշյալ կիրառությունը սխալ և մերժելի են համարում², ուրիշներն այստեղ փորձում են զարգացման միտում տեսնել³: Վերը բերված կապերի հետ անձնական (դիմային) դերանունների սեռականով գործածությունը թերևս կարող է պատճառաբանվել նմանակության օրենքով. այստեղ որոշակի դեր է խաղում նույն դերանունների սեռական հոլովի գործածությունը մի կողմից՝ ետադրությունների զգալի մասի հետ (ինչպես՝ *մեջ, տակ, մասին, շուրջ, առաջ, դեմ, շնորհիվ* և այլն. հմմտ. *մեր շուրջ, քո մեջ, իմ մասին, քո առաջ, ձեր դեմ*), մյուս կողմից՝ *վրա, մոտ* և մյուս կապերի թեք հոլովաձևերի հետ (հմմտ. *ինձ վրա, քեզ մոտ, բայց իմ վրայի, քո մոտից* և այլն): Կարևոր է նաև այն իրողությունը, որ թվարկված բոլոր կապերի հետ գոյականները նույն սեռական հոլովաձևով են դրվում:

Ուշագրավ է, որ *չափ* կապի հետ, ըստ քերականական կանոնի, պահանջվում է 1-ին և 2-րդ դեմքի անձնական (դիմային) դերանունների տրականի գործածությունը, սակայն գրական հայերենում ներկայումս արդեն իսկ կայունացած է սեռականի գործածությունը (հմմտ. *ին չափ, քո չափ, մեր չափ, ձեր չափ* փոխ. *ինձ չափ, քեզ չափ, մեզ չափ, ձեզ չափ*): Այսինքն՝ կարելի է ասել, «սառույցը կտրվել է», և հնարավոր են նման այլ փոփոխություններ հիշյալ խմբի ներսում:

² Տե՛ս, օրինակ, *Ս.Աբրահամյան*, Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, էջ 244, *Պ.Քեղիոյան*, Հայ լեզուն և մեր խոսքը, Եր., 1999, էջ 90

³ Տե՛ս *Դ.Չարությունյան*, Կառավարումը ժամանակակից հայերենում, Եր., 1983, էջ 305-306, *Գ.Ջահուկյան*, *Ֆ.Խլղաթյան*, Հայոց լեզու. ոճաբանություն (դասագիրք 9-րդ դասարանի համար), Եր., 1998, էջ 109:

2. Բայական կառույցներ

ա) բայ + կապային կառույց

Խնդրառական օրինաչափությունները և դրանցից շեղումները պայմանավորվում են մի շարք գործոններով՝ սեռով, բայինաստով, կազմությամբ և այլն: Այս հարցին իրենց աշխատություններում տարբեր տեսանկյուններից շատերն են անդրադարձել⁴: Մենք կխոսենք գործող օրինաչափություններից շեղումների առանձին դեպքերի և դրանց դրսևորած միտումների մասին: Այս հարցում, անշուշտ, խախտումները պայմանավորվում են ինչպես ներլեզվական, այնպես էլ շատ հաճախ արտալեզվական գործոններով, մասնավորապես օտար ազդեցությամբ:

Սրանց մեջ պայմանականորեն կարելի է առանձնացնել երկու խումբ՝ ա) դիպվածային կառույցներ (պատահական սխալներ) և բ) կայունանալու միտում ունեցողներ: Այսպես, «*Կանանց իդեալական սովորություններն, ըստ նրա, պետք է համապատասխանեն տղանարդկանց սովորությունների հետ*» (Եթ, 22.01.04) նախադասության մեջ խնդրառական սխալը (հայերենում *համապատասխանել* բայը պահանջում է տրական հոլովով լրացում) թերևս կարելի է բացատրել ոչ ճիշտ թարգմանությամբ⁵. Ճիշտը պիտի լինի՝ *համապատասխանել սովորություններին*: Իսկ ահա «*Եթե մասաչուսեթսցի սենատորը վստահ էր իր ուժերի վրա....*» (փոխ. *վստահ լինել մի բանի, երբեմն՝ մի բանում*) (ՅԺ, 05.02.04), «*....ինչը հնարավորություն կընձեռեր համաշխարհային հանրությանը ծանոթանալ Չայաստանում շինարարական արվեստի պատմության զարգացման հետ*»⁶ (ՅՅ, 20.05.04) (փոխ. *ծանոթանալ մի բանի*) նախադասություններում առկա խնդրառական շեղումները, կարծում ենք, կայունանալու միտում ունեն: Երևույթը, իհարկե, խրախուսելի չէ, բայց իրողություն է: Տվյալ դեպքում մենք սոսկ փաստն ենք արձանագրում:

Այս շարքում կարելի է նշել բավական տարածված, գրեթե կայունացող *վկայել մի բանի մասին* կապակցությունը («*.... նշեց, որ դա վկայում է այն մասին, որ դեռևս....*» (ՅՅ, 30.01.04), «*Ծրագրի*

⁴ Տե՛ս, օրինակ, *Վ.Քոսյան*, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Եր., 1976, *Գարությունյան*, նշվ. աշխ., *Ռ.Իշխանյան*, Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն, Եր, 1986, *Մ.Ասատրյան*, Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն, Եր, 1987 և այլն:

⁵ Պատճառը հավանաբար ռուս. совпадать с привычками կապակցության սխալ թարգմանությունն է:

⁶ Այստեղ որոշակի է *ծանոթանալ մեկի հետ* կառույցի ազդեցությունը:

*արդյունավետության մասին է վկայում այն փաստը, որ միայն անց-
յալ տարի սակրավորները ոչնչացրել են շուրջ 20 հազար տարբեր
տեսակի մարտալիցքեր...»* (ՀՀ, 20.05.04)), որը վկայել մի բան
ճիշտ կապակցությանը զուգահեռ (գուցե և ավելի հաճախ) գործած-
վող կառույց է և պատճենված է ռուսերենից:

բ) բայ + հոլովածն

Խնդրառական ուշագրավ առանձնահատկություն են դրսևո-
րում *աջակցել, սատարել, խրախուսել* բայերը: Առաջին երկուսը
տրականով խնդիր են պահանջում (աջակցել/սատարել մեկին/մի
բանի), մինչդեռ *խրախուսել*-ը, որ ներգործական սեռի բայ է, հայ-
ցական հոլովով խնդիր է պահանջում (խրախուսել մեկին/մի բան):
Բավական հաճախադեպ են այս կանոնի խախտումներն ինչպես
բանավոր, այնպես էլ գրավոր խոսքում, հատկապես մամուլի լեզ-
վում: Դրանք, անշուշտ, դիպվածային են: Այսպես, «...ԱՄՆ-ի հույ-
ները **աջակցում են** Կիպրոսի հարցի լուծման ծանապարհին կա-
տարվող բոլոր **քայլերը**...» (փոխ. քայլերին) (ՀՀ, 30.01.04), «*Բոլո-
րին է հայտնի, որ մեր խումբը սատարել ու սատարելու է պե-
տության զարգացմանն ու առաջընթացին նպաստող բոլոր կառու-
ցողական քայլերը*...» (ՀԱ, 05.02.04): Իսկ *խրախուսել* բայը երբեմն
գործածվում է տրական հոլովով լրացման հետ, ինչպես՝ «*Նախա-
տեսվում է նպաստել... բազմաստիճան կազմակերպությունների
ստեղծմանը, խրախուսել ֆինանսավարկային կազմակերպություն-
ների ստեղծմանը և գործունեության ընդլայնմանը*...» (ՀՀ,
30.01.04): Վերջինիս պատճառը երևի նախ այս բայի հետ գործած-
վող անձնանիշ գոյականների տրականաձև հայցականն է (օր.
խրախուսել երեխային, մարտիկին), այս դեպքում՝ նաև *նպաստել*
բայի կողքին գործածվելը:

Կայունաճալու միտում ունի *խոչընդոտել+տրական հոլով*⁷
կառույցը, որը ռուսերենի ազդեցության հետևանք է (հմնտ.
препятствовать (чему?) продвижению, прогрессу և այլն): Օրի-
նակ՝ «...Ադրբեջանի իշխանություններն այլևս **չեն խոչընդոտի** հայ
զինծառայողների **մասնակցությանն** ինչպես...» (ՀՃ 05.02.04),
«...դրանք աշխատանքային կարգով լուծվող հարցեր են և **չեն կա-
րող խոչընդոտել օրինագծի մշակմանը**» (ՀՀ, 30.01.04):

⁷ *խոչընդոտել*-ը ներգործական բայ է, ուստի պահանջում է հայցական
հոլովով լրացում, ինչպես՝ *խոչընդոտել առաջընթացը, զարգացումը* և այլն:

գ) բայ + անորոշ դերբայի որևէ հոլովածև

Գրական հայերենում բայական այս կապակցությունների շարքում առանձնանում է երեք կառույց՝

ա) դիմավոր բայ+անորոշ դերբայի հայցական (այլ մոտեցմամբ՝ ուղղական) հոլով,

բ) դիմավոր բայ+անորոշի տրական հոլով,

գ) դիմավոր բայ+անորոշի բացառական հոլով⁸:

Նշված առաջին կաղապարը ձևավորվում է ներգործական սեռի *շարունակել, թույլ տալ, նախատեսել, որոշել, փորձել, սկսել* և նման բայերով: Օր.՝ «...*եվրաբանկը նախատեսում է ամրացնել իր երևանյան գրասենյակը...*», «...*եթե երկու երկրները շահեր ունեն, ապա երրորդ երկրները պետք է փորձեն օգտվել այդ շահերից*» (բոլորն էլ՝ ԳԳ, 20.05.04) և այլն: Խնդրառական առումով այս կառույցները սովորաբար կայուն են:

Ուշադրության առավել արժանի են անորոշի տրական և բացառական հոլովներով կառույցները, որոնցում այսօր օտար լեզուների ազդեցությամբ⁹ ավելի ու ավելի հաճախադեպ են դարձել խնդրառական շեղումները: Օրինակ՝ «*Մենք հուսով ենք, որ Գայաստանը այնքան կզարգանա, որ ունակ կլինի սեփական ուժերով լուծել պարենային խնդիրները*», «...*հաճախ էլ էժան են այն մթերքները, որոնք «բռնագրավված» են լինում, և անհրաժեշտություն է լինում դրանք շտապ վաճառել*» (բոլորն էլ՝ Առ, 05.02.04), «...*միայն ես եմ ի վիճակի պարտության մատնել Բուշին,-հայտարարել է Քերրին*» (ՅԺ, 05.02.04) և այլն:

Թեև պատրաստ լինել, ունակ լինել, պատրաստվել, ստիպված լինել, հնարավորություն տալ/ունենալ/ընձեռել, իրավունք ունենալ/տալ, ի վիճակի լինել, կոչված լինել, նպատակ ունենալ և նման այլ բայեր ավանդաբար պահանջում են տրական հոլովով լրացում, սակայն ներկայումս թարգմանական գրականության և

⁸ Ի տարբերություն օտար լեզուների՝ հայերենում անորոշ դերբայը հոլովվում է, հետևաբար դիմավոր բայի հետ նրա գործածությունը մեծապես պայմանավորվում է վերջինիս խնդրառական հատկանիշով, օրինակ՝ *վախենալ* (ինչի՞ց) *սխալվելուց, պատրաստվել* (ինչի՞) *լսելու* և այլն:

⁹ Կարծիք է կայունվել, որ նման կառույցներում օտար ազդեցությանը զուգահեռ կա նաև գրաբարի ազդեցությունը (տե՛ս *Մ.Արեղյան*, Գայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 469): Սակայն հայերենի ներկա փուլում հիշյալ կառույցների տարածումը կապում են ավելի շատ օտար լեզուների ազդեցության հետ (տե՛ս *Վ.Քոսյան*, նշվ. աշխ., էջ 462, *Գ. Գարությունյան*, նշվ. աշխ., էջ 207, *Ֆ. Ստեփանյան*, Օտարաբան բայական կառույցները արդի հայերենում, Բանբեր Երևանի համալսարանի, 1997, հ. 2, էջ 165):

մամուլի էջերում հազվադեպ պատահող ճիշտ կառույցների փոխաբերեն (օրինակ՝ *...բանկը պատրաստ է օժանդակելու Հայաստանում... օտարերկրյա ներդրողներին...», ...որը կոչված էր համակարգելու տեղական և արտերկրի մարդասիրական բոլոր կառույցների գործունեությունը* (բոլորն էլ՝ ՀՀ, 20.05.04) և այլն) ավելի գործուն են դարձել և կայունանալու միտում են դրսևորում անորոշի հայցականով (ուղղականով) ձևավորվածները, որոնք շեղումներ են կանոնից: Այսպես, *...«ժողպատգամավոր» խումբը պատրաստվում է ստանձնել միջնորդի դեր...», «Եթե փող չկա, «Օրինաց երկիրը» պատրաստ է վճարել»,- հայտարարել է ՕԵԿ պատգամավորը* (բոլորն էլ՝ ՀԺ, 05.02.04), *Հայաստանը պատրաստ է Եվրոպական բանկի հետ սերտ համագործակցությամբ քայլ առ քայլ լուծել այն բոլոր հիմնախնդիրները(ՀՀ, 20.05.04),կառավարությունը պատրաստ է հնազործակցել հեղինակների հետ՝ այն բարելավելու նպատակով* (ուսյն տեղում), *Կկնքվեն նաև լրացուցիչ համաձայնագրեր, որոնք կոչված են ընդլայնել հարաբերությունների զարգացման իրավաբանական բազան...* (ՀՀ, 05.02.04):

Ստորև բերվող օրինակները ևս վկայությունն են այն բանի, որ հիշյալ կառույցները թեև շեղումներ են հայերենի գործող օրինաչափություններից, սակայն գործածության մեծ հաճախականությունը ի վերջո կարող է նպաստել, որ դրանք հանրության կողմից որպես օրինաչափ ձևեր ընկալվեն:

♦ *«... ինչն ըստ նախարարի՝ հնարավորություն կտա մեր բարձրագույն և հետբուհական կրթության համակարգը ավելի արդյունավետ դարձնել»* (ՀՀ, 05.02.04), *«Մինչդեռ մեզ բոլորիս այսօր հիանալի հնարավորություն է տրված երկիրը պետություն դարձնել»*, *«...մինչև հնարավորություն լինի նոր տրանսպորտ ձեռք բերել և օգտագործել»*, *«Այս բոլորի իմացությունը մեր նախնիներին հնարավորություն է տվել ստեղծել այնպիսի անկրկնելի բարձրարվեստ շինություններ...»* (բոլորն էլ՝ ՀՀ, 20.05.04), *«...մեծ հնարավորություն կունենան իրենց ոչ այնքան համեստ ունեցվածքը կանանց ու երեխաների անունով գրանցել...»* (Առ, 05.02.04):

♦ *«...նախագծի քննարկմանը իրավունք ունեն մասնակցել տվյալ փաստաթղթի հեղինակները»* (ՀՀ, 05.02.04), *«...նա Ղարաբաղի հարցի քննարկումից հինգ թույլ առաջ իրավունք չունեղ նման հարց բարձրացնել...»*, *«Իհարկե իրավունք չունեին համատարած անցատել հոսանքը...»* (բոլորն էլ՝ Առ, 05.02.04), *«Այսօր Վրաստանի մենաշնորհյալ վիճակը նրան իրավունք է վերապահում թելադրել մեզ իր ցանկացած սակագինը...»* (ՀԱ, 05.02.04):

♦ *«Հույս ունենք որոշ փորձ ձեռք բերել...»*, *«...հույսեր կան այդ թիվը հասցնել 20 մլն եվրոյի և ավելիի»*, *«...սակայն այ-*

սօր էլ նրանք երբեմն ստիպված են ծաշակել ողբերգության դառն պտուղները», «Ներկայիս Հայաստանի Հանրապետությունն իր գոյության առաջին տարիներից ձեռնամուխ եղավ հիմք դնել ինքնուրույն որակավորման համակարգին...», «...Աժ նախագահին հրավիրեց մասնակցել ԵԱԴԿ առաջիկա նստաշրջանին ...», «Կուսակցությունը ձգտելու է պետության և քաղաքացիների պաշտպանության համար անհրաժեշտ իրավական բազա ստեղծել, բնակչությանը ապահովել լիարժեք ու որակյալ տեղեկատվությամբ...» (բոլորն էլ՝ ՀՀ, 20.05.04) և այլն¹⁰: Այս վերջին կապակցությունը թերևս կարելի է կայունացած համարել. չնայած **ձգտել** բայը պահանջում է տրականով լրացում (օր.՝ *ձգտել* (ինչի՞) *հաղթանակի*, *նորանոր բարձունքների* և այլն), սակայն **ուզել** բայի նմանակությամբ ներկայումս գործածվում է գերազանցապես անորոշի հայցական հոլովի հետ (հմմտ. *ուզում է աշխատել* – *ձգտում է աշխատել*, *ուզում է շտկել* – *ձգտում է շտկել* և այլն):

Ի դեպ, վիճակագրությունը ցույց է տալիս, որ նշվածների մեջ առանձնանում են հատկապես *պատրաստ լինել/պատրաստվել*, *իրավունք ունենալ*, *հնարավորություն տալ/ունենալ*, *ստիպված լինել*, *հույս ունենալ* բայերը, որոնք ավելի հաճախ են հայցականով խնդիր առնում:

Դիմավոր բայ+անորոշի բացառական հոլով կառույցին նույնպես բնորոշ են նմանօրինակ շեղումները: Թեև ըստ լեզվական կանոնի *վախենալ*, *դադարել*, *խուսափել*, *հրաժարվել*, *ամաչել* և նման այլ բայեր պահանջում են բացառական հոլովով լրացում, սակայն ավելի հաճախ սրանց հետ գործածվում է անորոշի հայցականը: Այսպես, «...ամբիոնից հնչող պաշտոնական ելույթներում **խուսափում էին արտասանել** (փոխ. *արտասանելուց*) *հայոց ցեղասպանություն արտահայտությունը*»¹¹ (ՀՀ, 30.01.04), «Աֆղանական պատերազմի բովով անցած երկու սպա **հրաժարվում էին ծառայել** (փոխ. *ծառայելուց*) *իշխանությունը զավթած պուտչիստներին*» (Եթ., 22.01.04), «...մի քանի տասնյակ պրոֆտեխնիկական

¹⁰ Օրինակների նման քանակը միտումնավոր է ընտրված, որպեսզի ցույց տրվի, որ սա պատահականություն չէ, այլ միտում: Ի դեպ, այս կարգի օրինակները մեր քարտարանում ավելին են, քան ներկայացրինք: Ասենք նաև, որ նման բազմաթիվ վկայություններ լիուլի կարելի է քաղել հեռուստատեսային և ռադիոհաղորդումներից ևս:

¹¹ Այս և հաջորդ դեպքում պետք է փոխվի նաև նախադասությունների շարադասությունը: Այսպես՝ «...ամբիոնից հնչող պաշտոնական ելույթներում **խուսափում էին** *հայոց ցեղասպանություն արտահայտությունն արտասանելուց*»:

ուսումնարանները վերջին տասնամյակում դադարեցին գործել»
(Վոխ. գործելուց) (ՀՀ, 05.02.04) և այլն:

Կարծիք է հայտնվել, որ հիշյալ երկու կառույցներից տեղա-
շարժն ավելի բնորոշ է տրական-հայցական (ուղղական) կապակ-
ցությանը: Պատճառը թերևս միայն այն է, որ բացառականով լրա-
ցում պահանջող բայերի թիվը զգալիորեն պակաս է տրականով
խնդիր առնողներից: Եվ կարևորը դա էլ չէ, այլ առկա միտումը:

Ժամանակը և հանրության վերաբերմունքը կորոշեն, թե
քննարկված շեղումներից կամ միտումներից որո՞նք կհաստատվեն
իբրև գրական լեզվի կանոնավոր ձևեր:

Համառոտագրություններ

Առ - Առավոտ

Եթ - Եթեր

ՀԱ - Հայոց աշխարհ

ՀԺ – Հայկական ժամանակ

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ «ՆՈՐ ՏԻՊԻ» ԱՆՎԱՆԱԿԱՆ
ՀԱՐԱՊՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հայ բառակազմագիտությունը վերջին տասնամյակներում զգալի նվաճումների է հասել: Ժամանակակից հայերենի բառակազմական իրողությունները քննվել են հայոց լեզվի կառուցվածքի ամբողջական նկարագրությունը ներկայացնող ընդհանուր բնույթի աշխատություններում և բառակազմական առանձին երևույթներին նվիրված ուսումնասիրություններում: Մասնավորապես, մանրամասն հետազոտված են ածանցումն ու ածանցները (Ս.Գալստյան, Ս.Էլոյան), բայակազմությունը (Ա.Աբրահամյան, Ա.Մարգարյան), բառակազմական իմաստաբանությունը (Գ.Ջահուկյան, Ռ.Մանուչարյան): Հետազոտողները մշակել են հայերենի բառակազմագիտության տեսական սկզբունքները, բաղադրյալ բառերի ու բառակազմական միավորների դասակարգման հիմունքները, ներկայացրել բառակազմական տեխնիկայի զարգացման փուլերը, բառակազմական կաղապարները (Մ.Աբեղյան, Գ.Սևակ, Է.Աղայան, Գ.Ջահուկյան, Ս.Աբրահամյան, Լ.Հովսեփյան) և առավել կամ նվազ ամբողջական ձևով նկարագրել հայերենի բառակազմությանը հատուկ եղանակներն ու միջոցները (Ս.Էլոյան, Ա.Մարգարյան, Ա.Սուքիասյան, Տ.Ավետիսյան և այլք):

Այնուամենայնիվ, ժամանակակից հայերենի բառակազմության ոչ բոլոր հատվածներն են անհրաժեշտ խորությամբ ու մանրամասնությամբ ուսումնասիրվել: Մնում են դեռևս նվազ հետազոտված բնագավառներ և լուծման սպասող խնդիրներ: Մասնավորապես, եթե բայական հարադրություններին ծավալուն մենագրություն է նվիրվել¹, ապա անվանական (ոչ բայական) վերլուծական կազմությունները ամբողջությամբ վերջրած հատուկ մենագրական հետազոտության առարկա չեն դարձել²: Այս բացը հատկապես ակներև է դառնում, եթե նկատի ունենանք, որ նշված տիպի կազմությունները վերջին տասնամյակներում զգալի չափով հարստացել են նոր կաղապարներով ու ստվարածավալ բառաքանակ են կազմում: Անվանական վերլուծական կազմությունները ժամանակակից հայերենի բառակազմական համակարգում զգալի տեղ են գրավում, ներկայացված են բազմազան կառուցվածքային կաղապարներով և

¹ *Ա. Ա. Մարգարյան*, Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966:

² Վերլուծական տիպի անվանական բաղադրություններից առանձնահատուկ կերպով քննված են միայն բաղիյուսական կազմությունները: Տե՛ս *Ա. Ա. Մարգարյան*, Հայերենի բաղիյուսական բարդությունները, Եր., 1986:

ուրույն առանձնահատկություններ են դրսևորում բաղադրիչների խոսքիմասային պատկանելության, հնչյունական և քերականական ձևավորման, իմաստային առնչությունների, շարահյուսական հարաբերությունների, ինչպես նաև կաղապարների գործառական ակտիվության և արդյունավետության տեսակետից: Մյուս կողմից, եթե բայական վերլուծական կազմությունների դասակարգման ու նկարագրության տեսակետից հետազոտողները հիմնականում միասնական են, ապա նույնը չի կարելի ասել անվանական կազմությունների մասին, որոնց խմբավորումը տարբեր հեղինակներ տարբեր կերպ են կատարում: Տարբեր են նաև զանազան տեսակներին տրվող անվանումները: Նպատակ չունենալով ներկա հոդվածում տալ անվանական վերլուծական կազմությունների ուսումնասիրության ամբողջական տեսությունը՝ նշենք դրանց դասակարգումներից մի քանի ամենակարևորները: Այսպես, Մ.Աբեղյանը ոչ բայական հարադրությունները անվանում է բաղիյուսական, որոնց մեջ ներառում է ինչպես *և, ու* շաղկապներով միացածները, այնպես էլ առանց շաղկապի հարադրությունները (*գորում-գոչում, թև-թիկունք*): Առանձին քննվում են կրկնավորները ըստ տարբեր խոսքի մասերի պատկանող հիմքերի կրկնության, այնուհետև բերվում են հնչյունական փոփոխությամբ կրկնավորները³: Գ.Սևակը անվանական հարադրությունների մեջ առանձնացնում է միայն կրկնավորներն ու բաղիյուսականները, ընդ որում, կրկնավոր է համարում միայն ուղղականաձև բառերի կրկնությամբ կազմվածները, իսկ նախդիրներով կապակցված կամ առաջին արմատի հոլովված ձևերով կազմությունները (*ժամ առ ժամ, քաղաքից քաղաք, տնե տուն* և այլն) համարում է ոչ թե կրկնավորներ, այլ հարադրական բարդություններ: Բաղիյուսական հարադրությունների առանձնահատկությունն է համարվում հարադրվող տարրերի համազորությունն ու համադասությունը, ինչպես նաև շաղկապներով (*և, ու*) կապվելը⁴: Առաջին անգամ «նոր տիպի» անվանական հարադրություններն առանձնացվում են ժամանակակից հայերենի ակադեմիական քերականության մեջ⁵: Նախ, անվանական հարադրությունները բաժանվում են համադասական ու ստորադասական տեսակների: Համադասականների մեջ ընդգրկվում են ա) կրկնավորները՝ իրենց հնչյունափոխական ու կառուցվածքային տեսակներով, բ) բաղիյուսականները, որոնց մեջ առանձնացվում են շաղկապավոր (*որ ու*

³ *Մ. Աբեղյան*, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 175-176, 180-182:

⁴ *Գ. Սևակ*, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1956, էջ 164:

⁵ *Վ. Դ. Առաքելյան, Ա. Գ. Խաչատրյան, Ս. Ա. Էդրյան*, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Հնչյունաբանություն և բառագիտություն, Եր., 1979, էջ 258-271:

գիշեր) և անշաղկապ (գիշեր-ցերեկ) տեսակները, և գ) նոր տիպի համադասական հարադրությունները (արտադրական-ճյուղային, գրական-գեղարվեստական և այլն): Ստորադասական անվանական հարադրությունները նույնպես անվանվում են «նոր տիպի», բայց դրանց բաղադրիչների մեջ հեղինակը դիտում է ստորադասական կապ՝ *թղթակից-անդամ, տուն-թանգարան* և այլն: Է. Աղայանը, որը անվանական հարադրությունները բաժանում է շաղկապական, հարակցական և կապակցական տեսակների, վերը նշված «նոր տիպի» կառուցվածքները համարում է հարակցականի մի տեսակը: «Հարակցական հարադրություններ պետք է համարել նաև *խրճիթ-ընթերցարան, վագոն-ռեստորան, խանութ-սրճարան* [...]»: Այս կարգի հարադրությունները նոր կազմություններ են, ցույց են տալիս տվյալ առարկայի (տեղի, հարմարանքի և այլնի) նշանակումը, օգտագործումը բացի իր սովորական դերից նաև մի այլ դերով և կարող է փոխարինվել կամ և շաղկապով համադասական կապակցությամբ (գրադարան-ընթերցարան՝ գրադարան և ընթերցարան, խանութ-սրճարան՝ խանութ և սրճարան և այլն), կամ նկարագրական եղանակով *խանութ, որ նաև սրճարան է, գրադարան, որ նաև ընթերցարան է* [...] և այլն»⁶: Այս տեսակի կառուցվածքները նոր է համարում նաև Ա.Մարգարյանը. «Գնալով անվանական հարադրական բարդությունները ևս աճում են ու հարստանում նոր կազմություններով: Վերջին տասնամյակներում, ռուսերենի ազդեցությամբ հատկապես, իմաստով հարաբերակից շատ գոյականների հարադրությամբ կազմվել են մի շարք այնպիսի բարդություններ, ինչպիսիք են, օրինակ, *աղբյուր-հուշարձան, տուն-թանգարան, գիտնական-մանկավարժ* և այլն»⁷: Ս.Աբրահամյանը այս կառուցվածքը ներառում է իր տերմինով «կիսահարադրական» բարդությունների մեջ և նույնպես բնորոշ է համարում նոր ժամանակներից⁸: Այսպիսով, այն հետազոտողները, ովքեր հատուկ կերպով անդրադառնում են նշված տեսակի բառերին, նշում են, որ սրանք նոր կազմություններ են, իսկ այլ հեղինակներ սրանք մյուս տեսակներից չեն առանձնացնում (օրինակ՝ Ա.Սուքիասյանը *վագոն-ռեստորան* կազմությունը բերում է մյուս հարադրությունների շարքում (*վար ու ցանք, ձյուն-ձմեռ, վագոն-ռեստորան* և այլն)⁹:

⁶ Է. Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 227-228:

⁷ Ա. Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990, էջ 70:

⁸ Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, էջ 79:

⁹ Ա. Ս. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999, էջ 233:

Ներկա հոդվածի նպատակն է որոշել նշված կազմությունների տեղը ժամանակակից հայերենի վերլուծական անվանական բաղադրությունների շարքում և ըստ հնարավորին ամբողջական կերպով ներկայացնել նրանց կառուցվածքային առանձնահատկությունները, բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը և նրանց միջև եղած իմաստային ու շարահյուսական հարաբերությունները: Սակայն ամենից առաջ անհրաժեշտ ենք համարում ճշգրտել այս կազմությունների անվանումը: «Նոր տիպի» անվանումը, որ առաջադրում է Ս.Էլոյանը, ճիշտ էր ընդգծում տվյալ ժամանակաշրջանի համար բնորոշ իրողությունը, սակայն պատկերացում չէր տալիս մեզ հետաքրքրող կազմությունների էության մասին: Մինչդեռ վերլուծական անվանական կառուցվածքների մյուս տեսակներն առանձնացնելիս հետազոտողները (որոշ տարբերություններով հանդերձ) հիմնականում նկատի են ունեցել այդ կազմությունների կառուցվածքը, այսինքն՝ բաղադրիչ տարրերը և նրանց միջև եղած հարաբերությունները, ինչպես նաև նրանց միացման եղանակը, և արտացոլել դրանք տարբեր տեսակներին տրվող անվանումների մեջ: Մեզ առավել ընդունելի է թվում է.Սդայանի մոտեցումը, ըստ որի բաղադրիչների կապակցման եղանակի համաձայն «նոր տիպի» կազմությունները զետեղված են հարակցականների մեջ (տես վերը): Սակայն, նկատի ունենալով բաղադրիչների միջև եղած իմաստային առնչությունները և շարահյուսական հարաբերությունները, նպատակահարմար ենք համարում առանձնացնել դրանք որպես անվանական հարադրությունների մի ենթատեսակ՝ անվանելով **առդրական**: Հարակցական տեսակի մեջ է. Սդայանը ներկայացնում է *գիշեր-ցերեկ*, *ամառ-ձմեռ*, *աչք-ունք*, *ընկեր-բարեկամ*, *ջահել-ջիվան* օրինակները, որտեղ բաղադրիչները նշանակում են տարբեր, միմյանց առնչակից, հակամիշ կամ հոմանիշ հասկացություններ, և նրանց միացումով ստացվում են կամ նոր իմաստներ, որոնք բաղադրիչների առանձին իմաստների պարզ գումարը չեն, կամ ավելի է սաստկանում իմաստը: Այսպես, *գիշեր-ցերեկ* նշանակում է «ամբողջ օրը», *ամառ-ձմեռ*՝ «մշտապես», *աչք-ունք*՝ «դեմք, երես», *ընկեր-բարեկամ*՝ «շրջապատ» և այլն, իսկ *ջահել-ջիվան* նշանակում է «շատ երիտասարդ»: Իմաստային տեսակետից առդրական հարադրությունները վերը նշվածներից տարբերվում են նրանով, որ սրանց մեջ բաղադրիչների իմաստը պահպանվում է, և առարկան բնութագրվում է միաժամանակ երկու կողմից, որպես երկգործառույթ, երկու կարգի հատկանիշներ կրող, օրինակ՝ *բժիշկ-մանկավարժ* հարադրությունը ցույց է տալիս գործող անձ, որը միաժամանակ կատարում է բժշկի և մանկավարժի գործառույթները: Մի այլ դեպքում առդրական հարադրությունների բա-

ղաղրիչներից մեկը ավելի նեղացնում, մասնավորեցնում կամ ճշգրտում է մյուսի իմաստը, նշում տվյալ առարկայի ինչ տեսակի պատկանելը, օրինակ՝ *բժիշկ-մաշկաբան* նշանակում է «բժիշկ, որը նեղ մասնագիտությամբ մաշկաբան է»: Ածականներով կազմված առդրական հարադրությունների մեջ առարկան բնութագրվում է երկու տարբեր հատկանիշներով՝ *ինդուստրիալ-ագրարային, լրատվական-վերլուծական*: Բոլոր դեպքերում պահպանվում են բաղադրիչների առանձին իմաստները: Բաղադրիչների միջև եղած շարահյուսական հարաբերությունների տեսակետից նույնպես **առդրական** տերմինն արդարացվում է, քանի որ «նոր տիպի» կազմություններում բաղադրիչները կամ գտնվում են համագոր հարաբերության մեջ, կամ դրանց զգալի մասում առկա է որոշիչ-որոշյալ հարաբերություն, որին ժամանակակից հայերենում շարահյուսական կապակցման եղանակներից համապատասխանում է առդրությունը:

Այժմ ներկայացնենք ժամանակակից հայերենի անվանական վերլուծական բաղադրությունների շարքում ուրույն առանձնահատկություններ ունեցող այս կազմությունների կառուցվածքային և իմաստաբանական քննությունը:

Ամենից առաջ պետք է նկատել, որ բաղադրիչների և ամբողջ բաղադրության խոսքիմասային պատկանելության տեսակետից սրանք այն բազմազանությունը չունեն, ինչ հարակցական բաղադրությունների մյուս տեսակները: Որպես արդյունք ստացվում են միայն գոյականական և ածականական կազմություններ, ընդ որում, օրինակների մեծագույն մասում (բաղադրիչների համադասական հարաբերության դեպքում) գոյականների առդրումից ստացվում են գոյականներ (*քաղաք-պետություն, քանդակ-պատկեր, բառ-տեղանուն*), իսկ ածականների առդրումից՝ ածական անուններ (*առօրյա-կենցաղային, գաղափարական-քաղաքական, դեկորատիվ-կիրառական*): Միայն բաղադրիչների ստորադասական հարաբերության դեպքում (որոշիչ-որոշյալ) երբեմն գոյականին որպես առաջին բաղադրիչ կարող է կցվել որևէ այլ խոսքի մաս (*վայ-բանաստեղծ, ուռա-հայրենասիրություն*): Առդրական հարադրությունները իմաստային տեսակետից ևս ունեն ընդհանուր հատկանիշ, նրանք առավելապես ժամանակակից կյանքի համար բնորոշ նոր երևույթների, առարկաների անվանումներ են, որոնց մեծ մասը կարելի է խմբավորել որոշակի իմաստային դաշտերի մեջ: Անշուշտ, հանդիպում են նաև պատմական իրույթներ, սակայն նրանց անվանումները հնից չեն գալիս, այլ նոր տերմիններ են՝ կազմված բառակազմական այս նոր կաղապարի համաձայն, ինչպես՝ *ժամատուն-դամբարան, խաչքար-մահարձան, բլուր-հնավայր* և այլն: Կան մեկուսի մնացող անվանումներ, որոնք դժվար է խմբավորել որևէ իմաստա-

յին հատկանիշի հիման վրա: Բացի այդ, պետք է նաև նշել, որ այս տեսակի կազմություններում զգալի թիվ են կազմում նորագույն փոխառությունները, հատկապես գիտատեխնիկական տերմինաբանության մեջ:

Ստորև ներկայացվում են բաղադրիչների համադասական հարաբերությամբ բնորոշվող գոյականական առդրական հարադրությունների իմաստային խմբերը:

1. **Մասնագիտություններ` աշխարհագրագետ-ճանապարհորդ, բժիշկ-համաճարակաբան, բժիշկ-մանկավարժ, բժիշկ-վարակագետ, դերասան-կատարող, գրահահար-հրկիզող, թարգմանիչ-բանաստեղծ, թարգմանիչ-ռեֆերենտ, ինժեներ-էլեկտրիկ, ինժեներ-ճարտարապետ, լեզվաբան-արևելագետ, խմբագիր-տնօրեն, հռետոր-իմաստասեր, հսկիչ-հավաքագրող, ճարտարապետ-շինարար, մանկաբարձ-գինեկոլոգ, ներկարար-ծեփագործ** և այլն:

2. **Ջինվորականներ, պետական պաշտոնյաներ, կրոնավորներ` գեներալ-ադյուտանտ, գեներալ-գնդապետ, գեներալ-նահանգապետ, ինժեներ-գնդապետ, լորդ-գանձապահ, լորդ-կանցլեր, կապիտան-լեյտենանտ, պատրիարք-կաթողիկոս** և այլն:

3. **Տարբեր ուսմունքների, քաղաքական հոսանքների հետևորդներ` լուսավորիչ-դեմոկրատ, հեղափոխական-դեմոկրատ, ռամկավար-ազատական, մարքսիստ-լենինիստ, սոցիալիստ-հեղափոխական, ուտոպիստ-սոցիալիստ, քրիստոնյա-դեմոկրատ** և այլն:

4. **Հիմնարկներ, հաստատություններ, ծառայություններ` ակումբ-գրադարան, արգելավայր-թանգարան, բար-սրճարան, բուֆետ-ճաշարան, զանձարան-արխիվ, թանգարան-ինստիտուտ, թատրոն-ստուդիա, խանութ-խոհանոց, մսուր-մանկապարտեզ, շտաբ-կայան, պահեստ-սառնարան, սառցարան-կոմբինատ, վազոն-բնակարան, տուն-թանգարան, փոստ-հեռագրատուն** և այլն:

5. **Ճարտարապետական կառույցներ, շինություններ` աղբյուր-հուշարձան, ամրոց-վանք, ամրոց-բնակատեղի, բերդ-ամրոց, բերդ-քաղաք, բլուր-հնավայր, տուն-քարանձավ, եկեղեցի-դամբարան, ժամատուն-դամբարան, խաչքար-մահարձան, հուշարձան-աղբյուր, հուշարձան-կոթող, մատուռ-դամբարան, պալատ-շինություն, քաղաք-ամրոց** և այլն:

6. **Տեխնիկա, գործիքներ, սարքավորումներ, սպառազինություն, փոխադրամիջոցներ` անիվ-սրոց, բալուն-գունդ, կափույր-սողնակ, հրթիռ-խայծ, ձայնասփյուռ-բարձրախոս, սայլակ-պատգարակ, տանկ-ականահան, տանկ-քարշակ, տենդեր-շոգեկառք, ցուկուլ-շարժիչ** և այլն:

7. **Ցուցահանդեսներ, ներկայացումներ, միջոցառումներ` դասախոսություն-ցուցադրում, համերգ-դասախոսություն, համերգ-**

զրույց, հուշ-երեկո, հուշ-ցերեկույթ, մրցույթ-մարաթոն, մրցույթ-փառատոն, սենյնար-խորհրդակցություն, ստուգատես-մրցույթ, ցույց-հանրահավաք, ցուցահանդես-տոնավաճառ, օպերա-բալետ, ֆիլմ-համերգ, ֆիլմ-հեքիաթ, ֆիլմ-մյուզիքլ, ֆիլմ-օպերա և այլն:

8. Գրավոր արտադրանք՝ *ալբոմ-բառարան, բառարան-զան-ծարան, բառարան-տեղեկատու, բողոք-դիմում, դիմում-նամակ, զեկույց-նամակ, ժողովածու-ծաղկաքաղ, կոչ-նամակ, նամակ-դիմում, նամակ-ծանուցում, ուղեցույց-գրքույկ, պլան-քարտեզ* և այլն:

9. Կենցաղային իրեր, հագուստ, ուտեստներ՝ *արհշտա-հալվա, բազկաթոռ-մահճակալ, բազմոց-մահճակալ, գահավորակ-մահճակալ, սեղան-նստարան, վերնազգեստ-թիկնոց, վրան-թիկնոց, քուֆթա-բոզբաշ* և այլն:

Նշված իմաստային դաշտերում չխմբավորված առդրական հարադրություններից են՝ *ականատես-վկա, ամիդ-աղաթթու, աս-ֆալտ-բետոն, բայ-ստորոգյալ, բառ-մասնիկ, բառ-տեղանուն, բաս-բարիտոն, կնքահայր-բարերար, հաշիվ-ապրանքագիր, նշան-ագդանշան, սպի-նշան, վալս-մազուրկա, փոս-թակարդ, քաղաք-պետություն, քանդակ-պատկեր, քսուք-դիմակ, ֆլեյտա-պիկոլո* և այլն: Ինչպես կարելի է տեսնել, սրանց մեծ մասը գիտական տերմիններ են, և օրինակների թիվը կարելի է ավելացնել մասնագիտական զրականության և տերմինաբանական բառարանների հատուկ ուսումնասիրությամբ¹⁰:

Նշեցինք, որ գոյականական առդրական կազմությունների բաղադրիչները նշանակում են միևնույն առարկան, բայց այն բնութագրում են տարբեր կողմերից: Կան, սակայն, որոշ թվով կազմություններ, որոնցում բաղադրիչները տարբեր առարկաների կամ հասկացությունների անվանումներ են, իսկ ամբողջ կազմությունը նշանակում է այդ երկուսի միասնությունը: Այդպիսի կառույցներից են նախ՝ չափի բաղադրյալ անվանումները՝ *ամպեր-ժամ, ամպեր-վայրկյան, ամպեր-րոպե, գրամ-ատոմ, գրամ-մոլեկուլ, լիտր-վայրկյան, լյումեն-ժամ, լյումեն-վայրկյան, կիլոգրամ-մետր, կիլոմետր-ժամ, կիլովատտ-ամպեր, մարդ-ժամ, մարդ-օր, մետր-մոմ, վատտ-մետր, վատտ-վայրկյան, վոլտ-ամպեր, տոննա-կիլոմետր, տոննա-մետր, սանտիմետր-ժամ* և այլն, այնուհետև՝ աշխարհի չորս կողմերի անվանումները՝ *հարավ-արևելք, հարավ-արևմուտք, հյուսիս-արևելք, հյուսիս-արևմուտք*, ինչպես նաև մի շարք այլ կազմություններ՝ *կետ-ստորակետ, կրեմ-սողա, հատկացուցիչ-հատկացյալ, հիմնարկ-ծեռնարկություն, հիվանդանոց-պոլիկլինիկա, հյուրանոց-*

¹⁰ Մեր հետազոտության նյութը հիմնականում քաղել ենք լեզվաբանական աշխատություններից, տարբեր բառարաններից և մասամբ գեղարվեստական զրականություններից:

ռեստորան, որոշիչ-որոշյալ, ջրմուղ-կոյուղի, ստորակետ-գիծ և այլն:

Բաղադրիչների համադասական հարաբերությամբ առդրական հարադրություններ են կազմվում նաև ածականներից, որոնք առարկան բնութագրում են տարբեր կողմերից: Իմաստային տեսակետից այս կազմությունները բազմազան են, բայց կարելի է նրանց մեջ ևս պայմանականորեն առանձնացնել որոշ իմաստային խմբեր:

1. **Հասարակական երևույթների, հաստատությունների, ուսմունքների համար բնութագրական ածականներ`** ազգային-ազատագրական, արտաքին-քաղաքական, գաղափարական-քաղաքական, ինդուստրիալ-ագրարային, լրատվական-վերլուծական, հաշվետու-ընտրական, հասարակական-տնտեսական, հասարակական-քաղաքական, հոգեկան-բարոյական, նախնադարյան-համայնական, պրոֆեսիոնալ-տեխնիկական, քննադատական-համեմատարարական, քրիստոնյա-ժողովրդավարական, օպերատիվ-քննչական և այլն:

2. **Արվեստի և մշակույթի հետ կապված տերմինային կազմություններ`** դեկորատիվ-կիրառական, եկեղեցական-ծիսական, երաժշտական-պարային, էստրադային-սիմֆոնիկ, հոգևոր-մշակութային, ոճական-արտահայտչական, վոկալ-գործիքային, վոկալ-սիմֆոնիկ և այլն:

3. **Գիտական տերմիններ`** առօրյա-խոսակցական, խոսակցական-բարբառային, հարցական-հարաբերական, նվազական-փաղաքշական, փոքրացուցիչ-փաղաքշական (լեզվաբանական), աստենիկ-նևրոզային, բնային-հիպոթալամուսային, դեպրեսիվ-մելանաղծիկ, զգայական-վեգետատիվ, նյութափոխանակային-ներդատական, նյարդային-հոգեկան, վեգետատիվ-անոթային, տագնապալից-դեպրեսիվ (բժշկական) և այլն:

Կան նաև բազմաթիվ այլ կազմություններ, որոնք որոշակի իմաստային խմբավորման չեն ենթարկվում և վերաբերում են տարբեր բնագավառների` ագրեսիվ-անհանրակեցական, առօրյա-կենցաղային, զառիկող-ծալքավոր, կործանիչ-հակատանկային, հաշվառման-գրանցային, մալայան-պոլինեզյան, մտերմիկ-սիրային, սպիտակ-արծաթափայլ, սպիտակ-վարդագույն, ստուգիչ-անցագրային, ստուգիչ-չափիչ, վերահսկիչ-դրամարկղային, վերահսկիչ-վերստուգիչ, տեղեկատվական-վերլուծական, ուղղիչ-աշխատանքային, փորձնական-ցուցադրական, քառակուսի-բնային և այլն:

Նշենք ի դեպ, որ «Ժամանակակից հայոց լեզու» ակադեմիական քերականության մեջ միայն այս ածականական կազմություններն են համարվում համադասական, իսկ վերը բերված գոյական+գոյական կաղապարով կազմվածները համարվում են ստո-

րադասական անվանական հարադրություններ, որտեղ «առաջին բաղադրիչը ստորադասվում է երկրորդին, լրացնում է նրան, և ամբողջ բաղադրությունը արտահայտում է որոշիչ-որոշյալի հարաբերություն»¹¹: Սակայն բերված օրինակների միայն մի փոքր մասին է բնորոշ որոշիչ-որոշյալ հարաբերությունը՝ *թղթակից անդամ*¹², (հմմտ. *իսկական անդամ*), *դիզել էլեկտրագնաց* «դիզելային էլեկտրագնաց»: Իսկ մնացած դեպքերում (*մուր-մանկապարտեզ* և այլն) բաղադրիչները համադաս հարաբերություն ունեն: Այս առումով ավելի ընդունելի է է. Աղայանի մոտեցումը, որը նշում է, թե բաղադրիչները կարող են միանալ և շաղկապով, իսկ առարկան միաժամանակ հանդես է գալիս երկու դերով (տե՛ս վերը): Որ գոյական բաղադրիչները ոչ թե լրացնում են միմյանց, այլ համադասական հարաբերության մեջ են, ցույց են տալիս այն օրինակները, որտեղ բաղադրիչները կարող են տեղերը փոխել առանց իմաստային փոփոխություն առաջացնելու՝ *աղբյուր-հուշարձան* և *հուշարձան-աղբյուր*, *խանութ-խոհանոց* և *խոհանոց-խանութ*, *դիմում-մամակ* և *մամակ-դիմում*, *ինժեներ-շինարար* և *շինարար-ինժեներ*, *վագոն-սալոն* և *սալոն-վագոն*, *վրան-թիկնոց* և *թիկնոց-վրան* և այլն: Այստեղ առաջին կամ երկրորդ բաղադրիչի ընտրությունը հավանաբար ունի ոչ թե քերականական, այլ իմաստային պատճառաբանվածություն, ըստ այնմ, թե առարկայի որ գործառույթն են ուզում ավելի շեշտել:

Ստորադասական անվանական հարադրություններում հիմնականում առկա է որոշիչ-որոշյալ հարաբերությունը: Ընդ որում, պետք է նշել, որ այդ կազմությունների մեծ մասը փոխառյալ հիմքերով է: Համեմատաբար սակավաթիվ են այն կազմությունները, որտեղ երկու բաղադրիչն էլ հայերեն են կամ արդեն յուրացված հիմ փոխառություններ են, օրինակ՝ *աթոռ-քաղաք*, *ածական-որոշիչ*, *ավտոմատ-հեռախոս*, *հետախույզ-ինքնաթիռ*, *քաղաք-արքանյակ* և այլն: Այս բաղադրությունների հիմնական զանգվածը կազմում են նոր փոխառությունները, որոնք փոխատու լեզվում արդեն իսկ առողությանը կապակցված որոշիչ-որոշյալ կառույցներ են՝ *ամֆիբիա-ավտոմոբիլ*, *ամֆիբիա-տանկ*, *բաս-կիթառ*, *բաս-կլառնետ*, *բաս-օկտավա* և այլն:

Այս կառուցվածքները որպես որոշիչ-որոշյալ կազմություններ դիտելուն նպաստում են այն կառույցները, որտեղ գերադաս

¹¹ **Վ. Դ. Առաքելյան, Ա. Գ. Խաչատրյան, Ս. Ա. Էդոյան**, նշվ. աշխ., էջ 270:

¹² Գործող ուղղագրական կանոններով այս կապակցությունը ամջատ գրություն ունի: Տե՛ս **Դ. Ա. Գյուրջինյան**, Հայերեն բառարան-տեղեկատու. միասին, ամջատ կամ զծիկով գրվող բառեր, եր., 1998:

անդամի դերում հանդես եկող երկրորդ բաղադրիչը հայերեն բառ է, գիտակցվում է որպես հայերեն կամ ունի հայերեն բառակազմական մասնիկ, օրինակ՝ *ալֆա-արույր*, *ալֆա-երկաթ*, *ալֆա-ճառագայթներ*, *բետա-ակտիվություն*, *բետա-տրոհում* և այլն:

Այս տիպի կազմություններին են հարում նաև ռուսերենից պատճենված և վերջիններիս համաբանությամբ կազմված յուրատեսակ բաղադրությունները, որտեղ որոշիչի դեր կատարող առաջին բաղադրիչն արտահայտված է ձայնարկությամբ: Ստեղծվել է այդպիսի բառերի զգալի քանակ՝ *վայ-առաջադիմական*, *վայ-բանաստեղծ*, *վայ-գրող*, *վայ-գիտնական*, *վայ-ժողովրդավար*, *վայ-լրագրող*, *վայ-հայրենասեր*, *վայ-հերոս*, *վայ-մտավորական*, *վայ-ոստիկան*, *վայ-ուսուցիչ*, *վայ-փիլիսոփա*, *վայ-քաղաքագետ*, *ուռա-հայրենասեր*, *ուռա-հայրենասիրություն* և այլն: Սրանց նմանվող հին կազմություններից կարելի է հիշատակել *չիք-վարդապետ*, ինչպես նաև առանձին գրվող՝ *սուտ գիտնական*, *սուտ ճգնավոր*, *սուտ մարգարե*, *սուտ քահանա*, *սուտ Քրիստոս* և այլն, բայց այս վերջիններն ավելի շատ կայուն կապակցությունների արժեք ունեն, քան անվանական հարադրությունների: Բառակազմական նույն իմաստը արտահայտվում է նաև համադրական կազմությամբ՝ *չ* ժխտական նախածանցով, օրինակ՝ *չքահանա*, *չաստված* և այլն:

Այսպիսով, ժամանակակից հայերենի անվանական հարադրությունների մեջ ուրույն տեղ են գրավում «նոր տիպի» առդրական բաղադրությունները, որոնք արտացոլում են գրական արևելահայերենի բառակազմական կաղապարների զարգացումը վերջին տասնամյակներում:

**ՃԱՍՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԻՋՆՈՐՂԱՎՈՐՎԱԾ
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում մեր հասարակության մեջ կատարված զգալի տեղաշարժերի հետևանքով լեզվափոխառությունները բավականին ակտիվացել են: Փոխառություններն ունենում են արտաքին ու ներքին պատճառներ: Արտաքին պատճառներից են տարբեր բնագավառներում որևէ ժողովրդի նվաճումները, որոնք անմիջական կամ միջնորդավորված ձևով անցնում են մյուս ժողովուրդներին՝ բերելով նոր երևույթներ ու հասկացություններ, ինչպես նաև նոր անվանումներ: Միջնորդավորված են համարվում այն փոխառությունները, որոնք փոխառու լեզու մուտք են գործում ոչ թե սկզբնաղբյուր հանդիսացող լեզվից, այլ որևէ ուրիշ լեզվի միջնորդությամբ: Միջնորդավորված փոխառությունների վերաբերյալ տեսականորեն հիմնավորված ուսումնասիրությունները դեռևս բացակայում են: Այս հարցին լեզվաբանները կամ ընդհանրապես չեն անդրադարձել, կամ անդրադարձել են հարակից խնդիրներ ուսումնասիրելիս:

Փոխառությունների ներքին պատճառների հայտնաբերումը բավականին բարդ հարց է: Հիմնականը լեզվում որևէ գաղափարի, հետևաբար նրա անվանման բացակայությունն է: Այս դեպքում փոխառությունն անհրաժեշտություն է և կարող է կատարվել կամ բառային, կամ իմաստային մակարդակներում: Փոխառության մյուս ներքին պատճառը լեզվի բառային կազմից բազմիմաստությունը կրճատելու ձգտումն է:

Տարբերվում են հնչյունական, ձևաբանական, բառային և իմաստաբանական փոխառություններ: Ներկայումս տարածված են բառային փոխառություններն ու իմաստային պատճենումները:

Լեզվից լեզու թափառող պատճենումներն այժմ բավական թիվ են կազմում: Հայերենում ունենք «հավելյալ արժեք» կայուն բառակապակցությունը, ռուսերենում *прибавочная стоимость*, որը պատճենված է ֆրանսերենի plus-value բառից: Ֆրանսերենն իր հերթին այս բառը պատճենել է գերմաներենից (հեղինակը Կ. Մարքսն է): «Գերմարդ» բառը արևմտահայերենը պատճենել է ֆրանսերենի surhomme բառից, վերջինս՝ գերմաներենից (հեղինակը Ֆ.Նիցշեն է): Նույն բառակապակցությունը արևելահայերեն է մուտք է գործել ռուսերենի сверхчеловек կամ անգլերենի superman բառերի նմանությամբ: Այլ օրինակներ.

կենսափորձ<жизненный опыт <expérience vécue (ֆր.)

գազամուղ <газопровод < gazoduc (ֆր.) <pipe-line (անգլ.)
երկնաքեր <небоскреб<gratte-ciel (ֆր.) <sky scraper (անգլ.)
տեսակետ<точка зрения<point de vue (ֆր.) <point of view
(անգլ.)

սառը պատերազմ <холодная война <guerre froide (ֆր.)< cold
war (անգլ.):

Ժամանակակից իրականության մեջ փոխառությունների
առաջացման, գործածման և տարածման հարցում մեծ է տեղե-
կատվության նշանակությունը: Նոր հասկացությունների մեծ մասը
հանրությանն է հասնում մամուլի, գրականության, ավելի հաճախ՝
ռադիոյի և հեռուստատեսության միջոցով: Ներկա ժամանա-
կաշրջանում փոխառվում են գլխավորապես առանձին բառեր կամ
կայուն բառակապակցություններ: Վերջերս անգլերենից կատար-
ված նոր փոխառություն է **կոնդոմինիում** < condominium բառը, որի -
փոխառման պատճառը մեր կացութաձևում առաջ եկած փոփո-
խություններն են: Բառն արդեն ունի հայերեն համարժեքը՝ **համա-
տիրություն**:

Շատ հաճախ փոխառյալ բառերը այնպիսի տարրեր են,
որոնք շատ են «ճանապարհորդել»: Իսպաներենի միջոցով
բազմաթիվ լեզուներ թափանցած **կակաո** և **շոկոլադ** բառերը ծագել
են Ամերիկայի տեղաբնակների լեզվում, իսկ հայերեն են թափան-
ցել ռուսերենից, որն էլ իր հերթին փոխառել է ֆրանսերենից:
Հիշենք անգլերենից բազմաթիվ լեզուներ թափանցած փոխա-
ռությունները տեխնիկայի և մարզական բնագավառներում: Միայն
այն պատճառով, որ առաջին երկաթուղին կառուցել են անգլիա-
ցիները, կարելի է բացատրել **թունել** և **վագոն** բառերի անմիջական
և միջնորդավորված փոխանցումը մի շարք այլ լեզուների: **Երկա-
թուղի** բառը հայերենը պատճենել է ռուսերենից՝ железная дорога,
վերջինս՝ ֆրանսերենի միջնորդությամբ անգլերենից՝ chemin de
fer(ֆր.) < railway (անգլ.): **Նիկել**, **կոբալտ**, **կվարց** բառերի առկա-
յությունը հայերենում և մի շարք այլ լեզուներում կարելի է համարել
գերմանացիների ակտիվության ապացույցը հանքաբանության
բնագավառում: Արդեն վերջին ձիակառքերը Ֆրանսիայում ունեին
«taximètre»՝ երթի գումարը հաշվարկելու համար: Այս բառից էլ
ստեղծվեց **տաքսի** բառը, որ նույնպես հանդիպում է բազմաթիվ
լեզուներում:

Ժամանակակից հայերենում ֆրանսերենից փոխառու-
թյունները հիմնականում թափանցել են ռուսերենի միջոցով: Այդ
փոխառությունները մինչև հայերենի մեջ մուտք գործելը արդեն մի
քանի մակարդակով՝ հնչյունաբանական, ձևաբանական և շարա-
հյուսական, յուրացվել են ռուսերենի կողմից և բնականաբար ձեռք

են բերել ձևական-ձևաբանական այնպիսի հատկանիշներ, որոնք համապատասխան են ռուսերենի արտասանական, ուղղագրական և այլ նորմերին¹: Ուսումնասիրելով ֆրանսերենից հայերենի կատարած բառափոխառությունները՝ չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ ֆրանսերենի բառապաշարի վրա մեծ ազդեցություն են ունեցել մի քանի ցեղակից և ոչ ցեղակից լեզուներ, այդ թվում անգլերենը, իտալերենը, իսպաներենը, պորտուգալերենը, գերմաներենը, արաբերենը (լեզուները տրված են ըստ իրենց թողած ազդեցության չափի):

Հայերեն թափանցած բազմաթիվ բառերի համար ֆրանսերենը կատարել է միջնորդ լեզվի դեր: Ստորև բերում ենք այդ բառափոխառությունները՝ նշելով փոխառու լեզուն.

Իտալերենից - ակվարել², բալկոն*, բանկ*, բաստիոն*, բատալյոն*, բարիկադ*, բրիգադ, գոլֆ, էսկադրոն, էսկորտ*, կաբինետ*, կանոն(եկղց.), կավալեր*, կավալերիա*, կապրալ, կարտուշ*, կորտեժ*, կրեդիտ*, մակետ*, մոզաիկա*, պաժ, սերենադ*, օպերա, ֆասադ, ֆրեզատ, ֆրեսկ* և այլն:

Անգլերենից - բյուջե, բոյկոտել, ժյուրի*, ինտերվյու*, լիդեր*, կլուբ*, կոմիտե, կորպորացիա, միտինգ, պառլամենտ*, պարտնյոր*, ռեպորտաժ, օպոզիցիա* և այլն:

Իսպաներենից - անանաս, կանիբալ, կաստանիետ, կարամել, կրեոլ, սիգար, վանիլ, տանգո, տոմատ և այլն:

Պորտուգալերենից - բանան, բարոկո, կաստա, կարավելլա, մանդարին, ֆետիշ և այլն:

Գերմաներենից- ասպիրին, կոբալտ, կվարց, նիկել, պոտաշ, ցինկ և այլն:

Արաբերենից - ալկալի, ալկոհոլ, էլիքսիր, սատին, սիրոպ* և այլն:

Միջնորդավորված փոխառությունների յուրացման ժամանակ առաջին պլան են մղվում միջնորդ լեզվի արտասանական, ուղղագրական, քերականական և այլ նորմեր, և դա բնական է, քանի որ փոխառյալ բառերն արդեն ձեռք են բերել այնպիսի ձևական հատկանիշներ, որոնք բնորոշ են միջնորդ լեզվին:

Հայերենի հարուստ հնչյունական համակարգը հնարավորություն է ընձեռում հիմնականում հարազատորեն վերարտադրել փոխառված բառերի հնչյունական պատկերը: Սակայն կան շեղում-

¹ Տե՛ս **Կ.Ա. Դոյնաջյան-Գրիգորյան**, «Ֆրանսերենից ռուսերենի միջոցով կատարված բառափոխառությունները գրական արևելահայերենում», Բանբեր Երևանի համալսարանի, N2, 1998, էջ 167-177:

² Աստղանշանով առանձնացված բառերն այժմ հայերենում ունեն նորաբան համարժեքներ:

ներ, որոնք պայմանավորված են ինչպես սկզբնաղբյուր լեզվի և հայերենի, այնպես էլ միջնորդ լեզվի (լեզուների) և աղբյուր լեզվի հնչյունական համակարգերի տարբերություններով: Որոշակի դժվարություններ կան վանկային շեշտադրության հետ կապված:

Միջնորդավորված փոխառություններ հանդիպում են նաև միջին հայերենի բառապաշարում: Ժամանակի ժողովրդախոսակցական լեզվում գործածական լատինական ծագում ունեցող բազմաթիվ բառեր համարվում են միջնորդավորված փոխառություններ, որոնց անմիջական և հիմնական աղբյուրները հունարեն, ֆրանսերեն և իտալերեն լեզուներն են³: Օրինակ՝ արծուեսք < arcevesque (ֆրանս.) < archiepiscopus (լատ.), արտիճուկ < atriochiocco (իտալ.) < alcachofa (իսպ.) < alharsaf (արաբ.), պարոն < baron (ֆրանս) < baro (գերմ), ֆրա < fra (իտալ.) < frater (լատ), ֆուրման < Furman (լեհ) < Fuhrmann (գերմ.)⁴:

Արդի հայերենի բառապաշարի համալրման հիմնական աղբյուրը նորակազմություններն են: Դրանց ի հայտ գալը առաջին հերթին պայմանավորված է նոր հասկացությունների համար համապատասխան բառեր ստեղծելու պահանջով: Նորակազմությունների հետ բառապաշարի հարստացմանը նպաստում են նաև փոխառությունները, որոնք ներկայումս միշտ չէ, որ կատարվում են ռուսերենի միջնորդությամբ: Դա լրատվական միջոցների զարգացման (համակարգչային ցանցեր, արբանյակային հեռուստաալիքներ և այլն) և հասարակական պայմաններում կատարված զգալի տեղաշարժերի հետևանքն է: Այժմ նորությունները ստացվում են բազմաթիվ և բազմալեզու լրատվական զործակալություններից, դրանք հապշտապ թարգմանվում և երբեմն անմշակ են մատուցվում հանրությանը: Անընդհատ զարգացող կյանքի պահանջները ստիպում են, որ կատարվի օտարալեզու բառերի փոխառություն, քանի դեռ չեն ստեղծվել հայերեն լիարժեք համարժեքները:

³ *Ռ.Ս.Ղազարյան*, Փոխառությունները միջին գրական հայերենում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1992, N 2, էջ 22:

⁴ *Մ.Ս.Ղազարյան*, Եվրոպական փոխառությունները միջին հայերենում, թեկնածուական թեզի սեղմագիր, Եր., 2000, էջ 11:

ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ

Լեզվաբանության մեջ փոխակերպում (փոխկադապարում) ասելով՝ նկատի ունեն այն իրողությունը, որ միևնույն բովանդակությունը (միտքը, հասկացությունը) արտահայտվում է քերականական տարբեր կառուցվածքներով և եղանակներով:

Փոխակերպական քերականությունը տարբերում է *միջուկային նախադասություններ* և *փոխակերպներ* հասկացությունները. առաջինները համարվում են հիմնական (ոչ նշանակիր) միավորներ, որոնց նկատմամբ կիրառվում են անմիջական բաղադրիչների կանոնները, մյուսները՝ ոչ հիմնական (նշանակիր), որոնք որևէ հատկանիշով տարբերվում են միջուկայիններից¹:

Այսպես, ներգործական կառուցվածքի, պատմողական, հաստատական նախադասությունները համարվում են *միջուկային*, իսկ կրավորական կառուցվածքի, հարցական ու ժխտական նախադասությունները՝ *փոխակերպներ*:

Հարկավոր է նշել, որ միջուկային նախադասությունների *փոխակերպներ* են համարվում նաև նրանցից սերած գոյականական, ածականական և մակբայական գործածություն ունեցող բառակապակցությունները (այսուհետև՝ ԲԿ): Ինչպես՝

Հակոբը տեսնում է	{	Հակոբի տեսնելը, Հակոբի տեսած, Հակոբի տեսնելիս ² :
------------------	---	--

Փոխակերպումն իր բնույթով լինում է *ներմակարդակային* և *միջմակարդակային*:

Ներմակարդակային փոխակերպման դեպքում միջուկային և փոխակերպական անդամները մնում են միևնույն մակարդակի շրջանակներում: Այսպես, ձևաբանական մակարդակում կատարվող փոխակերպական իրողություն է մի խոսքի մասի փոխակերպումը մյուսի, ինչպես՝ ծով > ծովանալ (գ.>բ.), արծաթ >արծաթել (գ.>բ.), թափանցել >թափանցիկ (բ.>ած.), փայլել >փայլուն (բ.>ած.), ուժեղ >ուժգին (ած.>մկբ.), համառոտ > համառոտակի (ած.>մկբ.) և այլն:

¹ Տե՛ս *Օ.Տ. Ախմանովա*, Словарь лингвистических терминов, М., 1969: Հ. 2. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987: *Ն.Ա. Պառնասյան*, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1970:

² *Գ. Զահուկյան*, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 502-505:

Շարահյուսական մակարդակում կատարվող փոխակերպական իրողություն է նախադասության մի տեսակի փոխակերպումը մյուսի կամ ԲԿ-ի:

Հմնտ. «Քամին քշում է աշնան տերևները» (ներգործ.): > «Աշնան տերևները քշվում են քամուց» (կրավ.): «Ծովը մռնչում է առյուծի նման»: -- Ծովը *հուզվել է փոթորկից*: > «Ծովը, որ *հուզվել է փոթորկից*, մռնչում է առյուծի նման»: >«*Փոթորկից հուզված* ծովը մռնչում է առյուծի նման»³:

Միջմակարդակային փոխակերպման դեպքում միջուկային և փոխակերպական անդամները պատկանում են տարբեր մակարդակների. ելակետային (սերող) լեզվական միավորը, ասենք, պատկանում է շարահյուսական մակարդակին, իսկ նրա փոխակերպական արդյունքը՝ փոխակերպը՝ մեկ այլ մակարդակի (ասենք՝ բառի-մաստային):

Այդպիսի փոխակերպման դրսևորում է *բառակապակցություն* > *բաղադրություն* անցումը. միրգ վաճառող > *մրգավաճառ*, փոթորկից հուզված > *փոթորկահույզ*, փայտից պատրաստված > *փայտե*, խելքից զուրկ > *անխելք* և այլն:

Միջուկային ԲԿ-ների փոխակերպ բաղադրությունը, իբրև լեզվական կառուցվածք և բառակազմական իրողություն, ձևավորվում է երկու ուղիով՝ ածանցումով կամ բարդությամբ:

Փաստորեն նախադասությունների փոխակերպումը բաղադրության ԲԿ-ի միջանկյալ օղակով, կատարվում է ածանցման կամ բարդության միջոցով: Մասնագիտական գրականության մեջ ընդունված է բարդությունները դիտել որպես միջուկային նախադասություններից սերած երկրորդական նախադասությունների, ԲԿ-ների և դերբայական դարձվածների հետագա փոխակերպման արդյունք: Բարդության բաղադրիչներն արտահայտում են գրեթե այն բոլոր շարահյուսական հարաբերությունները, որոնք հատուկ են նախադասության անդամներին: Միաժամանակ ասվում է, որ բարդ բառերը ներկայացնում են նախադասությունների *լրիվ և մասնակի* փոխակերպման արդյունք: Այս իրողությունը կոչվում է նախադասության *արտաքին փոխակերպում*, որի տակ հասկացվում է նախադասության փոխակերպում գոյականական, ածականական և մակբայական բառաձևերի և ԲԿ-ների, որոնք կարող են մտնել ԲԿ-ների և նախադասությունների կազմի մեջ⁴:

Նախադասությունների *մասնակի փոխակերպումը* գործում է պարզ նախադասությունների շրջանակներում. այս դեպքում

³ Հմնտ. **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 565:

⁴ Նույն տեղում, էջ 564:

փոխակերպվում են բայ-ստորոգյալը և նրա լրացական անդամը: Նախադասության ենթական մնում է անփոփոխ և ԲԿ-ի մեջ հանդես է գալիս իբրև լրացյալ (գերադաս) անդամ: Նախադասությունների մասնակի փոխակերպումից (երկաստիճան փոխակերպում) կստանանք ինչպես բարդություններ, այնպես էլ ածանցական կազմություններ:

Հմնտ. «Արամը տոմս է վաճառում» նախադասության մեջ փոխակերպվող անդամներ են ստորոգյալը (վաճառում է) և նրա լրացումը (տոմս), կունենանք «*տոմս վաճառող Արամը*» ԲԿ-ը, փոխակերպման հաջորդ քայլի դեպքում ԲԿ-ը (դերբայական դարձվածը) վերածվում է բարդության «*տոմսավաճառ Արամը*»:

Փոխակերպենք հետևյալ նախադասության համապատասխան անդամները. Վիշապը *երկու գլուխ ունի* > *երկու գլուխ ունեցող* վիշապ > *երկգլխանի* վիշապ:

Այսպիսով, *տոմսավաճառ* և *երկգլխանի* բաղադրությունները (բարդ և ածանցավոր բառերը) իբրև փոխակերպներ ստացվել են պարզ նախադասությունների մասնակի փոխակերպման հետևանքով:

Հայտնի է, որ նախադասությունների *լրիվ փոխակերպումը* գործում է բարդ (ստորադասական) նախադասության շրջանակներում. այս դեպքում լրիվ փոխակերպման է ենթարկվում երկրորդական նախադասությունը. իբրև փոխակերպներ ստանում ենք թե՛ ածանցական կազմություններ, թե՛ բարդություններ:

Հմնտ.1) Գդալը դրված է սեղանին+Գդալը *պատրաստված է արծաթից* → Գդալը, որ *պատրաստված է արծաթից*, դրված է սեղանին → *Արծաթից պատրաստված* գդալը դրված է սեղանին → *Արծաթե* գդալը դրված է սեղանին:

2) Մարիամը եկավ տուն + Մարիամը հաց է թխում → Մարիամը, որ *հաց է թխում*, եկավ տուն → *Հաց թխող* Մարիամը եկավ տուն → *Հացթուխ* Մարիամը եկավ տուն:

Այսպիսով, վերոբերյալ նախադասությունների լրիվ փոխակերպումից ստացված փոխակերպները ածանցական (արծաթե) և բարդ (հացթուխ) կազմություններ են:

Մինչ այժմ մենք ցույց տվեցինք լեզվական միավորների (նախադասության և ԲԿ-ի) փոխակերպական հնարավորությունները բաղադրությունների կաղապարներով. այսինքն՝ մենք քննեցինք փոխակերպական գործընթացում լեզվական միավորների արտահայտության պլանի՝ ձևական կողմի փոփոխությունները՝ սերող կաղապարի (միջուկի) և փոխակերպի (բարդ և ածանցավոր բառերի) տեսքով:

Ի՞նչ իմաստային հարաբերություն են արտահայտում նախադասությունը, ԲԿ-ը և բաղադրությունը:

ԲԿ-ը և բաղադրությունը սերող նախադասությունների (միջուկի) արտաքին փոխակերպման դրսևորումները կամ փոխակերպներն են:

Իբրև համեմատության եզրեր կարող ենք վերցնել ԲԿ-ն և բաղադրությունը:

ԲԿ-ի և բաղադրության իմաստաբանությունը ներկայացնելիս կարելի է ցույց տալ այն հարաբերությունը, որ գոյություն ունի սերող ԲԿ-ի և նրա փոխակերպի՝ բաղադրության միջև:

Քանի որ թե՛ միջուկային ԲԿ-ը և թե՛ նրա փոխակերպը ունեն միևնույն բովանդակությունը (դրսևորման տարբեր կերպերով), ուստի միանշանակ կարելի է ասել, որ լեզվական այդ միավորները գտնվում են *հոմանշային* հարաբերության մեջ⁵:

Իբրև կառուցվածքներ, ԲԿ-ները վերլուծական (հարադրական), իսկ փոխակերպները համադրական ձևեր են: Իմաստաբանորեն այդ զույգերն արտահայտում են նույնական նշանակություններ, ուստի կարելի է ասել, որ հարադրական (վերլուծական) և դրանց համարժեք համադրական կազմությունները *հոմանշային զույգեր* են:

Չմնտ. *ստրուկ(ներ)ի տեր – ստրկատեր, ձուկ բուծող – ձկնաբույժ, գրչի կոթ – գրչակոթ, հողմ(եր)ից ծեծված – հողմածեծ, ոսկուց պատրաստված – ոսկե // ոսկյա, գյուղին հատուկ՝ վերաբերող – գյուղական* և այլն:

Լեզվական փաստերի քննությունը ցույց է տալիս, որ այդ միավորները (վերլուծական և համադրական ձևերը) հոմանշային զույգեր կարող են կազմել նաև ձևաբառային և քերականական տարբերակներով: Այսպես՝

1) ԲԿ-ի որևէ բաղադրիչ փոխակերպված բարդության մեջ կարող է փոխարինվել համարժեք հոմանիշով. *աչքի բժիշկ > ակնաբույժ, մանրուք փնտրող > մանրախնդիր* և այլն:

2) ԲԿ-ի ածանցավոր բաղադրիչը փոխակերպված բարդության մեջ կարող է հանդես գալ՝

ա) ածանցազուրկ ձևով. *հարյուրյակի պետ > հարյուրապետ, կամքից զուրկ > կամազուրկ, պերճանք սիրող-պերճասեր, թիկունք պահող-թիկնապահ* և այլն,

⁵ Ռուսերենում ԲԿ-ի և բառի հարաբերակցության, նրանց փոխակերպման հիմքերի, պատճառների ու պայմանների, ինչպես նաև բարդությունների կաղապարների և իմաստաբանության մասին տես **И. Ф. Протченко, Н.В. Черемисина**, Лексикология и стилистика в преподавании русского языка как иностранного, М., 1986, էջ 48-57:

բ) գրաբարյան հոլովածևով (հայցականով). *կյանքի* ձև > *կեն-* սածև, *կյանք* սիրող - *կենտասեր*, *մեղք* գործող > *մեղսագործ* և այլն:

3) ԲԿ-ի՝ կապով ձևավորված բաղադրիչը փոխակերպված բարդության մեջ զրկվում է կապական անդամից. *արյան մեջ* թաթախված > *արնաթաթախ*, *կաքավի պես* քայլող՝ քայլելով > *կաքավաքայլ*, *գյուղի մասին* գրող > *գյուղագիր* և այլն:

4) Մակբայական անդամը փոխարինվում է քերականորեն նույնիմաստ ածանցներով. *վրան* գրել > *մակագրել*, կարգից *դուրս* > *արտակարգ*, գազանի *պես* > գազանաբար և այլն:

5) ԲԿ-ի հոգնակի թվով բաղադրիչը փոխակերպված բարդության մեջ հանդես է գալիս եզակի թվով. *մոգերի* պետ > *մոգպետ*, *հայրերի* պետ > *հայրապետ* և այլն:

Ինչպես ցույց են տալիս լեզվական փաստերը, փոխակերպման արդյունքում անպայման ստանում ենք լեզվական երկու կարգի միավոր՝ *բարդ բառեր* և *ածանցավոր բառեր*: Բարդության ձևակազմական բաղադրիչները (արմատներ, բայահիմքեր) լիարժեք ձևով կան սերող ԲԿ-ների ձևակազմական (արտահայտության) պլանում: Մինչդեռ ածանցավոր կազմությունների ածանցական իմաստները սերող ԲԿ-ներում ունեն այլ խոսքիմասային արտահայտություններ: Հմնտ. *ատամները բուժող* > *ատամնաբույժ* (գոյ. + բայահիմք), *մրգի հյուս* > *մրգահյուս* (գոյ. + գոյ.), վրան գրել (մակբայ + բայ), > *մակագրել* (ածանց + բայական բառույթ) և այլն:

Ըստ այդմ ԲԿ > բառ փոխակերպական գործընթացը կարելի է քննել երկու կտրվածքով՝ նկատի ունենալով փոխակերպման հետևանքով առաջացած բաղադրությունների տեսակը՝ բարդություն և ածանցավոր բառ:

Խոսքը մասնավորեցնենք *ԲԿ* > *բարդություն* փոխակերպական իրողության վրա: Փոխակերպվող ԲԿ-ները ըստ իմաստային նշանակությունների լինում են՝

ա) անձնանիչ,

բ) իրանիչ,

գ) հատկանիչ արտահայտող ԲԿ-ներ:

Ներկայացնենք բառակապակցական այս խմբերի փոխակերպման գործընթացը:

Ա. ԱՆՁՆԱՆԻՇ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՒՆԱԿԵՐՊՈՒՄԸ

Անձնանիչ են այն ԲԿ-ները, որոնք մատնացույց են անում անձ: Այդ կարգի ԲԿ-ները կազմվում են *գոյական+գոյական* և *գոյական + դերբայ* բառակապակցական կաղապարներով:

ա) *Գոյական+գոյական* անձնանիշ ԲԿ-ների լրացյալ (գլխավոր) անդամի դերով սովորաբար հանդես են գալիս *դուստր, ժառանգ, հայ, հայր, մայր, որդի, պետ, տեր* և այլ բառեր, իսկ դրանց լրացումը (երկրորդական անդամը) արտահայտվում է սեռական հոլովով:

Ինչպես նկատելի է, վկայված բառերը անձնանիշ գոյականներ են, որով էլ պայմանավորված է ամբողջական ԲԿ-ների իմաստային կառուցվածքը:

Նպատակահարմար է նախ կազմել տվյալ հենաբառով ԲԿ-ներ, ապա դրանից հետո փոխակերպման եղանակով սերող ԲԿ-ից մակաբերել համապատասխան բարդությունը՝ ուշադրություն դարձնելով ԲԿ-ի և բառի իմաստային հարաբերությունների բնույթին:

Օրինակ՝ արքայի դուստր>*արքայադուստր*, գահի ժառանգ > *գահաժառանգ*, վանքի հայր>*վանահայր*, Պոլսի հայ > *պոլսահայ*, կնուների մայր > *կնքամայր*, հայի որդի > *հայորդի*, մառանի պետ> *մառանապետ*, ագարակի տեր>*ագարակատեր* և այլն:

բ) *Գոյական + դերբայ* բառակապակցական կաղապարի գերադաս անդամի դերով գերազանցապես հանդես է գալիս ենթակայական դերբայը: Լրացման հոլովական արտահայտությունը պայմանավորված է լրացյալի սեռով կամ բայիմաստով:

Այդ կարգի կառույցների փոխակերպման ժամանակ դերբային փոխարինում է նրա բայափիմքը, որ հաճախ համընկնում է բայարմատին:

Հմնտ. *լեռներում բնակվող* > *լեռնաբնակ, ծաղիկներ բուծող* > *ծաղկաբույծ, հեքիաթ ասացող* > *հեքիաթասաց* և այլն:

Անձնանիշ այս ԲԿ-ների փոխակերպման իրողությունը ներկայացնելու համար նպատակահարմար է դրանք հաղորդել խմբավորված նկատի ունենալով ԲԿ-ի գերադաս (բայական) անդամի սեռիմաստն ու լրացական հնարավորությունները:

1) *Ներգործական սեռի* բայական բաղադրիչով ձևավորված անձնանիշ ԲԿ-ներում գերադաս անդամի դերով հանդես են գալիս *բուծել, գրել, դրծել, պահել, որսալ, սիրել, կրել, սպանել, վաճառել, տեսնել, խնդրել* և այլ բայերի ենթակայական դերբայները:

Օրինակ՝ ձուկ բուծող > *ծկնաբույծ*, ուխտը դրծող > *ուխտադրուժ*, սահման պահող > *սահմանապահ*, առակ գրող > *առակագիր*, թռչուն որսացող > *թռչնորս*, կատակ սիրող > *կատակասեր*, ջահ կրող > *ջահակիր*, մանուկ սպանող > *մանկասպան*, գորգ վաճառող > *գորգավաճառ*, հեռուն տեսնող > *հեռատես* և այլն:

Տեսնել, գրել և խնդրել բայերով ձևավորված բայական ԲԿ-ները փոխակերպական յուրահատկություն են դրսևորում:

ա) *Տեսնել* (տեսնող) բայով ձևավորված ԲԿ-ներում լրացումը երբեմն դրվում է ոչ թե բայասեռի, այլ բայիմաստի թելադրանքով, առդրության եղանակով. բաղադրիչների իմաստային այդ կապը պահպանվում է փոխակերպված բարդության մեջ. հմմտ. *լավ* (դրական՝ պայծառորեն) տեսնող > *լավատես*, նմանապես՝ *վատատես*, *հռեեսես*⁶ և այլն:

բ) *Գրել*(*գրող*) դերբայով ձևավորված որոշ ԲԿ-ներում լրացման դերում հանդես են գալիս *մասին*, *համար*, *վրա* կապերով ձևավորված կառույցներ. փոխակերպված բարդություններում կապերը դուրս են ընկնում, ինչպես՝ *գյուղի մասին գրող* > *գյուղագիր*, *վեմի վրա գրող* > *վիճագիր*, *մանուկների համար գրող* > *մանկագիր* և այլն:

գ) *խնդրել* (*խնդրող*) բայն անձնանիշ ԲԿ է կազմում գրաբարյան «որոնել, փնտրել» բայիմաստներով, ինչպես՝ արկած խնդրող՝ որոնող > *արկածախնդիր*, այդպես էլ՝ *բախտախնդիր*, *շահախնդիր* և այլն:

2) *Չեզոք սեռի* բայական բաղադրիչով ձևավորված անձնանիշ ԲԿ-ներում լրացյալ անդամ են դառնում *խոսել*, *զրկել*, *բնակվել*, *զնալ* և այլ բայերի ենթակայական կամ հարակատար դերբայները: ԲԿ-ի և համարժեք բարդության բաղադրիչները ցուցաբերում են առդրական կապակցություն. լրացումն արտահայտվում է բայիմաստի պահանջով:

Օրինակ՝ շատ խոսող > *շատախոս*, քարանձավում բնակվող > *քարանձավաբնակ*, ծովով զնացող > *ծովազնաց*, գործից զրկված > *գործազուրկ* և այլն:

խոսել բայական բաղադրիչով ձևավորված ԲԿ-ների փոխակերպման ժամանակ ի հայտ են գալիս հետևյալ առանձնահատկությունները.

ա) Երբ *խոսող* դերբայի լրացում են դառնում լեզուների անվանումները, փոխակերպման ընթացքում համապատասխան բաղադրիչի *-երեն* ածանցը դուրս է ընկնում, ինչպես՝ ռուսերենով խոսող > *ռուսախոս*, հայերենով խոսող > *հայախոս*:

բ) Որոշ բարդությունների համար իբրև սերող կաղապարներ կարող են դիտվել մեկից ավելի ԲԿ-ներ, ինչպես՝ ռուսերեն խոսող // ռուսաց լեզվով խոսող > *ռուսախոս*, պարսկերեն խոսող // պարսից լեզվով խոսող > *պարսկախոս*:

գ) ԲԿ-ի՝ անեզական գոյականով կախյալ բաղադրիչները փոխակերպված բարդության մեջ հանդես են գալիս առանց *-ք* ածան-

⁶ Այս կարգի կառույցներում լրացումը հնարավոր է մեկնաբանել իբրև ածականի փոխանուն կիրառություն՝ առանց հոդի. *լավ(ը) տեսնող* > *լավատես*. այս դեպքում գործ ունենք խնդրառության հետ:

ցի: Յմնտ.ինչքից զրկված > ընչազուրկ, կամքից զրկված > կամազուրկ և այլն:

Բ. ԻՐԱՆԻՇ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ

Իրանիշ ԲԿ-ներն արտահայտում են առարկա կամ առարկայացված հասկացություններ, ուստի փոխակերպական գործընթացի մեջ ընդգրկվում են գոյականի արժեքով լեզվական միավորները:

Այդ կարգի ԲԿ-ների փոխակերպումները ներկայացնելիս նպատակահարմար է նախ դրանք դասակարգել ըստ գերադաս բաղադրիչի *թեմատիկ-իմաստային* խմբերի: Անկասկած, այսպիսի դասակարգումով կստանանք բազմազան թեմատիկ-իմաստային խմբեր, սակայն առանձնացնենք այն խմբերը, որոնք մեծ հաճախականություն ունեն:

Այսպես, կարելի է առանձնացնել՝ *Նյութերի անվանումներ, տեսակի անուններ, տեղանիշ գոյականներ* և այլն:

1) Իրանիշ ԲԿ-ների գերադաս անդամի դերում ամենից հաճախ հանդես են գալիս *Նյութերի* իմաստային-թեմատիկ խմբի բառերը, ինչպես՝ *հյուբ, նյութ, կոթ, թաղանթ* և այլն:

Այժմ ներկայացնենք այդ խմբի բառերով ձևավորված ԲԿ-ները և տանք դրանց փոխակերպումից առաջացած բարդությունները՝ նկատի ունենալով ԲԿ-ի և բառի հոմանշային-իմաստային հարաբերությունը, ինչպես՝ ոսկրի թաղանթ > *ոսկրաթաղանթ*, բջջի թաղանթ > *բջջաթաղանթ*, արծաթե կոթ > *արծաթակոթ*, մրգի հյուբ > *մրգահյուբ*, նարնջի հյուբ > *նարնջահյուբ* և այլն:

2) Իրանիշ ԲԿ-ի գերադաս անդամի դերով հանդես են գալիս *տեսակի անվանումները*, ինչպես՝ *ծաղիկ, սունկ, անուն, տեսակ* և այլն: Յմնտ. ազգի անուն > ազգանուն, կեղծ անուն > *կեղծանուն*, ծագարածն սունկ > *ծագարասունկ*, տառի տեսակ > *տառատեսակ* և այլն:

Ծաղիկ և սունկ գերադաս անդամներով ԲԿ-ները ձևավորման յուրահատկություններ ունեն:

ա) Իբրև ելակետային կաղապարներ, դրանք երկանդամ կամ եռանդամ, երբեմն էլ կապական կառույցներով լեզվական միավորներ են. դրանց փոխակերպումից առաջացած բարդությունների իմաստները երբեմն չեն նույնանում բարդության բաղադրիչների իմաստների գումարին:

Այսպես, *լուսնածաղիկ* բարդությունը առաջացել է ոչ թե *լուսնի ծաղիկ* կառուցվածքից, այլ *լուսնի վրա աճող* կամ *աճած ծաղիկ* ԲԿ-ի փոխակերպումից:

բ) Որոշ սերող կաղապարներում լրացումները հանդես են գալիս հոմանշային տարբերակներով. ինչպես՝ զանգակի ձևի ծաղիկ // զանգակի ձև ունեցող ծաղիկ > *զանգակածաղիկ*, ծնկի ձևի՝ ձև ունեցող ծաղիկ > *ծնկածաղիկ*, չմուշկի ձևի՝ ձև ունեցող ծաղիկ > *չմշկածաղիկ* և այլն:

գ) Որոշ սերող կաղապարներում լրացումները ձևավորված են դերբայական կառույցներով, ինչպես՝ կռվի պատճառ դարձած՝ դարձող ծաղիկ > *կռվածաղիկ*, հողմից՝ հողմերից ծնված ծաղիկ > *հողմածաղիկ*, ձյան տակից ելած ծաղիկ > *ձնածաղիկ* և այլն:⁷

դ) *Սունկ* բաղադրիչով ձևավորված բառակապակցական կաղապարները իմաստային կառուցվածքի առումով միանշանակ չեն. լրացումները ցույց են տալիս *սունկ* առարկայի *ձևը*՝ ալիքավոր սունկ > *ալիքասունկ*, *տեղը*՝ ճահճի վրայի սունկ > *ճահճասունկ*, ծագման *ժամանակը*՝ *պատճառը*՝ անձրևից հետո առաջացած սունկ > *անձրևասունկ* և այլն:

3) Իրանիշ ԲԿ-ների գերադաս անդամի դերում հանդես են գալիս նաև *տեղանիշ գոյականները*, ինչպես՝ *լանջ*, *դաշտ*, *հովիտ*, *վայր*, *ափ* և այլն:

Հմնտ. *լեռան* *լանջ* > *լեռնալանջ*, *լեռնոտ դաշտ* > *լեռնադաշտ*, ձորի *հովիտ* > *ձորահովիտ*, հանգստանալու *վայր* > *հանգստավայր*, գետի *ափ* > *գետափ* և այլն:

Իրանիշ ԲԿ-ների իմաստային կառուցվածքով են պայմանավորված դրանց փոխակերպման յուրահատկությունները.

ա) իրանիշ ԲԿ-ները բնութագրվում են լրացյալի իմաստային-թեմատիկ խմբերով, որոնց մեջ ակտիվ են *նյութերի*, *տեսակի* և *տեղանիշ գոյականների* բառիմաստային խմբերը,

բ) փոխակերպված բարդության իմաստը հաճախ չի նույնացում այդ նույն բարդության բաղադրիչների իմաստների գումարին,

գ) ԲԿ-ի իմաստային կառուցվածքում կան այլ անդամներ, որոնք փոխակերպված բարդությունից դուրս են մնում. դրանց իմաստներն ընկալվում են *բարդություն* > ԲԿ հակադարձ փոխակերպման ժամանակ:

Գ. ՀԱՏԿԱՆԻՇ ԱՐՏԱՅԱՅՏՈՂ ԲԿ-ՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ

Հատկանիշ արտահայտող ԲԿ-ները ցույց են տալիս անձի և առարկայի որակային հատկանիշներ կամ էլ բնութագրում են գործողությունը՝ կատարելով հատկանիշի հատկանիշի դեր:

⁷ *Ծաղիկ* վերջնաբաղադրիչով բարդ բառերի մասին տես՝ *Ղ. Գյուրջինյան*, Բառակազմական մի կաղապարի քննություն («Հայոց լեզու և գրականություն», 2000, հ. 3, էջ 28-31):

Ըստ այդմ, հատկանիշ արտահայտող ԲԿ-ները բաժանվում են երկու խմբի՝ անձի կամ առարկայի և գործողության հատկանիշ ցույց տվողներ:

Լեզվական փաստերի քննությունը ցույց է տալիս, որ բայական ԲԿ-ների փոխակերպումից առաջացած բարդությունները, որոնց լրացյալի դերով հանդես են գալիս բայահիմքեր, արտահայտում են թե՛ առարկայի և թե՛ գործողության հատկանիշ, իսկ անվանական ԲԿ-ների փոխակերպումից առաջացած բարդությունները, որոնց լրացյալի դերով հանդես են գալիս գոյականներ կամ փոխանվանաբար գործածված ածականներ, արտահայտում են անձի կամ առարկայի որակային հատկանիշ:

Այսպես, *դանդաղ քայլել՝ քայլելով* ԲԿ-ների փոխակերպումից ունենք *դանդաղաքայլ* բարդությունը, որ խոսքի մեջ կատարում է թե՛ որոշչի և թե՛ պարագայի լրացական դեր՝ համատեղելով ածականի և մակբայի խոսքիմասային արժեքներ: Մինչդեռ *կարմիր մորթով* ԲԿ-ի փոխակերպումից ունենք *կարմրամորթ* (բնիկներ, կենդանի)⁸ անձնանիշ բարդությունը:

Հատկանիշ արտահայտող ԲԿ-ների գերադաս անդամի դերով հանդես են գալիս բայերը, այսինքն՝ դրանք *բայական ԲԿ-ներ են*: Նման ԲԿ-ների գերադաս անդամի դերով հանդես են գալիս *ծուլել, թաթախել, շաղախել, խառնել, բխել, հոսել, քայլել, ծեծել, հալածել* բայերի հարակատար կամ ենթակայական դերբայները: Կապակցության ներսում լրացման հոլովական կամ կապային կառույցով արտահայտությունը պայմանավորված է լրացյալի քերականական սեռով կամ բայիմաստով: Նման ԲԿ-ների ներսում առկա են կամ խնդրառական, կամ առդրական հարաբերություններ:

Հմնտ. բրոնզից ծուլված > *բրոնզածուլ*, ցեխի մեջ թաթախված > *ցեխաթաթախ*, հարդով՝ հարդի հետ շաղախված > *հարդաշաղախ*, սրտից բխող > *սրտաբուխ*, ձյան հետ խառնված > *ձյունախառն*, կաքավի պես քայլող՝ քայլելով > *կաքավաքայլ*, հողմից ծեծված > *հողմածեծ*, արագ հոսող > *արագահոս* և այլն:

Երբ *հալածել* բայը բայական ԲԿ է կազմում ենթակայական դերբայով, ստանում է տրականով լրացում, իսկ երբ հանդես է գալիս հարակատար դերբայով (հալածված), ստանում է բացառականով լրացում: Երկու դեպքում էլ փոխակերպված բարդության մեջ, իբրև լրացյալ, այն հանդես է գալիս *հալած* հիմքով: Հմնտ. ազգերին՝ օձերին հալածող > *ազգահալած*, օձահալած, աստծուց՝ հողմերից հալածված > *աստվածահալած*, *հողմահալած* և այլն:

⁸ Երբ այս կարգի բարդությունների առաջին բաղադրիչ է դառնում գոյականը, ապա բարդությունը դառնում է իրանիշ. հմնտ. *կամրջի գլուխ* > *կամրջագլուխ*:

Սի շարք բարդությունների սերող կաղապարներ են դիտվում որոշ բառակապակցական տարբերակներ, որոնք երկակի մեկնաբանություն ունեն իբրև բայական կամ գոյականական ԲԿ-ներ:

Իբրև բայական ԲԿ-ներ՝ դրանք ձևավորված են լինում *ունենալ* գերադաս անդամի ենթակայական դերբայով, իսկ իբրև գոյականական ԲԿ-ներ՝ ունենում են գործիական հոլովով լրացումներ:

Հմնտ. թույլ կազմություն՝ կազմվածք ունեցող// թույլ կազմվածքով՝ կազմությամբ > *թուլակազմ*, ամուր կազմություն՝ կազմվածք ունեցող// ամուր կազմվածքով՝ կազմությամբ > *ամրակազմ*⁹, փափուկ մորթ ունեցող // փափուկ մորթով > *փափկամորթ*, դեղին մորթ ունեցող // դեղին մորթով > *դեղնամորթ*, բրոնզի գույն *ունեցող* // բրոնզի գույնով > *բրոնզագույն* և այլն:

Այսպիսով.

ա) բարդությունները (և ածանցավոր բառերը) ԲԿ-ների փոխակերպման գործընթացի հետևանք են և սերում են այն ԲԿ-ներից, որոնց նկատմամբ ունեն հոմանշային հարաբերություն,

բ) բարդություններ սերող ԲԿ-ները իմաստաբանորեն բաժանվում են երեք խմբի՝ անձնանիշ, իրանիշ և հատկանիշ արտահայտող,

գ) փոխակերպված բարդությունները, պահպանելով ԲԿ-ների բաղադրիչների իմաստային-շարահյուսական հարաբերությունները, ձևավորվում են հայերենի բառակազմական օրենքներով,

դ) բարդությունների կազմավորման մեջ էական նշանակություն ունի լրացյալի՝ գերադաս անդամի խոսքիմասային արժեքը,

ե) որոշ բարդությունների սերիչ կաղապարներ կարող են լինել նաև ԲԿ-ների տարբերակները:

⁹ *Կազմ* արմատով վերջավորվող բարդությունների սերող կաղապարներն այլ կազմություն ունեն. դրանց լրացում են դառնում գոյական կամ ածական անունները: Հմնտ. թղթի//թղթե կազմ > *թղթակազմ*, արծաթի//արծաթե կազմ > *արծաթակազմ* և այլն:

**ՊԱՐՍԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՈՃԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ
Ս.ԱՅՎԱԶՅԱՆԻ «ՃԱԿԱՏԱԳԻՐՆ ՅԱՅՈՑ» ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ**

Հայտնի է, որ հայ և պարսիկ ժողովուրդների պատմությունները շատ ընդհանուր էջեր ունեն։ Այդ էջերին նվիրված գեղարվեստական երկերը և նրանց լեզուն հայ և պարսիկ ժողովուրդների պատմության, տնտեսաքաղաքական, մշակութային կյանքի և կենցաղի լեզվական արտացոլումն է։

Պատմական թեմատիկայով գրված երկերի լեզուն միշտ էլ եղել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում։ Գրական ստեղծագործություններին այս կամ այն առիթով անդրադարձած ուսումնասիրողները քննության են ենթարկել այդ երկերի լեզվի և ոճի հարցերը, կատարել գրականագիտական վերլուծություններ։

Պատմավեպի լեզուն հիմնականում ներկայացնում է արդի գրական լեզվի ընդհանուր պատկերը։ Սակայն պատմավեպի ժանրային առանձնահատկություններով պայմանավորված՝ կարող են գործածվել գրաբարյան բառեր և ոճեր, առօրյա-խոսակցական լեզվի տարրեր, օտարաբանություններ և այլն, որոնք սովորաբար վիպասանի որոշակի նպատակադրման արտահայտություններն են։

Պատմավեպի գեղարվեստական կարևոր արժանիքներից է պատմականության, նկարագրվող ժամանակաշրջանին բնորոշ գունավորում ստեղծելը։ Այստեղ կարևոր դեր ունի տվյալ ստեղծագործության լեզուն։ Իրականության տեսանելի, պատկերավոր արտացոլումը, որ հենվում է հուզական ընկալման վրա, առանձնահատուկ պահանջներ է առաջադրում։ Վիպասանը լեզվաոճական միջոցների ճիշտ և տեղին ընտրությամբ պետք է կարողանա նկարագրվող դարաշրջանի պատկերը տալ և ներկայացնել այդ ժամանակաշրջանի մարդկանց, նրանց շրջապատն ու կենցաղը։

Այս առթիվ ուշագրավ մտքեր ունի պրոֆ. Ֆ. Խլղաթյանը «Վարդանանք» պատմավեպի լեզվաոճական քննությանը նվիրված իր մենագրության մեջ. «Բայց ինչպիսի՞ լեզվով պետք է շարադրվի պատմավեպը, ինչ ենք հասկանում «անցյալի լեզու», «դարաշրջանի լեզվական ոգի» ասելով։ Ինչպես ցույց են տալիս փաստերը, այս հասկացությունները տարբեր հեղինակներ տարբեր կերպ են ըմբռնել, և, հետևաբար, անցյալի լեզվական երանգավորման նրանց գործադրած միջոցներն էլ տարբեր են եղել...»¹։

¹ **Ֆ. Խլղաթյան**, Դ.Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի լեզուն և ոճը, Եր., 1988, էջ 176։

Այս առումով հետաքրքրական իրողություններ կան Ս.Այվազյանի «Ճակատագիրն հայոց» պատմավեպում, որոնք ի հայտ են գալիս լեզվատճական առանձին հարցերի, մասնավորապես պարսկաբանությունների քննարկումից:

Վեպի նյութը վերցված է 17-18-րդ դարերի իրադարձություններից: Հայ ժողովրդի համար ճակատագրական այս ժամանակաշրջանում հրապարակ իջավ Իսրայել Օրին, որի անբասիր կյանքը մի սրբազան երդում էր իր ժողովրդին, իսկ ազգանվեր գործունեությունը՝ հավատարմություն այդ երդմանը: Մահն անազատ կյանքից գերադասող քաղաքական գործիչը իրատեսական հիմքերի վրա դրեց հայ ժողովրդի ազատագրության քաղաքական իդեալը և կյանքից հեռացավ անբեկանելի հավատով, թե արդեն մոտ են այն օրերը, որ Հայոց աշխարհում էլ կթևածի ազատությունը:

Գրողի առաջնահերթ նպատակն է եղել վեպում այնպես պատկերել թուրք-պարսկական գերիշխանության տակ գտնվող հայ ժողովրդի կյանքի մղձավանջային իրականությունը, այնպես նկարագրել պարսիկ իշխանավորների ու զինվորների կամայականություններն ու չարամենզ գործողությունները, որ ընթերցողը կասկածի տակ չառնի դրանց ճշմարտացիությունը, վավերական հիմքը:

Պատմավեպի լեզվի մակերեսային քննությունից անգամ երևում է, որ վեպի բառապաշարում զգալի թիվ են կազմում հնաբանություններն ու պատմաբառերը, գրաբարյան բառամթերքը, ժողովրդախոսակցական բառերը և օտարաբանությունները:

Վիպասանը 17-րդ դարի պատմական գունավորում վերստեղծելու նպատակով դիմում է պատմաբառերի, հատկապես զենքերի, արդուզարդի, հանդերձանքի նկարագրության ժամանակ: Իր ձեռքի տակ ունենալով պատմագրական հարուստ նյութը՝ վիպասանն ամբողջական հատվածներ է մեջբերում գրաբարով, մասնավորապես պատմական որևէ իրողություն կամ փաստ ավելի հանդիչ դարձնելու կամ կերպարների (հատկապես բարձրաստիճան հոգևորականների) խոսքին համապատասխան գունավորում հաղորդելու նպատակով:

Վեպի պատմականությանը նպաստում են ինչպես պատմական դեպքերի և իրադարձությունների իրական, ճշմարտացի նկարագիրը, այնպես էլ գրողի՝ իր ժողովրդի մարդկանց և այլազգիների կենցաղի հմուտ նկարագրությունը, պարսիկ պալատականների ու զինվորների կյանքի մանրամասները, նրանց առօրյան և սովորույթները տպավորիչ գույներով ներկայացնելը:

Այլազգիների կենցաղի տարբերություններից բացի, անհրաժեշտ էր նաև նրանց խոսքի յուրօրինակության ցուցա-

դրումը: Կերպարների խոսքը ոճավորելիս հեղինակն առաջ-նորդվում է այն սկզբունքով, որ պատմական հերոսները պետք է մտածեն և խոսեն այնպես, ինչպես թելադրում է ժամանակա-շրջանը: Այս սկզբունքային մոտեցումը դրսևորելով՝ վիպասանն իր ժողովրդի մարդկանց խոսեցնում է մայրենի բարբառով, իսկ այլազգի գործող անձանց խոսքում գործածում է օտարաբանու-թյուններ (հիմնականում՝ պարսկաբանություններ, մեկ-երկու դեպքում՝ վրացերեն, ռուսերեն, եվրոպական բառեր)՝ նկատի ունե-նալով յուրաքանչյուրի լեզվամտածողությունը, որը պայմանավոր-ված է անհատի սոցիալական պատկանելությամբ և աշխար-հայացքով: Կարևոր գործոն են նաև նրանց կրթական մակարդակն ու զբաղմունքը, ինչպես նաև այն իրավիճակը կամ նյութը, որի շուրջ տարվում է խոսակցությունը:

Իսկ ո՞րն է օտարաբանությունների գործածության չափանիշը, դրանք արդյոք անհրաժեշտ են պատմավեպում:

Պարսկաբանությունները «ճակատագիրն հայոց» վեպում, կարծում ենք, ոճական պատճառաբանվածություն ունեն, որովհե-տև հանդես են գալիս հատկապես պարսկական միջավայրին բնորոշ իրողություններ նկարագրելիս: Դիպուկ և արտահայտիչ լեզվական միավորներ լինելով՝ դրանք հանդես են գալիս իբրև հայերեն խոսքի անհրաժեշտ տարրեր՝ կազմելով պատկերի ամբողջական շղթա:

Այսպես, օրինակ, Ս.Այվազյանը տպավորիչ և համոզիչ գույներով է նկարագրում մելիք Իսրայելի և Մուհամմեդ-Ռզա խանի հանդիպումը. «Մելիքի ետևին կանգնած էին երկու հայ՝ զեղարդներով: Խանի ետևին՝ երկու **ղզլբաշ՝** երկարակոթ **թարարգիններով: Վեզիր-դիվանի-ալին, սարդարդ, դիզ-չոքան-աղան, չիյ-իյան-աղան, կազին և մուհշին** նստած էին մի կողմում, **տարդաներն ու քալանթարները՝** մյուս կողմում: **Մեհմանդարը** ոտքի վրա կարգադրություններ էր անում...»²:

Այս հատվածից անմիջապես ակնհայտ է դառնում հեղինակի միտումը և լեզվական միջոցների գործածության որոշակի նպատակադրումը: Սակայն պատկերման կանխակալ սկզբունքը ոչ թե զուտ հայ-պարսիկ հակադրման մեջ է, այլ բխում է ստեղծագոր-ծության գաղափարական հիմքից:

Վիպասանն ամենայն մանրամասներով է ներկայացնում մելիք Իսրայելին և Մուհամմեդ-Ռզա խանին, նկարագրում նրանց շրջապատը, տարազն ու արդուզարդը: Ակնհայտ է, սակայն, որ

² *Ս.Այվազյան*, ճակատագիրն հայոց, Եր., 1966, էջ 285: Այսուհետև բերվող բոլոր բնագրային օրինակները տե՛ս նույն տեղում:

պարսիկ խանի և նրա շրջապատի նկարագրության ժամանակ գրողը գրական և խոսակցական բառերի փոխարեն նախընտրում է պարսկաբանությունները, որոնք օգնում են օտար միջավայրն ու այլազգի կերպարներն ավելի դիպուկ և տպավորիչ ներկայացնելու, ընթերցողին զգալ են տալիս պատկերվածը, նրան քաշում դեպքերի, իրադարձությունների հոր-ձանուտը:

Նման դեպքերում վիպասանն անմիջապես տալիս է այդ բառերից շատերի բացատրությունները, որպեսզի դրանք մատչելի լինեն ընթերցողին: Ինչպես՝ *ալա-հազարաթ* - ամենատեր, *հազարաթ արջալ* – ձերդ գերազանցություն, *վեզիր-դիվանի-ալի* – խանության մեծ վեզիր, *մեհմանդար* – հյուրեր ընդունող և ճանապարհող, *թարազին* - դահճի լայնաբերան կացին, *սարբազ-հազարապետ*, *ռահրար* - առաջնորդ, *մուռնչի* – քարտուղար, *չիյ-յիյան-աղա* - դահճապետ և այլն:

Սակայն միշտ չէ, որ օտար բառերի բացատրությունները տրվում են: Մի շարք պարսկաբանություններ (*եթմեթ- ալ- դոլլա*, *դիզ- չոբան - աղա*, *քալանթար*, *տարղա* - կոչումներ և տիտղոսներ, *յուզբաշի* – վերակացու, *օնբաշի* – տասնապետ, *ջալլաթ* - դահիճ, *կազի* - դատավոր, *ջեննաթ* - դրախտ, *սարդի* – մատովակ և այլն) ընթերցողին մատչելի են դառնում կամ խոս-քաշարում, կամ արդեն ծանոթ լինելով այլ գեղարվեստական գործերից՝ հասկանալի են եթե ոչ իրենց ուղղակի նշանակությամբ, ապա զոնե բնույթով:

Որոշ բառեր խոսքաշարում բացատրվում են հայերեն համանշանակներով. «Եվ *շեյխ-ալ-խալամը*, երկարավիզ, նեղ ուսերով, փոքր գլխով, մեծ չալման վրան: Նոսր մորուքով, որ աստիճանաբար բարակելով հասնում է դեղին ձեռքերին, որ սև թագբեհը պահում են ներս ընկած փորի վրա: Թագբեհի հետ չեն խաղում այդ ոսկրոտ ձեռքերը, որովհետև *հոզևոր պետը* խիստ տարված է մուռնչիի տանջանքներով - 406» (*շեյխ-ուլ-խալամ – հոզևոր պետ*):

Պարսկաբանությունների մեջ առանձնանում է իրանական բառերի մի շերտ (*միհնդար*, *շարբաթ*, *հեքին*, *դուրբան*, *քիրմանի շալ*, *թամաշա*, *օյին*, *խաբար*, *թագբեհ*, *օթախ*, *սիմի*, *թախտ*, *փեշքեշ*, *դունաշե*, *շեթան*, *ջահանդամ*, *բայրամ*, *դեյլան*, *տապճակ*, *մախլամ*, *օրդու*, *եսիր*, *դարավաշ*, *դուլ*, *մոնթ*, *շահիր*, *բանդ*, *բախկալ*, *քեշիշ*, *թաքնա*, *զաֆրան*, *դանդավանդ*, *սատուր*, *սեկե*, *զարբաբ*, *մարմաշ* և այլն), որոնց մեջ, կարծում ենք, կան նաև արաբական ծագում ունեցող բառեր, քանի որ արևելյան լեզուների փոխազդեցությունը դարավոր պատմություն ունի:

Այս բառաշերտը բանավոր հաղորդակցման ճանապարհով անցել է նախ հայերենի մի շարք բարբառներին, այնուհետև

տարածվել ժողովրդախոսակցական լեզվում, իսկ ավելի ուշ որոշ բառեր աստիճանաբար սկսել են գործածվել նաև գրական լեզվում:

Դրանց մի մասն այսօր էլ բավական ակտիվ գործածվում է բարբառներում, իսկ մյուս մասը սակավ գործածական է կամ դուրս է եկել գործածությունից, քանի որ անվանում է անցյալի՝ այժմ անգործածական առարկաների ու հասկացությունների, Այդ իսկ պատճառով, թեև այս բոլոր բառերը գրանցված են ժամանակակից հայերենի բացատրական բառարաններում, այնուամենայնիվ նրանցից շատերի իմաստները հաճախ անծանոթ են այսօրվա ընթերցողին և մատչելի են դառնում միայն համապատասխան խոսքաշարերում. «-Դա այն կինն է, որ ծեծել էր քո **դարավաշներին**...-13», «Սպիտակ սինիներում փլավի դեզեր էին՝ համեմված ղեղին **զաֆրանով**...կարմրացրած գառներ՝ դրված փայտե **թաքնաների մեջ**...- 285», «-Եվ տուրհանդակ կանչիր, և խելառ այդ **շահիրին** - 140»:

Նշված բառերի մի մասը մասնակցում է հարադրությունների և դարձվածների կազմությանը՝ իբր բաղադրիչ, ինչպես՝ **թամաշա** անել, **օյին** խաղալ, **ռադ** անել, **խաբար** տալ, **փեշքեշ** անել, **ղուրբան** լինել և այլն:

Վերոհիշյալ բառաշերտը վեպում հավասարապես գործածվում է և հեղինակի, և կերպարների լեզվում: Դրանք ավելի շատ անվանողական կիրառություն ունեն, բացառությամբ այն դեպքերի, երբ առանձին կերպարների խոսքում գործածվելով՝ անհատականացնում և ոճավորում են այն: Այս բառաշերտի գործածությամբ հեղինակը ներկայացնում է ոչ միայն հայերի, այլև հարևան ժողովուրդների՝ պարսիկների և թուրքերի ապրելակերպի ու սովորույթների մանրամասները, որոնք իրենց կենցաղով այն շրջանում բավականին մոտ էին իրար: Բերենք բնագրային օրինակներ. «Գորգերի վրա **մինդարներ** էին և թավշով երեսած **մութաքաներ**: Փոքր էր այն **թախտը**, որ դրված էր **օթախի** վերի մասում - 553», «- Սա ի՞նչ **խաբար** է... - 392», «- Գիտե՞ս ինչ **օյիններ** են խաղում... -313», «-Իմ խանութը քեզ **փեշքեշ**... -726», «-Մենք ձեր **եսիրն** ենք...-180» և այլն:

Նկատենք, որ այս բառաշերտը գործածական է նաև այլ հեղինակների երկերում, և որոշ մասնագետներ այսպիսի բառերի համար օգտագործում են թուրք-պարսկական փոխառություններ տերմինը:

Խոսելով Խ.Աբովյանի լեզվի և ոճի մասին՝ Լ.Եզեկյանը գրում է, որ « մոտավոր հաշվումներով ավելի քան 2500 բարբառային և օտար բառեր օգտագործված են «Վերք Հայաստանի» վեպում, դրանց 60-70 տոկոսը կազմում են թուրք-պարսկական փոխա-

նությունները, չհաշված այն բառերը, որոնց բացատրությունները հեղինակը տալիս է բնագրում...»³:

Վեպում գործածված պարսկաբանությունները վերաբերում են կյանքի զանազան բնագավառներին և բաժանվում են իմաստային խմբերի՝ կրոնական հասկացություններ անվանող, աշխարհիկ-վարչական բնույթի բառեր, ռազմական բառապաշար և այլն:

Կրոնական հասկացություններ անվանող բառեր՝ **սուննի, շիա, ազան, շարյաթ, Ղուրան, մոլլա, ալլահ, մինարե, մեջիդ, նամազ, քեշիշ, փեյղամբար, սալավաթ քաշել, օրուջ պահել** և այլն:

Այս շարքի բառերը ամենայն հավանականությամբ տարաշխարհիկ (էկզոտիկ) են, քանի որ օտար բառեր և անվանումներ են (հիմնականում չթարգմանվող), որոնք «օտար ժողովուրդների կյանքին, կենցաղային սովորույթներին վերաբերող հասկացություններ են արտահայտում և գործածվում են այդ ժողովուրդների կյանքի մասին պատմող խոսքում»⁴:

Լեզվական այս միջոցների օգնությամբ հեղինակը հիմնականում ներկայացնում է այլազգիների վարքուբարքն ու սովորույթները, մահմեդականների կրոնական արարողությունները և այլն: Բերենք բնագրային մի քանի օրինակներ.«Եվ շուտով **մինարեների** բարձունքներից ուղղափառ **մուսուլմանները** իրիկնային **նամազի** կոչելով՝ **մոլլաներն** սկսեցին իրենց **ազանը...-782**», «...Իբր ես գիշերները **նամազ** եմ անում, **օրուջ պահում**, երեսիս **սալավաթ քաշում**, որ **ղզլբաշները** ինձ **սուլլաթել** են, որ ես Ալու և Յուսեֆին անուններով եմ երգվում...-529», «-Ղուք **ղզլբաշներդ սուննիներ** էիք, դառաք **շիաներ** -315»,«...Չկա **ալլահ, ալլահից** բացի և Մուհամմեդն է նրա **փեյղամբարը** -384», «-Քո արարքի մեջ հնազանդություն չի երևում, **քեշիշ**, - խանն աշխատեց հանգիստ ձևանալ -282»:

Ղզլբաշ (կարմրագլուխ) արհամարհական երանգով սուննի մահմեդականները հորջորջում էին պարսիկներին: Իսկ **քեշիշ** նշանակում է քահանա՝ մահմեդականների հորջորջմամբ, և գրական լեզվի համապատասխան բառի փոխարեն վիպասանը նախընտրում է օտար բառը՝ ընդգծելով քրիստոնյա հոգևորականների նկատմամբ խանի արհամարհանքն ու ծաղրական ոճը: Գրողի կողմից **քեշիշ** բառի գործածությունը պայմանավորված է նաև խոսողի՝ խանի գերադասությունն ընդգծելու ցանկությամբ:

Տարաշխարհիկ (էկզոտիկ) կարելի է համարել նաև վեպում հանդիպող հետևյալ պարսկաբանությունները՝ **ամամե, դեյլան,**

³ **Լ.Կ.Եզեկյան**, Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն, Եր., 1990, էջ 240:

⁴ **Ֆ.Յ.Խլղաթյան**, Ոճաբանական բառարան, Եր., էջ 159:

սեզահ, ռաստ, դաստան, թասլիբ, գազել, բեյթ, քասիդ, դիվան, սուրահ, սանդալ և այլն, որոնք նույնպես ունեն անվանողական կիրառություն, և ժամանակակից գրական լեզվում չկան նրանց համապատասխան ձևերը:

Բերենք բնագրային օրինակներ. «Նա **ղզլբաշների** մեջ օտարամոլություն է տարածում իր հորինած **դաստաներով, թասլիբներով, գազել-դիվաններով ...-294**», «Սազանդարները **Սեզահ** են նվագում... **Ռաստի** հոգեպարար հնչյունները պոկվելով թառից ու քյամանչայից...-67», «Իսկ ինչու՞ ես բերանացի արել «Ղուրանի» **սուրահները -199**», «Նա սկսեց արտասանել մի **բեյթ - 290**», «Թախտի մոտ՝ **սանդալի** վրա հանգչում էր փղոսկրով նախշած **դեյլանը...- 6**»:

Ղաստանը արևելյան (պարսկական, արաբական, թուրքալեզու) բանավոր և գրավոր պոեզիայում վիպական բնույթի ծավալուն չափածո ստեղծագործություն է, **գազելը, թասլիբն** ու **դիվանը** արևելքում սիրված և շատ տարածված քնարական բանաստեղծությունների տեսակներ են, իսկ **սեզահը** և **ռաստը**՝ արևելյան դասական մուղամների անվանումներ. հասկացություններ, որոնք հայերենում չունեն իրենց համարժեքները, նույնիսկ փոխարինիչները: Հայ հեղինակը չէր կարող թարգմանել դրանք, չէր կարող նաև շրջանցել:

Նշենք, որ պարսկաբանությունների այս խումբը գործածական է նաև այլ հեղինակների (այդ թվում՝ դասական, օրինակ՝ Ավ.Իսահակյան, Հովհ.Թումանյան, Ե.Չարենց) երկերում: Գ.Սարյանն իր «Գյուլնարա» բալլադում այսպիսի պարսկերեն բառերի (թաջիր, սուրմա, սեզահ, դեյլան, սանդալ և այլն) օգտագործմամբ ստեղծում է արևելքի ազգային-կենցաղային գունավորում:

Պատմավեպի բովանդակությամբ է պայմանավորված նաև հետևյալ պարսկաբանությունների գործածությունը, որոնք ռազմական բառապաշարի և աշխարհիկ-վարչական բնույթի բառեր են՝ **սարբազ** - հազարապետ, **օնբաշի** - տասնապետ, **ղզլբաշ**, **օրդու-** հորդա, **նեյզե** - նիզակ, **փշտո** - ատրճանակ, **թաբարզին** - կացին, **սատուր-** դահճի տապար, **յուզբաշի**, **սատրապ**, **սարդար** - շահի կողմից նշանակված հրամանատար, կուսակալ, **ղուլ** - ստրուկ, ծառա, **ջալլաթ** - դահիճ, **բախկալ** - նպարավաճառ, **բեկլարբեկ**, **տարդա**, **քալանթար** - պաշտոնյաների տիտղոսներ, **ֆերման** - հրաման, **մունշի** - քարտուղար, **ռահբար** - առաջնորդ, **դիվանխանա**, **խանսարահի** - խանի պալատ, **քավշ** - կոշիկ և այլն:

Բերենք բնագրային մի քանի օրինակներ.«Սուհամմեդ-Ռզան շտապ **դիվանխանա** հավաքեց **վեզիր-դիվան-ալիին, սարդարին, կազիին, մեհմանդարին, դիզ-չոքան-աղային, չիյ-իյան-աղային** ու

ասաց... -401», «Մենք այն հիշեցրել էինք և քեզ, որ դուք **խաներո, սարդարներո** և կամ **սարբազներո** չխաղաք մեր խղճի ու պատվի հետ - 655», «Եվ ահա **դիվանխանայի** ընդարձակ բակում հավաքվել են բոլոր **յուզբաշիները**, տանուտերերը՝ պարտադիր, **ղզլբաշները...- 37**»:

Նկատենք, որ վերոհիշյալ օտար միավորները (մեկ-երկու բացառությամբ) մայրենի լեզվում գործառուղ համապատասխան բառով կամ արտահայտությամբ փոխարինելու դեպքում հաճախ իմաստային այլ նրբերանգ կարող են ձեռք բերել, կամ պարզապես կորչում է նկարագրվող միջավայրի և ժամանակաշրջանի լեզվական երանգավորումը:

Այսինքն՝ պատմավեպում պարսկաբանությունների այս խմբի գործածությունը պայմանավորված է ավելի շատ ստեղծագործական անհրաժեշտությամբ: Սրանցից շատերը, լինելով պատմական այդ ժամանակաշրջանին յուրահատուկ լեզվական իրողություններ, բառային մակարդակով նման են պատմաբաններին. դրանցով անվանվող հասկացություններն այսօր արդեն գործածական չեն, իսկ մի մասը նույնիսկ տերմինի նշանակություն է ստացել (օրինակ՝ արևելյան պալատական տիտղոսներն ու կոչումները):

Պատմավեպում պարսկաբանությունների օգտագործման աստիճանն ու չափը տարբեր է հեղինակային և հերոսների խոսքերում:

Հեղինակային խոսքում պարսկաբանությունների քանակը համեմատաբար սահմանափակ է և պայմանավորված է միայն պարսկական կենցաղը, միջավայրը և այլազգի կերպարներին համոզիչ և իրական գույներով ներկայացնելու թելադրանքով: Եվ բնականաբար այս լեզվական միավորները գործ են ածվում որոշակի իրավիճակներում՝ հուզաարտահայտչական գունավորում հաղորդելով խոսքին: Ինչպես, օրինակ՝ «Նա անաղմուկ քայլերով մոտ եկավ, ծավվեց մեջքից, ուղղվեց, նայեց խանի դեմքին և իմացավ, թե ո՞ր **արբան, քավչերը** և **ամամեն** պիտի պատրաստի - 7»: «Հիմա **բայրամ** է և դոստում ցուրտ: Խանը երկնագույն **բաղալխանի** տակ արմունկներով հենվել է **մութաքային...երկնագույն** է նրա **կարբան** և դիք փափախը...-66»: «**Բախկալները** ձիու պոչով ճանճ էին քշում... ծուլորեն **թագբեհ** գցում...-187»: «Հիշեց բոլոր **փեյղամբարների** անունները...-96» և այլն:

Վիպասանը այլազգի կերպարների անհատականացումը սկսում է հենց նրանց արտաքինի նկարագրությամբ. «Երբ խանը երևում է արնագույն պատշգամբում, արնագույն **կաբայով, ամամով** ու **քավչերով**, ապա մեղապարտը գլուխը դնում է կոճղի վրա և

դահճի **թաքարզին** մի հարվածով իջնում է նրա վզին...-7»: «Անբեղ, անմորուք է **չիյ-իյան-աղան**, որովհետև մահապարտի վզին **թաքարզին** վրա բերելուց՝ կարող էր արյունոտ ոսկրածուծով պղծվեր մորուքը, որ պահվում էր հանուն ալլահի՝ **սալավաթ քաշելու** համար - 406»:

Այսպիսի նկարագրությունների ժամանակ Ս.Այվազյանը դիմում է պարսկաբանությունների գործածության, որոնք, օրինակ, եթե փոխարինվեն գրական լեզվի իրենց համարժեքներով, ապա խոսքը կկորցնի իր տպավորչությունը, իսկ **սալավաթ քաշել** բայն արտահայտում է մի այնպիսի գործողություն, որը հատուկ է միայն մահմեդականներին. նրանք աղոթելիս երկու ձեռքերով շոյում են դեմքն ու մորուքը:

Այլազգի գործող անձինք պատմավեպում անհատականացվում են ինչպես իրենց արտաքին կեցվածքով, այնպես էլ խոսքի համապատասխան ոճավորմամբ: Գործող անձանց լեզվական կերպավորման և տիպականացման գործի ծանրությունը հենց ընկած է նրանց խոսքի վրա: Տարբեր հեղինակներ այս հարցին տարբեր կերպ են մոտենում. ոմանք դրա համար օգտագործում են հայերենի աղավաղումը, ոմանք՝ օտար բառերը:

Ս. Այվազյանը այլազգիների խոսքը ոճավորելիս շեշտը դնում է նրանց ազգային բնավորության առանձնահատկությունների վրա, և լեզվական կերպավորման հարցում նրա միտումներն առավել ակնհայտ են դառնում: Վիպասանը կերպարների խոսքի ոճավորման ժամանակ բառերի ընտրության հարցում նախապատվությունը տալիս է պարսկաբանություններին, որով ստեղծվում է օտար իրականությանը համապատասխան յուրահատուկ հնաբույր ոճ.«-Օղակումը նախատեսված է **սաֆար** ամսի տասնհինգին և **ռաբի-ալ-ավալ** ամսի տասնյոթին...-371»: «-**Ռաբի-ալ-ավալ, Ռաբի-ալ-սանի, Ջամադա-ալ-ավալ, Ջամադա -ալ-ախ, Ռաջաբ**, մատները ծալելով ու երգեցիկ ձայնով **բեկլարբեկը** թվեց ամիսները և աչքերը փակեց - 400»:

Ռաբի-ալ-ավալը 1682 թվականին եղել է մարտ ամսվա անվանումը, և այս օրինակներում վիպասանը անսանունների պարսկերեն համարժեք ձևերի գործածությամբ ժամանակին ու պայմաններին համապատասխան է ոճավորում կերպարների խոսքը, նրանց խոսեցնում իրենց դարի ոգուն հանեմատ, որով դարձյալ վերարտադրվում է հեռավոր դարաշրջանի լեզվական շունչը:

Առաջին հայացքից թվում է, թե բոլոր պարսիկ հերոսները խոսում են մինևույն լեզվով և ոճով. այդպես ենթադրել են տալիս երկխոսություններում հանդիպող և հաճախ կրկնվող պարսկաբա-

նությունները: Սակայն երկխոսությունները կառուցելիս հեղինակը, դրսևորելով ստեղծագործական վարպետություն, նուրբ ոճական երանգավորումներով, բնորոշ արտահայտությունների գործածությամբ առանձնակի բնույթ է տալիս դրանցից յուրաքանչյուրին և ներքին զանազանություն մտցնում նրանց մեջ:

Բերենք բնագրային օրինակներ.«-**Չագարաթե աջալ**, - դիմեց նա **բեկլարբեկին**, - հարգիր իմ տարիքը, - երեսին **սալավաթ քաշեց**: - Ես կարծում եմ, որ պետք չէ **ալա-հագարաթե շահի** արյունը պղտորել - 398»:«- Այդ ինչպե՞ս ես խոսում ծովերի ու ցամաքների տիրակալի՝ Սուլեյման **շահնշահի ֆերմանով** քո գլխին տեր կարգած Դիզմար **բեկլարբեկի** հետ -391», «-Դու **գյադայի** մասին չմտածես, **հագարաթե աջալ**, - վեզիրը թփփահացրեց **բեկլարբեկի** ուսը: -Այս հաղթանակից հետո բոլոր հայերն էլ հնազանդ **գյադաներ** են դառնալու...-372»:

Լեզվական կերպավորման հարցում վիպասանին հաջողվել է անհատականացնել անգամ տարբեր խավերի պատկանող այլազգի կերպարների խոսքը և ոչ միայն ներկայացնել նրանց յուրահատուկ լեզվամտածողությունը, այլև արտահայտել տվյալ անձի դիրքի, խառնվածքի, մտածելակերպի և հոգեկան աշխարհի առանձնահատկությունները:

Վեպի բազմաթիվ էջեր համեմված են պարսիկ զինվորականների շողոմ ու քաղցրալեզու արտահայտություններով, ալլահի փառաբանությամբ, որոնք ցույց են տալիս մահմեդականների մոլեռանդությունը, բացահայտում կերպարների հոգեվիճակն ու ժամանակի բարդ, լարված իրադարձությունները, ավելի դիպուկ ու համոզիչ դարձնում նրանց մտածելակերպն ու գործունեությունը:

Այս տեսակետից ուշագրավ է պարսիկ զորականի՝ հայ ապստամբներին ուղղված խոսքը, որը պարսկական ժողովրդական լեզվամտածողությանը բնորոշ երանգներով է հարուստ.«- Խելքի եկեք, այ հայեր. **չկա ալլահ, ալլահից բացի և Սուհամմեդն է նրա փեյղամբարը**... Ողորմած է Սուլեյման շահը, նա ալլահի ընտրյալն է, դրա համար էլ նա գիտե ներել մոլորյալներին: Նա տիրեց ձեր երկրին, բայց թույլ տվեց մնաք այնպես, ինչպես եք՝ անաստվածներ, **ալլահի և նրա մեծ փեյղամբարի՝ Սուհամմեդին հակառակորդ**...387»:

Վեպում բոլորովին այլ է գոռոզ ու բռնակալ շահի, պալատականների, խաների ու սարդարների խոսքի ոճավորումը, ուր ընդգծվում է նվաճողի ու ջարդարարի, բայց միևնույն ժամանակ նաև շողոքորթ ու շաղակրատական ոճը:

Սի այլ դիպվածում Յյուսեին խանը, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, Սուլեյման շահին դիմում է վերամբարձ և

ինքնանվաստացնող բառերով. «...Գլխիդ մատաղ, իմ արևափայլ, արևաշող, լուսապայծառ և լուսաշող շահ, դու իմաստուններից իմաստուն, հզորներից հզորահզոր, դու տիրակալ ծովերի ու ցամաքների, իսկ ես քո ոտքի տակի հողը, քո քոշերի փոշին, կարողացել եմ նկատել, որ ռուսաց թագավորի «յուլչին» հայ է...-728»:

Հայտնի է, որ պարսկական լեզվամտածողությանը հատուկ են հուզական լիցք ունեցող բառերի առատ գործածությունը և վերամբարձությունը. խոսողը անպայման խոսքի առավելագույն ուժով (արևափայլ, արևաշող, լուսապայծառ, լուսաշող շահ, իմաստուններից իմաստուն, հզորներից հզորահզոր) պետք է ներկայացնի խոսակցին (եթե նա «բարձր» է խոսողից)՝ ընդգծելով իր ստորադրյալ վիճակը (ես քո ոտքի տակի հողը, քո քոշերի փոշին):

Պարսկերենում ընդունված ձև է նաև երկխոսություններում սահմանափակ գործածել դերանուններ: Այս հարցում վիպասանը դարձյալ հետևողական է. պարսիկ պալատականները, որոնք խոսում են արհեստական և շինծու ոճով, դերանունների փոխարեն (եթե խոսում են շահի հետ կամ նրա մասին) գործածում են վերամբարձ ու ճռռոմբբան շրջասույթներ («Փառք հայի մահին՝ մեր հանճարեղ Սուլեյման շահին -433», ալլահի ընտրյալ, ցամաքների ու ծովերի տիրակալ -775, շահական մեծություն, ամենակարող աստծո առաքյալ - 194, ալլահի բարի և իմաստուն առաքյալ - 268 և այլն), որոնց միջոցով վիպասանը ստեղծում է պալատական միջավայրին յուրահատուկ հնաբույր ոճ:

Սրանք, ինքնըստինքյան հասկանալի է, օտար լեզվամտածողության արդյունք են:

Այսպես, օրինակ, երկխոսություններում որպես համաձայնության մշան հաճախ են գործածվում արտահայտություններ, որոնք, լինելով պարսիկ ժողովրդի լեզվամտածողության արդյունք, ոճական պատճենումներ են և լեզվական կերպավորման փայլուն նմուշներ. «Ավելի իմաստուն մարդ չկա, քան ինքը շահը և նրա բերանով ալլահն է խոսում...- 192», «Իմաստուն են քո մտքերը, ինչպես քո քսկե բերանով բարբառեցիր ...-770», «Ալլահը քեզ օժտել է ամեն բան լինելու հանճարով, երկնքում ալլահն է, երկրի վրա՝ մեր շահը...-781», «Իմաստուն արդարություն կա արևափայլությանդ վճռի մեջ...- 160» և այլն:

Ուշագրավ է «խենթ շահիրի» կերպարը, և նրա խոսքում գործածված պարսկաբանությունների կամ պարսկերենից պատճենված ձևերի միջոցով հեղինակը ստեղծում է շրջասույթների մի գեղեցիկ շղթա, որը պարսիկ ժողովրդի լեզվամտածողության արդյունք է. «Ես նրան այդպես լուռ խնդրում էի, որ եթե **Սուլհամեղի որդիներն** ինձ սպանեն, հոգիս ջեննաթին տա, որովհետև նրանք ինձ

սպանում են նրա համար, որ ես **Իսայի** անմեղ **որդիների** վրա թուր չեմ բարձրացրել...-93»:

Մուհամմեդի որդիներ – մահմեդականներ և **Իսայի որդիներ** – քրիստոնյաներ (Իսա անվանել են Քրիստոսին իսլամում) շրջատույթները հասկանալի են, քանի որ մահմեդականությանը առնչվող հասկացությունները հայտնի պատճառներով ծանոթ են հայերին:

Գրողը, քաջատեղյակ լինելով պարսիկ ժողովրդի՝ խոսքի կառուցման այս դարավոր ավանդույթներին, փորձել է հարազատ մնալ դրանց: Ուստի, երբեմն պարսկաբանությունների առատ գործածությամբ, երբեմն մի չնչին միջամտությամբ հեղինակին հաջողվել է օտար շունչ հաղորդել խոսքին և լուծել լեզվական կերպավորման և անհատականացման խնդիրը:

Ս.Այվազյանը պարսկական բառապաշարը երբեմն դարձնում է բաղադրությունների հիմք, դրանցից հայերեն ածանցներով կազմում նոր բառեր, պարսկաբանություններն օգտագործում է պատկերավորման նպատակով:

Բերենք բնագրային մի քանի օրինակներ.«Ուտքերին **զառն** քոշեր էին, հագին **զարբաբե** կաբա... **մարմաշե** կապույտ գոտի ուներ, գլխին մետաքսից ամանե էր...-285», «Յյուսեին խանը դիմավորելու էր դուրս եկել սպիտակ ձի նստած, սպիտակ չալմայով՝ **ղզլբաշական** կարմիրը վրան -725», «- **Ալլահընտրիչ** մեր խանին փառք...- 285» և այլն:

Բերված օրինակներում **զառն** (ոսկե), **զարբաբե** (դիպակյա), **մարմաշե** (շղարշե), **ղզլբաշական** մակդիրները կազմված են հայերենի բառակազմական օրինաչափություններով (իրանական արմատ - ածանց), իսկ գրողի պատկերավոր մտածողությունից ծնված **ալլահընտրիչ** նորակազմ բառը գերագույնի իմաստով գործածված է իբրև բնութագրական մակդիր **խան** գոյականի համար:

Գրողի ոճի մեջ բնորոշն այն է, որ սովորական պարսկաբանությունների ածանցումով, նոր բառակերտումներով ծնվում են այնպիսի անհատական մակդիրներ, որոնք իրականությունը վերարտադրող և բացահայտ հնաբույր երանգ ունեցող բառեր են, համապատասխանում են խոսքին և ոճավորում են այն: Ինչպես՝ **շահական** մեծություն –775, **յուզբաշիական** փափախ –23, **չալմայած** գլուխ – 134, **սարբազական** տապճակներ –91, **մեյգեավոր** մարդ –275, **սարբազական** վրան –138, **ղումաշե** վերմակ –137, **ղզլբաշական** էմիսարներ –610, **շահավարի** հարցրեց –188 և այլն:

Իսկ Աստվածատուր հեքիմի՝ Շարիֆ-խանի համար պատրաստած դեղորայքը գրողը պատկերավոր բնութագրում է «**բեյխու-շազնող** արմտիք -166» արտահայտությամբ:

Իրենց արտահայտչական ուժով և երևույթի ուժգնությունն ու սաստկությունն ընդգծելու տեսակետից ուշագրավ են համեմատությունները: Այստեղ նույնպես կարևոր է գրողի ստեղծագործական երևակայությունը, շրջապատի իրականությունն ընկալելու և վերարտադրելու յուրօրինակությունը, քանի որ դրանք ընթերցողի մեջ առաջացնում են տեսողական մտապատկերներ և ներկայացնում այն իրավիճակն ու պայմանները, որոնց մեջ գտնվում է հայ ժողովուրդը:

Ընդհանրապես համեմատություններում գերիշխում է արտահայտչական երանգը, և էական նշանակություն ունի, թե համեմատության իմաստ արտահայտող ինչպիսի բառեր են գործածված տվյալ արտահայտությունում: Իսկ երբ պատկերում գործածվում են պարսկաբանություններ, դրանից հսկայական չափով մեծանում է նկարագրության արտահայտչական ուժը:

Պարսկաբանություններն ու պարսկական բաղադրություններն օգտագործվում են նաև համեմատությունների մեջ.«Ավելի տխրեց, երբ լուսամուտի շրջանակի մեջ տեսավ նույն, օտարություն հիշեցնող պատկերը՝ գյոյ մեչիդի կապույտ գմբեթը, երկու մինարեի մոզաիկ սյուների հարևանությամբ, որ **սուլլաթած ամոթի պես** ցցվել էին դեպի ալլահը՝ գլխներին սեփական մահիկ... -331»:

Հեղինակը հաճախ է կերտում այնպիսի օտարաբան պատկերներ, որոնց մեջ կան և՛ փոխաբերություն, և՛ մակդիր, և՛ համեմատություն, և՛ շրջասույթ:

« -Հզորագոր իմ խան,-մռլտաց սարդարը,- հրամայիր, հողի երեսից սրբեմ այդ **շեյթաններին**: Ինչպե՞ս են համարձակվում կեղտոտ խոսքեր ասել **Իսլամի հավատարիմ ծառաներին**, որոնք հիմա **ջեննաթում փերիների հետ են** և կաթնաղբյուրից են ջուր խմում...-280», «...Եկել եք ինչպես **մադրասայի մոնթերը**՝ հլու-հնազանդ և այնպես եք ձեռքներդ ծալել կրծքներիդ վրա, կարծես մուսուլմանի արյուն չկա նրանց վրա ...- 281»:

Համեմատելին՝ **մադրասայի մոնթեր**, որ նշանակում է վանական դպրոցի աշակերտ, պատկերավոր և խոսում է. հեղինակը շեշտում է պարսիկ զորականի հեզմական ոճը, որով նա ակնարկում է ապստամբների առաջնորդի՝ Կոստանդ Աստապատցու նախկինում հոգևորական լինելու հանգամանքը:

Կամ՝ «Հոսում էր հայոց գինին, **ինչպես Ջենդերուղի ջրերը**, և գինուց ավելի էին հարբեցնում Հաֆեզի, Խաքանիի, Ռումիի, Ջամիի, Աբուլ-Ֆեյիզի գազելներն ու քասիդները - 197»,«...Ես այնպիսի գինի եմ բերել, որ առաջին թասը **տանում է ջեննաթի փերիների ծոցը...** - 189», «...Եվ դրա հետ մեկտեղ այնպիսի ահ ու սարսափ էին ստեղծել թշնամու մեջ, որ Ջրախառնուրդի ծորը **«Փանը դարա»**

(արյունոտ ծոր) էին ասում...-373», «...Միշտ մեր հրագեցններով, մեր թրերով ու նետերով թևաթափ կանենք սեյֆյան գիշանգղներին, որ նրանց սև ստվերները չանցնեն մեր սուրբ հողի վրայով, որ լեշ չփնտրեն մեր երկրում...-377»:

Իհարկե, պարսկաբանությունների նշված խմբերի գործածությունը վեպում պատմական ոճավորում և լեզվական կերպավորում ստեղծող միակ միջոցը չէ, ուստի կարծում ենք, որ այս լեզվամիջոցներին գրողը պետք է դիմի ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Օտար միջավայրի վերարտադրությունը ոչ թե նպատակ պետք է դառնա, այլ միջոց գեղարվեստական ավելի կարևոր խնդիրների լուծման համար: Այս առումով Ս.Այվազյանի վեպի լեզուն, անշուշտ, ծանրաբեռնված է օտարաբանություններով:

Սակայն Ս.Այվազյանը չի ձգտել իր երկը բեռնաթափել պարսկաբանություններից: Ճիշտ է, այս բառաշերտը պատմավեպում հիմնականում ունի ոճական պատճառաբանման ծախսեր և հաճախ ստեղծում է տեղի, ժամանակի համապատասխան գունավորում, լուծում լեզվական կերպավորման հարցեր, սակայն անընդունելի է, երբ գրողը անհարկի պարսկաբանությունների է դիմում իր` հեղինակային խոսքում («**խանսարահիի** գլխավոր մուտքի առաջ մեկը ձիուց ցած թռավ...-458», «**Յիշեց բոլոր փեյղամբարների** անունները...-96» և այլն):

Կարծում ենք, վեպում հանդիպող մի շարք պարսկաբանություններ (**խանսարահի**, **դիվանխանա** - խանի պալատ, **քավշ** - կոշիկ, մույկ, **ջալլաթ** - դահիճ, **թաբարզին** - կացին, **նեյզե** - նիզակ, տեգ, **փեյղամբար** - մարգարե, առաքյալ և այլն) հեշտությամբ կարող էին փոխարինվել գրական լեզվի համարժեքներով` չխաթարելով նկարագրվող միջավայրի և ժամանակի երանգավորումը:

Պարսկաբանությունների առատ գործածությունը երկխոսություններում երբեմն հակառակ արդյունք է տվել` խճողելով և նույնիսկ անհասկանալի դարձնելով առանձին կերպարների խոսքը (տե՛ս վեպի 371, 400 էջերում): Այս հարցում մենք կողմնակից ենք գոյություն ունեցող այն տեսակետին, որ գրողը գեղարվեստական երկում չպետք է պատճենի հերոսների խոսքը և նույնությամբ վերարտադրի այն` որպես տվյալ կերպարի խոսքը անհատականացնող հիմնական միջոց, այլ նպատակադրված ընտրություն պետք է կատարի լեզվական միջոցների մեջ, վերցնի ամենից բնորոշն ու էականը:

**ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆԻ ՉԱՓԱԾՈՒ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Համաժողովրդական լեզվի բարձր արտահայտությունը՝ ընդհանուր գրական լեզուն, ունենալով բազմաթիվ դրսևորումներ, ամենից ավելի առնչվում է գեղարվեստական գրականությանը և իր հոգևոր հիմնական սնունդը ստանում է նրանից:

Գրականության և լեզվի պատմությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր մեծ գրող ոչ միայն սնվում է մեր լեզվի բառապաշարի զարգացման բոլոր ակունքներից, այլև դրանց բառամթերքի գործածությամբ, առօրեական դարձած բառերի իմաստային թարմացմամբ, բառաստեղծման իր ջանքերով որոշակի նորություն է բերում գրական լեզվին և իր տաղանդի ուժով նշանակալից ներդրում կատարում ազգային լեզվի զարգացման մեջ՝ հարստացնելով լեզուն նոր լեզվաոճական արժեքներով:

Ինչպես հայ դասական գրողներից շատերի, այնպես էլ Գ. Էմինի պոեզիայի լեզուն իր խոր արմատներով կապված է մեր լեզվական մշակույթի դարավոր ակունքների, մեր գեղարվեստական խոսքի լավագույն արտահայտությունների հետ և հայ բանաստեղծության լեզվական ավանդույթների շարունակությունն ու հետագա զարգացումն է:

Էմինի չափածո ստեղծագործությունների բառապաշարի հիմքը կազմում են դարերի ընթացքում գործածված և այժմ հայերենի հարստությունը ներկայացնող բառերը: Իբրև իսկական արվեստագետ՝ Գ. Էմինը բարձր պահանջներ է ներկայացնում լեզվի նկատմամբ և գրական լեզվի բառապաշարը լրացնում նորակազմություններով: Նորաբանությունները հասարակական կյանքի, գիտության, տեխնիկայի զարգացման հետևանքով կամ անհատական ոճական նկատառումներով առաջացած բառերն են:

Բանաստեղծի բառապաշարում եղած նորաբանությունների մասին խոսելիս պետք է որոշակիորեն տարբերել բառերի երկու խումբ: Առաջին խմբի նոր բառերը կյանքում, կենցաղում հանդես եկած նոր առարկաների ու հասկացությունների անվանումներն են և ստեղծվել են գրական լեզվի բառապաշարի պակասը լրացնելու համար: Առարկան, հասկացությունը անվանելիս նման բառերով խոսողի վերբերմունքը չի արտահայտվում. դրանք առարկաների և հասկացությունների չեզոք անվանումներ են: Նման բառերը սովորաբար յուրացվում են համաժողովրդական լեզվի կողմից, և նրանց ստեղծողի անունն էլ հաճախ մոռացվում է (մանրահատակ, գր-

վազը, սուրճ, կրկնուսուլց, պատճենար, պակասուրդ և այլն)¹: Այդպիսի նորաբանություններ շատ կան նաև Գ. Էմինի ստեղծագործություններում: Նրա բառապաշարը արտացոլում է մեր լեզվի զարգացման ընդհանուր պատկերը : Ամենասովորական բառերն ու ձևերը հաճախ հեղինակի մոտ ստանում են այլ շեշտեր ու ջերմություն:

Ավելի հաճախ են հանդիպում հեղինակային նորաբանությունները: Դրանք ստեղծվում են այս կամ այն հեղինակի կողմից և մնում են նրանց ստեղծագործության բառագանձի մեջ՝ չդառնալով ընդհանուրի սեփականություն: Օրինակ՝ *հայրենատենչ* («Էն կըտրիճն է *հայրենատենչ* խիզախ հոգին ավանդում...», ՀԹ, I, 122), *որսասար* («Վե՛ր կաց, հորեղբա՛յր, տար ինձ *որսասար*...», ՀԹ, II, 211), *մահախուճապ* («*Մահախուճապ* սերունդների աչքն է դիպել լույս գագաթին ու անցել ... », ԱԻ, I, 328), *բուժ* [ակ] («Միաժամ նա *բուժի* խնամքին էր հանձնել բոլոր զինվոր ու շինական վիրավորների...», ԴԴ, 538), *հականարտ* [ություն] («Ձգացվում էր սրանց *հականարտը*, որ դեռ ծածուկ էր...», ԴԴ, 217), *կռվավարձ* («Կարիքը հաճախ ստիպեց *կռվավարձ* պահանջել...», ԴԴ, 617), *չաքարտել* («Բայց ու՛մ, ու՛մ կյանքն էր եղպես *չաքարտած*...», ԵԶ, III, 62), *արևակամ* («Լուրթ աչքերով *արևակամ* դաշտն են դիտում խավարամած...», ԵԶ, II, 89), *տխրալալուկ* («Ա՛խ, Վարդապե՛տ, գութ է հայցում *Տխրալալուկ* ամբողջ մի ազգ...», ՊՍ, 216), *սովագար* («Երեկ դեռ որբ ու *սովագար*... Եվ տվեցինք մենք ծովակալ...», ՊՍ, 249), *վարդահանդես* («...Թող բողբոջեն երկրիս վրա գարունները *վարդահանդես* ...», ՀՇ, II, 52), *ծովանդունդ* («Մերթ *ծովանդունդ* մարգարիտ ես ...», ՀՇ, III, 357):

Գ.Էմինը իր ստեղծագործություններում գեղարվեստորեն մարմնավորում է մեր ազգային բնավորությունը, փորձում է բացատրել և լուծել հասարակական կյանքի հանգուցային խնդիրները՝ անհատական-ոճական նկատառումներով ստեղծելով հեղինակային նորաբանություններ: Գիտակցելով, որ աշխարհի շատ լեզուների համեմատությամբ հայերենն ունի բառակազմական հզոր հնարավորություններ՝ նա դիմում է բառապաշարի հարստացման հենց այս ակունքին: Գիշտ է, անհատական կամքը բառապաշարի մեջ ավելի արդյունավետ է, քան քերականության ասպարեզում, սակայն բառակազմական նորմերը պետք է պահպանել: Հենց այս փաստը նկատի ունենալով՝ պրոֆ. Ֆ.Խլղաթյանը գրում է.«Բառապաշարային նորամուծությունները թույլատրելի են, եթե դուրս չեն գալիս լեզվի չափանիշների սահմաններից : Նոր բառեր կազմելիս պետք է հաշվի առնել նաև մի շարք պահանջներ՝ դրանք

¹ Վերջին երեք բառերի հեղինակը պրոֆ. Ֆ.Խլղաթյանն է:

պիտի լինեն տրամաբանորեն ու կառուցվածքորեն ճիշտ, բարե-
հնչուն և համեմատաբար կարճ»:²

Այս ճանապարհով աշխարհաբարի բառակազմը հարստաց-
րել են գրեթե բոլոր դասական հեղինակները՝ սկսած Սայաթ-
Նովայից, վերջացրած եղիշե Չարենցով ու Պ.Սևակով:

Գ.Էմինը զարգացնում է իր մեծ նախորդների ավանդները՝
բառաբարդման և բառածանցման ճանապարհով կազմելով նորա-
կերտ բառեր:

Խոսքաշարի նկատմամբ ունեցած հարաբերության առումով
Էմինի նորաբանությունները կարելի է բաժանել երկու խմբի: Առա-
ջինում դասվում են նրանք, որոնք ուղղակի ստեղծվել են խոսքա-
շարի պահանջով, դրանց ստեղծման անհրաժեշտությունը ծագել ու
հասունացել է բառական միջավայրում, որտեղ կարևոր նշանա-
կություն ունեն նույն կամ կից տողերում գտնվող բառի հնչյունա-
կան կազմը, տաղաչափական զանազան հանգամանքներ, ինչպես.

Տեր, տո՛ւր ինձ Մովսես մարգարեի պես

Հանել ու տանել ցեղն իմ հալածված

Այս Հայաստանից.--

Ո՛չ, --

Քարաստանից,

Ո՛չ, --

Մահաստանի՞ց,

Դեպի ապահով, ուրիշ մի եզերք ...³ (II, 172)

Համապատասխան բառական միջավայրում «մահաստան»
բառի առաջացմանը նպաստել են կից տողերում գտնվող «Հայաս-
տան», «քարաստան» բառերի հնչյունական կազմը, տաղաչափա-
կան զանազան հանգամանքներ:

Մեկ այլ հատվածում հաջորդող բառի համաբանությամբ
ստեղծվել է նախորդը: «Եղած-չեղած» կայուն կապակցության հա-
մաբանությամբ բանաստեղծը կազմում է գրաբարատիպ արտա-
հայտություն.

Ո՞վ միտք հղացավ –

Դժոխք արարել

Եղյալ ու չեղյալ դրախտի տեղում... (II, 171)

² **Ֆ. Խլղաթյան**, Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի լեզուն և ոճը,
Եր., 1988:

³ **Գ. Էմին**, Երկերի ժողովածու, հ. I, II, Եր., 1985: Այստեղ և այսուհետև
կնշվեն միայն համապատասխան հատորը և էջը:

-/ա/վարի վերջածանցը հայերենի կենսունակ վերջածանցներից է և մի շարք բառեր է կազմում(**մարդավարի, քաղաքավարի, տնավարի, հայավարի** և այլն): Սրանց օրինակով բանաստեղծը կազմել է **ծառավարի, քարավարի** բառերը.

Եթե մահանալ՝ կանգնած մահանալ
Եվ այն էլ ոչ թե դժվար, տանջանքով
Ո՛ր ... մարդավարի՝

Գլուխը ահից խփելով պատին.

Այլ՝ **ծառավարի,**

Այլ՝ **քարավարի** –

Հանգի՛ստ,

Հպա՛րտ ու

Արժանապատի՛վ ... (II, 198)

Հայերենի բառակազմական գործուն կաղապարով է կազմված նաև **սնկաբույր** բառը: Մեր լեզվում գոյություն ունեն **բույր** վերջնաբաղադրիչով մի շարք բարդ բառեր (խնկաբույր, անուշաբույր, վարդաբույր): **Սնկաբույր**-ը կազմված է դրանց համաբա-
նությանը.

Լռու լեռներում անտառ կա վայրի,

Վայրի անտառում մուժ կա **սնկաբույր,**

Սնկաբույր մուժում ժայռեր վիթխարի

Եվ ժայռերի տակ վճիտ մի աղբյուր: (I, 57)

Բերված նորակերտ բառերն, անշուշտ, հանգավորման պահանջի արդյունք չեն միայն, այլ առաջացնում են իմաստային նուրբ խաղեր (**Հայաստան-քարաստան-մահաստան, մարդավարի-ծառավարի-քարավարի**):

Երկրորդ խմբում կարելի է դասել այն նորաբանությունները, որոնց առաջացումն այդպես ուղղակիորեն չի պայմանավորվում խոսքաշարային հանգամանքներով՝ որևէ բառի ազդեցությամբ, տաղաչափական որևէ նկատառումով: Դրանց առաջացմանը վճռականորեն նպաստել է խոսքի բովանդակային կողմը: Այդ բառերը ստեղծվել են երևույթը խորքով ներկայացնելու, հասկացությունն անհրաժեշտ նրբերանգով ու պատկերավորությամբ արտահայտելու, իմաստային ընդհանրացումներ անելու համար:

20-րդ դարը գիտության և տեխնիկայի աննախընթաց զարգացման դար էր: Բայց մարդկության հսկայական դրական ձեռքբերումների կողքին կային նաև բացասական երևույթներ: Այսպես, ատոմի միջուկի ճեղքումը հսկայական առաջընթաց էր որպես էներգիայի նոր աղբյուր, բայց ատոմը ծառայեցվեց նաև բնաջնջմանը: Ահա թե ինչու ատոմի հիշատակումը հատկապես բանաստեղծական խոսքում ավելի շատ բացասական երանգ ունի: Գ.Էմինը, լի-

Գեղով դարի շունչն զգացող բանաստեղծ, չէր կարող շրջանցել ստոնի կործանարար հատկությունը: **-հար** (*հարել – հարվածել*), **-բեր** (*բերել*) բաղադրիչներով նա իր ոտանավորներից մեկում գործածում է **ատոմահար**, **ատոմաբեր** բառերը՝ խորությամբ և ճշգրիտ բնորոշելով դարաշրջանը:

Ահա ազգերն են ցոլում լույսի մեջ,

Մարմինը չքնաղ

Եվ կուրծքը ահա՝ ճերմակ ու հրաշք.

Ահա՛ ...

(Որտեղի՞ց թզնու տերև)

Այս **ատոմահար** անսքող դարում...) (II, 188)

Արդեն իջնում է

Մայթերի վրա ու տանիքների,

Այն **ատոմաբեր** անծրևը թունոտ,

Որ մեր շիրիմին է իջնելու թել-թել : (II, 189)

Օգտվելով հայերենի բառակազմական հարուստ հնարավորություններից՝ Էմինը կազմել է բառեր ածանցման և բառաբարդման բոլոր կաղապարներով: Նրա պոեզիայի բառապաշարում եղած նորաբանությունների մեծ մասը խոսքամասային պատկանելությանբ բաժանվում են երեք խմբի՝ բայական, գոյականական և ածականական կազմություններ :

Բայական նորաբանությունները կազմված են անվանական խոսքի մասերից, հիմնականում գոյականներից, սակավ՝ ածականներից՝ **-ել**, **-ալ** ձևությամբով: Հաճախադեպ են գոյականներից կազմված բայական նորակազմությունները, ինչպես՝ *նավել* (I, 180), *թևել* (II, 68), *քնարել* (I, 245), *բանտել* (I, 318), *մամռել* (II, 22), *մարմարվել* (I, 239), *պատանվել* (I, 119), *հասնիկանալ* (I, 85), *ծնեռանալ* (II, 255), *գարունանալ* (I, 85) և այլն :

Առավել մեծ թիվ են կազմում բարդ հիմքերից բաղադրված կազմությունները (*երգահանել* (II, 32), *հրթիռանալ* (I, 7), *հրթիռվել* (I, 127), *մաղձակալել* (II, 185), *սարսել* (*սարսռել*) (I, 125), *բանաստեղծանալ* (I, 85), *սիրասթափվել* (II, 63), *քնարերգել* (I, 29)):

Համեմատաբար քիչ են ածականներից կազմված նոր բառերը (*թացվել*, *ատոմահարել*, *արնածորել*, *լարափակել*, *աչագրկել*, *անձրևահարել* և այլն):

Գևորգ Էմինի ստեղծագործությունների բառապաշարում հանդիպում են նաև նորակազմ բայական հարադրություններ, ինչպես՝ *բոց հղանալ* («Թե կրակ են՝ *բոց հղանամ...*», I, 7), *բաց դառնալ* («Ձարթնեցի թառի ձենից, -աչքերս *բաց են դառել...*», I, 56), *բաց դառնալ* («Արցունքից *բաց են դառել...*», I, 56), *երգ քանել*

(«Որից տենչում էր հոգիս *երգ քամել ...*», I, 47), *ոյս լուծել* («Տենչում էր *ոյս լուծել* որդու ձեռքով...», I, 122), *արևածեծ լինել* («Շոգը *արևածեծ եղած* գառաճցում էր...», II, 36):

Գոյականական նորակազմ բառերի մեջ թե՛ թվով, թե՛ հաջող կազմությամբ և թե՛ պատկերավորությամբ աչքի են ընկնում անվանական հարադրությունները, որոնք իրենց գեղարվեստանկարչական լիցքով ակտիվացնում են խոսքը : Օրինակ՝ *ալիք-փրփուր, արծաթ -սուտակ, աղա-հարուստ, անձրև-ցող, անպ-եղնիկ, անպ-գառնուկ, դեղ-բուժակ, երգ-կոչ, ժայռ-կանք, ծաղիկ-հրթիռ, կիրք-կրակ, մարտիկ - պոետ, մահ-այգեպան, մարդ-արքա, շուշան-վարդ, սինի-լճակ, ցնորք-սեր*: Ահա բնագրային մի քանի օրինակներ՝

Անպ-եղնիկները փախչում են հեռու՝
Երեմակ բաշերը կրակով օծուն... (I, 57):

Ես ընդունում եմ շքերթը գարնան
Եվ երգ-կոչերով նրան ողջունում ... (I, 23):

Անպ-գառնուկներն են մայում երկնի մարագից... (I, 24):

Ծաղիկները ... **անձրև- ցողից** թաց են լինում ... (I, 108):

Փակել արկով ճշմարտության
Ռադիո-ռեխը նրա ստի ... (I, 355):

Եվ բավարական **սինի-լճակում**,
Որ ոսկրածուծն է ոսկրոտ սարերի,
Կիմանաս, որ ես չեմ ճամարտակում ... (II, 144):

Բայց փորձիր վառել լույսը սենյակի,
Եվ ... հետք չի մնա այս **կիրք-կրակից**... (II, 75):

Երկրագունդն իրեն բախտից կորցրել,
Լուսնին, աստղերին և Մարսին հրե
Նետում է **ծաղիկ-հրթիռի** փնջեր... (I, 132):

Օգտագործելով հայերենի բառաբարդման կանոնների բազմազանությունը՝ Գ.Էմինը կերտել է գոյականական և ածականական բազմաթիվ բառեր: Բառաբարդման եղանակով կազմված գոյականական նորաբանություններից են *բանտահոտ* («*Բանտահոտ* ավտոն ոստիկանական...», I, 373), *հայրենամարտ* («*Հայրենամարտի*

ահեղ ժամին ...», I, 138), *մածնակաթ* («Ինչպես փայտե գրպան է խոնարհվում *մածնակաթի* առաջ...», I, 311), *մենատուն* («Պահվեց նկուղում իր *մենատան* ...», I, 39), *մտքադաց* («Բայց այս ամենը արդեն եղել է.- Այս սատղացը, Այս ... *մտքադացը*...», II, 308), *տիֆահոտ* («Թող այդ *տիֆահոտ* տնակն ու գնա ...», II, 144), *մածներգ* (I, 311), *սնկաբույր* (I, 57) բառերը:

Բառաբարդման եղանակով կազմված ածականական նորաբանությունները ավելի սակավաթիվ են (*աղեկոծ* («Եվ ի լուր հայոց *աղեկոծ* կանչին...», I, 243), *դափնեզուրկ* («Հայոց Պառնասուն *դափնեզուրկ* ու սև ...», II, 112), *երգակերպ* («Դափ նվագողի *երգակերպ* լացին», II, 212), *մածնածախ* («*Մածնածախ* մի գեղջուկ էր նա...», I, 309), *քեռանման* («Ով ծնեց այս *քեռանման* պատանին...», I, 310), *անձրևահար* (I, 291), *ատոմահար* (II, 188), *ատոմաբեր* (II, 188), *գաղտնատես* (II, 236):

Ածանցումը բառակազմության առավել բարդ եղանակ է: Մեր լեզուն հարուստ է ածանցներով, որոնց գործառության համար դարերի ընթացքում մշակվել են կայուն և որոշակի օրենքներ: Իբրև բառակազմական ձևույթներ՝ ածանցներն այսօր ունեն գործածության բավականին լայն շրջանակներ: Օգտագործելով գոյականակերտ, ածականակերտ, մակբայակերտ ածանցներ՝ Գ.Էմինը հայերենի բառակազմական կանոններին համապատասխան կերտել է ածանցավոր բաղադրություններ: Ահա առավել հաջողված նորակազմ ձևերի մի քանի բնագրային նմուշներ.

Այն, ինչ շահել են,
Մի բլուր է խեղճ.-
Որտե՞ղ մնաց իմ
Երգի ու փառքի **Մասիությունը**...(II, 233):

Իմ փոշոտ, **հուշոտ** Երևան,
Նորքի հետ բարով մնացեք,
Ես կերթամ կրակի բերան,
Դուք խաղաղ ու զով մնացեք...(I, 122):

Գ.Էմինի բառապաշարում նկատելիորեն հաճախադեպ են **-ում** ածանցով բաղադրված բառերը, որոնք կազմվում են բայանուններից և ցույց են տալիս առարկայացված գործողություն: Օրինակ՝ *լքել-լքում*, *սպանել-սպանում*, *օղակել- օղակում*, *անհղացում*:

Հանդիպում են և այլ ածանցներով կերտված բաղադրություններ, ինչպես՝ **ուրթում** – *պալատություն*, *պատանություն*, *մասիություն*, *մածներգություն*, **-ստան** – *մահաստան*, **-ոտ** – *հուշոտ*, *նոթոտ*, *տենդրոտ*, *քնոտ*, **-ում** – *շողում*, *նվագում*, *նագում*, *ոսկեծփում*,

ածուն(ջուր), -եղեն - ձյունեղեն, -յան - ատոմյան, սողոմ-գոմորյան, -ային - զանգվային (հեղեղ), -յալ - մերկացյալ(կին), -որեն - եղբայրորեն, -(ա)վարի - քարավարի, ծառավարի և այլն:

Այստեղ բերված են նորակերտ համարվող այն բառերը, որոնք չկան Ստ.Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում», Է.Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» և Գ.Էմինի նախորդների՝ Իսահակյանի, Թումանյանի, Տերյանի, Մեծարենցի, Վարուժանի, Չարենցի, Դեմիրճյանի և այլոց ստեղծագործություններում:

Այսպիսով՝ Գ.Էմինը, զարգացնելով իր մեծ նախորդների ավանդները նաև բառաստեղծման ասպարեզում, ստեղծել է բազմաթիվ նորակազմ բառեր, որոնք, սակայն, հիմնականում հեղինակային են և ընդհանուր լեզվում լայն կիրառություն չունեն: Իր ստեղծագործության լեզվում դրանք տեղին են, պատճառաբանված և խոսքին տալիս են պատկերավորություն ու արտահայտչական մեծ լիցք:

Համառոտագրություններ

1. ԱԻ - Ա.Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1973:
2. ԴԴ - Դ.Դեմիրճյան, «Վարդանանք», Երևան, 1957:
3. ԵՉ - Ե.Չարենց, Երկերի ժողովածու, հ. II, III, Երևան, 1962:
4. ՀԹ - Հ.Թումանյան, Երկերի ժողովածու, հ. I, II, Երևան, 1950:
5. ՀՇ - Հ.Շիրազ, Քնար Հայաստանի, հ. II, III, Երևան, 1964:
6. ՊՍ - Պ.Սևակ, Անլռելի զանգակատուն, Երևան, 1966:

**ԳՈՒՆԱՆՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԴԱՐԶՎԱԾԱՅԻՆ
ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Ինչպես ամեն մի լեզվի, այնպես էլ հայերենի համար դարձվածքների առաջացման աղբյուր է կենդանի լեզուն, որի մեջ կարևոր տեղ են զբաղեցնում գունանուններն ու գույնի գաղափար արտահայտող բառերը: Ծիշտ է նկատված, որ «ելնելով դարերի փորձից, երբեմն էլ սնահավատությունից՝ ժողովուրդը որոշակի կապ է դնում գույների խորհրդանշական իմաստի և դրանց հետ կապված որևէ երևույթի տրամաբանական իմաստների միջև»¹:

Արդեն եղած դարձվածքների համաբանությամբ շարունակում են կազմվել դարձվածային նոր միավորներ, որոնք ստեղծվում են գրողների, հրապարակախոսների և անհատների կողմից՝ խոսքը ոճավորելու և խոսքային տվյալ իրավիճակում ասելիքն ավելի պատկերավոր և արտահայտիչ դարձնելու նպատակով: Ստեղծված կապակցությունների մեծ մասն ընդհանրանում է և դառնում համագործածական, իսկ մյուս մասը կարող է չտարածվել և մնալ որպես դիպվածային:

Գունանուններով կազմված դարձվածային նորաբանություններում գույն ցույց տվող բառերը, միանալով այլ բառերի հետ, նոր իմաստ են հաղորդում կապակցությամբ: Դարձվածային միավորը, որի առաջացման համար հիմք է հանդիսանում վերաիմաստավորված գունանունը, սկսում է առանձնանալ իր կառուցվածքաիմաստային հատկանիշներով և ընկալվում որպես դարձվածային նորաբանություն, հաստատվում է լեզվում և նշվում բառարաններում: Այսպիսի դարձվածքներում «հատկանիշը դառնում է որևէ հասկացության, առարկայի, երևույթի խորհրդանիշ... որոշակի կապ կա խորհրդանշական իմաստի և այն երևույթի տրամաբանական իմաստի միջև, որն անվանվում է տվյալ գույնով»²:

Հայտնի է, որ *կանաչ* գունանունը խոսքի մեջ փոխաբերաբար գործածվում է հաջողության, երիտասարդության, զարթոնքի, *կարմիրը*՝ ուրախության, բարեհաջողության, *կապույտը*՝ ցնորքի, *սևը*՝ դժբախտության, մահվան, անեծքի, ինչպես նաև խռովության, ամոթի, *սպիտակը*՝ մաքրության, անաղարտության իմաստներով:

Վերջին տասնամյակներում այդպիսի կապակցություններ շատ են ստեղծվում և տարածվում հատկապես զանգվածային

¹ *Խ.Քաղիկյան*, Դարձվածային ոճաբանություն, Եր., 2000, էջ 115:

² *Ռ.Սկրտչյան*, Գույներ անվանող ածականների արտահայտչական հնարավորությունները, ՀԼԳԴ, 1985, N3, էջ 48:

լրատվության միջոցների շնորհիվ, որոնք ժողովրդի սոցիալ-տնտեսական հարաբերությունների և հասարակական-քաղաքական փոփոխությունների արտացոլման ամենաարդյունավետ ուղիներն են:

Մեր աշխատանքում ընդգրկել ենք գունանուններով կազմված բոլոր դարձվածային նորաբանություններն ու շրջասական կայուն կապակցությունները, որոնք հայերենի բառապաշարի մեջ են մտել վերջին տարիներին, ինչպես նաև այն միավորները, որոնք ժամանակագրական առումով ավելի վաղ են ստեղծվել (60-80-ական թթ.), մասամբ ընդհանրացել են, սակայն վկայված չեն արդի հայերենի բացատրական բառարաններում:

Շրջասությունները, ունենալով գլխավորապես անվանական արժեք, վերափոխատարված լինելու հանգամանքով նույնպես հարում են դարձվածքների: Մեր նպատակից դուրս համարելով դարձվածքների և շրջասական կայուն կապակցությունների տարբերակումը միմյանցից՝ բավարարվել ենք միայն յուրաքանչյուր դեպքում համապատասխան նշումներով³:

Նյութում ընդգրկված դարձվածային նորաբանությունները քաղել ենք մասնուից, գեղարվեստական գրականությունից, վերջին տարիներին լույս տեսած բառարաններից⁴, ինչպես նաև օգտագործել ենք մեր քարտագրումները:

Գունանուններով կազմված դարձվածային նորաբանությունները կազմվում են տվյալ լեզվում գործող բառագուգորդումների ավանդական կաղապարների հիման վրա և մեծ մասամբ արտացոլում են ժողովրդական լեզվամտածողությունը: Մեր ընտրանքում կան նաև այնպիսի դարձվածքներ ու շրջասություններ, որոնց մի մասը հայերենին է անցել թարգմանության ճանապարհով և գործածական է նաև այլ լեզուներում: Մեր լեզվի մեջ դրանց տարածումը և համագործածական դառնալը պայմանավորված է նրանով, թե տվյալ կապակցությամբ, դարձվածքով բնութագրվող երևույթը կամ առարկան որքան ընդունելի է հասարակության կողմից:

Ինչպես գիտենք, դարձվածքները բառապաշարի կարևոր մասն են կազմում և հիմնված են նրա ավելի դիմացկուն ու կենսունակ մասի՝ բառային հիմնական ֆոնդի վրա: Իմաստային բազմազանության տեսակետից առավել հագեցված լինելով՝ գունանունները հաճախ են դառնում դարձվածային արտահայտությունների առաջացման ու նորացման աղբյուր:

³ Այսուհետև շրջասությունները կնշվեն աստղանիշով:

⁴ Տե՛ս *Պ.Քեղիդյան*, «Հայերենի շրջասությունների բառարան», Ս.Էջմիածին, 2002, *Խ.Քաղիկյան*, «Ռիտմնական դարձվածաբանական բառարան», Եր., 2002, *Ս.Էլոյան*, «Արդի հայերենի նորաբանությունների բառարան», Եր., 2002:

Դարձվածքների զգալի մասն առաջանում է ժողովրդախոսակցական լեզվում և գրողների կողմից մշակվելով՝ աստիճանաբար դառնում է համագործածական և մուտք գործում գրական լեզու: Դարձվածային արժեք ունեն հիմնականում միջուկ գունանունները, որոնք իմաստային տեսակետից անկախ ածականներ են, դրանց գունային նշանակությունն առաջնային է և չի բնորոշվում այլ գունանիշ ածականների միջոցով: Հայերենում գունանուններով կազմված «դարձվածային միավորների առաջացումը պայմանավորված է ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական գործոններով. այսինքն՝ թե հանրությունն ինչպիսի բառեր է գունային երանգով զուգորդելի համարում տվյալ գունանվան միջուկի հետ, կամ էլ այդ բառերով նշանակվող առարկաներն ինչ դեր ունեն տվյալ հանրության կյանքում»⁵:

Ստորև բերում ենք այն դարձվածային նորաբանությունները, որոնք կազմված են գունանուններով և աստիճանաբար համագործածական են դառնում մեր լեզվում:

Գորշ գունանունը գործածվում է հետևյալ դարձվածային նորաբանություններում:

Գորշ-կարդինալ - բացասական երանգավորում ունի, նշանակում է ոչնչով աչքի չընկնող, վատ, մռայլ, դավադրություններ նյութող մարդ:

Գորշագույն վառելիք* - քարածուխ, գորշ վերարկուներով մարդիկ* - գործակալներ:

Դարչնագույն գունանունով կազմված նորաբանությունները բացառապես բացասական երանգավորում ունեն և արտահայտում են անցանկալի, ոչ դրական երևույթներ:

Դարչնագույն ժանտախտ* - մարտաֆիլների և նմանների տարածումը երիտասարդության շրջանում, դարչնագույն խոց* - ծավալվող ֆաշիստական շարժում, դարչնագույն տարիներ* - հիտլերյան տիրապետության շրջանը Գերմանիայում:

Երկնագույն գունանունով ստեղծված նորաբանությունները շատ չեն: Դրանցից է, օրինակ, երկնագույն ապրանք* - գազ: Նույն իմաստն են արտահայտում երկնագույն բոց*, երկնագույն հեղուկ*, երկնագույն հրաշք*, երկնագույն կրակ*, երկնագույն վառելիք* շրջաստությունները: Սրանց հոմանիշ են կապույտ գունանունով և վերոհիշյալ գոյականներով կազմված շրջասական նորաբանությունները: Օրինակ՝ երկնագույն արյուն* (ազնվական ծագում) նորաբանությունը հոմանիշ է կապույտ արյուն ավելի վաղ կայունա-

⁵ Լ.Խաչատրյան, Գունանուն բաղադրիչով համեմատություն-դարձվածային միավորներն արդի հայերենում, Բանբեր Երևանի համալսարանի, 1999, N1, էջ 15:

ցած դարձվածքին, երկնագուն հրեշտակ* նորաբանությունը՝ կապույտ հրեշտակին* (Մառլեն Դիթրիխ), երկնագուն երթուղիներ*-ը կապույտ երթուղիներ*-ին (ավիատուղիներ), երկնագուն ճեպրնթագ*-ը կապույտ ճեպրնթագ*-ին (մետրո):

երկնագուն գունանունով են կազմվել նաև երկնագուն ժամանակաշրջան* (երիտասարդ տարիք), երկնագուն ֆիորիդների երկիր* (Նորվեգիա) շրջասությունները⁶:

խարտյաշ գունանունով կազմված են խարտյաշ աստղ* (նույն իմաստով՝ կապույտ հրեշտակ, երկնագուն հրեշտակ) շրջասությունը՝ Մառլեն Դիթրիխ, ինչպես նաև՝ խարտյաշ բոր* (ժանգ): Սրանք խիստ սահմանափակ գործածություն ունեն, գրքային են և մեր կարծիքով, միտում չունեն ընդհանրանալու:

Բավականին նոր դարձվածային արտահայտություններ են ստեղծվել դեղին գունանունով, օրինակ՝ դեղին ազրեսոր* - անապատ, դեղին կայսր* - չինացիների նախահայրը՝ Խուանդին, որն իբր ապրել է 4000 տարի առաջ և հիմք է դրել չինական քաղաքակրթությանը: Դեղին ջարդ* կապակցությունը, որ վերջին տարիներին է մտել հայոց լեզվի բառապաշարի մեջ, նշանակում է մշակութային արժեքների անխնա վաճառք: Բացասական երանգավորում ունեցող շրջասական կապակցություններն են դեղին սատանայի քազավորություն* – նշանակում է կապիտալի տիրապետություն, սրան հոմանիշ է դեղին դև շրջասությունը, որ նույն իմաստով գործածել է Պ.Սևակը: Դեղին քարտ զույգ տալ իմաստային նորաբանությունը, որ սկզբնապես կապված է եղել ֆուտբոլային խաղի կանոնների արտահայտման հետ, այժմ ընդարձակել է իր իմաստը և ձեռք է բերել ընդհանրապես որևէ օրինագանցության նախազուշացման և կարգի հրավիրելու իմաստ:

Պրոֆ. Խ.Բաղիկյանը դարձվածային նորաբանությունների շարքն է դասում նաև հեղինակային դեղին առասպել, դեղին հորանջ, դեղին մորմոք, դեղին պատարագ, դեղին փոթորիկ կապակցությունները՝ Մեր կարծիքով՝ սրանք ուղղակի գունանուն բաղադրիչով կազմված մակդրային կապակցություններ են՝ գործածված փոխաբերական նշանակությամբ: Դիպուկ է ասված, որ «հուզական երանգավորում ունեցող բառերը խոսքի մեջ գործածվելիս միշտ կարող են մակդիր լինել, իսկ այսպես կոչված «չեզոք» բառե-

⁶ երկնագուն գունանունով ստեղծված դարձվածային միավորները, որպես կանոն, հատուկ են գրական լեզվին:

⁷ Խ.Բաղիկյան, նույն գրքում, էջ 117: Յեղինակն այս շարքում է գետեղում նաև ճերմակ բոգ, ճերմակ երգ, ճերմակ ողբ, ճերմակ սուգ, ճերմակ հրաշք, ճերմակ քամի, սև ամպրոպ, սև կայծակ, սև կարկուտ, սև մարախ, սև մրուր, սև տարերք և այլն:

րը՝ միայն փոխաբերական գործածությամբ»⁸: Այսպիսի կապակցությունների գործառնական ուլորտը, ինչպես գիտենք, գեղարվեստական խոսքն է, հատկապես չափածոն, որը թույլ է տալիս ոճական արտահայտչական նպատակով որոշակի խոսքային միջավայրում անհատական նորաբանությունների գործածությունը: Սրանք ժամանակի ընթացքում թերևս կարող են կայունանալ, գործածվել այլ հեղինակների կողմից, համընդհանուր ճանաչում գտնել և համալրել դարձվածքների շարքը: Սակայն այսօր, թվում է, վաղ է սրանք դարձվածքներ համարելը:

Ճերմակ գունանունը, որ սպիտակ գունանվան ժողովրդախոսակցական տարբերակն է, հաճախ է նորագույն դարձվածքների ու կապակցությունների առաջացման աղբյուր դառնում, օրինակ՝ Ճերմակ արյունահեղություն* - արտագաղթ: Ճերմակ ձեռնոց դարձվածքը, որը նշանակում է նաև մաքրություն, անբասիրություն, մաքուր խիղճ, հաճախ ունի նաև հեզմական իմաստ:

Հազվադեպ է Ճերմակ պաստառ* կապակցությունը «կինեմատոգրաֆիա»: Ընդհանրապես, Ճերմակ բաղադրիչով կապակցությունները բնորոշ են արևմտահայերենին:

Տարբեր գույների անուններով բաղադրված դարձվածքների մեջ մեծ թիվ են կազմում կանաչ գունանունով կապակցությունները: Կանաչ ածականը, վերաիմաստավորված ձևով հանդես գալով իրականում այդ հատկանիշը չունեցող գոյականների հետ, կարող է կապակցությանը հաղորդել, օրինակ, հարատևության, երիտասարդության, ուրախության գաղափար: Կանաչ լույս դարձվածքը դրվելով իմել, վառել անորոշ դերբայների հետ, կազմել է եռանդամ նոր կառույց, որ նշանակում է թույլտվություն, արտոնություն ստանալ, ընդառաջել, ճանապարհ բացել:

Ս.Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանում» իբրև իմաստային նորաբանություն առանձնացվում է կանաչ-կարմիր դարձվածքը՝ ջահել, ուրախ նշանակությամբ: Սակայն մեր լեզվում լայն գործածություն ունեցող կանաչ-կարմիր կապել դարձվածքը հուշում է, որ կանաչ և կարմիր գունանունների զուգորդումը կատարվել է վաղուց ի վեր:

Վերջին տարիներին, երբ անխնա հատվում էին կանաչ ծառերը, տարածվեց կանաչ գենոցիդ դարձվածքը, իսկ հակառակ երևույթը՝ ծառատունկը, գյուղատնտեսության կտրուկ բարեփոխումները բնութագրվում էին կանաչ հեղափոխություն*, կանաչ շինարարություն*, կանաչ զգեստ հագցնել* շրջասություններով:

⁸ **Ֆ. Գ. Խլղաթյան**, Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Եր., 1976, էջ 69:

Քիչ գործածական և մեր կարծիքով դիպվածային միավորներ են այս գունանունով ստեղծված հետևյալ կառույցները՝ կանաչ արտադրամաս* - ապրանքային բուսաբուծություն, կանաչ աշխարհամաս* - Ավստրալիա, կանաչ բերեւներ* - ԱՄՆ-ի դեսանտայիններ, կանաչ բերքահավաք*, - անասնակերի ամբարում, կանաչ բժշկություն* - բուսաբուծություն, կանաչ դաշտ* - 1. ֆուտբոլի խաղադաշտ, 2. ֆուտբոլ, կանաչ դատախազ* - անտառը՝ որպես կալանավորների փախստավայր, կանաչ դատախազին հանձնվելի* - կալանավայրից փախչել, կանաչ դեղատուն* - դեղաբույսեր, կանաչ եվրոպա* - «Ընդհանուր շուկայի երկրների» միացյալ գյուղատնտեսություն, կանաչ թատրոն* - խաղադաշտի վրա ներկայացում, կանաչ թորեր* - ջունգլիներ, անտառներ, կանաչ համազգեստավոր* - սահմանապահ, կանաչ հրեշ* - զինեմոլություն, կանաչ մունդիրներ* - զինվորականներ, կանաչ ոսկի* - թեյ (բույսը), կանաչ սեղան* - 1. թղթախաղ, 2. սեղանի թեմիս, կանաչ սեղանի սիրահար* - խաղամուլ, թղթամուլ:

Դարձվածային տարբերակներ են կանաչ թուրք և կանաչ սատանա կապակցությունները՝ դուարի նշանակությամբ, նաև կանաչ թուլյն* / կանաչ օձ - ոգելից խմիչք:

Տարածվելու միտում ունի կանաչ բարեկամ* շրջասությունը՝ բնության նշանակությամբ:

Կապույտ գունանունը կազմում է հետևյալ դարձվածային միավորները՝ կապույտ գիշերներ – սեռական սանձարձակություն, հեշտասիրություն, զեխություն, կապույտ եթեր*, կապույտ էկրան* - հեռուստատեսություն, կապույտ երակ* - գետ կամ ջրանցք քարտեզի վրա, կապույտ համազգեստավորներ* - ոստիկաններ, կապույտ մայրցամաք* - Խաղաղ օվկիանոս, կապույտ օձիքավոր*- Ամերիկայում ֆիզիկական աշխատանքով զբաղված բանվոր: Այս շրջասությունը համանիշ է կարմիր օձիքավոր* կապակցությամբ:

Կարմիր գունանունը դարձվածքներում գործածվում է որպես բարեհաջողության, ուրախության խորհրդանիշ:

Ի զանազանություն սպիտակ ջարդ դարձվածային միավորի՝ վերջին տարիներին գործածության մեջ մտավ կարմիր կտորած կամ ջարդ դարձվածքը, որ նշանակում է ժողովրդի զանգվածային արյունահեղություն, ֆիզիկական բնաջնջում: Կարմիր գունանունով են կազմված՝ կարմիր լապտերների թաղամաս* - անառականոցների շարք, կարմիր մուրդակ* - Մարս (Չրատ), կարմիր ոսկի* - տուֆ, կարմիր սատանա* - ԽՍՀՄ վարչակարգ, կարմիր վտանգ* - բոլշևիզմի՝ կոմունիզմի վտանգը, կարմիր քվեարկություն – կոմունիստների օգտին կատարվող քվեարկություն, կարմիր օձ* - զինի:

Դարձվածային միավորներ հազվադեպ են կազմվում նարնջագուլն և շագանակագուլն բաղադրիչներով:

Նարնջագուլն գունանունով հայտնի է նարնջագուլն գնդակ* շրջասությունը - գնդակով հոկեյ, նարնջագուլն մակարղակ – նախապատերազմական վիճակ: Վերջինս տարածվեց Ամերիկայի կողմից Իրաքի դեմ պատերազմական գործողություններ ծավալելու կապակցությամբ: Իսկ շագանակագուլն քզուկներ* շրջասությունը անվանում է մի տեսակ աստղաբույլ՝ նորերս հայտաբերված ամերիկացի աստղագետների կողմից:

Սև գունանունը, հայտնի է, խոսքի մեջ փոխաբերաբար գործածվում է որպես սգո, անհաջողության խորհրդանիշ: Այս գունանունով կան և շարունակում են կազմվել նոր դարձվածային միավորներ՝ զանազան իմաստային նրբերանգներով: Լինելով սգո, տխրության նշան՝ սևը հանդես է գալիս դժբախտության, մահվան, անեծքի, ինչպես նաև ամոթի, խռովության նշանակությամբ:

Բոթաբեր, չարագուշակ մարդուն բնորոշում են սև ագռավ դարձվածքով, սև հարալ ժողովրդախոսակցական դարձվածքը նշանակում է մահվան լուր: Ինչ-որ բանի կամ մեկի նկատմամբ չարամիտ, թշնամական, վատատեսական վերաբերմունքն արտահայտում են սև ակնոցներով նայել դարձվածքով, իսկ որևէ մեկի կամ երևույթի բացասական, վատ հատկանիշը մատնացույց անելու համար գործածվում է սև կողմ դարձվածքը, սև լուսաբացը ազգին սպառնացող վտանգի արտահայտություն է:

Սև գունանունով են կազմվել և քիչ թե շատ տարածվել սև աշխարհամաս* - Աֆրիկա, սև Ամերիկա* - Ամերիկայի սևամորթ բնակչություն, սև հունձը - դառը, տխուր հունձը, սև ցուր* - գլաուկոմա⁹, սև քարոզչություն* - վարկաբեկիչ քարոզչություն_կապակցությունները:

Եզակի գործածություն ունեն հետևյալ դարձվածային կապակցությունները՝ սև աղամանդ* - սևամորթ երգչուհի Լեոնտինա Փոյախ, սև ապրանք*- վաճառվող սևամորթ ստրուկ, սև գիշեր* - տառապանք, սև բիզնես* - մաքսանենգություն, սև բլուջե* - գաղտնի ռազմական ծախսեր, սև երկիր* - ածխահանքերի շրջան, սև խորշ* - նյութի գերհոծ խտացում, սև մահ* - ական, սև մարգարիտ* - Պելե, սև մարդ* - դատական քննիչ, սև վեպ* - ցեղապաշտական ստեղծագործություն, սև տեխնոլոգիա- գրպարտչական տեխնոլոգիա, սև տեռոր* - հետադիմական, ֆաշիստական ջարդ, որոնցից մի քանիսը վստահաբար կարելի է դիպվածային համարել:

⁹ Խոսակցական լեզվում գործածվում է «սուրճ» նշանակությամբ: Ունենք նաև որպես գետի անուն:

Զգալի թվով դարձվածային նորաբանություններ են գործածվում սպիտակ գունանունով: Դրանք հիմնականում դեռևս չկայունացած, դիպվածային նորակազմություններ են, թարգմանություններ այլ լեզուներից: Այսպես, սպիտակ ակազիաների երկիր* - Յունգարիա, սպիտակ արևի գավակ* - յակուտ, սպիտակ արջերի երկիր*- Սիբիր, սպիտակ գաղութ* - Օլսթեր (Յյուսիսային Իռլանդիա), սպիտակ գերեվաճառություն* - սպիտակամորթների գաղտնի վաճառք, սպիտակ եղեռն* (ցեղասպանություն) - բռնաձուլում կամ ազգաթափում, սպիտակ թույն* (մահ) – թմրադեղ, թմրանյութ, սպիտակ խալաթավոր* - բժիշկ, բուժաշխատող, սպիտակ մայրցամաք*-Անտարկտիդա: Սպիտակ ոսկի* շրջասությունը գործածվում է և՛ պլատինի (արևնտահայերենում՝ Ճերմակ ոսկի*), և՛ բամբակի, հազվադեպ՝ շաքարի համար, սպիտակ փոշի* - թմրանյութ, սպիտակ օձիքավոր* - գրասենյակի պաշտոնյա:

Ավելի հաճախ օգտագործվում է սպիտակ քիծ դարձվածքը, որ նշանակում է որևէ հարցադրման չլուծված կողմ, դեռևս չպարզված խնդիր: Կարմիր քարոզ-ի համաբանությամբ է ստեղծվել սպիտակ քարոզ դարձվածքը՝ անվանելու որևէ ազգի բարոյապես ճնշելու, ստրկացնելու, ժողովուրդների ուժացման քաղաքականությունը:

Վարդագույն գունանունը խորհրդանշում է ուրախ տրամադրություն, երջանիկ, պայծառ ապագա: Նույն իմաստով շարունակում են կազմվել նոր դարձվածային միավորներ, օրինակ՝ վարդագույն քաղձանք – ցանկալի ապագա, ուրախ կյանք, վարդագույն երազանք - ապագայի նկատմամբ ունեցած պայծառատեսություն, վարդագույն մատուցարանով մատուցել – իրականությունը գունազարդված, ոչ ճիշտ ներկայացնել, վարդագույն սեր* - լեսբոսականություն, վարդագույն քաղաք - Երևան:

Դարձվածային նորաբանություններն այսպիսով չսպառնալից են. շարունակվում է լեզվի, բառապաշարի փոփոխության ու զարգացման գործընթացը: Մամուլի և գեղարվեստական գրականության միջոցով օրեցօր տարածվում են նաև նոր դարձվածքներ, որոնք գրողի և լրագրողի լեզուն ազատում են չորությունից ու միապաղաղությունից, խոսքը դարձնում ավելի դիպուկ և ազդեցիկ:

ԲՆԱՊԱՏԿԵՐԸ ԲԱԿՈՒՆՑԻ «ՄԻՐՅԱԿ» ՊԱՏՄԱԿԱԾՔՈՒՄ

Հայ իրականության մեջ շատ է խոսվել ու գրվել Բակունցի ստեղծագործության մասին: Հատկապես կարելի է նշել Ռ. Իշխանյանի «Բակունցի լեզվական արվեստը» մենագրությունը¹, որտեղ հեղինակն ըստ ամենայնի քննել ու գնահատել է Բակունցի ստեղծագործությունների քնարականությունը, գրողի մարդասիրությունը, լեզվաոճական միջոցներով հերոսներին անհատականացնելու վարպետությունը, վերհուշն ու բնապատկերները: Բնության նկարագրություններն ընդհանրապես կարևոր դեր են խաղում գեղարվեստական գրականության մեջ:

Բակունցի բնապատկերը սոսկ բնության նկարագրություն չէ. այն բնության պատկերասրահ է, միջավայր, ուր ապրում և գործում է հայ գեղջուկն իր հոգեբանությամբ, խոհերով ու զգացմունքներով, նահապետական ապրելակերպով ու նախապաշարմունքներով, հայրենասիրությամբ, անցյալով ու ներկայով: Ջուգահեռ անցկացնելով բնության և մարդկային կյանքի միջև՝ Բակունցն արծարծում է բազմաթիվ խնդիրներ և տալիս դրանց լուծումներն ու պատասխանները: Նույնիսկ բնությանն է միահյուսում իր պատումներն ու պատմությունները, որոնք դառնում են նրա ստեղծագործությունների առանցքը: Իսկ այս բոլորին նպաստում է հեղինակի՝ հայրենի բնաշխարհի կատարյալ իմացությունն ու սերը, բնանկար ստեղծելու բարձր ճաշակն ու վարպետությունը:

Բակունցյան էջերը ծփում են բնության հրաշալի նկարագրություններով: Հայրենի բնությանը քաջատեղյակ գրողն ընթերցողին առաջնորդում է Հայաստանի տարբեր շրջաններ՝ Սյունիք, Սասուն, Լոռի, Արարատյան դաշտ: Հինավուրց երկրում բնությանը փարված ապրում է մարդն իր հույզերով, դառն ու դաժան կյանքով: Ահա Մթնածորի ճանապարհը, որ «առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում: ... Մի ուրույն աշխարհ է Մթնածորը, քիչ է ասել կուսական ու վայրի: Թվում է, թե այդ մոռացված մի անկյուն է այն օրերից, երբ դեռ մարդը չկար, և բրածո դինոզավրը նույնքան ազատ էր զգում իրեն, ինչպես արջը մեր օրերում»²: Կտրվում ենք իրական աշխարհից և տեսնում լոր, կաքավ, միրիավ, դեղին խլեզներ, գիշատիչ գայլեր, տանձ ու-

¹ Ռ. Իշխանյան, «Բակունցի լեզվական արվեստը», Եր., 1965:

² Ալսել Բակունց, Երկեր, Եր., 1986, էջ 28: Այսուհետև կնշվի միայն համապատասխան էջը:

տող արջեր, սրածայր ժանիքներով վարազներ... Սթնածորի կուսական ու վայրի բնության այս պատկերը դնելով պատմվածքի հենց սկզբում՝ Բակունցը կանխավ ստեղծում է համապատասխան տրամադրություն: Բնապատկերի ֆոնի վրա միանգամայն բնական են թվում անտառապահ Պանինը, նրա անմարդկային դաժանությունը: Մարդ և գիշատիչ գազան՝ Պանինը և ամեհի արջը, միահյուսվում են, և ընթերցողը երկընտրանքի մեջ է ընկնում պարզելու համար, թե ո՛վ է Ավիի դժբախտության պատճառը՝ ա՞րջը, թե՞ Պանինը:

Ընթերցողի մեջ նկարագրվելիք դեպքերին համահունչ տրամադրություն ստեղծելու համար պատմվածքը համապատասխան բնապատկերով սկսելու բակունցյան մեթոդը կիրառվում է նաև «Միրհավում»։ «Աշուն էր, տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ, դառնաշունչ քամիով, որ ծառերի ճղներից պոկում էր դեղնած տերևները, խմբերով քշում, տանում հեռու ձորերը: ... Այգում երիտասարդ կեռասենիները մրսում էին, քանուց խշշում» (72-73):

Հիմա էլ կանգնած ենք Կաքավաբերդի դեմ դիմաց («Ալպիական մանուշակը»)։ «Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, բերդի ստամնածն պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ, միայն սևին են անում բարձր բուրգերը: Հեռվից ավերակներ չեն երևում, և այնպես է թվում, թե բուրգերի գլխին հսկում կա, զոց են ապարանքի երկաթե դռները...» (135): Լեռնային Հայաստանի ավերակ բերդերի, քարե արձիվների, բրոնզափայլ լեռների մեջ հիանում ենք ալպիական մանուշակով, որը խորհրդանշում է հայ գեղջկուհու թշվառ ու հակասական կյանքը:

Եթե դառնաթափած աշունը, ձմեռնամուտը համապատասխան զուգորդումներ են առաջացնում վերջին անգամ այգի մտած Դիլան դայու հոգեկան ապրումների հետ, ապա «Ալպիական մանուշակում» գեղեցիկ բնապատկերը տրված է բնության մեջ ապրող մարդու կյանքի հակասականությունը ցուցադրելու համար:

Բնության բակունցյան նկարագրություններն ինքնանպատակ չեն. դրանք ամեն անգամ կապվում են հեղինակի ասելիքի հետ: Հեղափոխության դեպքերն են թևածում հայոց լեռնաշխարհում, և հեղինակը չի կարող անտարբեր մնալ, ուստի ընթերցողին տեղափոխում է Սյունիք՝ իր ծննդավայրը՝ խորհրդավոր ու ահարկու ժայռերում հնչեցնելու իր պատմություններն ու խոհերը, ինչպես նաև նկարագրելու իր բարեկամ բրուտների կյանքը: Շքեղ է բնությունը Ջանգեզուրում. բնապատկերը հագեցած է գրողի սիրով ու հպարտությամբ («Բրուտի տղան»)։ «Տերրասածն բարձրանում են ժայռերը՝ մեկը մյուսից խոժոռ և ահռելի: Ահա մեկը՝ ռնգեղջյուրի մռուրը հառել է մի ուրիշի, որ նման է վիթխարի գորտի: Նրանց մոտ մի ժայռ՝ կարծես ծագող արևի դեմ խոնարհվել է հեթանոս քրմուհին:

Նրանցից բարձր՝ քարե արծիվը ճիգ է անում թևերը թափահարելու և չի կարողանում» (165):

Հանկարծ հայտնվում ենք Սասնա լեռնաշխարհում ու ծանոթանում նրա բնությանը, որը կենդանի է ու շնչավորված («Ծիրանի փողը»): «Նրա հայրենիքը եղել է Սասունը, այդ խուլ երկրի ամենախուլ անկյունը, որտեղ ձորերը դառնում են կիրճեր և լեռների գագաթները՝ ապառաժներ: Տաք կիրճերում, լեռնային վտակների ափերին, կանաչում էր վայրի խաղողը, և նրա որթը մազլցում էր պղնձագույն ժայռերի վրա» (148-149): Չնայած Բակունցն այնքան էլ ծանոթ չէ Սասնա լեռնաշխարհին (նրա ծանոթներն ընդամենը պատմել են կոտորածի, գաղթի դաժան օրերի մասին, կամ էլ ինքն է կարդացել), բայց ըստ ամենայնի կարողանում է նկարագրել Սասնա խրոխտ լեռներն ու կիրճերը, լեռնային ժանգոտ վտակները, որոնց ափերին ծվարել էին աղքատ հյուղակիները: Բակունցը մեծ վարպետությամբ կարողանում է ընթերցողին մտովի տեղափոխել հայերի՝ հեռվում մնացած երկիրը:

Բակունցի բնապատկերում արևը խորհրդանշում է կյանքի հույսը և լույսը, իշխում են վառ գույները՝ կանաչը, ալ կարմիրը, բոսորագույնը, դեղնակարմիրը, մանուշակագույնը, լաջվարդը: Գիշտ է գրում Ռ.Իշխանյանը. «Բակունցի բնանկարների գույները ինչ-որ չափով հիշեցնում են սարյանական կտավների երանգները: Պատճառն, իհարկե, այն է, որ երկու դեպքում էլ նկարվող հայկական բնաշխարհն է»³: Երկու մեծությունները՝ Սարյանն ու Բակունցը, հայկական բնաշխարհը կերտած խոշոր վարպետներ են:

Բակունցի ստեղծած բնապատկերները ոչ միայն ստեղծագործական ներշնչանքի արդյունք են, ոչ միայն հայրենի երկրի գերազանց իմացության ու նրա նկատմամբ տածած սիրո վկայություն, այլ նաև հերոսներին տիպականացնելու, պատկեր ստեղծելու միջոց: Դիպուկ է գրում Ռ.Իշխանյանը. «Հայ գյուղացու կյանքն ամեն օր, ամեն պահ առնչվել է բնության կյանքի հետ, մի տեսակ միահյուսվել նրան, և պարզ է, որ Բակունցը որպես գեղագետ-հոգեբան չէր կարող իր պատկերած գյուղի, գեղջուկների կյանքին չմիահյուսել բնությունը»⁴: Այս անխզելի կապից է ծնվել Դիլան դայու կերպարը «Միրհավը» պատմվածքում. «Աշուն էր, տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ, դառնաշունչ քամիով, որ ծառերի ճղներից պոկում էր դեղնած տերևները, խմբերով քշում, տանում հեռու ձորերը: Նույնիսկ քարափի հաստաբուն կաղնին խոնարհվում էր քամու առաջ: Ամայի ձորերում, դեղնակարմիր անտառի և

³ *Ռ.Իշխանյան*, Բակունցի կյանքն ու արվեստը, Եր., 1974, էջ 324:

⁴ *Ռ.Իշխանյան*, Բակունցի կյանքն ու արվեստը, Եր., 1974, էջ 315:

հնձած արտերի վրա իջել էր մի պայծառ տխրություն: Ջինջ օդի սառնության մեջ զգացվում էր առաջին ծյունի շունչը:

Այգում երիտասարդ կեռասենիները մրսում էին, քամուց խշշում: Սիմինդրի երկար տերևները թրերի նման քսվում էին իրար, պողպատի ձայն հանում: Կարծես ձիավորներ էին արշավում իրար դեմ, և սիմինդրի տերևը, որպես բեկված սուսեր, ընկնում էր քամու առաջ: Արևի տակ ժպտում էր վերջին արևածաղիկը և օրորում դեղին գլուխը» (72-73):

Այս բնապատկերը բնութագրում է հերոսին՝ Դիլան դայուն: Նա մի առաքինի, համեստ ու ազնիվ մարդ է, որը դժվար կյանք է ունեցել: Որպես չոր տերև, անընդհատ քշվել է դառնաշունչ քամուց: Եվ ի՞նչ կարող էր անել այդ դաժան կյանքում, եթե «նույնիսկ քարափի հաստաբուն կաղնին խոնարհվում էր քամու առաջ»: Ու հիմա Դիլան դային, «որպես բեկված սուսեր», ապրում էր իր կյանքի աշունը: Ձղջում ու ափսոսանք կար նրա հայացքում: Նա ապրում էր «մի պայծառ տխրություն»։ այգում՝ հնձանի պատի տակ նստած՝ վերհիշում էր իր անցած-գնացած կյանքը: Նրա հիշողությունը «տարուբեր էր լինում, ինչպես քամիների բերանն ընկած չոր տերև: Քամուց հնձանի դմակը մեղմ ճռնչում էր, և մաշված դուռը դողդոջ երգում էր մի հին երգ» (73): Հնձանի մաշված դռան «դողդոջ երգը» նրա մտքում արթնացնում էր իր սիրո տխուր պատմությունը:

Հեղինակը բնապատկեր է օգտագործում նաև Սոնային ներկայացնելիս. «Կարծես հավք էր թաքնվել անտառի մթին խորշում: Ապա վիզը երկարեց, ինչպես կաքավը դեղնած արտերում խշշում լսելուց, և մի ջահել կին դուրս եկավ սիմինդրի խիտ արտից: Դուրս եկավ, ճոճեց բարակ մարմինը, որպես եղեգ և կաքավի քայլերով սուրաց դեպի հնձանը» (74):

Այս պատկերով ընթերցողի աչքի առաջ հառնում է հայ գեղջկուհին՝ բարակիրան, նրբագեղ ու համեստ: Նահապետական հայ կնոջ կերպարն է ներկայացնում մի այլ պատկեր. «Հարսը փափուկ քայլերով, ինչպես այծյամը ծյունի վրա, մոտեցավ հնձանին: ...Ներս մտավ, ինչպես միամիտ հավքը վանդակի բաց դռնով» (74):

Բակունցը բնապատկերով արտահայտում է նաև իր հերոսների զգացմունքները, ապրումները, հոգեվիճակը: Տարիներ են անցել, բայց վերհուշը խեղդում է Դիլան դայուն. նրա ապրումների արձագանքում է բնությունը. «Լուսաբացին հավվեցին աստղերը, գիշերվա լազուրը գունատվեց» (75):

Դիլան դային իր ժամանակի զոհն է. նա ձեռնունայն կանգնած է կյանքի առաջ. «Ետ նայեց Դիլան դային, եկած ճանապարհին նայեց: Մարդ չկար. աշնան մերկ դաշտերն էին» (76): Նույնիսկ թռչնաորսի իրավունք չի ունեցել, ուստի միրհավը միշտ երազ է

թվացել, ո՛ր մնաց միրհավը՝ Սոնայի տեսքով. «...Արևը խաղում էր մայրամուտի ամպերի հետ: Անտառում լռություն էր: Միրհավը թռել էր հեռու...»

...Սեղմել էր հրացանի տաք փողը, ինչպես միրհավի մարմինը, որին միայն մի վայրկյան շոշափեց և մատների ծայրով զգաց, որ բմբուլը փափուկ է: Միրհավի մարմինը՝ տաք բմբուլ, Սոնայի մարմինը լաջվարդ շապիկի մեջ» (79):

Բարդ ու հակասական կյանք ապրած մարդն այլևս ակնկալիք չունի կյանքից: Նրա մեջ միայն «տխրություն և դառնաթախիծ հուշեր» են մնացել: «Նրա հիշողության խավար անդունդում բոցկտաց այն օրը, ինչպես միայնակ աստղը մթին երկնքում: ...Միրհավ կար անտառում, թռավ արնակլուլ, երկու փետուր թողեց փափուկ մամուռների վրա» (80):

Պատմվածքի հերոսը քչախոս է, նրա փոխարեն բնությունն է խոսում: Դիլան դայու մեծ սիրո գաղտնիքին հաղորդակից բնությունը՝ առվակն ու դառնաշունչ քամին, սիմինդրի կոշտացած ցողուններն են պատմում մարդկային կյանքի, սիրո, անարդարության մասին. «Յնձանի առաջ խոխոջալով հոսում էր առվակը, գիշեր-ցերեկ ջուրն աղմկում էր, ջրի անվախճան և անքննելի զրույցն անում մամուռներին, քարերին...» (80):

Պատմվածքը բնապատկերով էլ ավարտվում է. «Այգում էլ ոչ ոք չմնաց: Միայն իրիկվա հովից խշշում էին սիմինդրի կոշտացած ցողունները. չորացած տերևներն անհանգիստ խմբվում էին այս ու այն անկյունում, թպրտում հուսահատ և անմռունչ պառկում սև գուրի մեջ» (81):

Մարդիկ անցողիկ են, բնությունը՝ մնայուն: Եվ միայն նա է, որպես անդավաճան ընկեր, թաքցնում չիրականացած երազանքների, կարճ ու ցավալի սիրո պատմությունը:

Բակունցի բնապատկերը խոսում է, շարժուն, շոշափելի: Իսկ դրան նպաստում են հեղինակի գործածած պատկերավորման-արտահայտչական միջոցները:

Անշաղկապություն. «Արևը տաքացրել էր մամռոտ քարերը, ոսկեփետուր միրհավը, թևերին սև պուտեր, թռչում էր քարից քար, կանչում, կտցահարում հարևանին, էգի շուրջը պտույտներ անում»: «Կեծացել էին խուրձերը, գիշերվա խոնավությունից հասկերը տմկել էին»:

Բազմաշաղկապություն. «Աշնան խաղաղ օրերին նրան հաճելի էր և՛ սիմինդրի տերևների խշշոցը, և՛ վազերի օրորը, և՛ հնձանի դռնակի երգը»:

Շրջադասություն. «...արտերի մեջ երևում էին հատուկենտ կաղնիներ՝ ծոված, կռացած, կայծակից խառնված»: «Միրհավի

մարմինը՝ տաք բմբուլ, Սոնայի մարմինը լաջվարդ շապիկի մեջ»:

Ճարտասանական հարց. «Շուտով կիջնի ծմեռ, և ո՞վ գիտի, բացվող գարնանը նորից պիտի ի՞նքը բանա այգու դուռը, թե մի ուրիշ ձեռք»:

Թվարկում. «Առունների ափին, այգիներում, դաշտերից խուրձ կրելիս, ամառվա լուսնյակ գիշերներին խոտի դեզի մոտ, ամեն տեղ այդ սերը ծիծեռնակի պես ճռվողում էր, մինչև հասունացան նրանք...»:

Բակունցի սիրած արտահայտչամիջոցներից է կրկնությունը: Նա օգտագործում է դրա զրեթե բոլոր տեսակները. «Միրհավ կար անտառում, թռավ արնակոլով, երկու փետուր թողեց փափուկ մամուռների վրա: Միրհավի պես էր Սոնան, աչքերը խաղողի սև հատիկներ.. Միրհավի պես թռավ Սոնան, հետքից թողեց տխրություն և դառնաթախիծ հուշեր:

Խոսուն են Բակունցի օգտագործած պատկերավորման բանային միջոցները:

Մակդիրներ. Պայծառ աշուն, կապտավուն սարեր, մաքուր լանջեր, դառնաշունչ քամի, նվազ ջերմություն, հաստաբուն կաղնի, պայծառ տխրություն, դեղնակարմիր անտառ, բեկված սուսեր, ոսկեդեղձան հյուսեր, լուսեղեն լանջ, լաջվարդ շապիկ, ոսկե մամուռ, մանրիկ ոտնածայն, ոսկեփետուր թռչուն, պառավ թուփ:

Համեմատություններ. «Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ»: «Սիմինդրի երկար տերևները թրերի նման քսվում էին իրար, կարծես ձիավորներ էին արշավում իրար դեմ, և սիմինդրի տերևը, որպես բեկված սուսեր...»: «Քամին խշշացրեց թփերը, ինչպես Սոնան սիմինդրի երկար ցողունները»: «Ծառերի բները թաղվել էին տերևների կույտի մեջ, և ճյուղերը թխսամոր թևերի նման փռել ստվերում բուսած կապույտ սունկերի վրա»: «Երկու փետուր օրորալով վայր ընկան աշնան դեղին տերևների նման»: «Նրա հիշողության խաղաղ անդնդում բոցկլտաց այն օրը, ինչպես միայնակ աստղը մթին երկնքում»: «Միրհավի պես թռավ Սոնան»:

Փոխաբերություններ. «Լուսաբացին հավվեցին աստղերը, լազուրը գունատվեց, երբ ծաղիկներն արթնացան գիշերվա նիրհից...»: «Արահետը բարակում էր. տեղ-տեղ ծառերն անանց պատնեշ էին կազմել»:

Անձնավորում. «Քամուց հնձանի դռնակը մեղմ ճռնչում էր, և մաշված դուռը դողդոջ երգում էր մի հին երգ»: «Արևը խաղում էր մայրամուտի ամպերի հետ»: «...գիշեր-ցերեկ ջուրն աղմկում էր, ջրի անվախճան և անքննելի գրույցն անում մամուռներին, քարերին...»:

**ԻՆՏԵՐՎՅՈՒՆ «ՆԵՐԱՇԽԱՐԻՉ» ԳՐՔԻ ՀՆՉԱՈՏԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱԴՅԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

20-րդ դարասկզբի արևմտահայ գրական սերնդի զգացողության ու մտածումի մեջ ամենասերտ հարաբերությունն ունեն լեզվականն ու գեղագիտականը:

Գեղագիտական է եղել նաև Ինտրայի (Տ. Չրաքյան) ելակետը: Գկուն, հարուստ, ինքնատիպ և միաժամանակ բարդ է Ինտրայի, մասնավորապես նրա «Ներաշխարհ» գրքի լեզուն: Փիլիսոփայական և գեղագիտական հայացքների մի խումբ պայմանավորում է նրա գեղարվեստական երկերի լեզուն: Հեղինակի բնապաշտական վերաբերմունքն ապահովում է բնության երևույթների արտացոլումը բնագրում. բնածայնությունները, առձայնությը և բաղաձայնությն այնպես են շաղկապվում միմյանց, որ դժվար է պատկերացնել ստեղծագործության ամբողջությունն առանց բնաշխարհի կենդանի ներկայության. վերարտադրվում է բնության ծայնային համանվագը: Սենտիմենտալիզմի ազդեցությունը հատկապես նկատելի է բացականչական և հարցական նախադասությունների առատության մեջ, երբ սիրային բնույթի ասելիքը հեղինակային վերաբերմունքի տարբեր՝ հաճախ հիացական ելևէջներով է սնուցվում: Առկա էքսպրեսիոնիստական ինչ-ինչ տրամադրություններ որոշակիորեն թափանցում են «Ներաշխարհի» մեղեդային տողերի մեջ՝ հանրույթի և անհատի կոնֆլիկտային—«բախում» հատվածներում, որտեղ հոգու մեղեդին ընդհատվում է, և Չրաքյանը երաժշտական արձակը փոխակերպում է նկարչական—տեսողական պատկերների՝ առավելաբար հենվելով ժողովրդական չիղկված, «չսանտրված» (Դ. Վարուժան) խոսակցական ոճերին: «Ներաշխարհ» արձակ պոեմը ճանաչելի է հեղինակի կրքոտ և հուզված խոսքի ելևէջումներով:

Քնարական ապրումի վերարտադրության հնչառճական հետազոտությունը հետաքրքրական է, քանի որ կնպաստի հեղինակի ստեղծագործական նպատակադրումներից մեկի բացահայտմանը: Բնավ չպետք է կարծել, թե «Ներաշխարհի» հնչամեղեդու դաշնավորումը Ինտրայի գնահատմամբ գրողական երկրորդ-երրորդական խնդիր է տրված անցողակի, առանց պարտադիր տաժանակիր աշխատանքի, գրողի դիպուկ արտահայտությամբ՝ առանց «ծնրադրած» բանաստեղծության: Ավելին, այն ավարտուն համակարգ է՝ իր ներքին կապերով, օրենքներով, օրինաչափությամբ: Երկի մեղեդայնությունը յուրովի բացահայտում է սուբյեկտի (անձի, եսի) գիտակցության կնճիռները, ինչպես նաև նրա ենթագիտակցական

խորշերի շերտերը և «կրքերու յոյզը» (Ինտրա) բնական գրգիռների անհամաչափ, տարականոն հոսքերուն: Այդ ամենը ժամանակակից խորհող մարդուն տրված են բնութամբ՝ վաղնջական անհիշելի ժամանակներից՝ իբրև երկրային գոյության մեջ «համընդհանուր ապրվող» իրակություն:

Գեղարվեստական պատկերի վերը ներկայացված կողմերի (բնապաշտություն, սենտիմենտալիզմ, խորհրդապաշտություն, նիհիլիզմ) դրսևորումը «Ներաշխարհ» ժողովածուի որակական առանձնահատկությունն է, որ բխում է Ինտրայի իդեալիստական աշխարհընկալումից. *«Նօճեղեն խաւարին մեջ աղօտագծուած Եսն է: Սարմինիս պէս կը դիտենմ գինքը, որ իմ աննիւթացունս, իտէական էութիւնս կը թուի իսկութեանս մէկ արտաքնունը»:*⁵

Անգուսպ ներշնչման ընդունակությունը բանաստեղծին (մարդուն) դարձնում է տիեզերական «մեծ» ժամանակի միավորը, որ գալիս է անցյալից, բայցև հավասար չափով ապրում է երազանքի վերացական իրականության մեջ՝ այն զգայելով որպես կենսական ներկայություն. *«Եկա՛ր. իմս ես, այնպէս չէ՛, կը սիրե՛ս գիս... Անհունիս կորիւնը, հսկայորդին, որ կը կանչէր քեզի, կը լսե՛ս սրտիս թոպունը, ես քեզի կը ճանչնայի շատոնց, դարերէ ի վեր...»* (էջ 195):

Ինտրայի բնագրում հուզական ապրումները լուծվում են նաև երաժշտական ու մեղեդային արձագանքներով՝ հնչյունին վերապահելով յուրօրինակ իմաստավորում: Այն գործում է ստեղծագործության՝ օբյեկտիվորեն ներակա (իմանենտ) ներդաշնակ (հարմոնիկ) և ռիթմական կապերով. *«Ամէն ինչ ըղձանք է, ամէն ինչ սլացք է, սառչուն, խոյանաշարժ, բոլոր կենդանութեանց երազն է յաւերժակենսութեան երկինք մը, բոլոր այս այրումներուն նպատակն է լուսավառ անեզրութիւնը»* (էջ 160):

Հնչում է մելամաղձիկ մեղեդին ստեղծելով սպիտակ բանաստեղծության ինքնատիպ մանրակերտ: Եվ մենք արձակ տողերի միջից առանց ճիգի «վերականգնում ենք» չափածոն.

*Ամեն ինչ ըղձանք է,
Ամեն ինչ սլացք է,
Սառչուն, խոյանաշարժ,
Բոլոր կենդանութեանց երազն է
յաւերժակենսութեան երկինք մը,
Բոլոր այս այրումներուն նպատակն է
լուսավառ անեզրութիւնը:*

⁵ *«Արևմտահայ գրականութեան ընտրանի»*, Երևան, 1999, էջ 165: Ինտրայից արված բոլոր մեջբերումները հիշյալ ժողովածուից են. այսուհետև կնշենք միայն համապատասխան էջը:

«Ներաշխարհում» լեզվական յուրաքանչյուր միավոր հուզական, արտահայտչական երանգավորում ունի: Պանթեստական հայացքի ուղղությունը անմիջապես տարբերակում են առանձնահատուկ հնչյուններ, դրանց հոսքային անընդմեջ շարժումներ:

Ինտրան կարծես փորձում է ընդօրինակել այն բոլոր հնչյունաշղթաները, ձայնային ելևէջները, բնության ռեժիմի համահունչ դադարները, որոնք անհրաժեշտ են, որպեսզի մարդն ազատվի վարար զգացմունքներից, կրքերից. ձայնային հագեցածության աղբյուրը բնությունն է. մարդն էլ բնություն է, իսկ «Ներաշխարհը» մարդու բնությունն է արտացոլում. *«Նայէ՛, ի՛նչ պիտի ըսեմ քեզի, կը պաղատե՛մ քեզի, զքեզ կը տառապի՛մ, զքեզ կը հեծկլտա՛մ, զքե՛զ կը դողամ, մահուա՛ն պէս իրականացող բաղձանքս. մտիկ ըրէ՛, զքեզ այնքան ատենէ՛ ի վեր կը սիրեմ. իմ ճշմարիտ, ճշմարիտ երանութիւնս. նայէ՛, Տիեզերքին ներկայութիւնն է... »* (էջ 195):

Ժողովածուն կազմված է «լտողական» մեկնաբանությամբ և հուզարտահայտչական միասնական ծրագրով, որի ռիթմն այնպես ամուր է, կարծր, որ արձակի ընդերքում կարծես չափածոյի ճանապարհ է բացում.

*Նայէ՛,
ի՛նչ պիտի ըսեմ քեզի,
կը պաղատե՛մ քեզի,
զքեզ կը տառապի՛մ,
զքեզ կը հեծկլտա՛մ,
զքե՛զ կը դողամ,
մահուա՛ն պէս իրականացող բաղձանքս.
Մտիկ ըրէ՛,
զքեզ այնքան ատենէ՛ ի վեր կը սիրեմ.
Իմ ճշմարիտ, ճշմարիտ երանութիւնս.
Նայէ՛,
Տիեզերքին ներկայութիւնն է...*

Զգայական ապրումներով փոխակերպվում են նկարագրությունները և մեղեդական ներդաշնակության վերածվելով՝ ստեղծում չափական նրբածավալ պոեզիա:

Զգայական ընկալումը շեշտակի արագությամբ, ելնելով ձայնային այս կամ այն հաճախականությունից, ելևէջում է գիտակցությանը զուգահեռ՝ սկսած ենթագիտակցականի ոլորտներից, որ բարձր էսթետիզմի արտահայտչականությունն է, «մաքուր» արվեստ՝ կերտված անձի (քնարական եսի) հոգեբնախոսության համաձայն: Ինտրայի ներաշխարհային «մեղեդին» մեր գիտակցության մեջ հուզումների հոգեբանական համարժեքները մեկնաբանում

և ընտրում է ոչ այնքան բառերի առարկայացնող-օբյեկտիվացնող իմաստները, որքան դրանց լսողական-ձայնային հատկանիշները: Նախ՝ «Ներաշխարհի» հեղինակը ստեղծագործում է՝ բացահայտելով հնչյունները: Առօրեական պարզությամբ պարբերական (ռիթմիկ) տատանումների արդյունք երաժշտական միավորը՝ ձայնավորը, հաճախ հնտորեն հնչերանգային գերծայնի է փոխակերպվում և անգամ կրում արտահայտչական նշաններ պատմողական-նկարագրական բնույթի նախադասություններում. **«Նեխման իրականութիւնը կը ցնդեցնէ՞ր ցնորքի մը պէս...»** (էջ 150): «Գծային շարքով» արտաբերվող, ժամանակի վրա բաշխված միավորների հետ հարմոնիա են արարում «վերգծային» միավորները՝ առողջանական-հնչերանգային նշանները: Նախադասությունը հանդես է գալիս որպէս գերհնչական հնչադասույթ, բառակապակցությունը կամ շարույթը՝ հնչատակտ, իսկ բառը՝ որպէս հնչաբառ: Խոսքը վերաբերում է կայուն կազմակերպված բանաստեղծական ոճին՝ իր գեղարվեստական լիակատարության մեջ անհատականացված համանվագայնությանը (սիմֆոնիզմ): Այսպիսով՝ հնչյունը կրում է մշակութաբանական արժեք, որովհետև պայմանավորում է խորհրդապաշտ գեղագիտության՝ ձևի պաշտամունքի օբյեկտիվացումը. **«Քո ճշմարտութենէդ, քո գոյութենէդ անէանամ: Մի՞թե կարելի բան է, որ իմ մատներս հպած ըլլան քեզի, միթե կարելի՞ է որ լսած ըլլամ ձայնդ, ու շունչդ շնչած, քո բույրդ խմած ըլլամ, քու բերանդ համբուրած ըլլամ... Իրա՛վ, համբուրա՞ծ են ես քու ծիրանի բերանդ. վա՛հ: Ներէ՛ ՝ քեզի հպելով գրեզ մարմնաւորած ըլլալուս»** (էջ 191):

Ինտրայի հնչյունն ընդհանրացնող է, տրամադրական, ստեղծում է երաժշտական տեքստ, գեղարվեստական ինքնատիպ աշխարհագրություն: Թեև «Ներաշխարհում» գործառնվում են իրական կյանքի միջադեպերը՝ բանաստեղծի անհատական ընկալմանը համապատասխան, սակայն դրանք գրական միջավայր են թափանցում՝ արտածվելով զգացմունքներով, հարափոփոխ տրամադրությունների հարուստ նրբերանգներով:

Հարցն այն է, որ արձակ ստեղծագործություններում բարեհնչության առկայությունը գեղագիտական անհրաժեշտ որակ և պահանջ չէ. ընդունված է ասել, որ բարեհնչությունը չափածոյի մեծաշնորհն է: «Ներաշխարհն» ունի արձակ շարադրանք. նախադասությունների բազմաբարդ կառուցվածքները, երկարաշունչ ծավալը համեմատության եզր չունեն չափածոյի կառուցվածքային առանձնահատկությունների հետ:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ *«Ներաշխարհ»* ժողովածուն ձևային կոմպրոմիս է արձակի և պոեզիայի միջև՝ վերջինիս հնչերանգային-ներքին-շռայլ կառուցումների շնորհիվ:

Այդ պատճառով է անհրաժեշտ խոսել ստեղծագործության հնչառճաբանության՝ իբրև առանձին և կարևոր երևույթի մասին: Չնչյուններն այստեղ դերակատար են՝ ծայնային հատկություններ համադրող միավորներ, որոնք Ինտրան գործադրում է, ինչպես հմուտ դաշնակահարը՝ հարագատ ստեղները: Նկատվել է, որ ծայնի բարձրությունը, ուժգնությունը (ինտենսիվությունը), հնչեղությունը, տևողությունը, հիմնական տոնը, գերտոները, ծայներանգը կարևոր դեր ունեն խոսքի մեջ: Սարդկային խոսքն ընկալվում է հնչյունի ծայնային հենց այդ հատկությունների շնորհիվ:⁶ Իսկ պրոֆ. Ֆ.Խլղաթյանը (ի դեպ, հնչյունական ոճաբանության մասին նրա աշխատությունը առաջինն է մեզանում) գրում է հնչյունական կազմի գեղագիտական արժեքի մասին. «Չնչյունական կողմը խոսքի համար ծառայում է ոչ միայն իբրև սոսկ ձև, այլև... դառնում է վերաբերմունքի, տրամադրության արտահայտման կարևոր միջոց: Այդ դերն իրականացվում է ոչ միայն ծայնի տոնի, բարձրության, տևողության, դադարների, հնչերանգի փոփոխություններով, այլև հնչյունների ընտրության միջոցով՝ այդ ընտրությունը կապվելով հաղորդվող մտքին, իմաստին կամ տրամադրությանը: Այս ձևով խոսքի արտաքին, հնչյունական կողմը ստանում է գեղագիտական արժեք, դառնում արտահայտչամիջոց, նպաստում խոսքային պատկերների ստեղծմանը»:⁷

Ինտրան ստեղծում է յուրահատուկ ոճ՝ արձակի և պոեզիայի կոմպոզիցիոնով: Ուշագրավ և ինքնատիպ է, որ արձակի դասականորեն ձևավորված «կարծր» շերտերում ձևավորվում են ոճական մերձեցումներ: Ուստի, ինքնին հասկանալի է, որ «Ներաշխարհը» առաջադրում է չափածոյին վերաբերող խնդիրներ, թեև արտաքուստ հիմնականում պահպանում է արձակի հատկանիշները: Գրքի արտահայտչական հնարավորությունները մի տեսակ «թափառում» են արձակի և բանաստեղծության միջև:

Իր գրական ճանապարհի առաջին շրջանում Ինտրան հանդես է գալիս որպես արձակագիր («Ներաշխարհ»), իսկ երկրորդ ժողովածուով («Նօճաստան») հիմնավորապես անցում է կատարում բանաստեղծության, թեև անհամեմատելի որակներ են արձակագիր Ինտրան և բանաստեղծ Ինտրան (բանաստեղծը, մեր կարծիքով, թույլ է):

Դժվար չէ նկատել, որ «Ներաշխարհի» մանր ու մեծ բոլոր կտավներում հետևողականորեն և նրբորեն գործադրվում է գրողի բանաստեղծական կարողությունը: Բանաստեղծական որակները

⁶ Չմնտ. **Չ.Չ. Պետրոսյան**, Չայերենագիտական բառարան, Եր, 1987, էջ 401:

⁷ Տե՛ս **Ֆ. Չ. Խլղաթյան**, Չնչյունական ոճաբանություն / Լեզվի և ոճի հարցեր, պր. 6, Եր., 1982, էջ 83-84:

արծակի շերտերում ծնունդ են առնում սիմվոլիստական ակունքներից և Ինտրայի բանաստեղծական ու գեղարվեստական փորձը հաջողությամբ հեռու է կանգնում արիեստական խաչաձևումից: Բանաստեղծի նախընտրած հնարանքներից են՝ գեղարվեստական խոսքի հնչյունական կազմակերպման զանազան եղանակները (առձայնույթ, բաղաձայնույթ, կոնսոնանս), տաղաչափական առանձին հնարները (հանգավորում, ռիթմավորում), ձայնային տպավորություններ առաջացնելու միջոցները (հարանունություն, նմանաձայնություններ, խրթնաբանություններ): Դեռ մի կողմ թողնենք Չրաքյանի գրական անվան՝ հին հնդկական Ինտրա աստծո անունից փոխառված լինելու հանգամանքը, որ «միջին» ընթերցողի ընկալման մեջ անմիջապես նույնանուն է գեղեցիկ, բայց նյութական իմաստից «զուրկ» հնչակապակցությանը: Այն ինքնին խորհրդավոր զգացողություն առաջ բերելու առաջին պայմաններից է (նաև հենց «Ներաշխարհ» խորագիրը), որն ընթերցողական զգայուն վերաբերմունք է նախապատրաստում «զգայարանականություն» (Ինտրայի բառն է - Ն.Ա.), որը երաժշտության աշխարհին հարաբերվելու հոգեբանական նախադրյալ է: Կարևոր են հոգեբանական դրդապատճառներից բխող առանձնահատկությունները, որոնք նախապատրաստում են Ինտրայի ստեղծագործության հնչյունական արտահայտչամիջոցներն ու դրանց ոճական այլազան կիրառությունները. *«Երթամ, ծածկաբար անոր մերձենալու, լուսաւոր պատուհաններն ի վեր սեւեռուելու. անոնց նայիմ: Մի՞թէ յանցաւոր եմ: Խաւարամած սենեակիս մեջ երթամ ծունկի գալու. սիրտս տատանի, բուրվառի պէս. եւ հոգիս խունկի պէս ժայթքէ անկէ՝ մինչեւ որ հատնի. մինչդեռ սիրտս խելացնոր դեռ ծօծի, դեռ մինչեւ որ կենայ: Աի, լուսինը կը ծագի՝ լաժուարթ գիշերին մեջ. աստղերը կը թալանան հաճույթ: Ինչ գեղեցիկ գիշեր, ի՞նչ աղուոր կը մեռնուի հիմա, ո՞վ իմ Իռենա, վասնզի ինչ աղուոր ըլլալու է հիմա սէրը»* (էջ 194):

Սինչ վերջին տասնամյակները խոսքի հնչական կողմը չէր դիտարկվում ոճաբանական հետազոտությունների ոլորտում, որն էական բացթողում էր, մանավանդ սիմվոլիզմի գրականության ընդհանուր ոճական արժեքը բացահայտելու տեսակետից: Այսօր ոճաբանական հետաքրքրությունները տարածվում են նաև հնչյունի արտահայտչական հնարավորությունների քննության բնագավառի վրա: Կարևոր է պարզել, թե ինչպես կարելի է խոսքի տարրական միավորի օժանդակությամբ հասնել առավել արտահայտչականության և հուզականության և, հետևաբար, զգացմունքային ներգործության ուժեղացման: Համոզված ենք, որ կոնկրետ դեպքում անհրաժեշտ է հնչյունական ոճաբանության շրջանակում քննել տաղա-

չափական երևույթներ ևս, թեև դրանք ուսումնասիրվում են պոետիկայի հարցերի շրջանակում:

«Ներաշխարհի» հնչական կողմի առաջին հատկանիշը համարում ենք բարեհնչունությունը:

Խորհրդապաշտ դպրոցի ոճական «հնարամտությունները» շրջանառելով՝ Ինտրան խոսքի հնչյունական կողմը ծառայեցնում է ոչ միայն զուտ ձևին, այլև փաստորեն նյութական նվազագույն բաղկացուցիչների տարաբնույթ հարաբերակցություններով ու խիզախ զուգորդումներով դարձնում թե՛ հեղինակային վերաբերմունքի, թե՛ առկա պահի տրամադրության արտահայտման իմպրեսիոնիստական կարևոր միջոց: Այլ կերպ ասած՝ հնչյունը դառնում է գերադաս մտքի «խտացուցիչը» (Ինտրայի հեղինակային նորակազմությունն է - Ն.Ա.), որն արտացոլում է գրողի մտքերի և հույզերի ուղղությունը՝ լավատեսություն կամ հուսալքություն, թախիծ կամ տառապանք, սպասում կամ սեր: Այդ դերը նա իրականացնում է հնչերանգի փոփոխություններով, խոսքի տևողությամբ, բանաստեղծում բացատների միջև դադարներով (հատած), որոնցում շատ կարևոր է հնչյունների ընտրությունը: Այս կերպ հնչյունը դառնում է արտահայտչամիջոց, նպաստում խորքային պատկերներ կերտելուն: Գմնտ. *«Ա՛հ, նա, ա՛ն է... շոճիին բարձունքը առկախ, սարսռագին. Իռենան. լուսեղէն, թափանցիկ, արփային, եւ իրական, իրական. իմ հոգւոյս աղջէն, լուսնագիշերէն հիակերտուած Կոյսը, վերեւ ծխասփիւռ. փայփայանքէ, սիւզէ շղարշի սը մէջ պարուրուած, կերպարանքը ամպագույն, բուրումնային, գիշերագոյն մազերու վէտքերով խորհրդապասկուած...»* (էջ 194):

Ձայնային հիմնական տոները ապահովվում են *փ* (թափանցիկ, փայփայանքէ, արփային) *կ* (իրական. 12 անգամ, Կոյսը, հիակերտուած), *ծ* (պարուրուած, խորհրդապասկուած, հիակերտուած, ծխասփիւռ), *ս-զ* լծորդ հնչյունների (*լուսնագիշեր, մազերու, ծխասփիւռ, սիւզէ*), *ույ* երկբարբառի գործառույթներով (*ամպագոյն, Կոյսը, հոգւոյս*):

Խոսքաշարում խլության, սուլականության (*ս*), ետնալեզվության (*կ*) հատկանիշները միաժամանակ կառուցում են և՛ հիմնական տոնը, և՛ գերտոները: Երաժշտական ձայների հետ աղմկային ձայներն ամբողջությամբ գոյացնում են հեղինակի կողմից վաղօրոք ընտրված ձայներանգը: Առաջին նախադասությամբ շրջառնված *ա* ձայնավորը, որը լինելով ըստ ձայնի տևողության (տատանումների տևողություն) ամենամեծը և ստանալով երաժշտական (՝) ու ձայնային (՝) շեշտեր՝ պայմանավորում է արձագանքային՝ լսողական «էֆեկտ»: Ձայնային այսօրինակ օրինաչափություններով բնութագրվում է ոչ միայն վերոհիշյալ հատվածը, այլ ամբողջ ստեղ-

ծագործությունը: Այն ժողովածուի հնչական-ներքին միասնության պայմանն է:

Առանձին ապացուցման կարիք չի զգում այն դրույթը, որ խոսքի հնչերանգը պայմանավորված է խոսողի հոգեբանությամբ, խոսքի կառուցվածքով, առավելապես իրադրությամբ և այն հանգամանքով, թե ուն է ուղղված խոսքը, ինչ նպատակով: Սրանցով են պայմանավորված ստեղծագործության «ձայնի» հիմնական տոնը, խոսքի տեմպը, արտասանական ելևէջումը: Կոնկրետ նշանակությունից բացի, դրանք նաև գեղագիտական բնույթ ունեն: Այս տեսակետից արևմտահայերենի հնարավորությունները մեծ են: Մեղեդային առոգանությունը կապված է առաջին հերթին արևմտահայերենի հնչյունական իրողություններով: Այսպես, օրինակ, գրական արևմտահայերենը արևելահայերենի համեմատությամբ աչքի է ընկնում տեքստում ձայնավորների ավելի բարձր տոկոսով՝ 17%-ի դիմաց 13%:

Բոլոր դեպքերում, երբ հեղինակային «միտումնավորություն» է գործում, մենք բարեհնչությունը բացատրում ենք այսպես կոչված գերհնչական միջոցներով: Այդպիսիք են նմանաձայնությունները և ձայնային զուգադիր համապատասխանությունները (հանգերը), ռիթմը, բանաստղում դադարը, առձայնույթը, բաղաձայնույթը, շեշտափոխությունը, շնչեղացումը, բառի կամ բառակապակցության կրկնությունները, հնչերանգային նախադասությունները, ձայնային համագոր ելևէջումները: Զմնտ. **«Յեռայուր ձայները որ երագուն, եղկօրէն շփոթ աւաչելով կ'ոգելորեն, իրօք հեծիւննե՞ր էին: Ինչպէս կը ցնդին տառապանքները. ինչպէս կը: Երկինքին կապոտը հեռաժուլի ամպերուն վերեւէն կերելայ, անեզր ու գեղեցիկ, ե... ճնշումէ՛ ազատ՝ վարի հոգիները հեւայով կը ծաւային, կը բարձրանան»:**

Զնչյունական կրկնությունները գեղարվեստորեն դեր են կատարում. ուժեղացնում են հուզական ներգործությունն ընթերցողի վրա, առաջացնում ներդաշնակություն օբյեկտիվորեն գոյություն ունեցող հնչյունների և ձայների հետ: Ընտրված **h** և այլ հնչյունների կապակցությունները, հնչերանգի մեղեդային առոգանությունը՝ լացը, կոծը, նմանաձայնորեն արտացոլում են և «կերպավորում». շնչեղացումը բաղաձայնական տեղաշարժի հնարներից է: Ինտրան ապահովում է խոսքի հիմնական տոնը և գերտոների համակցումով է ստեղծվում բանաստղի ձայներանգը: Զնչյունական կազմի արտահայտչական հնարավորություններն ընդարձակվում են:

Գեղահնչման կարևոր միջոցներից է հնչահանգությունը՝ արտահայտության հնչյունական կազմի համապատասխանությունը պատկերվող առարկային կամ երևույթին: Բառի հնչյունական կողմը բնականորեն կամ տրամաբանորեն չի կարող և չի բխում առար-

կայի էութունից, այլ պայմանականորեն տրված՝ ավանդվում է սերնդեսերունդ: Մինչդեռ Ինտրան հաջողությամբ փոխկապվածություն է ստեղծում լեզվական հնչյունի և մտային պատկերացման կամ հոգեկան ապրումի միջև: Այս տեսակետից ուշագրավ է Մ. Աբեղյանի կարծիքը: Նա «Հայոց լեզվի տաղաչափություն» աշխատության մեջ գրում է. «... բուռն ու բիրտ զգացումներն ու զաղափարները արտահայտվում են կոշտ բաղաձայներով, իսկ մեղմ ու փափուկ զգացումները՝ ձայնորդ (ռնգային և նաև *ռ, մ, ն, թ, լ*) հնչյուններով»:⁸ Խոսքի մեջ այս կամ այն հնչյունի գերակշռությունը լսողի մեջ արթնացնում է կոնկրետ առարկայի տեսողական, լսողական, ընդհանուր առմամբ՝ զգայական ընկալում: Այդ հաստատում են նաև Ժ. Վանդերիսը, Ժ. Մարուզոն, Ա. Մորիսը, հայ իրականության մեջ՝ Գր. Վրացյանը:⁹

Մ.Աբեղյանի դիտարկումը համոզիչ է. «Ինչպես ամեն բաղաձայն իր հատուկ աղմուկն ունի, նույնպես և ամեն ձայնավոր ունի իր հատուկ երանգը:... Եթե մի տրտում ու տխուր վիճակ է նկարագրվում, կարելի չէ բաց ու պայծառ *Ա* ձայնավորի հանգիտություն անել և, ընդհակառակն, պայծառ և ուրախ տրամադրությունը կարելի չէ արտահայտել *ու, ի, ղ* խուլ ձայնավորների հանգիտությամբ»:¹⁰ Հակված չենք հնչյունների մեջ ի վերուստ տրված իմաստ կամ երանգ փնտրելու, բայցև կարելի է մատնանշել նույնատիպ լծորդ կամ մենադիր հնչյունների կրկնություններ, որոնք «Ներաշխարհին» բարեհնչություն են հաղորդում, որոնց միջոցով երկի ձայնային տպավորությունն ուժգնանում է:

Դրանցով, օրինակ, կազմվում են **անճիշտ հանգեր**: Հմնտ. «*Ռողորմեա, Տէր, ամենայն աշխարհի, վշտացելոց, ճանապարհորդաց, ապաշխարողաց, եւ հոգւոցն հանգուցելոց: Ինչու՞ համար, Մե՞ծ աղօթող որ ես՝ չես յիշեր տարփաւորները: Միթէ օտար եմ անոնք այն տողումէն. անոնք որ, անգիտակից, յաւիտենութեան կը ձգտին՝ ներդաշնակման, կատարելացման գերագոյն վիճակի մը զհետ անձկագին: Ո՛վ Տէր, ողորմէ՛ տարփաւորներուն, թափառական ու սարսռագին տարփաւորներուն, վասն զի իրիկուն է, վասնզի Քեզի յարելու կատարեալ եղանակ մ'է՛ Սէրը*» (էջ 189): Եվ մյուս կողմից էլ՝ **ճանապարհորդաց - ապաշխարողաց, հոգւոցն - հանգուցելոց, աղօթող որ ես - տարփաւորները անձկագին - սարսռագին - թափառական**

⁸ Մ. Աբեղյան, Երկեր, հատոր Ե, Եր., 1971թ., էջ 337:

⁹ Գր. Վրացյան, Հայերենի ձայնավորների նվազայնությունը, «Մուրճ», 1897թ., թիվ 6:

¹⁰ Մ. Աբեղյան, Երկեր, հատոր Ե, Եր., 1971թ., էջ 338:

*ողորմել - իրիկուն է
վասնզի - քեզի
եղանակ մէ - Սէրը:*

Բնապաշտութեան յուրացումը ստեղծագործութեան մեջ բացահայտվում է ռիթմի յուրակերպ դրսևորումներում: Բնութեան ընդհատուն ձայների արտահայտությունները բնագրում ունեն, առաջին հերթին, հնչյունային «մարմնավորում»: «Ներաշխարհը» «Ֆիզիոլոգիապէս» կազմավորվում է բնութեան ռեթիմի և ձայների միջև՝ դառնալով այսպէս կոչված երաժշտական արծակ: Բնականաբար, մելոդիկան բացատրվում է ոչ այնքան իմաստի և տրամաբանութեան, որքան երաժշտական օրենքներով:

Ռիթմը (հուն. *rhythmos* «համաչափություն») հավասար միավորների պարբերական կանոնավոր կրկնությունն է: Սա չափածո խոսքն արծակից տարբերող նշանակալի հատկանիշ է: Ուշագրավ է հետևյալ դիտարկումը. «Ռիթմիկ խոսք ասելով սովորաբար հասկանում են չափածոն, բայց արծակում ևս կարելի է ռիթմ ստեղծել: Ռիթմը արծակին հաղորդում է բանաստեղծականություն, արտահայտչականություն, իսկ խոսքին ընդհանրապէս՝ բարեհնչություն և երաժշտականություն»:¹¹ Ռիթմը առաջանում է վանկերի թվով հավասար դադարների կրկնությունից: Եթէ «Ներաշխարհը» բնութագրենք իբրև բանաստեղծական օրենքներով կազմակերպված արծակ, ապա կարելի է պայմանականորեն Ինտրայի նախադասությունները դիտարկել՝ որպէս բանատող, որ բանաստեղծական խոսքի՝ ռիթմով ավարտուն հատվածն է: Ուրեմն՝ *բանատողը Ինտրայի ժողովածուում համընկնում է նախադասութեանը. «Ձքեզ հեւացած, զքեզ միայն եղած՝ ես միայն կ'ըմբռնեն զքեզ, ըմպեն, շնչեն զքեզ, իւրախառնեն զքեզ, վերստին նույնանամ քեզի հետ, իմ երանութեան անցյալիս հոյզը. ո՛վ իմ միւռոնացումս»:*

Քանի որ նախադասությունը համեմատաբար երկար բանատող է, դրա ներսում արտահայտվում է դադար՝ **հատածը**: Այն մատչելի է դարձնում երկար տողի արտասանությունը, շեշտակի ուժեղացնում է արտասանութեան ռիթմը. հմմտ.՝ «Ձքեզ հեւացած /**հատած**/, զքեզ միայն եղած /**հատած**/ ես միայն կըմբռնեն զքեզ /**հատած**/. ըմպեն /**հատած**/, շնչեն զքեզ /**հատած**/. Իւրախառնեն զքեզ /**հատած**/. վերստին նույնանամ քեզի հետ /**հատած**/. իմ երանութեան անցյալիս հոյզը /**հատած**/, ո՛վ իմ միւռոնացումս»/ և այլն:

¹¹ **Ֆ. Գ. Խլղաթեան**, Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Եր., 1976թ, էջ 93:

**ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐՂԳԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
ՍՏԵՂՃԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Մարդկային հաղորդակցման հիմնական արտահայտությունը խոսքային գործունեությունն է, որի մեջ երկխոսությունը զգալի դեր ունի: Երկխոսությունը, որի պարզ ձևը զրույցն է, կայանում է, եթե նրան մասնակցում են երկու կամ ավելի մարդ:

Երկխոսության կիրառության ոլորտները բազմազան են: Այն առավելապես դրսևորվում է առօրյա-խոսակցական և գեղարվեստական ոճերում: Խոսքի այդ դրսևորումը, որը հաղորդակցական գործառույթի էական իրացումն է, գեղարվեստական երկի կարևոր բաղադրամասերից է: Գեղարվեստական արձակունքները երկխոսությունը կերպարների բնութագրման, համոզմունքների արտահայտման, սյուժեի զարգացման, դեպքերը նկարագրելու կարևոր միջոցներից է:

Հետաքրքրական երկխոսություններ կան Վարդգես Պետրոսյանի արձակում: Այդ երկխոսությունները հիմնականում հանդես են գալիս կապակցված բաղադրիչներով, և խոսողությունն իրացվում է խոսողի (սուբյեկտ) ու խոսակցի (հասցեատեր) միջև: Դրանց նախ և առաջ հատուկ է նախադասությունների պարզ կառուցվածքը, հիմնականում շարահարական կապակցությամբ, առանց շաղկապների և քերականական այլ միջոցների:

Նկատելի է, որ ժամանակակից հայ արձակի բնորոշ առանձնահատկություններից է բնականությունը և խոսքի սեղմությունը: Այս առումով Վ. Պետրոսյանի արձակում աչքի են ընկնում հարցուպատասխանական երկխոսություններ՝ առանց հեղինակային միջամտության:

«- Պատմիր:

- Սիրում եմ աշունը:

- Այն ժամանակ էլ այդպես ասացիր:

- Այն աշունը չեմ սիրում» (1, 1, 62):

Զեղչումը երկխոսության բնորոշ հատկանիշներից է: Ինչպես նկատում է պրոֆ. Ֆ. Խլղաթյանը, գեղչումը «հեշտ վերականգնվող կամ խոսքաշարից ըմբռնվող որևէ բառի կամ դարձվածքի նպատակային բացթողումն է: Այս հնարանքը հաճախ օգտագործվում է հոգեկան հուզումնալից պահերին, բարդ հոգեվիճակների արտա-

հայտնան նպատակով՝ ասելիքի մի մասը թողնելով լսողի (ընթերցողի) կռահմանը».¹

«- Սիրու՞մ ես... - ասաց տղան:

- Աշունը... սիրում եմ...

- Ես աշնան մասին չեմ...

- Հասկացա, բայց սիրում եմ աշունը» (1, I, 60):

Ձեղջուներ երբեմն այնպիսի չափեր է ունենում, որ նախադասությունը կորցնում է իր կառուցվածքային բնույթը: Քերականական ինքնատիպ կառուցվածք ունի հետևյալ երկխոսությունը.

«- Արտասահման ես գնալու:

- ... Ենք գնալու» (1, II, 333):

Այսպիսի պատասխանով խոսակիցը նկատի ունի, որ ինքը մենակ չի գնալու արտասահման: Սա փաստորեն հաղորդվող տեղեկության ճշգրտումով պատասխան է:

Հաճախ երկխոսությանն իր վերաբերմունքով խառնվում է հեղինակը, ներկայացնում հերոսների հոգեվիճակը, ուղղակի խոսքն ընդմիջում լրացուցիչ ծանոթագրություններով: Մեջբերվող խոսքը սովորաբար ընդմիջվում է ասացական բայերով, որոնք իրար են կապում մեջբերվող և հեղինակային խոսքերը: Գրողը ներկայացնում է, թե ով է խոսողը, և ցույց է տալիս, թե ինչպես է խոսում.

«- Տոմս վերցրե՞ք,- ասաց բարալիկ մի աղջիկ, որի աչքին մարդկությունը երևի մի հավաքական անտոմս ուղևոր էր:

- Իմը մշտական է,- ասաց Արամը» (2, 286):

Վ.Պետրոսյան արձակագիրը հաճախ իր երկխոսությունները մեկնաբանելու կարիք է զգում, որով և խոսքն ավելի ընկալելի և ներգործուն է դառնում.

«Մենք ծանոթացանք:

- Մերի:

- Ջեկ:

Իսկական անունն չասացի: Սկզբունքի հարց է աղջիկներից առհասարակ չեմ ասում իսկական անունն» (1, I, 48):

Երբեմն երկխոսության մասնակիցներից մեկը կարող է լինել հենց ինքը՝ հեղինակը: Տրամաբանական հետաքրքիր դասավորություն ունի Վ.Պետրոսյանի «Հայկական էսքիզներ» երկը, որտեղ հաճախ երկխոսության մի բևեռը հեղինակն է: Այստեղ խոսակիցների անձնական փոխհարաբերությունը խոսքի արտահայտության տարբեր ձևեր է առաջ բերում: Ակնհայտ է, որ խոսքային հաղոր-

¹ Ֆ.Խլղաթյան, Ոճաբանական բառարան, Եր., 2000, էջ 58-59:

դակցումը կարող է շատ կարճ լինել, նույնիսկ արտահայտվել մեկ-երկու բառով, կարող է վերածվել զրույցի.

«- *Բարև,- ասում է նա ինձ,- չես երևում:*

- *Բարև,- ասում եմ:*

- *Չո բան չի՞ պատահել, մի տեսակ ես...*

- *Աղջիկս մի քիչ մըսել է,- անտարբեր ասում եմ ես:*

Նրա դեմքը նտահոգ է դառնում» (1, I, 308):

Վ.Պետրոսյանի արձակի երկխոսություններն իրենց բնույթով և հնչերանգային կառուցվածքով բազմազան են: Դրանք աչքի են ընկնում կոչականների առատությամբ: Կոչականի հիմնական գործառնությունը հաղորդման վրա խոսակցի ուշադրության հրավիրումն է: Երկխոսություններում կոչականը կարևոր (բայց ոչ պարտադիր) տարր է: Հաճախադեպ են միանդամ կոչականները.

«- *Արամ, ես քեզ չեմ հասկանում, ախր դու դեռ բոլորովին երեխա ես, ու՞ր կարող ես գնալ մե՞նակ...*

- *Մի՛ տխրիր, մայրի՛կ, չեմ կորչի, աշխարհում լավ մարդիկ շատ կան»* (1, I, 45):

Քննվող երկխոսություններում մեծ տարածում ունեն *հայրիկ, վարպետ, քույրիկ, եղբայր (ախպեր)* և նմանատիպ դիմելաձևերը, որոնք երբեմն գործածվում են *ջան* փաղաքշական, սիրալիր վերաբերմունք արտահայտող բառի հետ.

«- *Բարև, քույրի՛կ,- ասացի:*

- *Բարև, ախպեր՛ ջան,- կինը նայեց ինձ հազար տարվա ծանոթի պես»* (1,306):

«*Վարպետը շարունակում էր երգել:*

- *Ի՞նչ երգ է,վարպետ,- ասում եմ ես:*

- *Չին է,մամս էր երգում»* (1, I, 310):

Առաջնային է բայաձևերի և անձնական դերանունների երկրորդ դեմքի գործածությունը: Այն երկխոսության կառուցվածքային էական տարրերից է.

«-*Երեխաներ ունե՞ս:*

-*Տղա:- Կինը ժպտաց:- Իսկ դու՞...»* (1, I, 76):

Հայտնի է, որ խոսքի, անգամ յուրաքանչյուր նախադասության մեջ արտահայտվում է խոսողի վերաբերմունքն իրականության նկատմամբ ունեցած հարաբերության տեսանկյունից: Խոսողի և խոսակցի գործածած նախադասությունների հաղորդակցային դերի և փոխհարաբերության առումով առանցքային նշանակություն ունեն նախադասության երանգային տեսակներն ու նրանց տարբեր գուգորդումները: Երկխոսության մեջ կարող են գործածվել նախադասության երանգային բոլոր տեսակները:

Վ.Պետրոսյանի արձակում առավել գործածական են հարցական-պատմողական նախադասություններով արտահայտված երկխոսությունները, առանձին հարցական նախադասություններով արտահայտված երկխոսությունները, առանձին պատմողական նախադասություններով արտահայտված երկխոսությունները: Երկխոսության կազմի մեջ մտնող նախադասությունների երանգային տեսակների ընտրությունը կարող է պայմանավորված լինել տարբեր գործոններով (խոսելու իրադրություն, զրուցակիցների հաղորդակցական հարաբերություն, լեզվական մակարդակ և այլն):

Երկխոսության մեջ իր որոշակի տեղն ունի հարցումը. այն երկխոսության առավել բնորոշ հատկանիշն է: Հարցական հնչերանգը ոչ թե անբողջական նախադասության, այլ նրա որևէ բառին կամ մի քանի բառերին է վերաբերում: Հայտնի է հարցումների երկու մեծ խումբ. ա) հարցական բառով հարցում, բ) առանց հարցական բառի հարցում: Երկխոսություններում հարցումները հիմնականում ձևավորվում են հարցական դերանունների և հարցական եղանականիչ բառերի միջոցով: Վերջիններս զգալի չափով նպաստում են խոսքը կոնկրետ դարձնելուն և այն ավելորդ բառերից բեռնաթափելուն:

Պատմողական նախադասություններով սովորաբար հաստատվում կամ ժխտվում է մի բան: Պատմողական նախադասությունը ներկայացնում է չեզոք հաղորդում՝ առանց կոնկրետ վերաբերմունք ցույց տալու (եթե նրա կազմում, իհարկե, վերաբերականներ չկան): Նրա ձևավորման համար կարևոր նշանակություն ունի հնչերանգը, թեև վերջինս այդքան ցայտուն չէ ի տարբերություն մյուս տեսակների:

Հարցական և պատմողական նախադասություններով արտահայտված երկխոսություններն առավել շատ գործածվում են հեռախոսագրույցներում, որոնք հաճախ են հանդիպում Վ.Պետրոսյանի արձակում: Այստեղ հարցումը կարող է լինել հաղորդակցման սկիզբ և անմիջապես պատասխան հայցել.

«Ահա և տաքսաֆոն:

- Աշո՞տ:

- Ամեն ինչ լավ է կարճես:

- Գա՞մ:

- Հինա չէ: Մեկ-երկու ժամից» (1, II, 230):

Վ.Պետրոսյանի արձակի երկխոսություններում որոշակի տեղ ունի «հարցում—հարցում» կառույցը: Հարցին հարցով տրված պա-

տասխանը կոչվում է լրացահարցական նախադասություն:² Հարցական հնչերանգով պատասխան նախադասությունները կարող են արտահայտել համաձայնություն, հաստատել հարցունով ասված իրողությունը, փաստը:

«- Պարե՞նք:

- *Դու սիրու՞մ ես այս...,- ես ուզում եմ ասել նման երաժշտությունը»* (1, I, 56):

Երբեմն *այո*-ի փոխարեն գրուցակիցը կարող է գործածել ճարտասանական հարցական նախադասություն: Ճարտասանական հարցը մտքի արտահայտման ոչ սովորական ձև է. այն պատասխան չպահանջող կամ իր մեջ արդեն իր պատասխանն ունեցող հարց է, որն արտահայտում է հուզական լիցքով հագեցած միտք.

«- *Դու ծխու՞մ ես:*

- *Իսկ ո՞վ չի ծխում»* (1, I, 454):

Պատմողական նախադասություններից կազմված երկխոսություններն ավելի շատ գործածվում են գրույցի մեջ: Պատմողական նախադասությունը կարող է արտահայտել խոսողի կարծիք, դիմացինին ինչ-որ ձևով ներկայանալու ձգտում և այլն:

«- *Չես խոսում, Տաթևիկ:*

- *Խոսում եմ, բայց քո նման, մտքում»* (2, 246):

Արձակագրի ստեղծագործության սյուժետային շղթան հաճախ է հյուսվում յուրահատուկ երկխոսություններով: Երկխոսության դրսևորումներից մեկը կոչվում է միակողմանի. այս դեպքում խոսողն ունի լսողներ, որոնք երկխոսությունը պայմանավորող անձեր են, սակայն ըստ էության հանդես են գալիս լսողի դերում: Նման դեպքերում հանդես են գալիս ըղձական նախադասություններ: Օրինակ՝

«-*Իսմենք մեր ժողովրդի կենացը,- ասաց տանտերը, որ օրորվում էր ոտքի վրա,- խմենք ոտքի վրա, մեր տանջված ժողովրդի, մեր...*

Բոլորը ոտքի կանգնեցին» (1, I, 315):

Միակողմանի երկխոսությանը փոքր չափով մոտենում է բացադարձությունը՝ սուկ խոսողի հիշողության մեջ ապրող, հեռվում գտնվող կամ մահացած անձանց դիմելը, որոնցից դիմողը պատասխան չի ստանալու:³ «Կեսգիշերային գրույց» պատմվածքի հերոսը բարձրաձայն գրուցում է իր վաղամեռիկ հոր հետ: Նա չի ուզում հավատալ, որ հայրը կենդանի չէ.

² Տե՛ս *Ս.Աբրահամյան,Վ.Առաքելյան,Վ.Քոսյան*, Հայոց լեզու, 2-րդ մաս, Եր., 1975, էջ 119:

³ Տե՛ս *Ֆ.Խլիլաբյան*, Ոճաբանական բառարան, Եր., 2000. էջ 129:

«- Քո կենացը, հայրիկ:

Գինին տխրություն և հուշեր է արթնացնում իմ մեջ, իսկ քո թռռը՝ իմ որդին, ուզում է գրող դառնալ...

Դու շատ շուտ գնացիր, հայրիկ, ես նույնիսկ չհասկացա, որ դու գնում ես. վեց տարին կարճ ճանապարհ էր մահը հասկանալու համար, ինչու՞ այդքան շտապեցիր, հայրիկ...» (1, I, 173):

Այս միակողմանի երկխոսության մեջ, թվում է, գրուցակիցը ներկա է գրույցին, նրան դիմում են, ինչպես կդիմեն ներկա եղող մարդու: Այդ պահին որդին գործում է նաև հոր փոխարեն. «Մեր բաժակները զնգում են, ես կում-կում խմում եմ նաև իմ գինին, հետո հորս»: Ջրույցի միջոցով բացահայտվում է հերոսի ներաշխարհը:

Երբեմն երկխոսության մեջ կարող է լինել մտքի տրամաբանական կապի խախտում, որը մարդու հոգեկան ապրումների, հուսախաբության, հոգնածության արդյունք է: Վ.Պետրոսյանի ստեղծագործություններում երբեմն հանդիպում են այդպիսի երկխոսություններ, որոնք նույնպես խոսքային հաղորդակցման տարատեսակ են: Այստեղ մտքի հասկանալիությունը գալիս է բնագրից:

Հոգեբանական ծանր ապրումների մեջ հայտնված աղջիկը անորոշ պատասխան է տալիս խոսակցին: Կյանքում պատահում է և այսպես: Քննությունից հուսախաբ տուն վերադարձող օրիորդի միտքը բևեռված է իր համար կարևոր մի հարցի շուրջ.

«- Չե՞ք ասի՝ ժամը քանիսն է,- հարցնում եմ մի աղջկա, որ անցնում է իմ կողքով:

- Տասնվեց միավորով դուրս մնացի:

Աղջիկը, որին ժամն եմ հարցնում, ժպտում է, և ես նկատում եմ, որ նրա աչքերում միանգամայն բնական արցունքներ են» (1, II, 284):

Խոսքի յուրահատուկ դրսևորում ունի հետևյալ տրամախոսությունը, որտեղ հեղինակային միջամտությունն օգնում է երկխոսության ճշգրիտ ընկալմանը.

«- Վանա կողմերի՞ց եք...,- հարցրեց:

- Երևանի,- ասացի: Երկի լսեց միայն վերջին վանկը:

- Հա, լավ է, երկրացի եմք. դու կհիշե՞ս մեր վան...» (1, I, 398):

Վ.Պետրոսյանի արձակում հանդիպում են նաև անպատասխան երկխոսություններ (ա-ն ասաց/հարցրեց, բ-ն լռեց), որոնք խոսքը հետաքրքրական, ինքնատիպ են դարձնում.

«Հայրիկ,- աղջկա ծայնը զրնգում էր, բայց հայրը չպատասխանեց» (1, II, 600):

«Ինձ թվում էր, որ Դուք լավ մարդ եք,- ասաց կինը,- բայց գուցե հակառակն է:

Ես ոչինչ չպատասխանեցի» (1, I, 42):

Լռությունը կարող է լինել. ա) համաձայնության նշան, բ) անհամաձայնության նշան, գ) չկողմնորոշվելու նշան: Հնարավոր է, որ խոստովը խոսակցից պատասխան չի սպասում, լուր է հաղորդում խոսակցին, ինչ-որ բան է հանձնարարում, կանչում է հեռվից և այլն:

Ամփոփենք: Վ.Պետրոսյանի ստեղծագործություններում երկխոսությունները ոճական որոշակի արժեք ունեն: Հեղինակի խոսքարվեստը պայմանավորված է լեզվի օգտագործման անհատական յուրահատկություններով, հատկապես ինքնատիպ երկխոսությունների կառուցմամբ, որոնք խոսքին հաղորդում են բնականություն և զրավչություն:

Բնագրային սկզբնաղբյուրներ

1. **Պետրոսյան Վ.**, Ընտիր երկեր, հ. I,II, Եր., 1983:
2. **Պետրոսյան Վ.**, Վերջին ուսուցիչը: Վիպակներ և պատմվածքներ, Եր., 1980:

**ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԸ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՐԳԱՆՈՒՄ**

Վ. Բրյուսովի բանաստեղծություններին հայ ընթերցողն առաջին անգամ ծանոթացել է Վ. Տերյանի միջոցով: 1912-13 թվականներին Թիֆլիսում հրատարակվող «Հուշարար» շաբաթաթերթում և «Գեղարվեստ» ամսագրում Վ. Տերյանը տպագրում է Վ. Բրյուսովի «Լինել մենակ» (“Быть без людей”), «Տխուր երեկո» (“Трустный вечер”) և ևս ութ բանաստեղծություն:

Վ.Բրյուսովի հանդեպ Վ.Տերյանի ցուցաբերած հետաքրքրությունը պատճառաբանվում է երկու բանաստեղծներին համակած սիմվոլիզմով, Վ. Բրյուսովի նորարական վարպետությամբ և նորագույն գրական շարժման եռանդուն գործիչ լինելու համգամանքով:

Վ. Բրյուսովին մեծ սիրով են թարգմանել նաև Վ.Նորենցը, Ս.Տարոնցին և Պ.Սևակը:

Պ.Սևակի գրական ժառանգության մեջ որոշակի տեղ են գրավում ռուս բանաստեղծների ստեղծագործությունների թարգմանությունները: Թարգմանված բանաստեղծությունները տարբեր են իրենց շոշափած թեմաներով, կառուցվածքով, սակայն ակնհայտ է նաև, որ նրանցում ասվածը հիմնականում մոտ ու հոգեհարազատ է եղել թարգմանիչ բանաստեղծին:

Պ. Սևակը մեծ սիրով ու երախտագիտության բարձր զգացումով է խոսել Վ. Բրյուսովի մասին: Սրա վկայությունն է նրա «Շնորհակալիքն ասենք մինչև վերջ» հոդվածը, որ տպագրվել է 1964 թ. հունիսի 5-ի «Գրական թերթում»՝ «Վ. Բրյուսովը Հայաստանի և հայ մշակույթի մասին» ժողովածուի առիթով: Պ. Սևակը Վ. Բրյուսովին անվանում է «մեր դարավոր մշակույթի վերամկրտության կնքահայր», իսկ նրա «Հայաստանի պոեզիան»՝ «մեր ազնվության վկայական պարզված աշխարհի արյունոտ ղեմքին, անձնագիրը մի ժողովրդի, որ ապրելու իրավունքը ձեռք է բերել ոչ միայն իր դարավոր մաքառումով, այլև իր հոգևոր այն պաշարով, որ ներմուծել էր համաշխարհային քաղաքակրթության և մշակույթի մթերանոցը»¹:

Ռուս բանաստեղծի հանդեպ տածած այս համակրանքից ու մեծ հարգանքից էլ հավանաբար ծնվել է Վ. Բրյուսովի մի շարք բանաստեղծությունների թարգմանության պահանջը:

¹ Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 5, Եր., 1974, էջ 238:

Գրականագետ Ա.Կ.Սիմոնովան իր հոդվածներից մեկում (“Стихотворения В.Я. Брюсова на армянском языке”)² արտահայտում է այն միտքը, որ Վ. Բրյուսովի բանաստեղծությունների թարգմանիչը պետք է լինի ոչ միայն “человеком широко образованным и культурным, но и склонным к образности особого интеллектуального плана”:

Ծիշտ կլինի, եթե ասենք, որ Պ. Սևակը հենց այդպիսի մտավորական է. նա բանաստեղծ է, որին մարդու ներաշխարհի, հոգեկան տվայտանքների պատկերավորման լավագույն վարպետ կարելի է համարել:

Պ. Սևակը թարգմանել է Վ. Բրյուսովի բանաստեղծություններից մոտ երկու տասնյակ: Դրանք են՝ «Սանդուղք», «Յուրգիս Բալտրուշայտիսին», «Աշխարհ», «Գրադարաններ», «Կմեռների ես», «Աշխատանք», «Փարիզ», «Օր», «Ճամփորդ» և այլն:

Վերոհիշյալ հոդվածում Ա.Կ.Սիմոնովան Վ.Բրյուսովի պոեզիան համարել է «խոհերի պոեզիա», և սրա լավագույն հաստատումն է «Սանդուղք» (“Лестница”) բանաստեղծությունը:

Դեպի վեր ձգվող աստիճանը բանաստեղծության հերոսին հրապուրում, նպատակին հասնելու համար նրան ուժ ու վստահություն է ներշնչում: «Տեղ հասնելու իղձը քարե» հերոսին «անվերջ վերև, անվերջ առաջ է» մղում: Չնայած «մտքերն անհույս» են և ծածկված տարիների փոշու հաստ շերտով, և լույս հավատը հոգու խորքում փշրվել, խորտակվել է, բայց հերոսը փայփայում է տեղ հասնելու և հավերժանալու գաղափարը: Սակայն նա մի պահ դանդաղում է, հետադարձ հայացք ձգում անցած աստիճանների՝ իր կյանքի անցած ուղու վրա, և զարմանում, որ մի ժամանակ ինքը ոտք է դրել այդ բոլոր աստիճաններին: Ո՛չ, ինքը չի կարող սայթաքել, պիտի ձգտի վեր, հասնի նպատակի իրագործմանը:

Սա է բանաստեղծության փիլիսոփայությունը, սա է դեպի նպատակի իրագործումը համառորեն ձգտողի փիլիսոփայությունը. սա սանդուղքի էությունից մարդու հոգում ծնված խոհերի արտահայտությունն է: Հինգ քառատողից բաղկացած բանաստեղծության սևակյան տարբերակը բնագրի համեմատ ունի հետևյալ կառուցվածքը: Բնագրի առաջին քառատողն ունի 7-5-8-5, երկրորդը՝ 7-5-7-6, երրորդը՝ 7-6-7-6, չորրորդը՝ 8-6-7-6, հինգերորդը՝ 7-6-7-6 վանկանի տողեր: Թարգմանված բանաստեղծության առաջին քառատողն ունի 7-8-8-8, մնացածները կազմված են 8-վանկանի տողերից: Համեմատությունը թույլ է տալիս ասել, որ բնագրում բանաստեղծութ-

² Брюсовские чтения, Ереван, 1969, с. 463.

յան տողերը կարճ են, թարգմանության մեջ՝ փոքր-ինչ երկար: Տարբերությունը չնչին է, հետևաբար երկու դեպքում էլ բանաստեղծության տողերի արտասանության տևողությունը համարյա նույնն է: Հանգավորումը և բանաստեղծության երաժշտականությունը կարելի է անթերի համարել: Այսպես՝

Все каменной ступени,
Все круче, круче всход,
Желанье достижений,
Еще влечет вперед.
Աստիճաններ՝ անվերջ քարած,
Բարձրանալը՝ անվերջ վերև,
Դեռ մղում է անվերջ առաջ
Տեղ հասնելու իղձը քարե:

Բանաստեղծության թարգմանված տարբերակում առկա են և՛ բաղաձայնույթ, և՛ առձայնույթ, որոնց հետևանքով քառատողի ռիթմական և երաժշտական արժեքը ոչնչով չի զիջում բնագրին: Այսպես, առաջին քառատողում բաղաձայնույթի միջոցով հնչյունախաղ են առաջացնում *ք-ծ, ծ-ծ, դ, ք, վ, ո-ր* բաղաձայնները, առձայնույթը դրսևորվում է *ա* և *է* ձայնավորների կրկնությամբ:

Հնչյունական կրկնությունները, ինչպես հայտնի է, երբ արվում են հատուկ նպատակադրումով և չափավոր, ունենում են արտահայտչական կարևոր նշանակություն³: Բանաստեղծության արտահայտիչ լինելուն նպաստում է նաև հայերենին բնորոշ վերջնահար շեշտադրությունը:

Այս ամենը պայմանավորում են բանաստեղծության հնչյունական ներդաշնակությունն ու ռիթմը, որոնք էլ նպաստում են հերոսի՝ անվերջ բարձրանալու ձգտման բանաստեղծական պատկերի լիարժեք ձևավորմանը:

Երկրորդ քառատողում բաղաձայնույթը համեմատաբար քիչ է արտահայտված. կրկնվում են նույն կամ նման *կ* (տակ-խորտակ), *ք* (մտքերըս-խորքում), *վ* (անվերջ-հավատը), *շ* (փշոտ-փոշի) հնչյունները, իսկ վերջում *գ-կ-ք* պայթականներն ընդգծված արտահայտչական լիցք են հաղորդում («Հոգուս խորքում փշուր, խորտակ»):

Երրորդ քառատողում *ղ* բաղաձայնի կրկնությունը խոսքը բաժանում է արտասանական համաչափ հատվածների, որից էլ ծնվում են քառատողի ներդաշնակ արտասանությունը, հնչեղությունը:

³ *Գ.Բ. Ջահուկյան, Ֆ.Գ. Խլղաթյան*, Հայոց լեզու, Եր., 1994, էջ 62:

Դանդաղելով միայն մի պահ
Ետ նայելու ո՞նց փորձ չանել
Եվ ինչ, իբրև շղթա մի պաղ,
Աստիճաններ, աստիճաններ:

Վերջին քառատողում իրոք որ հնչյունախաղ են ստեղծում *գ-կ-ք, դ-թ* պայթական և *վ* շփական հնչյունները, առձայնությամբ արտահայտվում է *է, հ, ու* ձայնավորների կրկնությամբ:

Եվ սանդուղքը՝ վեր, վեր անվերջ....

Եվ մի՞թե ես չեմ սայթաքի,

Որ գոյության երկնքի մեջ

Ասուպ դառնա իմ հեգ հոգին:

Բոլոր քառատողերը վերջանում են արական հանգերով, որ պատճառաբանվում է մեր լեզվի շեշտադրման յուրահատկությամբ:

Բառապաշարը, ինչպես հայտնի է, մեծ դեր ունի ստեղծագործության թարգմանության ժամանակ. այն համարվում է լեզվական հիմնական ատաղձը, և թարգմանիչ բանաստեղծի վարպետությունը դրսևորվում է հենց այդ պահին. որքան հմտորեն է կատարվում բառերի ընտրությունը, այնքան հաջող է թարգմանությունը: Պ.Սևակը թարգմանության ժամանակ հիմնականում գործածել է գրական լեզվին բնորոշ բառեր և քերականական ձևեր, բարձր ոճի բառակապակցություններ, արտահայտություններ: Հազվադեպ են հանդիպում առօրյա-խոսակցական բառաշերտին բնորոշ կամ բարբառային երանգ ունեցող բառեր ու կապակցություններ, որոնք թարգմանչի հմուտ գրչի շնորհիվ դրականորեն են ազդում տեքստի հնչեղության և իմաստային խորքի դրսևորման վրա:

Երրորդ քառատողում “Помедлив на мгновение, Бросаю взгляд назад” տողերը թարգմանված են այսպես՝ «Դանդաղելով միայն մի պահ՝ Ետ նայելու ո՞նց փորձ չանել»: Եթե *ոնց*-ի փոխարեն գրվեր գրական *ինչպես* բառը, ապա, կարծում ենք, չէր շահի նախադասության ո՛չ հնչեղությունը, ո՛չ էլ խորիմաստությունը:

Թարգմանության ժամանակ Պ. Սևակը իրեն թույլ է տվել (ինչպես կատարվում է թարգմանության ժամանակ ընդհանրապես) բանաստեղծության բովանդակությունն արտահայտել բնագրից տարբեր՝ յուրահատուկ ձևով, հայերենին բնորոշ լեզվամտածողությամբ: Հակված ենք մտածելու, որ սրա հետևանքով բոլորտյան հերոսի խոհերն ու տվյալանքները ճիշտ են վերարտադրվել:

Այսպես, “Все каменной ступени, Все круче, круче восход” տողերը հայերեն հնչում են «Աստիճաններ՝ անվերջ քարած, Բարձրանալը՝ անվերջ վերև» ձևով, “Желанье достижений, Еще влечет вперед” տողերի իմաստը Պ. Սևակն արտահայտել է «Դեռ մղում է անվերջ առաջ Տեղ հասնելու իղձը քարե» նախադասությամբ,

“Уверенности прежней В душе упорной — нет” «Եվ առաջվա հավատը լույս հոգուս խորքում փշուր, խորտակ» ձևով, “Как белой цепи звенья Ступеней острых ряд” նախադասությունը բոլորովին այլ կառուցվածքով է թարգմանվել՝ «Եվ ի՞նչ, իբրև շղթա մի պաղ, Աստիճաններ, աստիճաններ»: Հայերեն տարբերակը կարծեք ավելի խոսուն է ստացվել:

Հաջող է թարգմանված նաև Վ. Բրյուսովի «Գրադարաններ» բանաստեղծությունը: Սա հեղինակի խոհերի լավագույն արտահայտություններից մեկն է: Պ.Սևակին, կարծում ենք, այս բանաստեղծությունը գրավել է իր խոհափիլիսոփայական կողմով:

Ստավորական մարդուն գրադարանը կարող է տանել դարերի խորքը, կարող է բացահայտել շատ հրաշքներ, կարող է դառնալ խիստ մտերիմ կամ «վառ ջահ ականակիր խավարում»:

Նախորդ բանաստեղծության համեմատ սա կազմված է երկարաշունչ՝ 14-վանկանի տողերից: Հանգերն արական են, հնչյունական կրկնությունների՝ բաղաձայնույթի և առձայնույթի օգտագործումը մեծ տեղ է գրավում: Բացի երկրորդ և հինգերորդ տողերի մոտավոր համարվող հանգերից (գլուխ-իլու, հասել-սեզ) մյուս հանգերը ճշգրիտ են, սրանցում կրկնվում են նույն հնչյունները (պահված-հրդեհված, գրքերի-տեգերի, հեռուն-եռուն և այլն): Բառապաշարի առումով թարգմանությունը բավական մոտ է բնագրին, քիչ փոփոխություններ կան: Սրանք էլ, թերևս, բնագրի թարգմանված տարբերակի առանձնահատկություններից մեկը կարելի է համարել:

Երրորդ քառատողում “Вскрывающих пред нами даль Дороги” նախադասությունը հայերեն հնչում է այսպես. «Որ բացում են մեր առաջ ուղիների լուրթ հեռուն»: Այստեղ *հեռուն* գոյականին վերագրվել է մի գողտրիկ որոշիչ՝ *լուրթ* ածականը: Չորրորդ տողը՝ “То солнце дня, то месяц сереброгорий”, ստացել է «Իբրև արծաթ լուսնեղջյուր կամ արև մի եռուն» տեսքը: «Արծաթ լուսնեղջյուր», «արև եռուն», «լուրթ հեռուն» բառակապակցություններն այնքան դիպուկ, խոսուն և տեղին են, որ, անխոս վկայում են թարգմանչի «բացառիկ պատկերավորման ունակ» լինելը: Չորրորդ քառատողի վերջին նախադասությունը ևս փոքր-ինչ փոխված է, բայց դրանից, կարծում ենք, բանաստեղծությունը միայն շահել է: “Оружие для всех времен и стран, на всех путях, на всех земных границах” տողը թարգմանվել է «Մի գենք, որ պետք է գալիս ամեն երկրի և ազգի, Ամեն դարում, ամեն տեղ, երկրի ամեն ոլորտում»: Նման փոփոխությունները Ա. Սիմոնովայի հողվածում համարվում են «ստեղծագործության էության պահպանման համար անհրաժեշտ միջոցներ, քանի որ այդ բառերի ընտրությունը կատարվել է վարպետո-

րեն, նրանք չեզոք են ու չունեն լրացուցիչ արտահայտչականություն, որով հակադրվեն բնագրին»:

Ա. Կ. Սիմոնովան վերոհիշյալ հոդվածում, խոսելով բանաստեղծների մասին, ովքեր թարգմանել են Վ. Բրյուսովի ստեղծագործությունները, անում է որոշակի դիտողություններ այս կամ այն առիթով: Մասնավորապես հակիրճ խոսելով Պ. Սևակի աշխատանքների մասին՝ հոդվածագիրը նկատում է, որ «...он переводит не слова, а, как это и следует в поэзии, образ-мысль, иной раз прибегая к смелым заменам и поэтическим вольностям»: Բանաստեղծության առաջին երկու տներում, ինչպես նկատում է հոդվածի հեղինակը, իրար են հաջորդում նախադասություններ, որոնցից առաջինը («Ականակիր խավարում վառ ջահի պես հրդեհված» - «Тылая факелом во мраке») իր բովանդակությամբ կամ էությամբ բնագրին հարազատ է, մինչդեռ հաջորդ նախադասության մեջ Պ. Սևակը ռուսերենի «чей-то ум» բառակապակցությունը արտահայտել է «ինչ-որ խելոք մի գլուխ» դարձվածային արտահայտությամբ և հմտորեն կառուցել խոսքային միջավայրը՝ խիստ զրական բառերի կողքին զետեղելով առօրյա-խոսակցական ուղրտին բնորոշ արտահայտություններ և բառեր, որի հետևանքով տեղի է ունեցել ոճերի համակցում և խոսքի արտահայտչականության ուժեղացում: Այսպես՝

Վաղուց անցած դարերում *ինչ-որ* խելոք մի գլուխ
Լույս է վառել, և ցայսօր նա շողում է, *չի հանգչում:*

ԵՎ կամ աղեղն է ձգել հուժկու մի ձեռք, և հլու
Նույն նշանի ուղղությամբ՝ նետն է այսօր հար թռչում:

В былых столетях чей-то ум зажег

Сверканье, - и доньше светит

Иль жилье тетивы напрячь взмог,

И в ту же цель стрела поньше летит.

Վերլուծելով բանաստեղծության շարահյուսական կառուցվածքը՝ նկատվել է, որ բանաստեղծության մեջ գերիշխում են երկբաղադրիչ և բազմաբաղադրիչ բարդ նախադասությունները, նախադասության անդամների շարադասությունը թե՛ ուղիղ է, թե՛ քրոչում, իսկ դերբայական դարձվածներ, դարձվածքներ ու դարձվածային արտահայտությունները քիչ են կամ չկան: Հայերենի վերջնավանկ շեշտադրության շնորհիվ (շեշտվում է բառավերջի վանկի ձայնավորը) հանգերը արական են, հիմնականում ճշգրիտ (կրկնվում են նույն հնչյունները):

Բանաստեղծությունը կազմված է քառատող տներից, հանգավորումը կատարվել է կից, խաչաձև և օղակաձև հաջորդակա-

նությանը, տողերը վերջնահանգ են, մի երևույթ, որ բանաստեղծության հանգավորման՝ հայերենին բնորոշ սովորական ձևն է:

Ահա բանաստեղծության վերջին տունը.

Այն մուժի մեջ, ուր կյանքի դատաստանը չի հասել,

Ուր ստվերները ստի երերում են ու ծփում,

Այնտեղ անմահ գրքերի վրիժառու տեզը սեզ,

Որ սրվել է դարեդար, *անսխալ է միշտ խփում*:

«Օր» բանաստեղծության թարգմանությունը նույաես հաջողված է համարվում: Բանաստեղծությունը խոհափիլիսոփայական բովանդակություն ունի: Այն անվերջ հարատևող կյանքի պատկերն է՝ ծանոթ մեզ Աբու-Լալայի խորհրդածություններից, տերյանական «Կարուսելից»: Օրը կյանքի ակնթաթ է լեցուն «գիշերվա մթին գառանցանքով» և «շռայլ կրկին գեղեցիկ ու վերստին շքեղ» ցերեկվա լույսով, «մշուշի մեջ» մեռնելու և «արևի հետ մեկտեղ հարություն» առնելու խորհրդով:

Հակիրճ ներկայացնենք բանաստեղծության կառուցվածքային առանձնահատկությունները: Օրը պահի տեսքով ներկայացված է երկարաշունչ՝ 18-վանկ տողերով, իսկ բնագրում տողերը համեմատաբար կարճ են՝ 10-12-վանկանի: Հանգավորման վերոհիշյալ ձևերն են տեղ գտել, նախադասությունները հիմնականում բարդ են՝ երկբաղադրիչ, բազմաբաղադրիչ, ուղիղ և շրջուն շարադասությամբ, լրացուն-լրացյալներով, պատկերավոր բառակապակցություններով և ծորուն երաժշտական հնչեղությամբ: Թարգմանիչ բանաստեղծը այստեղ բառերի ընտրությունը համաձարկորեն է կատարել: Ինչպես մեկ անգամ արդեն ասվել է, բառացի թարգմանությանը հետ զուգահեռ կան նաև բառեր ու կապակցություններ, որոնց համարժեքները չկան բնագրում: Այսպես՝ “Вновь бросься в день, в целящий водоем” - «Դու էլ նորից նետվիր *այս նորաբաց* օրվա ավազանը բուժիչ», “Глядись в стекле глубококом” - «Նայիր *հայելու* մեջ խոր ու խորհրդաշատ», “от света к свету в безднах” - «*անտակ* անհուններում՝ *երկրից մինչև երկիր*» և այլն:

Նշված բանաստեղծությունների քննությունը հիմք է տալիս համարձակորեն ասելու, որ Պարույր Սևակը լավ է հասկացել Վալերի Բրյուսովին, և սա է պատճառը, որ թարգմանված գործերը համարվում են քնարական լիարժեք բանաստեղծություններ:

**ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ
(ՉԵՌԱԳՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ)**

Աստվածաշնչի հատուկ անունների ուսումնասիրման համար մեծ կարևորություն են ներկայացնում բառարանները: Մեր քննությունը վերաբերում է Սուրբ Գրքի հատուկ անուններին, ուստի խիստ կարևորել ենք այն բառարանների ուսումնասիրությունը, որոնք ներկայացնում են այդ անունները, անշուշտ, յուրաքանչյուրը՝ ոչ ամբողջական: Աստվածաշնչյան հատուկ անունների ուսումնասիրման հիմք պետք է դառնային «Բառք եբրայեցվոց» (ԲԵ), «Մեկնություն անվանց եբրայեցվոց» (ԱԵ) ձեռագիր բառարանները, Երեմիա Մեղրեցուն վերագրվող «Բառգիրք հայոց» (ԲՀ) բառարանը, առաջին տպագիր Աստվածաշնչի Ոսկանյան անվանացանկը (ՈԱ), որը նույնությամբ կրկնվում է Մ.Սեբաստացու հրատարակած Աստվածաշնչուն, և, ի վերջո, Մխիթար Սեբաստացու «Բառգիրք յատուկ անունաց Աստուածաշունչ գրոց Հին և Նոր կտակարանաց» բառարանը» (ՄՍԲ):

Սուրբ Գիրքը (մասնավորապես Հին կտակարանը) ոչ թե եբրայերենից, այլ նախ՝ ասորական, ապա՝ հունական բնագրերից կատարված թարգմանություն է, և, ըստ այդմ, հայերեն Աստվածաշունչը եբրայական բնագրի թարգմանության թարգմանություն է, ուստի եբրայերենի ազդեցությունն էլ հայերենի վրա անմիջական չէ, այլ միջնորդավորված: Դա մեզ համար կարևորվում է այնքանով, որ եբրայական անունների հայերեն տառադարձումների, թարգմանական ճշգրտումների մասին լրիվ պատկերացում չենք կարող ունենալ, քանի որ գործ ունենք միջնորդ լեզուների՝ հունարենի և ասորերենի հետ, իսկ դա նշանակում է, որ անունների նախնական պատկերը անպայման որոշակիորեն խաթարվել է, փոխվել:

«Բառք եբրայեցվոցը» հայատառ առաջին եբրայեն-հայերեն բառարանն է: Սովորաբար այն համարում են երկլեզվյան թարգմանական, քանի որ եբրայական անունները թարգմանված են հայերեն, սակայն ըստ էության այդ բառարանը եբրայական հատուկ անունների բացատրական բառարան է՝ թարգմանված հայերեն:

¹ Այս բառարանների ուսումնասիրման գործում զգալի ներդրում ունի Հ.Ամալյանը, որը իր «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ» երկհատորյակում որոշակիորեն ներկայացրել է և տվել այդ բառարանների տեսական քննությունը և կատարել հետևություններ ու եզրահանգումներ:

Բառարանի ստեղծման ժամանակի և հեղինակի մասին մեր ձեռագիր հուշարձանները տեղեկություններ չեն տալիս, մանավանդ որ այն ոչ թե եբրայերենից, այլ հունարենից է թարգմանված՝ «թարգմանեալ և մեկնեալ յեբրայեցւոցն ի յոյն և ի յունէն ի հայ»։ 3. Աճառյանը գտնում է, որ այդ ձեռագրի մայրօրինակը Ժ-ԺԱ դարերից է²։ Այս փոքրիկ բառարանը ընդգրկում է 900-1000 անուն։ Արտագրությունների ժամանակ բառարանը ենթարկվել է փոփոխությունների։

Մեր ձեռքի տակ ունեցած երկու ձեռագրերի համեմատությունը³ շատ հետաքրքիր փաստեր երևան հանեց. առաջին ձեռագիրը՝ Մատենադարանի թիվ 4149-ը, 1304-1305թթ-ի Երզնկայի գրիչ Կարապետ երեցի ձեռագրի օրինակն էր, որը կազմված է՝ պահպանելով սոսկ այբբենական կարգի առաջին տառերի հերթականությունը, ինչպես՝ Ադամ, Աբել, Ադին, Արփաքսաթ, Ասուր, Աբրամ և այլն։

Մինչդեռ երկրորդ ձեռագիրը (Մատենադարան, 7039), որ մեր ձեռքի տակ ունեինք, Ժ դարի Մելքիսեթ գրչի կազմած օրինակն էր, որտեղ արդեն բառացանկը վերադասավորված էր հնարավորինս այբբենական կարգով՝ հաշվի առնելով ոչ միայն առաջին տառերի հերթականությունը։ Բայց, այնուամենայնիվ, այս ձեռագիրը ևս չի պահպանում մերօրյա ընկալմամբ տառերի բառարանային կարգը։

Վերնագրում նշվում է, որ բառարանում ընդգրկված են այն հատուկ անունները, որոնք հանդիպում են «յԱւրէնս և ի Մարգարէս և ի Նոր կտակարանս», սակայն ընդգրկված անունները թույլ են տալիս կարծելու, որ անունները վերցված են 3ին կտակարանի բոլոր գրքերից։ Հատուկ անունների զգալի մասը վերցված է Մնացորդաց գրքերից, որտեղ ներկայացված է Ադամի հետնորդների ողջ տոհմագրությունը։

Բառարանի գրեթե բոլոր բառերի վրա դրված է հունարենի կնիքը։ Հայտնի է, որ հայերենն ու եբրայերենը ունեն մի շարք հնչյունական նույնություններ ու մերձեցումներ, որոնք հատուկ չեն հունարենին, բայց դրանք բառարանում հանդես չեն գալիս՝ լեզվական անմիջական կապի բացակայության պատճառով։ Այսպես՝ եբրայերենն ու հայերենը ունեն *g, z, η, h* տառերը, որոնք չկան հունարենում, բայց քանի որ հունարենը այդ *g* և *z* տառերը դարձնում է *γ, η-ն՝ λ, /* Դալիլա-Դադիլայ, Ելիովն-Եղիոն, Էլիա/Էղիա, Թովլ/ղ/ա⁴,

² 3. Աճառյան, «Աղվանից գիրը», Տեղեկագիր, Եր., 1941, թվ. 3-4 /8-9/, էջ 5։

³ Մատենադարանի հնագույն գրչագրեր են 4149, 5596, 2371, 3937, Զմմառի 204, Փարիզի 302 և մի քանի այլ ձեռագրեր, որոնք պարունակում են «Բառք Եբրայեցւոցը»։

⁴ Ինչպես տեսնում ենք առաջին ձեռագիրը եբրայերենի դ-ի դիմաց դնում է Լ, մինչդեռ երկրորդ ձեռագիրը պահում է դ-ն։ Սա, իհարկե, բացարձակ չէ, և

Նաբաղ-Նաբալ/ իսկ *Ի*-ն բաց է թողնում, ապա այդ գրեթե նույնութ-
յամբ անցնում է հունարենից հայերենին, ինչպես՝ Սաղեմ, Երուսա-
ղեմ, Կաղես, Նեսար, Ովսաննա և այլն:

Բառարանում հետևաբար հայերեն *ը, ժ, խ, ծ, ձ, ժ, ճ, շ, չ, ջ, Վ, ր, ց* սկզբնատառերով բառեր չկան:

Արտագրությունների ընթացքում բառարան են ներմուծվել և հանվել են անուններ, այնպես որ ձեռագրերում գլխաբառերի քա-
նակը տարբեր է, այսպես՝ առաջին ձեռագրում չկան *Աբխակ, Աբ-
րա, Ազար, Ամբակում, Այենդովր, Արարովթ, Բալայենոն, Բաղայամ,
Բամա, Բայասա, Բեթաբերայ, Բեթսան, Դեբովրա, Թարովր, Ողիբա-
մա, Սենեք, Սենեքերիմ*, իսկ երկրորդ ձեռագրում դուրս են մնացել
*Եմակ, Եմակիմ, Եմգադդա, Ենովթ, Ենովս, Յոթոր, Յոպպե, Յովաբեթ,
Յովաթամ* և այլ անունները:

Սա հաստատում է այն, որ երկրորդ ձեռագրի համար բնավ
նախագաղափար օրինակ չէր կարող լինել 4149 ձեռագիրը:

Երկու ձեռագրերի հեղինակները անպայմանորեն տարբեր
բարբառների կրող են, և դա երևում է անունների հնչյունական
պատկերից՝ առաջին ձեռագրում փոխանակ *Եսայի-Եսայիա*
տրվում են *Էսայի-Էսայիա* ձևերը, *Բեդբաբե-Բեթբագե, Գոթոնիել-Գո-
դոնիել, Գաբայաթ-Գաբայադ, Եփութ-Եփուտ, Մակդադիմե-Մագդա-
դիմե, Նեբրովթ-Նեփրովթ* և այլն:

Շատ անուններ էլ աղճատվել են, անվան պատկերը փոխվել
է/ինչ խոսք, նման դեպքերում մեզ համար չափանիշ ենք ընդունել
Աստվածաշնչի բնագիրը և համաբարբառը, այսպես՝ *Ադովնիա- Ա-
դինա, Ադրագար-Ադրայագար, Անամայել-Անամել, Անայել-Աննայելյ,
Բեթաբրա-Բեթաբերայ, Թամնա-Թարմնայ, Յեբուս-Յեբրուս* զույգե-
րում առաջին ձևերն են/առաջին ձեռագիր/ ճիշտ ներկայացնում
Սուրբ Գրքի անունները, *Գարրեզիմ-Գարիզիմ, Թերակա-Թերայ,
Կոտբան-Կորբան, Կայինան-Կայնան* զույգերում երկրորդ ձևերն են
/երկրորդ ձեռագիր/ճիշտ ներկայացնում աստվածանշյան բնագիրը:
Յանդիպում են անուններ էլ, որոնք աղավաղվել են երկու ձեռագրե-
րում էլ, այսպես՝ աստվածաշնչյան *Աքիրան* անունը առաջին ձե-
ռագրում դարձել է *Աքիրամ*, երկրորդ ձեռագիրը լրիվ աղավաղել է
անվան պատկերը՝ *Աքարիմ, Սամարիա*-ն գլխաբառ է դարձել *Չսա-
մարիա* ձևով, երկու գրիչներն էլ փոխանակ *Սաբեկ*-ի տալիս են հո-
լովված *Սաբեկալ* ձևը:

Բառը սխալ է ընկալվել, գրեթե անճանաչելի է դարձել պա-
տահական վրիպումների՝ *Գոմոր*-ը ներկայացվում է *Գոմար, Սակո-*

երբեմն հակառակն է նկատվում՝ երկրորդ ձեռագիրն է *լ* դնում *դ*-ի
փոխարեն:

լա-ն սխալմամբ դարձել է *Մասուա, Մնասուվ-ը՝ Նասուվ, Պոթուր-Պոթոր, Սուկրուվ-Սուկրուվ*, ձեռագրերում հստակորեն չտարբերվող ուրոշ տառերի՝ *ա-ու, ա-տ, գ-դ, գ-դ, յ-ց, ս-ռ* շփոթման՝ *Իեստր-Իեստոր /ԲՀ-ն՝ Իեստր/*, հնչյունների դրափոխության՝ *Սաղմոնա-Սաղմոնա, Փաղեկ-Փակեղ*, անփոփման՝ *Փաղարիմ-Փաղրիմ*, հնչյունի անկման՝ *Եղովմ-Եղոմ, Եփրաթայ-Եփաթայ, Փանդունկ-Փանդուկ, Սովմնա/ս/-Սոմնաս, Քեղկիա-Քեղկա*, հնչյունի հավելման՝ *Սովաք-Սովաքի, Սովսես-Սովսեսի, Յարեդ-Յարեդի*, և մի քանի այլ պատճառներով:

Առաջին ձեռագիրը միշտ գրում է *աւ* օ-ի փոխարեն, ինչպես՝ *Աւգաւստոս, Աւնան, Աւստիգի, Աւրա, Աւրի, Զաւրաբաբէլ, Կաւիեղ/լ-էթ, Ղաւղանք, Մաւղաքի, Պաւղոս*, սակայն տալիս է նաև *Սողոս*, երկրորդ ձեռագիրը զամանակիորեն դնում է *Սաւղոս*, երբ մնացած անուններում տալիս է *օ*:

Առաջին գրիչը թե՛ բառավերջում, թե՛ բառամիջում խուսափում է յ-ի գրությունից, մինչդեռ երկրորդ ձեռագիրը պարտադիր նախընտրում է յ-ի առկայությունը, ինչպես՝ *Ազարիա-Ազարիայ, Գաբաա-Գաբայա, Բասղամ-Բայաղամ, Բասղիմ- Բայաղիմ, Բասղ-Բայաղ, Բասաս-Բայասա, Իէքաղիա-Իէքաղիա, Կանդակա-Կանդակայ, Կղենմ-Կղենայ, Մարթա-Մարթայ, Նասասովն-Նասասոն/-ԲՀ՝ Նայասոն/, Ողա-Ողիայ, Ուռնա-Ուռնայ*: Սակայն գրիչները երբեմն շեղվում են իրենց իսկ սկզբունքից, ինչպես՝ *Զաքարիայ, Եղէիլայ, Զեղը/փ/այ*:

Ամբողջ հարցն այն է, որ հակասություններն առկա են հենց միևնույն ձեռագրում. դրանք հետևյալն են՝

ա/կրկնվում են անունները, ինչպես՝ երկու գլխաբառով՝ Յովաք-եղբայր, Յովաք-եղբայր, Բաթուէլ –կոյս, Բաթուէլ-դուստր աստուծոյ կամ կոյս, Յովնան-աղավնի կամ շնորհք, Յովնան-շնորհք: Այս դեպքում վրիպումները հեշտ ընկալելի են, քանզի կրկնվում են նաև անունների բացատրությունները ամբողջովին կամ մասնակիորեն:

բ/կրկնվում են անունները, սակայն իմաստների բացատրությունները տարբերվում են, ինչպես՝ Բեզեկ- անգոսնունմ սրտի, Բեզեկ-արեզակ, Յովակիմ-արարեալ, Յովակիմ-սկիզբն անգեալ դնի⁵, Ովրա-ոչ է, Ովրա-տեսիլ յաւիտենից, Սաղաթիէլ-խաղաղութիւն

⁵ ԲՀ-ն ևս առանձնացնում է երկու գլխաբառ՝ Յովակիմ-սկիզբն, կամ անկեալ դնի, կամ տեսն զօրութիւն և Յովակիմ- տեսն պատրաստութիւն: Մեզ թվում է, որ նախնական «*սկիզբն անկեալ դնի*» արտահայտությունը ոչ թե Յովակիմ անվան բացատրությունն է, այլ սոսկ անվան գրելու ընդունված կարգ:

աաստուծոյ, Սաղաթիէլ-հայցումն աստուծոյ, Սաղեմ-շնորհ խաղաղութեան, Սաղեմ-հաստուցումն:

զ/կա համաբարբառի կազմութեան պարզունակ նախադեպ, ինչպես՝ *Յեսու-առնէ հարթութիւն, Յեսու-որդի Նաւեա:*

Հատուկ անուններին տրվում են հակիրճ բացատրություններ՝ ստուգաբանություններ, օրինակ՝ *Ասիր-խրատ, Ասկաղոն - կշռեալ, Արիա-առիւծ, Արիէլ-ծայն ասատուծոյ, Թեովփիլէ-ածասէր, Երիքով - լուսին, Երուսաղէմ-տաճար խաղաղութեան, Իսարիմ-ողորմութիւն, Իսաքար-վարձ և այլն:* Արդեւ այս բառարանում բազմաթիվ անուններ ունեն մի քանի բացատրություններ, որոնք կամ իրար հոնանիչ իմաստներ են, կամ իրար հետ բոլորովին կապ չունեցող բացատրություններ, ինչպես՝ *Արիմաթեմ- բարձրութիւն կամ լեռինք, Բեթանի- տուն փառաց, զինագանդութիւն կամ վկայութիւն, Իսահակ-ծաղր կամ խնդրութիւն, Իսմայէլ-լուր աստուծոյ կամ հաւեաց և տես զաստուած և այլն:*

Եբրայերենն ունի մի առանձնահատկություն, որ յուրաքանչյուր հոլով կարող է փոխել բառի իմաստը կամ միևնույն անվան տվյալ հոլովածը մի նշանակություն ունի, մեկ այլ հոլովածը՝ այլ, կամ ածանցի արժեք ունեցող թեկուզ մեկ տառի հավելումը տալիս է նոր իմաստ, ինչպես՝ *Անովն-որդի ազգի, Անովս- հաստութիւն կամ ժողովուրդ իմ, կամ աւզնութիւն, Ասրիէս-քահանա, Ասրիս-քահանայք, Սեղեկ-արդարութիւն, Սեղեկիա-արդարութիւն տեսառն:*

Անունները հիմնականում ճիշտ են ստուգաբանված. դա հաստատում է համեմատությունը հետագա մնանատիպ բառարանների հետ:

Մեծ չափերի են հասնում անունների իմաստների աղավաղումները:

Ստուգաբանվող եբրայերեն անուններից բացի բառարանում բերվում են հունարեն կամ հունարեն ծագում ունեցող մի շարք անուններ՝ *Պետրոս, Պողոս, Սարկոս, Բարդուղիմեոս, Ստեփանոս, Թեովփիլէ:*

Ըստ նշանակության՝ ընդգրկված անունները կարելի է դաս դասել անձնանունների՝ *Ադամ, Աբրամ, Դավիթ, Սեմ* և այլն, տեղանունների՝ *Բաբելոն, Եղեմ, Փաբավոն, Սիղոն, Սինա, Կարմեղոս*, մականունների, որոնց մեջ մտցնում ենք ժողովուրդների, ցեղերի, աղանդների, հավատ նշանակող և մի քանի այլ իմաստ ունեցող բառեր՝ *անուրիացիք, փարիսեցիք, ալելուիա:*

Բառարանում քիչ չեն հանդիպում անուններ, որոնք Աստվածաշնչում չկան. դրանք հավանաբար եբրայական կրոնական գրքերից եկող բառեր են, իսկ մի մասն էլ Սուրբ գրքի անունների հետագա աղավաղումներ, աղճատումներ են:

«Մեկնութիւն անուանց յերայեցւոց լեզուէ ի հայ բարբառ»/ՄԱԵ/ բառարանը թվակիր չէ և գրված է տասնյոթերորդ դարում: Մատենադարանում բառարանը կա յոթ ձեռագիր գրքերում՝ 2261, 4283, 5184, 7012, 7035, 7039, 9449:

Ուսումնասիրման համար մենք ձեռքի տակ ունեինք երկու ձեռագրեր՝ 2261, 7035 և Ոսկանյան անվանացանկը: Վերջինիս անվանումն է «*Երբայեցւոց, Քաղղեացւոց և Յունաց անուանց թարգմանութիւն*»: Չարմանալիորեն տարբեր էին նաև վերը նշված երկու ձեռագիր բառարանների վերնագրերը՝ «*Երբայեցւոց, քաղղեացւոց և յունաց անուանց մեկնութիւն*» (թիվ 7035) սա, ըստ թվագրման, ամենահինն է՝ 1690, և «*Մեկնութիւն անուանց յերբայեցւոց լեզուէ ի հայ բարբառ*»՝ 2261: Հակասությունը ավելի էր խորանում նրանով, որ ըստ «Ցուցակ ձեռագրացի»⁶ 2261 ձեռագիրը պարունակում է «*Բառք Երբայեցւոցը*», իսկ 7035 ձեռագիրը՝ «*Մեկնութիւն անուանց երբայեցւոց ի հայ լեզու*»: Առաջին իսկ համեմատությունը ցույց տվեց, որ այդ բառարանները՝ անկախ տարբեր վերնագրերից, նույն բառարաններն են. թեև ունեն նաև ձեռագիր բառարաններին հատուկ տարբերություններ: Դրանցից ոչ մեկը չի նույնանում Ոսկանյան անվանացանկի հետ, թեև կան բազմաթիվ անունների և դրանց իմաստային բացատրությունների համընկնումներ: Երկու ձեռագրերն էլ պարունակում են մի որոշակի ընդհանուր բառացանկ և տարբեր են այնքանով, որ գրվել են տարբեր գրիչների ձեռքով, ուստի տվյալ ձեռագրի հեղինակը հաճախ կամայական մոտեցում է ցուցաբերել և ավելացրել է անուններ, հանել որոշ բառեր: Այսպես՝ 2261 (490) ձեռագիրը, որն ավելի ուշ է կազմվել, ավելի կանոնավոր այբբենական ցանկ ունի, տալիս է *Աբդոն, Աբեսսեա, Ահովտ, Ապողոս, Անտիոք, Բալլայ, Բեթաբարայ* և այլ անուններ, որ չկան 7035 (485) ձեռագրում, մինչդեռ չի տալիս վերջինիս պարունակած *Աբիդ, Արտաշես, Բաղասամ* և այլ անուններ: Կան անունների գրության տարբերություններ՝ *Արիաքսաթ-Արբագսաթ*, հին ձեռագիրը տալիս է *Ճերանիմոս*, նորը՝ *Ջերոնիմոս*: Որքան էլ 2261 ձեռագիրը մաքուր և ընթեռնելի է ներկայացնում անունները, այսուհանդերձ զգացվում է, որ հին ձեռագրի գրիչը ավելի գրագետ է եղել, իր գործին քաջահմուտ, այսպես՝ այստեղ *Ազաբ-ը դարծել է Ազահ, Հայաստանը՝ Հայեաստան, Աբրամ և Աբրասամ* ձևերը, որոնք իմաստով տարբեր անուններ են, ներկայացվել են նույն ձևով՝ *Աբրամ, Արտաշես* և *Արտաքսեթքսես* գլխաբառերից մնացել է միայն երկրորդ ձևը և այլն: Ուստի երկու ձեռագրերն էլ մենք ընդունում ենք իբրև միաս-

⁶ Ցուցակ ձեռագրաց, Մաշտոցի անվան Մատենադարանի, հ Ա, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան, Եր., 1965, էջ 758:

նական քննական բնագիր, որը բառարանագրության մեջ հայտնի է «Մեկնութիւն անուանց յերթայեցւոց լեզուէ ի հայ բարբառ», հապաված (ՄԱԵ) վերնագիրը:

Ըստ ամենահին ձեռագրի՝ (7035), այն գրված է 1690 թվականին: Անպայմանորեն սրա հեղինակը ծանոթ է եղել և ձեռքի տակ ունեցել է ԲԵ-ն: Եվ չնայած այն բանին, որ ԲԵ-ն պարունակում է շուրջ հազար, իսկ սա ընդամենը հինգ հարյուր, այսուամենայնիվ, այստեղ ներկայացվում են անուններ, որոնք չկան ԲԵ-ում, այսպես՝ *Աբբարիմ-անցք կամ անցանողք, Արդիմէլէք-ժառայ արքայի, Արդուն-ժառայ, Արհնադար- հայր կանաւոր, Ազար-մարախ, Ազան- նեղութիւն, Ամամ-մայր երկիւղ նոցա, Աման-խոռվեցուցանող, Ամանա-հաւատ կամ ճշմարտութիւն, Աթադիա-ժամանակ տեառն, Ազդէովդ-ծոր կմ ցամաք, Ահովտ-գովասանող, Աղէքսանդէր- քաջ օգնական, Աղէքսանդրիա-երբ.- որ է խոշոր, Ամէսիա- ժողովրդեան պարզև, Անտիոք-կառք, Արարատ-անէժ սասանման, դողութեան, Արտաշէս- իշխան և գլուխ, Արտաքսերքսէս- ճառագայթ կամ անէժս, Աքայեաբեղբայր տեառն, Աքայիա-վիշտ կամ նեղութիւն, Բալլա- նաժիշտ-Ռաբէլա, Բալլա-քաղաք ընկլուզող կամ աւերող, Բէ/դ/թաւան-տուն ունայնութեան, Բեթ/դ/ազուն-տուն ցորենոյ* և այլն: Ինչպէս նկատում ենք, այս փոքրիկ ցանկը ներկայացնում է միայն Ա և Բ տառերի ոչ ամբողջական պատկերը: Իսկ սա նշանակում է, որ ծավալով ավելի փոքր այս բառարանում աստվածաշնչյան անունները ավելի հանգամանակից են ներկայացված, քան ԲԵ-ում: Ասենք նաև, որ բացի այս տարբերությունից, որոշակի տարբերություն կա նաև անունների բացատրություններում, այսպես՝ ըստ ԲԵ-ի՝ *Արդիու- ժառայ խոստովանելի*, ըստ ՄԱԵ-ի՝ *Արդու/Արդիու-ժառայ տեառն, Ադին-փափկութիւն*, ըստ ՄԱԵ-ի՝ *ուրախութիւն, Ամասի/Ամասիայ/- յազգէ հաւատարիմ, Ամասիայ-քաջ կամ զօրեղ, Ամովս- հաստութիւն կամ ժողովուրդ իմ, կամ աւգնութիւն, Ամովս-զօրեղ կամ քաջ, կամ հայրն Եսայեայ, Ամովս/մարգարէ/-ժամրացեալ, Ամուրիացիք- չեղեալ կամ ծաղեալ, Ամուրիացիք- դառն կամ ապստամբք, Արփաքսաթ- մարգարեութիւն տեսանելի, Արփաքսադ-բժշկող, Բահադ-պատրիչ, Բահադ-կուռք կամ տիրողք* և այլն:

Մեր բնագրային համեմատությունները խարսխվում են չորս աղբյուրների վրա՝ ԲԵ-ի (երկու ձեռագիր), ՄԱԵ-ի (երկու ձեռագիր), Ոսկանյան բառացանկի և ԲԴ-ի:

Ոսկանյան անվանացանկի 750 անվան դիմաց ՄԱԵ-ն ունի մոտ 500 անուն: Ըստ Հ. Անպլանի հաշվարկների՝ երկու բառարանների համար ընդհանուր 350 գլխաբառերի մեկնությունները էականորեն տարբերվում են միմյանցից: Ոսկանյան բառացանկը ավելի մանրամասն է բացատրում անունների ստուգաբանությունները և

հաճախ համաբարբառ բառարանի նման նշում տվյալ անվան աստվածաշնչյան գործածությունները:

Մինչև Մ.Սեբաստացու հատուկ անունների բառարանին անդրադառնալը մեզ մնում է ևս մեկ բառարանի քննություն. դա «Բառգիրք հայոց»-ն է (ԲՀ)⁷, որով ավարտվում է հայ բառարանագրության միջնադարյան շրջանը: Այդ բառարանի զանազան խմբագրություններ էին առկա տասնյոթերորդ դարում: Այդ ընդարձակ օրինակներից մեկը խմբագրվում է Երեմիա Մեղրեցու կողմից և տպագրվում 1698 թվականին: Որպես հին և հազվագյուտ բառերով հարուստ գրավոր հուշարձան՝ այն միշտ էլ հետաքրքրել է հայագետներին՝ Մ.Սեբաստացուն, Ղևոնդ Ալիշանին, Ն. Բյուզանդացուն, Յ.Աճառյանին, Գ.Ղափանցյանին և ուրիշների: Այդ բառարանի հատուկ անունների քննությունը կներկայացնենք մեկ առանձին հոդվածում:

⁷ Տե՛ս Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Յ.Ա. Ամալյանի, Եր., 1975 թ:

«ՊԱՏԱՐԱԳ» ԲԱՌԻ ՄԱՍԻՆ

Հայ առաքելական եկեղեցու տերունական խորհուրդները յոթն են՝ մկրտություն, դրոշմ, ապաշխարություն, հաղորդություն, պսակ, կարգ հիվանդաց կամ վերջին օծում, կարգ ձեռնադրության¹:

Հաղորդության խորհուրդը կոչվում է նաև սուրբ պատարագ: Հաղորդվել կրոնական իմաստով նշանակում է ինչ-որ մի բանի մասնակից լինել, միանալ Հիսուս Քրիստոսին՝ մասնակցելով սուրբ պատարագի խորհրդին, այսինքն՝ սուրբ սեղանի վրա օրհնված հացի և գինու ճաշակում:

Պատարագ բառը ավանդված է 5-րդ դարից: Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» բառը ստուգաբանված չէ: ՈՒՆԵՐ «Նվեր, ընծա, զոհ, մատաղ (առ Աստված)» իմաստները: Ըստ ՆՅԲ-ի՝ «Որպես պատրուճակ, որ է զենլիք ի կենդանեաց, և որպես պտուղ երկրի՝ պատուասիրութեամբ իմն ընծայեալ աստօյ.որ և զոհ»²: ՈՒՆԵՐ նաև նվեր, ձոն, տուրք իմաստները: Ավելի ուշ կապվել է քրիստոնեական գաղափարախոսության հետ՝ «ի նոր օրէնս՝ է անարիւն և անծախելի զոհ և զոհագործութիւն՝ կենդանի և կենդանարար մարմնոյ և արեանն Քրիստոսի»³:

«Սուրբ պատարագի ամբողջ խորհուրդը Հիսուսի զոհաբերության հիշատակության գաղափարն է, և հաղորդության խորհուրդով՝ այդ գաղափարը իր լրմանը կը հանգի»⁴:

Պատարագի «զոհ, նվեր, ընծա» իմաստները պահպանված են նաև միջին հայերենում: Միջինհայերենյան շրջանից վկայված *պատարագելի* բառը հենց նշանակում է «նվիրաբերելու կամ զոհ

¹ Այս յոթ խորհուրդներից միայն երկուսը՝ հաղորդությունն ու մկրտությունն են, որ հաստատված են Հիսուս Քրիստոսի կողմից, իսկ մյուս խորհուրդները հաստատվել են ավելի ուշ: *Հաղորդության* խորհուրդը հաստատվել է Ջատկի ընթրիքի սեղանի շուրջը 12 առաքյալների ներկայությամբ. «Եվ մինչդեռ ուտէին նոքա, առ Յիսուս հաց, օրհնեաց եւ եբէկ, եւ ետ աշակերտացն եւ ասէ. Առէք. կերայք, այս է մարմին իմ: Եւ առեալ բաժակ զոհացաւ, ետ նոցա եւ ասէ, Արբէք ի զմանէ ամենեքին. զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ի վերայ բազմաց հեղու ի թողութիւն մեղաց» (Մատթ. ԻՉ 26-29):

² Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՅԲ), հ.1-2, Եր., 1979-1981:

³ Նույն տեղում, էջ 605:

⁴ Վազգեն Ա Կաթողիկոս, Մեր պատարագը, Ս. Էջմիածին, 1988, էջ 52:

մատուցելու ենթակա»։ Օր.՝ «Ոչխար տարեկան, և պատարագելի, և զգօն և հեգ» (ԳՏԳՅ, 361)⁵։

Գրերի գյուտից հետո սկսված մշակութային-թարգմանչական գործունեության ընթացքում ոչ միայն թարգմանվում են Աստվածաշունչը, գիտական-փիլիսոփայական, դավանաբանական բնույթի գործեր, այլև ստեղծվում են բազմաթիվ ինքնուրույն երկեր, որոնք հիմք են դնում հայերեն գիտական տերմինաբանությանը։ Հինգերորդ դարում եկեղեցական-կրոնական ոլորտը պետք է ունենար իրեն հատուկ բառերը՝ տերմինները։

Պատարագ բառը դասական հայերենում մտնում էր *ընծայ* – *ծաւն(ծոն)* – *զատիկ* – *զեն(ունն)* – *զոհ* – *յագ* – *յաշտ* – *ողջակէգ* – *պատարագ* – *սպանդ* հոմանիշային շարքի մեջ⁶։

Ինչպես հայտնի է, բառապաշարում նշանի և նշանակելիի միջև տարբեր հարաբերություններ կան՝ բազմիմաստություն, համանունություն, հոմանիշություն, որոնք բավականին բարդ պատկեր են ներկայացնում։ Հոմանիշությունը նշանի իմաստաբանական զարգացման հետևանք է. այս դեպքում մեկ նշանակելին ունի մի քանի նշաններ, որոնք միմյանցից տարբերվում են զանազան իմաստաբանական նրբերանգներով, գործառական–ոճական հատկանիշներով։

Այժմ տեսնենք, թե ինչպիսին է վերոհիշյալ հոմանիշային շարքը, և ինչով են միմյանցից տարբերվում շարքի անդամները։ Այս շարքի՝ *յագ* – *յաշտ* – *զոհ* – *պատարագ* հոմանիշային շարքին անդրադարձել է Լ. Հովհաննիսյանը⁷։ Ըստ այդմ՝

«Յագ(են)–վերաբերում է զրադաշտական կրոնին։ Ջոհեն–ի հետ նույնական չէ։ Յագել–ը «զոհը կտրատելով աստվածներին նվիրելն է»։ Փոխառություն է պահլավերեն yazem ձևից, որ նշանակում էր «պաշտեն»։

Յաշտ–ը զրադաշտական կամ հեթանոսական է, պահլավերեն yašt (զենդերեն yaz(զոհել))։ յագել բայի անցյալ դերբայի ձևն է։

Ջոհ – փոխառություն է պահլ. zōhr «զոհ» բառից. նշանակում է «ողջակէգ, մատաղ, կուռքերին զոհված միս»։

Ողջակէգ – զոհ, որ ամբողջապես կիզվում էր ի պատիվ աստվածների, նվիրվում միայն նրանց, և մարդիկ դրանից չպիտի ուտեին։

⁵ *Ռ.Ս. Ղազարյան, Հ.Մ. Ավետիսյան*, Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ), հ. 1-2, Եր., 1987-1991թթ.։

⁶ *Գ. Բ. Զահուկյան*, Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Եր., 1987 թ., էջ 397

⁷ Ավելի մանրամասն տե՛ս *Լ.Շ. Հովհաննիսյան*, Հայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990, էջ 195։

Ձօն – պարզև, ընծա, նվեր (մանավանդ աստվածներին ձոնված նվեր) հ.-ե. ցիս արմատից»:

Որ հոմանիշային շարքի անդամների միջև ոճական-գործառական տարբերություններ են եղել, հուշում են նաև հին հայերենի գրական հուշարձաններում հանդիպող օրինակները, ինչպես՝ «Ո՛չ ողջակէզք և ո՛չ զոհք և ո՛չ պատարագք» (հղումն՝ ըստ ՆՅԲ-ի):

Կամ «...առաքէ հրեշտակս առ Արայն Գեղեցիկ՝ ընծայիւք և պատարագօք... գալ առ նա ի Նինուէ, կամ առնուլ կնութեան... և կամ կատարել զկամս ցանկութեան նորա և դառնալ մեծաւ պատարագօք»⁸: Կամ «Ի ձեռն հրեշտակաց և պատարագաց խնդրէր հաշտե ցուցանել զարքայն Պարսից»⁹:

Աստվածաշունչ մատյանում հանդիպում ենք այսպիսի օրինակի. «Թէ կամեցեալ էիր պատարագա՝ մատուցանէաք, բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար: Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ. զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարիէ» (Սաղմ.50, 18): Այսինքն մեր թարգմանիչները արդեն տարբերակել են պատարագ և ողջակէզ բառերը:

Պատարագ բառի նրբիմաստները բացահայտելու համար թերևս հարկ է հաշվի առնել Առաջավոր Ասիայում տարածված *այծից պատարագը* և, հավանաբար, այդ սովորույթից առաջացած *քավության նոխազ* արտահայտությունը: Աստվածաշնչի հետևյալ հաստվածը որոշ չափով բացահայտում է պատարագի՝ քավությանը առնչվելու գաղափարը. «Իսրայելցիների հոտերի միջից նա մեղքերի քավութեան համար երկու նոխազ թող առնի և մէկ խոյ էլ ողջակէզի համար: ... Սհարոնը երկու նոխազների համար թող վիճակ զցի. մի վիճակը՝ Տիրոջը զոհաբերուելիք նոխազի համար, իսկ միւսը՝ ազատ արձակուելիք նոխազի համար: Սհարոնը թող մոտեցնի իրեն այն նոխազը, որի վրա արձակուելու վիճակ էր ընկել, թող այն կենդանի կանգնեցնի Տիրոջ առաջ եւ այն արձակելով ու բաց թողնելով դէպի անապատ՝ նրան քավություն թող անի: Եւ թող նոխազն իր վրա վերցնի նրանց անօրենությունները» (Ղևտ.ԺԶ)¹¹:

Վերոհիշյալ օրինակից պարզ է դառնում նոխազյան զոհաբերության, այն է՝ այծից պատարագի և քավության նոխազ արտահայտությունների կապը, որոնք հուշում են կրոնապաշտամունքային ինչ-որ արարողություն, որը տարածված է եղել Առաջավոր Ասիայում և այդտեղից էլ հավանաբար անցել է Հայաստան:

⁸ Սովսիսի խորենացւոյ պատմութիւն հայոց, Տիֆլիս, 1913, էջ 49:

⁹ Նույն տեղում, էջ 163:

¹¹ Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանների, Ս. Էջմիածին, 1999:

Այծի պաշտամունքը, նոխազյան զոհաբերությունը թերևս կապված են եղել անապատի ոգու՝ Ազագելի¹³ պաշտամունքի հետ: Այծի պաշտամունքը տարածված է եղել նաև հեթանոսական Հայաստանում: Այդ մասին վկայում են Հայկական լեռնաշխարհում տարածված այծապատկերները, որոնք տարածված են Արագածի փեշերից մինչև Տավրոսի լեռները, մինչև Իրաքի սահմանները, որոնք « պարզ ցույց են տալիս, որ որոշակի տիպի «իծագրերը» երկնակամարում խորհրդանշում են անպրոպ-կայծակի երևույթը»¹⁴: Այծի պաշտամունքի հետքեր կան մեր հին մատենագրության մեջ: Այսպես, հավանաբար հայերի այծապաշտությունն է նկատի ունեցել պարսից ախոռապետը դիմելով Արշակ արքային.

«Այծից Հայոց արքա, եկ նիստ ի խրճան խոտոյ ի վերայ»¹⁵:

Այծի պաշտամունքի մասին հիշատակվում է նաև «Սասունցի Դավիթ» էպոսում:

«Բաղդասար քնուկ էր, մեկ էլ տեսավ՝

Ջոջ կուռք եղավ մեկ իծու օրինակ,

Եկավ գլխու վերև ու մկմկաց,

Յարի լույս չթողեց քներ»:

Այծի պաշտամունքի լուռ վկայություններն են այծ արմատով կազմված տեղանունները՝ *Այծաբերդ*, Փոքր Հայքում, *Այծապար*՝ գյուղատեղի Տավուշի շրջանում, *Այծամանց երկիր* (հիշատակվում է Աշտարակի եկեղեցու արձանագրության մեջ.տեղը՝ անորոշ), *Այծասար*՝ լեռնագագաթ Ջանգեզուրում, *Այծից բերդ*(*Այծաց բերդ*)՝ Մեծ Հայքի Տարոն գավառում, Մուշ քաղաքի մոտ, *Այծպտկունք Այծու պտկունք*)՝ լեռնաշղթա Հայկական պարի արևմտյան հատվածում¹⁶:

Այծի պաշտամունքի և նրա խոր արմատների մասին ուշագրավ տեղեկություններ են տալիս Սարգիս Պետրոսյանը և Ծովինար Պետրոսյանը «Հնագույն Ծովքի դիցական գլխավոր եռյակի

¹³ *Ազագել* բառի համար հետաքրքիր ստուգաբանություն է առաջարկում Բ. Կառլսոնը Ն. Եվրեյնովի «Թատրոնը ինչպես կա» գրքի առաջաբանում (Մ. Ածծաբերդ, Օծծած Եծ Ծծաբերդ, Մի Գ, 1913, թ. 6-7)՝ aza-այծ, el-ուծ: Թվում է՝ որոշ առնչություններ կան *յազ* (պահլավերեն՝ յազեն)՝«պաշտեն» ձևի, պահլավերեն azak (այծ), պահլավերեն nuhâz (n(u) hâzi k)՝«արու այծ» և Ազագել բառերի միջև:

¹⁴ Տե՛ս *Չ.Մարտիրոսյան*, Գիտությունն սկսվում է նախնադարում, Եր., 1978, էջ 9-16, նաև *Ղ.Ալիշան*, Հին հաւատք կան հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, Ս. Դազար, 1985, էջ 310:

¹⁵ Փաւստոսի Բուզանդացույ պատմութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 106:

¹⁶ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Եր., 1986, հ. 1, էջ 232-233:

շուրջ հողվածուն»¹⁷: «Յայոց հնագույն աստվածների բազմաշերտ կերպարներում կարելի է առանձնացնել առասպելաբանական հատկանիշների երկու խումբ: Դրանցից առաջինի մեջ խմբավորվում են այն հատկանիշները, որոնք ուղղակի կապի մեջ են տվյալ աստվածության անձնավորած բնական-տիեզերական երևույթների հետ, իսկ երկրորդ խմբի մեջ՝ նրանք, որոնք գալիս են տվյալ աստծու տոտեմական նախատիպերից»¹⁸: Այժր մտնում է այս դիցական գլխավոր եռյակի մեջ և ներկայացնում է Յայկական լեռնաշխարհի ցեղերից շատերի տոտեմական կենդանին: Յայերեն շատ դարձվածքներ կան՝ կապված այժի հետ: Օր.՝ *այծ-այծ լինել*՝ վախենալ, *այծերը գալ*՝ բարկանալ, *այծերը գնալ*՝ հանդարտվել, *այծերը քշել*՝ հանգստացնել, *այծերով (էծերով) մարդ*՝ պոռթկուն բնավորություն ունեցող, *այծերը ոչխարներից ջոկել*՝ մեղավորն անմեղից ջոկել, արդար վճիռ կայացնել: Յայերենի բարբառներում հանդիպում են՝ «էծն իր ոտովը կկախեն, ոչխարը՝ իր» (Կարին, Շիրակ)՝ այսինքն՝ ամեն մարդ իր հանցանքին համապատասխան պիտի պատժվի: «էծին որ գելը չտանի, Երուսաղեմ կերթա» (Կարին, Շիրակ), այսինքն՝ անարժանին որ հնարավորություն տաս՝ ինչ ասես՝ կանի¹⁹:

Դարձվածային այս միավորները հուշում են այժի հետ կապված ինչ-որ բացասական երանգ, որը թերևս կապված է կամ այժի կամակոր լինելու, կամ այժի՝ անդրշիրիմյան աշխարհի հետ կապված լինելու հետ²⁰: Այսինքն՝ այժը ինչ-որ երկակի բնույթ ունի: Այսպիսով, այժից պատարագը, կարծում ենք, կապված է այժին իրենց մեղքերը քավելու համար զոհաբերելու գաղափարի հետ: Յետագայում՝ կապված քրիստոնեական գաղափարախոսության հետ, արդեն Քրիստոսն է դառնում զոհ մարդկանց մեղքերի համար և իր վրա է վերցնում մարդկանց բոլոր մեղքերը: Յիշենք Քրիստոսի վերջին խոսքերը. «Յայր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն» (Ղուկ.ԻԳ, 34):

¹⁷ Գիտական աշխատություններ, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2001, էջ 79-96:

¹⁸ Նույն տեղում, էջ 79:

¹⁹ Յայոց լեզվի բարբառային բառարան, Եր., հ. Ա, 2002, էջ 13:

²⁰ Ըստ բանահյուսական տվյալների՝ հեթանոսական Յայաստանում նոխագը զոհաբերվել է Սպանդարամետին (որը կոչվում է նաև Սանդարամետ, Սանդարամետք, Սանդարամետապետ).այն անդունդների աստվածուհին էր: Յավանաբար անդրաշխարհի հետ կապված լինելու հետ է պայմանավորված մինչև վերջերս Յայաստանի տարբեր շրջաններում տարածված առաջին տարվա ննջեցյալին Սուրբ խաչին ու զոհաբերելու սովորությունը, որ ժողովուրդն անվանում է ուլոց կամ ուլնոց:Այս մասին տես նաև **Վ.Յ.Բոդյան**, Յայ ազգագրություն.համառոտ ուրվագիծ, Եր., 1974, էջ 208:

Ինչ վերաբերում է *պատարագ* բառի ծագմանը, ապա այն հայտնի չէ: Ինչպես նշում է Յ.Աճառյանը, բառի մասին երկու անգամ ընդարձակ վեճ է ծավալվել հայ թերթերում: Դրան անդրադարձել է նաև Յ.Էսապայանը «Պահլավերեն սաղմոսարանը» հոդվածում²¹: Մեջբերում ենք հեղինակի միտքը պատարագի մասին.«Սաղմոսարան պահած է այդ թանկագին բառը. Սաղմ. 96,8: Նույն տեղիքը հայը կթարգմանե Սաղմ. ԴԵ, 8 «Առէք պատարագս եւ մտէք ի սրահ նորա» իմաստով, գործածությամբ և ձևով լիովին նույն, ուստի կդադրի ամեն վիճաբանութիւն բառիս մասին, միայն կմնայ պահլաւերէն ձևը ստուգաբանել: Andreass-Barr Bruchshuche 144, կմիացնեն զայն հարցականով ավ. rā «պարզւել», ուսկից patirāka> pāδray (-ծ-գրչութիւնը այս շրջանին կեղծ պատմական պիտի ըլլայ, որ պիտի արտասանուէր իբր –g-)»²²:

Պատարագը, կարծում ենք, կապվելով քրիստոնեական Ս.Յաղորդության խորհրդի հետ, ունեցել է բառիմաստի ընդլայնում: Այն ձեռք է բերել նաև «երգեցողություն, երաժշտություն»²³ իմաստները: Բառը ժամանակակից հայերենում գործածվում է միայն կրոնական ոլորտում, և «գրի, մատաղ» իմաստները ժամանակակից հայերենում չեն գիտակցվում:

²¹ Հանդէս ամսօրեայ, 1942, թիւ 1-6:

²² Նույն տեղում, էջ 66:

²³ *Է. Աղայան*, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 2:

**ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾԱՌԱԿԱՆ-ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ**

Լեզվի պատմական զարգացման ընթացքում գրաբարյան անցյալ կատարյալ ժամանակաձևը, պահպանելով իր քերականական իմաստը, հայերենի բարբառներում կրել է հիմնականում ձևային փոփոխություններ: Փոխվել են կատարյալի պարզ կազմությունների դիմաթվային ցուցիչները, դրանց քերականական իմաստը դրսևորող ձևաբանական միջոցները: Առաջացել են անցյալ կատարյալի նորակազմ ձևեր, որոնք հայերենի առանձին բարբառներում և խոսվածքներում հետագայում սկսել են կիրառվել որպես անցյալ կատարյալի հիմնական կազմություններ:

Հայերենի բարբառներում անցյալ կատարյալը կազմության 2 ձև ունի՝ պարզ և բաղադրյալ:

Անցյալ կատարյալի պարզ ձևն առկա է հայերենի տարածքային տարբերակների մեծ մասում: Այն ընդգրկում է բարբառների արևմտյան խումբն ամբողջությամբ, ինչպես նաև արևելյան խմբի զգալի մասը: Դրանցում անցյալ կատարյալը կազմվում է անորոշի և անցյալի հիմքերին զուգորդելով դիմաթվանիչ ցուցիչներ, որոնք - ըստ սեռային պատկանելության բաժանվում են երկու խմբի՝ ներգործածև և կրավորածև:

Կատարյալի բաղադրյալ կազմությամբ բնորոշվող բարբառային միավորներն անցյալ կատարյալի իմաստը դրսևորում են վաղակատար դերբայի և օժանդակ բայի հարադրմամբ: Ձուգաբանական այս հատկանիշով միավորվում են բարբառի որոշ խոսվածքային միավորներ (Շաղախ, Հադրութ, Ղարադաղ) և Ագուլիս-Մեղրիի - կամ արևելյան բարբառախումբը, այսպես՝

ՑՂՆԱ (ՆԱԽԻՋԵՎԱՆ)

խըմալ ըմ	խըմալ ըմք
խըմալ ըս	խըմալ ըք
խըմալ ա	խըմալ ըն /149/ ¹

Համանման կազմություն է նկատել Հ. Աճառյանը Սուչավայի բարբառում. «Այս միևնույն երևածովն տեղի է ունեցել նաև Սուչավայի բարբառի մեջ, անշուշտ ազդեցությամբ գերմաներենի: Այս բարբառը կատարյալի ժամանակը (*սիրեցի* ևն) գործածությունից գցել և

¹ Օրինակների մոտ տրվող այս եւ հետագա համարները վերաբերում են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերին, որոնք գտնվում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում:

նրա տեղ դրել է հարակատարը՝ նույն իմաստով, ինչպես *սիրիլ իս, սիրիլ իս* ևն»:²

Աճառյանը դժվարանում է որևէ կապ տեսնել Սուլչավայի և անցյալ կատարյալի բաղադրյալ կազմություն ունեցող մյուս բարբառների միջև (Ագուլիս, Մեղրի)։ «Որևէ կապ Սուլչավայի բարբառի և Ագուլիսի ու Մեղրու բարբառների միջև անհնարին է երևակայել։ Ավելորդ է մտածել նաև շրջակա որևէ լեզվի ազդեցության մասին, որովհետև թե՛ թուրքերենի և թե՛ պարսկերենի մեջ կատարյալը այնպես կանոնավոր, պարզ ու մաքուր ձև ունի, որ կարիք չի զգացվել հարակատարի օգնության։ Ուստի երևույթը բացատրում են այն դժվարությամբ, որի մեջ ընկել են Ագուլիսի և Մեղրու բարբառները, այնքան որ կարիք են զգացել ջնջելու կատարյալի եզակի գ դեմքը և նրա տեղ դրել են բաղադրյալ ձևը»:³

Անցյալ կատարյալի բաղադրյալ կազմությունների գործառույթունը, անշուշտ, պայմանավորված է մի շարք գործոններով և պատմական երկարատև գործընթացի արդյունք է։

Հավանաբար նախապես, երբ բարբառների հնչյունական և ձևաբանական հատկանիշները դեռ նոր էին սկսում զծագրվել, գրաբարյան անցյալ կատարյալն ընդգրկել է հայերենի ողջ տարածքը։ Հետագայում միայն՝ հին շրջանում գոյություն ունեցող բարբառային տարբերությունների խորացմանը զուգընթաց, հայերենի տարածական տարբերակներն անցյալ կատարյալի իմաստն արտահայտել են ձևաբանական տարբեր միջոցներով։ Դրանց մեծ մասում շարունակել է գործառել գրաբարյան անցյալ կատարյալը։ Սակավաթիվ բարբառային միավորներ միայն, շեղվելով գրաբարյան անցյալ կատարյալի կազմության օրինաչափությունից և հավանորեն կրելով հինհայերենյան խոնարհման համակարգի գործառական և իմաստային փոփոխության գործընթացի ազդեցությունը, որպես անցյալ կատարյալի կազմության հիմնական ձև, սկսել են կիրառել անցյալի իմաստն արտահայտող մեկ այլ՝ վաղակատար դերբայով հարադրությունները, որոնք, ինչպես հայտնի է, գրաբարյան անցյալ դերբայի հետագա զարգացման և վերաիմաստավորման արդյունք են։

Ի դեպ, անցյալ կատարյալի բաղադրյալ կազմությամբ տարածքային տարբերակներում գործում է մի ընդհանուր միտում. դրանցում բացակայում են վաղակատար դերբայով ժամանակաձևերը, որոնց բացակայությունը հավանորեն կապվում է վերջիններիս՝ անցյալ կատարյալի հարացույցում գործածության հետ։

² **Յ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, մաս Ա, Եր., 1959, էջ 576:

³ Նույն տեղում, էջ 576:

Վաղակատարի իմաստով հիշյալ բարբառային գոտում գործառու էն հարակատար դերբայով և օժանդակ բայով հարադրությունները, որոնք բնորոշվում են իմաստային և գործառական առանձնահատկությամբ: Վերջիններս արտահայտում են միաժամանակ վաղակատար և հարակատար ներկա ու անցյալ ժամանակների իմաստ, այսպես՝ մնացած *ըս - մընացել ես, էի, մնացած ես, էի*:

Նման կիրառությունն արձանագրելով Մեղրու բարբառում՝ Է. Աղայանը հարակատար դերբայը վերանվանում է գերակատար տերմինով:⁴

Գուցես հարակատար դերբայի վերոբերյալ բազմիմաստությունը պայմանավորված է վաղակատարի՝ կատարյալի իմաստով գործառությամբ և նախապես բնորոշ է եղել կատարյալի բաղադրյալ կազմությամբ բարբառներին՝ որպես տվյալ տարածքին բնորոշ բարբառային իրողություն, իսկ ավելի ուշ համաբանությամբ ընդգրկել նաև այլ բարբառային միավորներ:

Այս ենթադրության հավաստիությունը թերևս հիմնավորվում է այն փաստով, որ կատարյալի պարզ կազմությամբ բարբառների մեծ մասը զուրկ է հարակատար դերբայով կազմված ժամանակային ձևերից և այդ իմաստով կիրառում է վաղակատար դերբայով կազմությունները, օրինակ՝

ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՅԻՍԱՐ

ՎԱՂԱԿԱՏԱՐ *ԱՆՅՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ*

գըրեր էն	գըրեր էնք
սիրեցի	սիրեցինք
գըրեր ես	գըրեր էք

սիրեցիր	սիրեցիք
գըրեր է	գըրեր էն
սիրեց	սիրեցին/3/

Բացառություն են կազմում Հանշենի, Տրապիզոնի, Խոտրջուրի և Նախիջևանի որոշ խոսվածքներ (Բիստ, Մարվանիս), որոնցում բացակայում է վաղակատար դերբայը, և դրանք կիրառում են հարակատար դերբայով ժամանակաձևերը, օրինակ՝

ՏՐԱՊԻԶՈՆ (ԾԻՆԳԻՐ)

<i>ԱՆՅՅԱԼ ԿԱՏ.</i>		<i>ՀԱՐԱԿԱՏԱՐ ՆԵՐԿԱ</i>	
խըմեծի	խըմեծիկ	կըրած իմ	կըրած իք
խըմեծիր	խըմեծեկ	կըրած իս	կըրած էկ
խըմեծ	խըմեծին	կըրած ա	կըրած ին /99/

⁴ Է. Աղայան, Մեղրու բարբառը, Եր., 1954, էջ 194:

Անցյալ կատարյալի կազմության պարզ և բաղադրյալ ձևերի զուգահեռ կիրառությունն է առկա Ագուլիսում, Նախիջևանի Տանա-կերտ և Փառակա գյուղերում, այսպես՝

ԱԳՈՒԼԻՍ

խըմամ	խըմաք	խըմալ ըմ	խըմալ ըք
խըմաս	խըմաք	խըմալ ըս	խըմալ ըք
խըմալ	ա խըման	խըմալ ա	խըմալ ըն /տ 22/

Յ. Աճառյանի կարծիքով Ագուլիսի բարբառում գործառող ան-ցյալ կատարյալի զուգահեռ ձևերը. «...բացարձակապես հոմանիշ են, և իմաստի ու գործածության մեջ որևէ տարբերություն չունեն»:⁵

Ա. Աբրահամյանը, հիմնականում ընդունելով Յ. Աճառյանի այս դրույթը, նկատում է. «Վաղակատար ներկայի ձևերը անցյալ կատարյալի փոխարեն Ագուլիսի բարբառում գործածվում են այն դեպքում, երբ պետք է լինում գործածել պատմական անցյալ /perfectum historicum/, իսկ aorist–ի համար գործածվում են անցյալ կատարյալի պարզ ձևերը»:⁶

Ս. Սարգսյանցի կարծիքով անցյալ կատարյալի պարզ կազ-մությունն առաջացել է բաղադրյալ ձևերից բայական / վերջա-վորության անկմամբ՝ *թակալ ըմ-թակամ, թակալ ըս-թակաս, թակալ ըք-թակաք* և այլն:⁷

Յ. Աճառյանը թեև չի մերժում հիշյալ բացատրությունը, սակայն չի բացառում մեկ ուրիշը. «Անտարակույս այս կատարյալը շարունակությունն է հին հայերենի *հասի*. աշխարհաբար *հասս* ձևի. առաջին դեմքի վրա ավելացել է մ՝ նմանությամբ սահմանա-կան ներկայի. -կարելի չէ՞ ենթադրել, որ նույնը տեղի ունեցած լինի նաև Ագուլիսի բարբառում, բայց այստեղ նմանությունը շարունակ-վելով՝ երկրորդ դեմքն էլ ստացած լինի ս: Երկու բացատրությունե-րից մինը կամ մյուսը հաստատելու նպաստեր թերևս, եթե իմանա-լինք, թե ինչ պատճառով պարզ կատարյալի եզակի Գ դեմքը գոյու-թյուն չունի և միայն բաղադրյալ ձևն է, որ գործածվում է նույն դեպ-քում»:⁸

Հավանաբար Ս. Սարգսյանցի բացատրությունը հավանական կարելի է համարել անցյալ կատարյալի այն պարզ կազմության համար, որը չի կապվում գրաբարյան անցյալ կատարյալի հետ և որը, թերևս լինելով բաղադրյալ կազմությունների հետագա զար-

⁵ Յ. Աճառյան, Քննություն Ագուլիսի բարբառի, Եր., 1935, էջ 267-268:

⁶ Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները եւ նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 364:

⁷ Ս. Սարգսյանց, Ագուլեցոց բարբառը. լեզվաբանական հետազոտություն, մասն Ա, Բ, Մոսկվա, 1883, էջ 116:

⁸ Յ. Աճառյան, նշվ. աշխատ., էջ 202:

զացման արդյունք, պատմական գոյացություն է և առկա է հայերենի տարածքային տարբերակների որոշակի հատվածում միայն, - այն է՝ Ագուլիս-Մեղրիի կամ արևելյան բարբառախումբ:

Հնարավոր է հիշյալ տարածքում վաղակատար դերբայով հարադրությունները արտալեզվական և ներլեզվական գործոնների ազդեցությամբ լեզվի պատմական զարգացման ընթացքում կրել են որոշ փոփոխություններ: Թերևս սրան կարող էր նպաստել այն հանգամանքը, որ վերոնշյալ բարբառային գոտին հայերենի բարբառների համատարած շղթայում առանձնանում է ենթադրական եղանակի կազմությամբ: Դրանք, շեղվելով հայերենի արևելյան տարածքի բարբառներին հատուկ զարգացման միտումից, հիշյալ եղանակի իմաստն արտահայտում են ոչ թե կ մասնիկով, այլ անորոշ դերբայի և ժամնդակ բայի հարադրությամբ, այսպես՝ *գրել են, սիրել են* և այլն:

Գուցեև հետագա ժամանակաընթացքում վերոբերյալ և *ե* լծորդության բայերի վաղակատար դերբայով կազմությունների քերականական համանունությունից խուսափելու համար նշված բարբառային գոտում վաղակատար դերբայի լ վերջավորության անկմամբ առաջացել է կատարյալի պարզ կազմության մի երկրորդ տարբերակ, որը ծագումնաբանորեն չի կապվում գրաբարյան անցյալ կատարյալի հետ՝ դրանից տարբերվելով եզակի թվի բոլոր դեմքերում:

Վերոհիշյալ կազմությունը, սակայն, զարգացման և տարածման միտում չի ցուցաբերել և մնացել է մեկուսի՝ կղզիանալով բարբառային որոշակի տարածքում, այն է՝ Ագուլիս-Մեղրիի կամ արևելյան բարբառախումբ:

Հիշյալ վարկածի հավաստիությունը կարելի է հիմնավորել հետևյալ փաստերով՝

1. Ա. Ղարիբյանը, նշելով Ագուլիսի բարբառում անցյալ կատարյալի կազմության երկու ձև՝ պարզ և բաղադրյալ, գրում է. «Այս ձևը /իմա՝ պարզ/ քիչ գործածական է, ըստ երևույթին նոր է ձեռք բերված: Ավելի գործածական է անցյալ կատարյալի բաղադրյալ ձևը, որ հարազատ է Ագուլիսի բարբառին»:⁹

2. Բարբառային նյութի քննությամբ պարզ է դարձել, որ՝ ա/ Միայն այս տարածքի բարբառային միավորներին է բնորոշ կատարյալի պարզ և բաղադրյալ ձևերի զուգահեռ կիրառություն,

բ/ Միայն հիշյալ բարբառային միավորներում է, որ կատարյալի

⁹ Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Եր., 1953, էջ 248:

եզակի առաջին և երկրորդ դեմքերում առկա են մ և ս հնչյունները, օրինակ՝ Ազուլիսում՝ *խըմամ, խըմաս, խըմալ ա* /տ 22/,

գ/ Միայն այս բարբառային գոտում է, որ պարզ կազմությամբ կատարյալի եզակի 3-րդ դեմքում գործառում է վաղակատար դերբայով և օժանդակ բայով հարադրությունը, այսպես՝ Տանակերտ /Նախիջևան/ *սիրամ, սիրաս, սիրալ ա*:

Վերոբերյալ փաստերը թեև ժլատ, սակայն հավաստի վկայություն են այն մասին, որ Ազուլիս-Մեղրիի բարբառախմբում գործառող անցյալ կատարյալի պարզ կազմությունները պատմական զոյացություններ են, որոնք, լեզվական որոշակի գործոնների ազդեցությամբ դուրս մղելով հին ժամանակաձևերը, դարձել են այդ տարածքում անցյալ կատարյալի իմաստն արտահայտող դրսևորումներից մեկը:

Անցյալ կատարյալի բաղադրյալ կազմությունները, իրենց - արմատներն ունենալով հայոց լեզվի պատմության հնագույն - շրջաններում, անցել են զարգացման որոշակի փուլեր, ձեռք են բերել նոր գործառություն, կրել իմաստային որոշակի փոփոխություն և ներկայումս էլ շարունակում են գործառել հայերենի տարածքային տարբերակների մի մասում:

ԳՐԱԲԱՐԻ ՀՈՒՈՎՆԵՐԸ ՀՈՒՆԱԲԱՆ ԴՊՐՈՑԻ ՔԵՐԱԿԱՆՆԵՐԻ
ԸՍԲՈՆՄԱՍԲ (V-XI դդ.)

Հայ քերականության հիմնաքարը դրվել է 5-րդ դարում Դիոնիսիոս Թրակացու (մ.թ.ա. մոտավորապես 170-90թթ.) «Քերականական արվեստ» աշխատության թարգմանությամբ:

Քերականական տարբեր իրողությունների հետ մեկտեղ հոլովը՝ որպես անվանը բնորոշ քերականական կարգ, ուսումնասիրվել է վաղ շրջանի գրեթե բոլոր քերականների կողմից:

Հոլովի գաղափարը (հուն. «անկում») առաջին անգամ հանդիպում է հույն մեծ փիլիսոփա Արիստոտելի աշխատություններում: Նա այս կարգը հատկացրել է թե՛ անվանը և թե՛ բային, այսինքն «անկում» նշանակել է հոլովում և խոնարհում միաժամանակ:¹ «Անկում, թավալում, հոլով» իմաստ ունեցող հունարեն բառը «հոլով» նշանակությամբ կիրառել են ստոյիկները, որոնք մեծ դեր են խաղացել քերականական հարցերի մշակման ասպարեզում: Իր քերականության մեջ սահմանելով 8 խոսքի մաս կամ «մասն բանի», որոնք են՝ անուն, բայ, ընդունելություն, հոդ, դերանուն, նախադրություն, մակբայ, շաղկապ, Թրակացին հոլովը համարում է անվանը հատուկ քերականական կարգ. «Անուն է մասն բանի հոլովական, մարմին կամ իր նշանակելով. մարմին, որգան քար. եւ իր, որպես խրատ. հասարակաբար եւ յատկապէս. հասարակաբար որգանով մարդ, եւ յատկապէս որգոն Պաւղոս: Եւ հետեւին անուան հինգ. սերք, տեսակք, ձեւք, թիւք, հոլովք»:²

Հաշվի առնելով հոլովական ձևերը և նրանց արտահայտած իմաստները՝ Թրակացու թարգմանիչն առանձնացնում է 6 հոլով (հունարեն բնագրում հոլովները հինգն են). «Հոլովք են անուանց վեց. ուղղական, սեռական, տրական, առաքական, հայցական, հոշական: Եւ ասի ուղղականն անուանական եւ պարզ. եւ սեռականն՝ ստացական եւ հայրենի. եւ տրականն՝ պատուիրական. եւ առաքականն՝ ցուցական. եւ հայցականն՝ խնդրական եւ կամ՝ ըստ հելլենացւոց լեզուին փաստական. եւ հոշականն՝ առասական»:³

Ըստ Թրակացու՝ հոլովի կարգը բնորոշ է ոչ միայն անվանը, այլև դերանուններին և հոդին:⁴

¹ Античные теории языка и стиля, М.-Л., 1936, ст. 61-62.

² *Ն.Արղնց*, Արուեստ Դիոնիսեսայ քերականի եւ հայ մեկնութիւնք նորին, Պետրոզրադ, 1915, էջ 12-13:

³ *Ն. Արղնց*, էջ 17:

⁴ *Ն. Արղնց*, էջ 28:

Դերանունների դեմքին, սեռին, թվին անդրադառնալուց հետո թրակացու թարգմանիչը ներկայացնում է որոշ դերանունների «նախազաղափարացն» և «ածանցացն» հոլովական ձևերը. «Հոլովք նախազաղափարացն. ուղղական ես, դու, նա. սեռական իմ, քո, նորա. տրական ինձ, քեզ, նմա. առաքական ինեւ, քեւ, նովաւ. հայցական զիս, զքեզ, զնա. հոշական դու. եւ ածանցացն իմ, քո, նոյր. իմոյ, քոյ /ոյ/, նոր /այ/ ոյ. իմում, քում, նում. իմով, քով, նով, զիմ, զքո, զնոյր»:⁵

Այսպիսով, Դ. թրակացու աշխատության հայերեն թարգմանությունը դառնում է հայ քերականների մեկնության առարկա՝ հիմք դնելով հայ քերականագիտական մտքի զարգացմանը: Հայ քերականությունը հազարամյակից ավելի ներկայացվում է մեկնողական բնույթի գործերով: Չնայած հակասական կարծիքներին՝ ակադ. Գ. Ջահուկյանը հիմնավոր լուծում է թարգմանչի խնդիրը. Դավիթ Անհաղթը նույն Դավիթ Սեկնիչն է:⁶

Հայ բանասիրության մեջ կարծիք է եղել, ըստ որի՝ թրակացու քերականության թարգմանությունը բնագրի ստրկական ընդօրինակությունն է: Ն. Աղոնցը գրում է. «При столь рабской верности подлиннику, появление въ армянскомъ чуждаго элемента можетъ по праву вызвать сомнение. Не возникъ-ли въ самомъ деле лишній падежъ առաքական իւ նեօրազումնու»:⁷

Պետք է նշել, ու թրակացու քերականության թարգմանիչը սոսկ չի ընդօրինակել թարգմանության նյութը: Հաշվի առնելով հայերենի առանձնահատկությունները և ելնելով նյութի իր ըմբռնմից՝ նա կատարել է զանազան փոփոխություններ: «Իրականում թրակացու քերականության հայ թարգմանիչը ոչ միայն «ստրկորեն» չի ընդօրինակում տեքստը, այլև հանդես է բերում բավական ազատամիտ վերաբերմունք՝ կատարելով նրա մեջ իր համոզմունքներից և հայերենի առանձնահատկություններից բխող զանազան փոփոխություններ, որքան այդ հնարավորություն է տալիս թարգմանչի աշխատանքի բնույթը: Այս իմաստով թարգմանությունը ավելի շատ փոխադրություն է, քան թարգմանություն»:⁸

Թարգմանիչը, նկատելով տրականի արտահայտած իմաստներից մեկի ձևային տարբերակի առկայությունը հայերենում, այն դնում է տրականից հետո: Ինչպես իրավացիորեն կարծում է Գ.Ջա-

⁵ Ն. Աղոնց, էջ CLXVII:

⁶ Ն. Աղոնց, էջ 28-29:

⁷ Ն. Աղոնց, էջ CLXXXVIII: *Հ.Սանանդյան*, Հունաբան դպրոցը, Վիեննա, 1928, էջ 216:

⁸ Գ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Եր. 1954, էջ 53-61:

հուկյանը, վեցերորդ՝ առաքական (այժմ՝ գործիական) հոլով ավելացնելու գաղափարը թարգմանչի մեջ առաջացել է ամենայն հավանականությամբ հողի պատճառով:⁹ Թրակացին առանձնացրել է հողի 2 տեսակ՝ նախադաս և հետադաս՝ նշելով, որ դրանք մասնակցում են հոլովմանը: Ո կամ ով հողը, եթե նախադաս է կիրառվում, կոչական հոլովի հողն է, իսկ եթե հետադաս է, դառնում է նոր՝ առաքական հոլովի ցուցիչ:

Քերականն ավելի շատ խոսում է գործիականի, քան թե տրականի մասին: Ջահուկյանը գրում է, որ Դավիթ Մեկնիչի՝ տրականը հանգամանորեն չբացատրելը հետևանք է այն բանի, որ տրականը հայերենում ձևով հիմնականում նման է սեռականին, ուստի Դավիթը տրականի 2 գործառույթներից հայերենին ավելի բնորոշ է համարել գործիականի գործառույթը:

Ուղղականը հոլով համարելու կամ չհամարելու հարցում Դավիթը հետևում է ստոյիկներին, որոնք ուղղականը հոլով էին համարում՝ ի տարբերություն պերիպաթետիկների, որոնց համար «հոլով» է այն ձևը, որը «ընկնում», «անկում» է ուղղականից: «Իսկ ասելն նախ հոլովս եւ ապա ուղղական, երեւեցաւ ոմանց ընդդիմութիւն ի տեղուջոյ, որպէս թե ուղղականն եւ կամ հոլովականն պարտ էր անուանիլ: Բայց բժշկեցաւ այսպէս, թե եւ բոլորից ընդ արեգականք լինելութեանց անուանք կոչեցան շնորհիւն աստուծոյ եւ կամ զորս նա զորացոյց: Արդ ըստ վերուստ դրութեան անունն անկումն ասի եւ նոյն ինքն ուղղական, արիճակ իմն գրչի ի վերայ կակուղ իրիք միւթոյ նկատմամբ ուղիղ կացուցելոյ, եւ անդուստ ապա հոլովումն առնելով ի սեռականն եւ ի տրականն եւ որ ի կարգին»:¹²

Դավիթ Անհաղթը հարստացրել է Թրակացու՝ հոլովներին տված սահմանումները՝ ավելի պարզ բացատրելով նրանց նշանակությունները. «Եւ զի անուանական ասի ուղղականդ, իբրեւ սկիզբն իմն եւ պատուականագոյն. իսկ պարզ՝ մենակ, անշարադիր:

Եւ սեռականիդ՝ դասական ըստ ինքեան հանդիպեալ ստացուածոյ կամ հայրենեաց: Բայց տրականդ լինի թղթական: Եւ ցուցական իսկ առաքականդ ըստ երկուց դիմաց. յորժամ առաքիցի ոք ուրեք յումեքէ զհեռաւորն նշանաւոր բանիւ ցուցանել եւ զմատաւորն եւ որ երեւին տեսութեամբն: Իսկ հայցականդ, որ ըստ հելլենացվոց լեզուին պատճառական, է այս. քանզի յորժամ ի չար ինչ կամ բարի կոչեսցի ոք, ընդ ձայնին զեկուցանէ զպատճառն: Նաեւ կոչականդ, յայտնի առհասարակական, զի ովդ, որ է

⁹ **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 69:

¹⁰ Հմմտ. **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 69:

¹² **Լ. Աղոնց**, նշվ. աշխ., էջ 107:

հասարակականի նշանակ, հաւասարապէս եղեալ լինի ի վերայ դիմաց եւ իրաց, բարեաց և հակառակին»:¹³

«Յաղագս դերանունութեան» բաժնում Անհաղթը նկատում է, որ հատկապէս դերանվանական հոլովման մեջ առանձնանում են հոլովներ, որոնք ձևով նման են, և հոլովներ, որոնք տարբերվում են իրարից:¹⁴

Այսպիսով, իր արժեքավոր մեկնություններով Դավիթ Անհաղթը հայ քերականագիտության մեջ դնում է հոլովների ուսմունքի հիմքը և ուղի բացում հետագա քերականների համար:

Գրաբարի հոլովները իրենց լուսաբանությունն են գտել Անանուն Մեկնիչի մեկնության մեջ: Անանունը ևս անունը համարում է «մասն բանի հոլովական, այսինքն ընդունակ հոլովիցն», նրան վերագրում քերականական 5 կարգերը, առանձնացնում է թանձրացական և վերացական գոյականները, քերականական սեռը և երկակի թիվը խորթ համարում հայերենի համար:¹⁵ Քերականը խոսում է նաև անեզական և անհոգնական գոյականների մասին առանց այդ անվանումները նշելու:

Անանունը մի քայլ առաջ է գնում՝ գրաբարի հոլովումների մեջ առանձնացնելով ներքին թեքման ձևերը, ինչպես՝ առն առին, անգղ անգեղ, վագր վագեր, աւր աւուր:¹⁶ Ինչպէս տեսնում ենք, քերականը տարբերակում է գրաբարի ներքին թեքման 3 տիպերը՝ (ը) /ի (առ {ը}ն>առին), (ը)/ ե (վագ{ը}ր > վագեր), (ը)/ու (աւ{ը}ր->աւուր):

Արտաքին թեքման ժամանակ Անանունը խորհուրդ է տալիս առաջնորդվել բառավերջի ձայնավորով. «Եւ դարձեալ, յորժամ ոք ի տարակոյս անկեալ ասիցէ թե զԴաւիթ անունն զհարոյ պարտ է հոլովեցուցանել՝ Դաւիթ Դաւթայ, թե Դաւիթ Դաւթի. եւ համեմատելով ըստ նմանոյն հոլովէ Դաւիթ Դաւթի ըստ իւրում գրի ձայնաւորի, որ ի վերջի վանգին»:¹⁷

Անանունը ընդունում է վեց հոլով՝ ուղղական, սեռական, տրական, առաքական, հայցական, հոշական, հիմնավորում ուղղականի անկախ հոլով լինելը. «Արդ ասելով զուղղականն հասարակականին եւ յատկականին ի հոլովս, յայտարար եթե ոչ միայն երկու նշանակութիւնք են անուան, այլ եւ ընդհանրական անուն պարփակող նոցին, ուստի հոլովեցան, եւ հոլովեալ ի նմանէ ուղղո-

¹³ *Ն. Աղոնց*, նշվ. աշխ., էջ 107-108;

¹⁴ Զմմտ. *Ն. Աղոնց*, նշվ. աշխ., էջ 117:

¹⁵ *Ն. Աղոնց*, նշվ. աշխ., էջ 139:

¹⁶ *Ն. Աղոնց*, նշվ. աշխ., էջ 134:

¹⁷ *Ն. Աղոնց*, նշվ. աշխ., էջ 127-128:

րդապէս կառեան: Ապա ուրեմն բարուք զուղղականն հասարակականին եւ յատկականին հոլովս անուանեաց»: ¹⁸

Անանունը նոր տերմիններով է անվանում հոլովները. ուղղականը կոչում է «ուղղապէս», սեռականը՝ «բաժանական», տրականը՝ «պատուիրական», առաքականը՝ «երթալոյ», հայցականը՝ «աղերսական», հոշականը՝ «կոչնական»:

Քերականը հոլովները առանձնացնում է՝ ելնելով ոչ թե նրանց ձևից, այլ նշանակությունից:

Որպէս դերանվան «տեսակք հոլովք»՝ Անանուն Մեկնիչը ստացական դերանունների սեռականից ի նախդրի միջոցով նշում է բացառականի հոլովածներ: Այսպիսով, Մեկնիչը «նկատում է բացառականը, թեև այն որպէս հատուկ հոլով չի առանձնացնում և չի անվանում»: ²²

Ի տարբերություն Դավթի և Անանունի՝ Մովսես Քերթոզը որոշ թերահավատությամբ է ուղղականը համարում հոլով, թեպետ հոլովների թիվը նորից վեցն է ընդունում: Քերականը սեռական և տրական հոլովների միջև ձևային տարբերակում չի դնում, սակայն նշում է, որ դրանք տարբերվում են իրենց իմաստով: ²³

Մովսեսը առաքական հոլովը փորձում է վերանվանել «ներգործական»՝ նկատելով այդ հոլովի արտահայտած ոչ միայն միջոցի, այլև ներգործման գործառույթը: «Այլ եւ առաքական Գրիգորով, որ ոչ միայն այս, այլ եւ սխալանաց եւ պատուոյ նշանակիչ. ըստ որում մահ մարդով եւ յարութիւն գրէ առաքեալ արտայայտէ, որ ոչ է առաքական, այլ ներգործական»: ²⁴

Հայցական հոլովը նա կոչում է աղերսական՝ ելնելով հայցականի՝ «խնդրելու», «հայցելու», «աղերսելու» նշանակությունից: ²⁵

Կոչական հոլովը սահմանելիս Մովսես Քերթոզը տալիս է հոլովի կիրառական նշանակությունը, ինչպէս նաև արտասահական որակը: ²⁶ Մովսեսը, շարունակելով Անանուն Մեկնիչին, խոսում է ներքին հոլովումների մասին: ²⁷

Դերանվանական հոլովման մեջ քերականը նոր բան չի ավելացնում Անանունի ասածին. նրա պէս ուղղականը կոչում է «ուղղապէս», սեռականը՝ «բաժանողական», տրականը՝ «պատուիր-

¹⁸ *Ն. Աղոնց*, նշվ. աշխ., էջ 143:

²² *Գ. Զահուկյան*, նշվ. աշխ., էջ 156, 157:

²³ *Ն. Աղոնց*, էջ 179:

²⁴ *Ն. Աղոնց*, էջ 172:

²⁵ *Նույն տեղում.*

²⁶ *Նույն տեղում.*

²⁷ *Ն. Աղոնց*, էջ 166-167:

րական», առաքականը՝ «երթալոյ», հայցականը՝ «աղերսական» և հոշականը՝ «կոչական»:

Հոլովներին Ստեփանոս Սյունեցին (VII-VIIIդդ.) հատուկ ուշադրության չի դարձրել: Իր նախորդների նման Սյունեցին ընդունում է 6 հոլով և «հոլովական» բառին զուգահեռ կիրառում «թավալականը».²⁸

Ի տարբերություն Թրակացու նախորդ մեկնիչների՝ IX դարի քերական Յաննան Արևելցու մեկնությունը այլաբանական բնույթ ունի: «Նրա մեկնության մտահորիզոնը նեղ է՝ զերծ փիլիսոփայական լուրջ հիմնավորումից և սահմանափակված միայն քրիստոնեական դոգմատիկայով».³¹ Յաննան Արևելցին հայ քերականագիտության մեջ նոր խոսք չի ասել. ընդամենը կրկնել է իր նախորդ մեկնիչներին՝ տալով աստվածաբանական հիմնավորումներ:

IX դարի մեծ մտածող Գրիգոր Պահլավունի Մագիստրոսը գրել է «Մեկնութիւն քերականին. զոր եղեալ է զայլոց ու յիւրոց յաւելեալ յիմաստից» աշխատությունը, որը նախորդ քերականների՝ Դավիթ Անհաղթի, Անանուն Մեկնիչի, Մովսես Քերթովի և Ստեփանոս Սյունեցու քերականական աշխատությունների բանահավաքությունն է: Մագիստրոսը կատարել է մի շարք հավելումներ ու փոփոխություններ:

Մագիստրոսը գոյականի հոլովման մեջ առանձնացնում է նախդրավոր և աննախդիր ձևերը: Հայտնի է, որ Թրակացու թարգմանչից սկսած՝ հայ քերականները ընդունում էին 6 հոլով, սակայն Մագիստրոսը, հետևելով հունարեցին, ընդունում է 5-ը՝ առաքականը և տրականը դնելով միասին: Նախդրավոր հոլովածներից ընդունում է չորսը՝ սեռական, հայցական, տրական, հոշական, իսկ աննախդիր հոլովածներից՝ ուղղական, սեռական, տրական և առաքական, հայցական, հոշական:

Մագիստրոսը հետևողական չէ տրական հոլովը անվանելիս. մեկ այն կոչում է տրական, մեկ՝ տրական և առաքական, մեկ՝ տրական-առաքական: Հեղինակն այս հոլովի տակ հասկանում է այժմյան գործիականը: «Մագիստրոսի համար սեռականը սեռական ու տրական էր, իսկ տրականը՝ գործիական: Փաստորեն սա Մագիստրոսի կողմից նվաճում էր հայերենի հոլովման համակարգը ճշգրտելու տեսակետից».³²

²⁸ *Ն. Աղոնց*, էջ 204:

³¹ *Գ. Զահուկյան*, նշվ. աշխ., էջ 199:

³² *Է. Սկրտչյան*, Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում, Եր., 1980, էջ 100:

Հունարենի նմանողությամբ Սագիստրոսը հայերենի համար բերում է կեղծ, արհեստական ձևեր սեռերի և երկակի թվի համար: Դերանվանական հոլովմանը քերականը չի անդրադարձել:

Սագիստրոսի «Մեկնութիւն քերականին» աշխատությամբ ավարտվում է գրաբարի հոլովների մեկնաբանությունը վաղ շրջանում:

Իբրև ամփոփում՝ պետք է նշել հետևյալը:

1. Դ. Թրակացու «Քերականական արվեստ» աշխատության հայ թարգմանիչն ու մեկնիչները սոսկ թարգմանական աշխատանք չեն կատարել, այսինքն՝ հայ ընթերցողին միայն հունարենի քերականություն չեն մատուցել, այլև դրա հիման վրա հայերենի քերականություն են կազմել՝ ելնելով մեր լեզվի օրինաչափություններից:

Միանգամայն իրավացի է Գ. Ջահուկյանը, երբ ընդգծում է, որ այն «ավելի շուտ **փոխադրություն** է, քան թարգմանություն»: Այսինքն՝ հին հայերենի քերականական կառուցվածքի, այդ թվում՝ հոլովական համակարգի գիտական քննության հիմքը դրվել է Դ.Թրակացու աշխատության թարգմանությամբ ու մեկնություններով:

2. Հին մեկնիչները հոլովը համարում էին «թեքում», «անկում», որից՝ «խոնարհում» տերմինը՝ բայի թեքումն արտահայտելու համար: Այս իսկ պատճառով ոմանք ուղղականը չճանաչեցին իբրև հոլով և հանեցին հոլովական համակարգից, քանի որ նրա նշած քերականական իմաստը «թեքումով» չէր արտահայտվում:

3. Դավիթ Անհաղթը ուղղականը հոլովածն համարելու հարցում հետևել է ոչ թե պերիպաթետիկներին, այլ ստոյիկներին, որոնք ուղղականը համարում էին առանձին հոլով և հոլովական հարացույցը սկսում էին հենց ուղղականով, որպես «սկիզբն իմն եւ պատուականագոյն»:

4. Չի կարելի անվերապահորեն նույնացնել Դ. Անհաղթին և Անանուն Մեկնիչին: Նրանց՝ տարբեր անձինք լինելու վարկածի կարևոր կռվաններից են՝

ա) Անանուն Մեկնիչը թարգմանչի նշած երկակի թիվը խորթ է համարում հայերենի համար:

բ) Հայ իրականության մեջ նա, ըստ էության, առաջինն է նկատում **բացառական** հոլովը, թեև չի առանձնացնում և անվանում:

գ) Անանունը թարգմանչի նշած հոլովման ըմբռնումը զարգացնում է՝ հոլովումների մեջ առանձնացնելով ներքին թեքման ձևեր, ընդունելով երեք կարգի հերթազարկություններ՝ (ը) /ի (առչը)՝

> առին), (ը) / Ե (վազ{ը}ր > վազեր), (ը) / ու (աւ {ը} ր > աւուր): Սա նորութիւնն էր Դ. Անհաղթի ներկայացրած հոլովական համակարգում:

դ) Անանունը սկզբնավորում է քերականական տերմինաշինութիւնը. նա փոխում-ճշգրտում է հոլովների անվանումները, հարմարեցնում արտահայտած իմաստներին:

5. Մ. Քերթողը վերստին կասկածի տակ է դնում ուղղականի՝ առանձին հոլով լինելու դրույթը՝ դրանով կրկին հեռանալով ստոյիկների տեսակետից և հակվելով պերիպաթետիկների տեսակետին:

6. Հայ քերականների մեջ առաջինը Մ. Քերթողն էր, որ նկատեց սեռական և տրական հոլովների ձևային նույնութիւնը անունների մեջ («Գրիգորի» կամ «Գրիգորոյ» ձևերը «և՛ սեռական, և՛ տրական» են), թեև չկատարեց երկրորդ քայլը. չնույնացրեց դրանք: Երկրորդ քայլը հետագայում պիտի կատարեին ուրիշները:

7. Ստեփանոս Սյունեցին հոլովների ըմբռնման հարցում նախորդ քերականների համեմատությամբ նոր բան չի ավելացնում:

8. Համան Արևելցու մեկնութիւնը այլաբանական բնույթ ունի: Քերականական հարցերը, այդ թվում՝ հոլովական համակարգը, նա մեկնաբանում է աստվածաբանական տեսանկյունով, և դրանք գիտական լուրջ արժեք չունեն:

9. Գրիգոր Մագիստրոսի «Մեկնութիւն քերականին» աշխատութիւնը առաջին փորձն է՝ ամփոփելու և ընդհանրացնելու նախորդ դարերում եղած քերականական դիտարկումները և մշակելու քերականութեան տեսութիւնը:

Հայերենի հոլովական համակարգում առաջին անգամ նա է առանձնացնում **նախդրավոր** և **աննախդիր** ձևերը: Այս նույն հիմունքով նա **առաքական** և **տրական** հոլովները միավորում է և հունարենի օրինակով ստանում հինգ հոլով:

Հայերենի հոլովական համակարգի մագիստրոսյան ըմբռնումը որոշակի առաջընթաց էր նախորդ շրջանի համեմատությամբ:

**“ԱՆ” և “ԱՍ” ՀՆԱԳՈՒՅՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ
ԵՎ ՆՐԱՆՑ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒԲ***

Մարդու հոգևորին և նրա իմացական ոլորտին վերաբերող հարցերը մշտապես եղել են գիտական մարդաբանության ամենահետաքրքիր և գրավիչ խնդիրների շարքում: Առանձնակի հետաքրքրության առարկա է մշված ոլորտներում գոյություն ունեցող տերմինների և օգտագործվող բառերի ստուգաբանությունը:

Մարդու իմացական մղումները ունեն հոգևոր և պատմամշակութային խոր արմատներ ու յուրահատուկ ձևով ներկայացված են լեզվի մեջ: Հայդեգերյան մոտեցումների կիրառումը մշված երևույթների վերլուծության մեջ բերում է դրանց ինչ-որ տեղ նոր և անսովոր ըմբռնման:

Մարդկային ճանաչողության մեջ ինչ-որ երևույթ կամ առարկա հասկանալը կամ իմանալը առաջին հերթին ենթադրում է խոր թափանցում դրանց էության մեջ: Գիտակցականը պահանջում է նաև անձնական և հանրային փորձի, գիտելիքների նշանային ամրագրում ու ներկայացում: Անդրադառնալով ճանաչողության կառուցվածքին, գործընթացներին և տարրերին՝ կարելի է ասել, որ երևույթը նախ և առաջ պետք է ընկալվի, բացահայտվեն նմանությունները և տարբերությունները: Պիտի մշվի էականը՝ անվանում տալով, ըմբռնվի բովանդակությունը, ճանաչվի և հասկացվի: Այդ ճանապարհով փորձ կարվի մոտենալու իմաստին և բացահայտելու այն: Ասվածից պարզ երևում են ճանաչողական, իմացական գործընթացի երկու կարևորագույն կողմերը՝ էության մշում և ներքնայնացում /ինտերիորիզացիա/: Նշենք այն բառերը, որոնք օգտագործվել են գիտակցական իմացական փորձի նկարագրման ժամանակ՝ *մշան, անուն, բովանդակություն, ընկալում, ըմբռնում, ճանաչում*: Նմանատիպ բառափմաստային համակարգային փոխկապակցություններ կարելի է տեսնել նաև այլ լեզուներում, օրինակ՝ ռուսերենում – *знак, узнать, познать, осознать, сознание, восприятие, содержание*.

Մշակույթի և լեզվի ծագման վաղնջական շրջանները դիտարկելիս կարող ենք տեսնել հաճախ կրկնվող ԱՆ-ը տարբեր աստվածությունների, փիլիսոփայական կատեգորիաների և հասկացությունների մեջ: Օրինակ՝ մեզ հասած առաջին շումե-

* Հոդվածը հրատարակվում է բանավիճային կարգով: Այն արտահայտում է հեղինակի մասնավոր կարծիքը (Խմբ. խորհուրդ)

րական բարձրագույն էություն-աստվածության անվանումը՝ ԱՆ (անու), արիական-վեդայական շրջանի Զնդկաստանում հիմնարար դիտվող Brahman (տիեզերական էություն, գիտակցություն, հոգի) և atman (անձնական հոգի, անհատական էություն) հասկացությունները, լատիներենում և եվրոպական լեզուներում հաճախ հանդիպող anima, animus, man տերմինները և այլն: Որոշ հետազոտողներ atman բառի հիմք փորձում էին դիտել man արմատը, սակայն սանսկրիտի ստուգաբանական բառարանում¹ որպես արմատ տրվում է an-ը՝ “չարժում, շունչ, էություն” իմաստներով:

Ելակետ ընդունելով ան-ի նույն նշանակությունները՝ “չարժում, շունչ, էություն”, բազմաթիվ բառեր կարելի է նորովի ստուգաբանել և մեկնաբանել:

Նշան: Բառի ծագման շրջանում պետք է կազմված լինի “նիշ” և “ան” մասերից ու հասկացվի իբրև “նշված էություն”: Հին անգլերենում՝ sindon, որտեղ կարելի է տեսնել sin, ինչից առաջացել է ժամանակակից sign՝ “նշան” ձևը և on մասը, որը an-ի հնչունափոխության արդյունք կարող է լինել:

Անուն: “ԱՆ” և “ուն” /ունենալ/ մասերի համակցումը պետք է բերի “էություն ունեցող” հասկացությանը: Հ. Աճառյանը նշում է, որ Գ. Ավետիքյանը² անուն բառը մեկնաբանում է բացարձակ նույնությամբ՝ «էություն ունեցող»: Ռուսերենում ևս ինձ համար ակնհայտ է имя բառի, նույնական ըմբռնումը՝ иметь Я («ունենալ ես, ունենալ էություն»): Սրան մոտ է имя բառի Գ.Իսախանյանի մեկնաբանությունը՝ “ընկալված նշան”:³ Նշանի և անվան անհրաժեշտությունը իմացության համար բոլորովին պատահական չի դարձնում նրանց ներքին կապը cōgnōmen-ի /”իմանալ”, “գիտակցել”/ հետ, քանզի վերջինս բացահայտ ներկայանում է “գիտենալ անուն” տեսքով:

Իմանալ: Հայ լեզվաբանության մեջ արմատացած տեսակետի համաձայն՝ *իմանալ* բառի ստուգաբանության ժամանակ առանձնացվում է *իմ (իմա)*–ը որպես արմատ, իսկ *-անալ*–ը որպես ածանց: Սա հիմնավորվում է *իմաստ*, *իմաստուն*, *իմացություն* բառերի գոյությամբ: Սակայն “ան”–ը հասկանալով իբրև “չարժում, շունչ, էություն” նշանակությունների կրող՝ “իմանալ” բառը կարելի

¹ Sir Monier Monier-Williams, A Sanskrit English dictionary, Delhi, 1986, p.135

² Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 369, Երևան, 1926:

³ St’u M. Фасмер Этимологический словарь русского языка. Т. 2, М., 1967, էջ 129:

է դիտարկել որպէս այլ կառուցվածք և արմատ ունեցող՝ *իմ-ան-ալ*, որտեղ *ան-*ը արմատ է, *-ալ-*ը՝ ածանց, իսկ *իմ-*ը պետք է նշանակի՝ ա. ի մեջ /դէպի ներս ուղղվածություն, ներքնայնացում/, բ. իմ, իմը, moe, mine, my, moi, me: Որոշակի տարբերությունների առկայությամբ հանդերձ՝ ա.-ն և բ.-ն իրար չեն հակասում, այլ փոխլրացնում են: Յետևաբար, *իմանալ* բառը ամենայն վստահությամբ կարելի է մեկնաբանել որպէս “էությունը ի մեջ ուղղորդել, յուրացնել, ինձնով անել”:

“Ընկալել” ու “ըմբռնել” բառերի “ըն” և “ըմ” մասերը կարող են առաջացած լինել իմ-ըմ-ըն ձևափոխությունների արդյունքում, բայց միանշանակ չի կարող բացառվել նաև ան-ըն-ըմ ձևափոխությունը (Յ. Աճառյանը և Մ. Աբեղյանը նշում են *ընդ-բռնել* ձևը):

Ան-ը /ան-այն-էն-է(ություն)/ ոչ միայն հայերեն, այլև հնդեվրոպական հարակից /երբեմն նաև շատ ավելի հեռու գտնվող մշակույթների/ լեզուներում ևս իրականացնում է բառակազմակերպ գործառույթ՝ հանդես գալով որպէս “տիեզերական” /ունիվերսալ/ առաջնային արմատ:

Ան-ը կարող ենք տեսնել ոչ միայն իմացական ոլորտին վերաբերող բառերում, այլև մարդուն ու կենդանի աշխարհը, բնական կենսամիջավայրը ներկայացնող բառերում.

Ա. Յայերենում և նրա բարբառներում մարդուն ու կենդանական աշխարհը անվանելիս հանդիպում են *անձ*, *անհատ*, *կենդանի*, *զազան*, *ասլան*, *լուսան*, *ավանակ*, *անասուն*, *հայվան* և այլն:

Առաջին հայացքից “անհատ” բառը ընդհանրապես չպետք է ներկայացված լիներ այս շարքում, քանի որ այստեղ “ան”-ը դիտվում է որպէս ժխտական նախածանց, առավել ևս, որ նման կառուցվածքների կարելի է հանդիպել և այլ լեզուներում, օր.՝ individ: Սակայն եթե փորձենք համադրել “անհատ” և atman բառերը, կարելի է գալ տրամաբանությունից ոչ այնքան զուրկ հետևության. եթե atman-ի արմատը an-ն է, ապա atm բաղադրիչը կարելի է հասկանալ որպէս “անբաժան” /”չտրոհվող”/ a - ժխտական մասնիկ, tm – կտրել, /այստեղից հունական ատոմը՝ անբաժանելի/: Ստացվում է՝ atman – “չբաժանվող, չմասնատվող էություն, հոգի, շունչ”; *անհատ* – “մեկ հատ, ամբողջական էություն”:

Man: Յնդեվրոպական man բառը նույնպէս անմիջական արտահայտությունն է *ան* արմատի: Իսկ այն հարցին, թե որտեղից է առաջացել և ինչ է նշանակում m – ն, կարելի է երկու պատասխան տալ. նախ հիշենք, որ հին հնդկերենում mah (maha) նշանակում է “մեծ” և հաճախ օգտագործվում այն բառակապակցություններում, որտեղ հատկապէս խոսքը հոգու ազատագրման մասին է, օրինակ՝ mahasamadhi /”մեծ կենտրոնացում, մեծ ազատագրում”, երբ

մահվան հետևանքով տեղի է ունենում անհատական հոգու միացումը տիեզերական էությանը: Երկրորդ, Յ. Աճառյանը⁴ հայերեն *մարդ* բառի ստուգաբանման ժամանակ հղում է կատարում սանս. *mort*, *mortal*, *смерть*, *смертный*, մորթել և այլն: Հետևաբար, սխալ չի լինի *man*-ը մեկնաբանել որպես “մահկանացու, մահացող էություն”:

Բ. Բուն հայկական, ինչպես նաև պարսկական ու հարակից նախաեթնոսներից եկած և այսօր իսկ դեռ մեզ մոտ հանդիպող բազմաթիվ անուններ իրենց կազմության մեջ կրում են “ան” արմատը՝ Տիրան, Հովհան, Երվանդ, Երան, Հովնան, Աղվան, Վահան, Մարան, Տիգրան, Վարդան: Անձնանունները, փաստորեն, որևէ աստվածության /օր.՝Տիր/, երևույթի կամ նրա հատկանիշի /օր.՝ վարդ-ջուր⁵/ անվանման և “ան” /”էություն”>”էակ”/ միակցության արդյունք կարող են դիտվել: Նույնը հանդիպում է և տեղանունների կազմության մեջ:

Գ. Հայկական բարձրավանդակի մեծ թվով տեղանուններ նույնպես ունեն *ան* արմատը՝ *Անի*, *Սիփան*, *Ապարան*, *Արզան*, *Ոստան*, *Երևան*, *Արտահան*, *Գարդման*, *Արդահան*, *Բագարան*, *Արածանի*, *Կապուտան* և այլն: Շատ դեպքերում *ան*-ի փոխարեն հանդիպում են *-ավան* կամ *-ական* բաղադրիչները՝ *Նախճավան*, *Ողական*, *Ջարեհավան*, *Վասպուրական*, *Շահապիվան*, *Արշակավան*, *Փառական*: Հայերի և շրջակա ազգերի երկրների անվանումները որպես կանոն հայերենում ունեն *-աստան* ձևությոն՝ *Հայաստան*, *Պարսկաստան*, *Հունաստան*, *Վրաստան*: *-Աստան*-ը առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում, քանզի *ան*-ի հետ հայտնվում է մի այլ *աստ* արմատ: Վերջինս իր հերթին սերում է մի այլ, ինչպես և *ան* -ը, նույնպիսի տիեզերական բնույթ ունեցող, ավելի խորը և հին, արխաիկ արմատից՝ *աս*-ից:

Աս արմատի համընդհանուր և սաքրալ բնույթի մասին խոսելիս լիովին բավարար է հիշատակել, որ այն ընկած է հայերեն *աստված* բառի կառուցվածքի և ծագման հիմքում: Չնայած որ հաճախ որպես *աստված* բառի արմատ դիտվում է *աստ* ձևը, ավելի հանդիշ է երևում *աս*-ը, որպես նախնական բարդ կառուցվածք ունեցող բառի արմատներից մեկը: Նախնական բարդ կառուցվածք լինելու մասին գրում է և Վ. Համբարձումյանը⁶՝ **աս-տոու-ած*:

⁴ **Յ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 902, Եր., 1926:

⁵ **Յ. Կարազեոզեան**, Սեպագիր տեղանուններ, Եր., 1998, էջ 83:

⁶ **Վ.Գ. Համբարձումյան**, Հայերեն ԱՍՏՎԱԾ բառի ծագումն ու տիպաբանությունը, Եր., 2002:

Ասը կարելի է բովանդակային մեկնաբանել որպես “հինք, հաստատունություն, լինելիություն, լույս, ազդեցություն, տեղ, էություն”: Ինչպես *ան-ի* դեպքում ունեինք *ան-այն-էն* ձևափոխությունների շարքը, այնպես էլ աս-ի դեպքում ունենք՝ *աս-այս-այսր-ես-էս*: Տեսանելի է նույն Ա(ռաջնային) Է(ության) փոխկապակցվածության արտահայտությունը: “Աս”-ի ներկայանալը ԵՍ /-իմքնություն/ ձևով առանձնակի ուշադրության է արժանի:

ԱՍ և ԱՆ միասնության /սակայն՝ ոչ բացարձակ նույնության/ մասին խոսում են մի շարք բառերի իմաստային կապերը, մասնավորապես՝ “բան” և “աստված” անմիջական կապը՝ Յովհաննեսի Ավետարանի “Ի սկզբանե բանն էր, և բանն էր աստծու մոտ, և բանն էր աստված”: Հայերենում գրվում է *բան*, ի տարբերություն ռուսերենի և անգլերենի слово և word, հունարենի *լոգոսի* / *Λόγος*: Սա տարբեր մշակույթների մոտ միևնույն երևույթի տարբեր կողմերի առաջնայնության ընկալման դրսևորումն է և խոսում է վաղ հայերենի ավելի խորքային, համապարփակ և սինկրետիկ բնույթի մասին/: “Բան” բառի մեջ Գ. Յովհաննեսիսյանը տեսնում է “...առարկա և գործողություն, բառ և խոսք իմաստները”⁷, սակայն անտեսում է կարևորագույն “միտք” /-բանականություն/ կողմը: Իրականում “բան”-ը “միտք, բառ, գործողություն” եռամիասնությունն է՝ ավելացրած օբյեկտի /առարկայի/ նշում:

Նշված “ան”-“աս” կապը բացահայտ տեսնելու համար օգտակար կլինի անդրադառնալ իմաստ բառի ստուգաբանությանը:

Ինչպես հոդվածի սկզբում նշվել էր, աշխարհը և իրեն իմանալու մարդու ձգտումը միշտ փոխկապակցված է իմաստի ձգտման հետ: Իմանալուն զուգընթաց մարդը փորձում է բացահայտել երևույթների /առարկաների/ իմաստը, որն, ըստ իս, ոչ այլ ինչ է, քան փորձ՝ հասկանալ, թե ինչ միտք և գաղափար է դրված տվյալ երևույթի հիմքում, ինչ նշանային /բառային/ ձևի մեջ է այն կաղապարված, և ինչ կարելի է դրա հետ անել /-իմաստի այսպիսի ըմբռնումը մերձենում է աստծո՝ Շելինգյան մեկնաբանմանը/: Իմաստի այս երեք կողմերը հայերենում ներկայանում են նույն բառով՝ ԲԱՆ որի հիմքում նորից ակնհայտ է ԱՆ սկիզբը: Օգտագործելով նույն տրամաբանությունը, ըստ որի “իմանալ” բառը մեկնաբանվում էր “ան-ը /եությունը/ յուրացնել, ի մեջ անել”, “իմաստ” բառը ևս կարելի դիտել որպես իմ-աստ

⁷ *Յովհաննեսիսյան Գ.Ռ.*, Ժամանակի հոգելեզվաբանական կարգը, Եր., 2001, էջ 22:

սկզբնական կառուցվածք ունեցող և մեկնաբանել “աս(տ)-ը /հիմքը, էությունը/ յուրացնել, ի մեջ անել”:

Այտեղից անմիջապես կարելի է գալ նաև “իմաստուն” բառի ստուգաբանությանը, որի արդյունքում այն ներկայանում է որպես “ի մեջ աս /հիմք, լույս, միտք, էություն/ ունեցող” մարդ:

Կարելի է ենթադրել, որ “բան”-ը հնարավոր է, որ ունեցել է “բացված, բացահայտված էություն” նախնական մշանակությունը, որտեղից և սղված ձևով ներկայանում է մեզ “բան” ձևով: Անմիջական աղերսներ են դիտվում և Brahman-B(rahm)an-Ban /-Beone-Being/ ձևափոխությունների հետ:

Իմաստի ձգտումը, ձգտում է առ աստված, որը անհատի և աշխարհի անմիջական փոխհարաբերության ընթացքում իրագործվում է, և անհայտ էությունը ներկայանում է վերը մշված եռամիասնության տեսքով: Եվ աստծո զաղափարը հենց այդ էության մանիֆեստացիան է սուբյեկտիվ իրականության մեջ:

Տվյալ հոդվածի ձևաչափերը թույլ չեն տալիս այստեղ ներկայացնել “աս” արմատի առավել մանրամասն քննարկումները: Դրանք, ինչպես նաև “ան” և “աս” արմատների հետ փոխկապակցված և միաժամանակ ծագած այլ սկզբնական արմատների վերլուծությունները կներկայացվեն այլ հոդվածում:

Վերը շարադրվածից կարելի է գալ հետևյալ եզրակացությունների.

Ա. գոյություն ունեն նախասկզբնական փոխլրացնող և փոխկապակցված արմատներ, որոնց կարելի է անվանել սրբազան արմատներ;

Բ. այդ արմատները հայերենում հաճախ բառակազմական գործառույթներ են իրականացնում և նրանց օգտագործումը հնարավորություն է տալիս մի շարք բառերի նորովի ստուգաբանության;

Գ. այս արմատները ունեն համընդհանուր բնույթ և նմանատիպ գործառույթներ կարելի է դիտել ինչպես հայերենին հարակից, այլև հայերենից շատ հեռու գտնվող լեզուներում;

Դ. սա կարող է արդյունք լինել մարդկության ձևավորման նախապատմական շրջաններում մարդկանց կողմից միանման աշխարհընկալման:

**ՍԱՐՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ**

Փորձը ցույց է տալիս, որ անցյալի ժամանակաձևերի ուսուցման ընթացքում կառուցվածքային կաղապարների յուրացումն ավելի հեշտ է ընթանում, քան դրանց ժամանակային իմաստների տարբերակման առանձնահատկությունների յուրացումը:

Պատճառն այն է, որ անցյալ ժամանակին բնորոշ են իմաստային նրբություններ, և հաճախ դժվար է դրանք տարբերակել: Այս առիթով Դ. Աճառյանը գրում է. «Անցյալը մի ընդհանուր բառ է, բայց ունի իր զանազան նրբությունները կամ մանրամասնությունները...: Կան լեզուներ, որոնք տարբերություններ չեն դնում անցյալի այդ զանազան նրբությունների մեջ և բոլորը միացնում են մի խմբի մեջ:

Հայերենն էլ բավական հարուստ է անցյալ ժամանակի զանազան նրբություններով, մանավանդ աշխարհաբարը և բարբառները...»:¹

Միևնույն ժամանակ եթե նկատի ունենանք, որ լիարժեք և անսխալ հաղորդակցման համար հարկ է, որ խոսքի ընթացքում ճշգրտորեն կիրառվեն անցյալի իմաստային տարբերությունները, ապա պարզ է դառնում հիշյալ խնդրի հաղթահարման կարևորությունը:

Հարցը կարևորվում է նաև թարգմանություններ կատարելիս, որի ընթացքում ուսանողը պետք է կարողանա զուգահեռել մայրենի և օտար լեզվի քերականական ձևերն ու շարահյուսական կառուցվածքները և դրանց առավել ստույգ համարժեքների ընտրություն կատարել:

Հարցի ուսուցումը հարկ է սկսել սահմանական եղանակի ժամանակային ձևերի կազմության բացատրությունից: Այս պատճառով էլ նախ անհրաժեշտ է հիշեցնել սահմանական եղանակի ժամանակաձևերը: Դրանք ըստ կազմության երկու խմբի են բաժանվում՝ ա) վերլուծական և բ) համադրական:

Վերլուծական ժամանակաձևերի կազմությանը մասնակցում են անկատար, վաղակատար և ապակատար դերբայները, որոնք դիմավոր ձևեր են կազմում օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակաձևերի հարադրությամբ:

¹ Դ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, մաս Բ, Եր., 1961, էջ 202-205:

Ուսուցումը դյուրացնելու նպատակով վերջիններս կարելի է ներկայացնել շարքերի օգնությամբ: Շարքերի համեմատությունը կօգնի՝ տեսնելու հորիզոնական և ուղղահայաց դիրքում գտնվող բայական ձևերի նմանություններն ու տարբերությունները: Այսպես՝

գրում են	գրում էի
գրել են	գրել էի
գրելու են	գրելու էի

Անհրաժեշտ է բացատրել, որ հորիզոնական շարքում գտնվողները կազմում են երկանդամ հակադրություն, այսինքն՝ նույնը լինելով դերբայներով՝ տարբերվում են օժանդակ բայի ժամանակային ձևերով: Ուղղահայաց շարքի դեպքում դրանք եռանդամ հակադրություն են կազմում՝ տարբերվելով դերբայական ձևերով:

Վերոբերյալ կազմություններում օժանդակ բայը արտահայտում է գործողության կատարման պահը, որի հարաբերությամբ կատարվում է դերբայների արտահայտած գործողությունը: **են, ես, է...** շարքը մատնանշում է խոսելու պահը, իսկ **էի, էիր, էր** -ը՝ խոսելու պահից առաջ ընկած ժամանակահատվածը, այսինքն՝ անցյալ ժամանակը:

Իրենց հերթին դերբայներն էլ արտահայտում են գործողությունների հաջորդականություն. անկատարը ցույց է տալիս կատարվող, վաղակատարը՝ կատարված, իսկ ապակատարը՝ կատարելի գործողություն:

Այսպիսով, դերբայների արտահայտած իմաստների և օժանդակ բայի ցույց տված ժամանակակետերի համադրմամբ էլ ձևավորվում են սահմանական եղանակի վերլուծական ժամանակաձևերը:

Այս ամենը բացատրելուց հետո պետք է ասել, որ օժանդակ բայի ներկայով հարադրված ժամանակաձևերի ցույց տված գործողությունը հարաբերվում է խոսելու պահի հետ, այսինքն՝ ելակետը խոսելու պահն է:

Հարկ է նաև հավելել, որ վերոհիշյալ ժամանակաձևերի անվանումները արտահայտվում են մեկ բառով՝ ներկա, անցյալ, ապառնի: Հետևաբար՝ **գրում են** ցույց է տալիս խոսելու պահին կատարվող գործողություն և կոչվում է ներկա, **գրել են** խոսելու պահից առաջ կատարվող գործողություն, և անցյալ ժամանակն է, իսկ **գրելու են** ձևը՝ խոսելու պահից հետո կատարվող գործողություն, և անվանվում է ապառնի:

Այլ է պատկերը օժանդակ բայի անցյալի ձևերով կազմությունների դեպքում: Վերջիններիս արտահայտած գործողությունները կատարվում են անցյալ ժամանակակետի համեմատությամբ,

և դրանց ժամանակային անվանումներն էլ երկու բառից են բաղադրված, որոնցից մեկը դերբայի անունն է, իսկ մյուսը՝ օժանդակ բայի ժամանակի անվանումը:

Ուստի **գրում էի** բայածևը ցույց է տալիս, որ գործողությունը կատարվում է մի անցյալ ժամանակում և կոչվում են անցյալի անկատար, **գրել էի** շարքը՝ անցյալ ժամանակակետից առաջ կատարվող գործողություն և կոչվում է անցյալի վաղակատար, իսկ **գրելու էի** շարքը՝ անցյալ ժամանակակետից հետո կատարվող գործողություն և կոչվում է ապակատար անցյալ կամ անցյալի ապառնի:

Ինչպես երևաց վերոբերյալ շարադրանքից, անցյալի իմաստ ունեն սահմանական եղանակի վերլուծական ժամանակածներից չորսը՝ անկատար անցյալ, անցյալ և վաղակատար անցյալ, ապակատար անցյալ:

Ուսուցման հաջորդ աստիճանում հարկ է հիշեցնել սահմանական եղանակի համադրական ժամանակածի՝ անցյալ կատարյալի կազմությունը: Այն անցյալ ժամանակի իմաստը դրսևորում է բայահիմքի և դիմաթվային վերջավորությունների հարադրմամբ, որոնք երկու խմբի են բաժանվում՝ **ի ձայնավորով /ի, իր, օ, ինք, իք, ին/ և ա ձայնավորով /ա, ար, ավ, անք, արք, ան/** կազմված: Առաջինները գործածվում են **ե** և **ա** լծողության պարզ /գրել, խաղալ/, իսկ մյուսները՝ ածանցավոր բայերի դեպքում /հեռանալ, թռչել, մոտեցնել/, այսպես՝

գրեցի	թռա	հեռացա
գրեցիր	թռար	հեռացար
գրեց	թռավ	հեռացավ

Անցյալ ժամանակածների կազմության կաղապարային կառույցները ներկայացնելուց հետո հաջորդ քայլը պետք է լինի դրանց իմաստների պարզաբանումը, որը առավել հեշտ կընկալվի, եթե դրանք համեմատվեն միմյանց հետ:

Անցյալի վերլուծական ժամանակածները նախ պետք է համեմատել համադրական ժամանակածի՝ անցյալ կատարյալի հետ: Համեմատելիս պարզ է դառնում, որ անցյալ կատարյալի իմաստը տարբեր է անցյալի մյուս ժամանակածներից:

Այս մասին Մ. Աբեղյանը գրում է. «Անցյալ կատարյալը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետում ընկնող սոսկ եղելություն, բոլորովին տարբեր մյուս անցյալ ժամանակներից:

Անցյալ կատարյալը մի անցյալ ժամանակակետից առաջ ընկնող գործողություն չի ցույց տալիս, ինչպես վաղակատար անցյալը (երեկ՝ ժամը հինգին, զնացել էի), և ոչ անցյալ ժամանակակետից հետո եկող գործողություն, ինչպես ապառնի անցյալը

(երեկ՝ ժամը հինգին, դեռ նոր գնալու էի), այլ, ինչպես անկատար անցյալը, հենց իրեն անցյալ ժամանակակետի մեջ ընկնող մի գործողություն. անկատար անցյալից այն տարբերությամբ, որ մինչ վերջինը ցույց է տալիս հարածիզ, տևական եղելություն, որի սկիզբն անցյալ ժամանակակետից առաջ է ընկնում, անցյալ կատարյալն ընդհակառակը ցույց է տալիս առանց տևականության մի սոսկ գործողություն, որ սկսվում և միանգամից կատարվում, վերջանում է անցյալ ժամանակակետում»:²

Վերոհիշյալից պարզ է դառնում, որ անցյալ կատարյալի ցույց տված գործողությունը կապվում է խոսքի պահի հետ, իսկ անցյալի մյուս ժամանակածներինը՝ անցյալ ժամանակակետի հետ: Բացառություն է կազմում վաղակատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով հարադրված ժամանակածներ, որը նույնպես խոսելու պահն է: Յետևաբար առաջին հերթին կարևոր է համեմատել հիշյալ երկու ժամանակածները:

Յարկավոր է նշել, որ նույն ժամանակակետն ունենալով սրանք տարբերվում են իմաստային մի կարևոր առանձնահատկությամբ: Վաղակատար ներկայով արտահայտվում է այնպիսի գործողություն, որ կատարվել է ինչ-որ ժամանակ, որի մասին կամ ուրիշից է իմացվում կամ նրա թողած հետևանքից, մինչդեռ անցյալ կատարյալի դեպքում խոսողը գործողության ականատեսն է կամ իրեն ղնում է գործողության կատարման վայրկյանի մեջ:³ Այս միտքը առավել հատուկ ձևակերպված է դպրոցական դասագրքում: Պրոֆ. Ֆ.Խլղաթյանը հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագրքում «Ինչպե՞ս որոշել վաղակատար և անցյալ վաղակատար ժամանակային ձևերի գործածության տարբերությունը» բաժնում գրում է. «Կողմնորոշվելու համար պետք է նկատի ունենալ, որ անցյալ կատարյալը /գնաց/ գործածվում է, երբ խոսողը գործողությանը ականատես է եղել կամ իրեն ենթադրում է իբրև այդպիսին: Վաղակատարը /գնացել է/ գործածվում է, երբ խոսողը չի տեսել գործողության կատարումը, ականատես չի եղել»:⁴

Այս միտքը հիմնավորելու համար կարելի է բերել տարբեր օրինակներ և տալ պարզաբանումներ: Օրինակ՝ կարելի է բացատրել, որ երբ քայլում ենք և տեսնում ենք, քանդված տուն, քանդված փողոց, որևէ մեկին հանդիպելիս ասում ենք, որ տունը քանդել են, կամ փողոցը քանդել են, սակայն չենք կարող ասել՝

² *Մ. Արեղյան*, Յայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 562:

³ *Մ. Ասատրյան*, ժամանակակից հայոց լեզու, Եր., 1983, էջ 317:

⁴ *Ֆ. Խլղաթյան*, Յայոց լեզու, 6, Եր., 1999, էջ 52-53

տունը քանդեցին կամ փողոցը քանդեցին, որովհետև այդ դեպքում մենք մեզ դնում ենք գործողությունը կատարվելու վայրկյանի մեջ, և լսողը կկարծի, թե մենք ներկա են եղել տունը և փողոցը քանդելու գործողություններին: Մինչդեռ առաջին դեպքում՝ վաղակատար ներկա գործածելիս, որևէ մեկը չի մտածում, թե մենք ականատես ենք եղել այդ գործընթացին:

Ուսուցման ընթացքում անցյալ կատարյալի և վաղակատարի իմաստային տարբերությունները ավելի ճշգրիտ ներկայացնելու համար նրանց հետ պետք է գործածել ժամանակային տարբեր իմաստ ունեցող բառեր և բառակապակցություններ, օրինակ՝ **հենց նոր, այս պահին, քիչ առաջ, վաղուց, առաջ**:

Սրանց և բայածների կապակցելիությունից պարզվում է, որ հենց նոր, այս պահին և այլ բառեր ու բառակապակցություններ օգտագործվում են ինչպես անցյալ կատարյալի, այնպես էլ վաղակատար ներկայի հետ, օրինակ՝ **հենց նոր գրեց և հենց նոր է գրել**, իսկ ավելի վաղ ժամանակ ցույց տվող բառերն ու բառակապակցությունները /վաղուց, շատ առաջ, առաջ և այլն/ միայն վաղակատար ժամանակի հետ, այսպես՝ **վաղուց ասել է, բայց վաղուց ասաց** սխալ է, կամ **նախկինում գրել է, բայց նախկինում գրեց** գործածելի չէ:

Հիշյալ միտքը հիմնավորելու, առավել հեշտ ընկալելի դարձնելու նպատակով հարկ է հանձնարարել տարբեր նախադասություններ կազմել վերոբերյալ կաղապարներով կամ տալ նախադասություններ, որոնցում պետք է տեղադրվեն հիշյալ ժամանակածները:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ թեև անցյալ կատարյալի ու վաղակատար ներկայի ցույց տված գործողությունների ելակետը նույն ժամանակակետն է՝ խոսելու պահը, սակայն տարբերվում են նրանով, որ անցյալ կատարյալը նաև ականատեսի ժամանակ է:

Ուսուցման հաջորդ քայլը պետք է լինի ներկայացնել նաև անցյալ կատարյալի և անցյալ ժամանակահատված արտահայտող մյուս ժամանակային ձևերի տարբերությունները:

Անցյալ կատարյալը տարբերվում է հիշյալ ժամանակածներից. այն կապվում է խոսելու պահի հետ, իսկ մյուսները՝ անցյալ ժամանակակետի հետ: Այս հիմնական տարբերությունից բացի կան նաև այլ տարբերություններ:

Այն նախ տարբերվում է անցյալ անկատարից նրանով, որ «եթե անցյալ անկատար ժամանակը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետում տևական, հարածիզ, ընթացքի մեջ գտնվող գործողություն, ապա անցյալ կատարյալ ժամանակը ցույց է տալիս մի

անցյալ ժամանակում կատարված, ավարտված գործողություն առանց որևէ տևականության, ինչպես՝ Երեկ՝ ժամը 8-ին, նա գրում էր/գրեց և այլն»:⁵

Մ.Ասատրյանը նաև կարծում է, որ անցյալ կատարյալն ու անցյալ անկատարը կերպային հակադրություն են կազմում. «Առաջինը կատարյալ կերպ է, այսինքն՝ շեշտում է գործողության վերջը, ավարտվածությունը, իսկ երկրորդը անկատար կերպ ունի, այսինքն՝ արտահայտում է գործողությունն իր ընթացքի, տևականության մեջ, և գործողության վերջը չի երևում»:⁶

Անցյալ կատարյալը տարբերվում է նաև վաղակատար դերբայով և օժանդակ բայի անցյալ ժամանակաձևով հարադրված ժամանակային կազմություններից: Վերջինիս դեպքում խոսողը նկատի ունի մի անցյալ ժամանակակետ, որի նկատմամբ գործողությունը ներկայացվում է ավարտված, նաև վաղակատար դերբայի իմաստին բնորոշ այնպիսի գործողություն, որը խոսողը պատմում է ուրիշներից լսելով:

Արանց տարբերությունը դարձյալ կարելի է ցույց տալ անցյալի երկու ժամանակակետ պարունակող նախադասությամբ: Այսպես՝ **Երբ մենք դուրս գնացինք, անձրևը դադարել էր:**

Այս նախադասությունից կարելի է եզրակացնել, որ անձրևի դադարելու գործողությունը կատարվել էր ավելի վաղ՝ մեր դուրս գնալուց առաջ, այսինքն՝ մի անցյալ ժամանակակետում: Մինչդեռ դուրս գնալու գործողությունը կատարվել է խոսելու պահից առաջ:

Ավելի հեշտ տարբերակելի է ապակատար անցյալի ժամանակային իմաստը, քանի որ այն ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետում կատարելի գործողություն: Այս ժամանակային իմաստը բացատրելու համար կարելի է այսպիսի օրինակ կազմել. **Ես երեկ ավարտելու էի այդ գրքի ընթերցումը, բայց նախորդ օրը հիվանդացա:**

Իբրև ընդհանուր հատկանիշ սահմանական եղանակի անցյալի ժամանակաձևերի՝ պետք է նշել հետևյալը. բոլորն էլ ցույց են տալիս այնպիսի գործողություն, որը կատարվում է խոսելու պահից առաջ: Սակայն այստեղ հարկ է տարբերակում անել: Դրանցից անցյալ կատարյալի ու վաղակատար ներկայի ցույց տված գործողությունը անմիջապես նախորդում է խոսելու պահին, իսկ մյուսների արտահայտած գործողությունը խոսելու պահից շատ առաջ՝ մի անցյալ ժամանակակետում է կատարված, ավարտված:

⁵ *Մ. Ասատրյան*, նշվ. աշխ., էջ 320:

⁶ Նույն տեղում:

Բովանդակություն

1. Դ.Գյուրջինյան , Տառանուն բաղադրիչով հայերեն լեզվաբանական տերմինները	5
2. Ֆ.Խլղաթյան , Նախադասությունների տեսակներն ըստ բնույթի	20
3. Ն.Յեքեքյան , Արդի հայերենի խնդրառական և հոլովառական մի քանի շեղումների մասին	42
4. Գ.Վարդանյան , Ժամանակակից հայերենի «նոր տիպի» անվանական հարադրությունները	50
5. Կ.Դոյնաջյան-Գրիգորյան , Ժամանակակից հայերենի միջնորդավորված փոխառությունների մասին	60
6. Մ.Միրումյան , Բառակապակցությունների փոխակերպումը բարդ բառերի	64
7. Ա.Ղուկասյան , Պարսկաբանությունները որպես ոճավորման միջոց Ս.Այվազյանի «Ճակատագիրն հայոց» պատմավեպում	75
8. Ռ.Ասատրյան , Նորաբանությունները Գ.Էմինի չափածո ստեղծագործություններում	89
9. Ս.Գրիգորյան , Գունանուններով կազմված դարձվածային նորաբանությունները հայերենում	97
10. Շ.Մուրադյան , Բնապատկերը Ա.Բակունցի «Միրիադ» պատմվածքում	105
11. Ն.Անտոնյան , Ինտրայի «Ներաշխարհ» գրքի հնչառական առանձնահատկությունները	111
12. Ա.Գալստյան , Երկխոսությունները Վ.Պետրոսյանի ստեղծագործություններում	121
13. Ն.Բաղդասարյան , Պ.Սևակը Վ.Բոյուսովի բանաստեղծությունների թարգմանիչ	128
14. Փ.Մեթիխանյան , Աստվածաշնչի հատուկ անունների բառարանները	135
15. Ս.Պապիկյան , «Պատարագ» բառի մասին	143
16. Գ.Գևորգյան , Անցյալ կատարյալի բաղադրյալ կազմությունների գործառական-տարածքային բնութագիրը հայ բարբառներում	149
17. Ա.Աբաջյան , Գրաբարի հոլովները հունաբան դպրոցի քերականների ըմբռնմամբ	155
18. Յ.Տաթևյան , «Ան» և «աս» հնագույն արմատները և նրանց ստուգաբանական նշանակությունը հայերենում	163
19. Գ.Գևորգյան , Սահմանական եղանակի անցյալ ժամանակաձևերի իմաստային տարբերությունների ուսուցումը	169

Համակարգչային ձևավորումը՝ Վ.Բրյուսովի անվ. ԵՊԼՀ-ի համակարգչային կենտրոն /ղեկավար՝ դոց. Վ.Վ.Վարդանյան/

Օպերատորներ՝ Յ.Ս.Էլչակյան
 Ս.Վ.Առաքելյան

Ստորագրված է տպագրության՝ 03.07.2004
Հանձնված է տպագրության՝ 16.10.2004

Տպաքանակ՝

«Լինգվա» հրատարակչություն
Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան
Հասցե՝ Երևան, Թումանյան 42
Հեռ. 53-05-52

Web: <http://www.brusov.am>
E-mail: yslu@brusov.am